Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2947

Դաստիարակութ

Կայսրն [illegible]

73

Թիֆլիս

1857

87 ~~891-99~~
П-30

N 80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

# ՅՈՒՂԱԲԵՐ

# ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

2011

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կայսերն Փոնցիանոսի և կնոջն և որդ-ւոյ նորին Դիոկղետիանոսի և եօթն իմաստասիրաց։

**1857——1306**

Ի ՏՓԽԻՍ․

Ի Տպարանի Հոգևոր Դպրոցին Հայոց ընծայեցելոյ Ազնուական Գէորգայ Արծրունւոյ։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԽԻՂԱԲԵՐ
ՄԵՐՈՒԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

3462

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ чтобы по отпечатаніи представ лено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ 27-го Іюня 1857 года.

*Ценсоръ Кайтмазовъ*

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Միայն մարդոյ պարտ է ոչ յանկարծօրէն այս սակս առ սակս մերձենալ ՚ի փոքրագունից ՚ի մեծագոյնս, և ՚ի հեշտագունից ՚ի դժուարագոյն կրթութիւնս բարոյականս և ուսումնականս, ընդ այսմ և ես նկատեալ զայս գիրք փոխցիմանալ կայսեր գիւղինայ և պարզաբան, շարադրեալ ՚ի վաղ ժամանակաց հետէ պատմագրական ոճով, որ արդէն առ սակաւութեամն եղեալ է կարի յոյժ հազուագիւտ, վասնորոյ համարեցայ զայս օգտակէտ ինչ նորոգ սրբագրութեամբ ՚ի լոյս ընծայեցի, ՚ի պէտս դեռահասակ մանկանց ազգիս մերոյ լեզուաւ տղայոց կաթն ջամբելով և ոչ կատարելոց հաստատուն կերակուր, զի ընթեռնլով ուսցին և ուսանելով զուարճասցին, և այնու առաւել ևս խրախուսեսցին յօժարական աշխատել, կատարելագործել զմիտս իւրեանց ուսմամբ և բարեբարոյութեամբ ՚ի լուսաւորութիւն ազգիս մերոյ և հայրենեաց:

Նուաստ ծառայ Թէոփի-
լէոսեան [illegible] [illegible]-
[illegible] Պ[illegible]
հանայ [illegible] [illegible]-
[illegible] Տէր Պետրոսեանց:




* Երեք մանկունքն 'ի բոց հնո ցին:
* Եւ հրեշտակ տեառն 'ի մէջ նո ցին:

* Պատմութիւն Կայսերն Փոնցեանոսի և Կնոջն. և որդւոյ նորին Դիոկղետիանոսի. և Եօթն Իմաստասիրացն:

ԿԱՅՐ Ի ՀՌՈՄ ԹԱԳԱՒՈՐ մի՝ անուն նորա Մոզոլոս կայսր: Եւ ունէր իւր ստրատելատ մի փոնցեանոս անուն. յոյժ զօրեղ և քաջ. որ և ՚ի բազում տեղիս ՚ի պատերազմի՝ արարեալ էր քաջութիւն մեծ:

Ուստի հաճոյ թուեցաւ փոնցեանոս առաջի կայսերն Մոզոլոսի. և սիրեաց զնա յոյժ. և խոստացաւ տալ նմա զդուստրն իւր գեղեցիկ ՚ի կընութիւն. զի յետ մահուան իւրոյ ժառանգեսցէ փոնցեանոս զաթոռ նորա. որ և եղև իսկ:

Եւ յորժամ էառ փոնցեանոս զդուստրն Մոզոլոսի և փեսայացաւ նմա, յայնմհետէ յանձնեաց Մոզոլոս զթագաւորութիւնն իւր փոնցեանոսի փեսային իւրոյ և ասէ: Ահա ես ծերացեալ եմ և այլ ոչ կարեմ կառավարել զզօրսդ իմ. արդ օրհնութեամբ իմով՝ բարեաւ և խաղաղութեամբ վայելեսցես զաթոռն քո: Եւ տըւեալ հրաման որ աղաղակեսցէ մունետիկն ՚ի

Ի ՑԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

մէջ քաղաքին ասելով · Թէ այսուհետև կայսր և Թագաւոր Հռոմայ՝ Փոնցիանոսն է ։ Եւ ամ նախարարք և կուսակալք և մեծամեծ իշխանք՝ եկեալ երկիրպագանէին Փոնցիանոսի և ասէին · կեցցէ արքայ ։ Եւ կայսրն Մողոյս յետ տարւոյ միոյ՝ մեռաւ խաղաղութեամբ ։

Եւ յոյժ զուարճացոյց Փոնցիանոս զերկիրն իւր ։ Որ և 'ի մեծամեծաց մինչև ցփոքունսն՝ ամենեքեան գոհ էին զնմանէ ։ Եւ յետ երկու ամի թագաւորութեան իւրոյ՝ եղև նմա զաւակ արու · որ եղև յոյժ խնդութիւն արքային և նախարարացըն · և անուանեցին զանուն նորա՝ Դիոկղետիանոս ։

Եւ յորժամ եղև մանուկն Դիոկղետիանոս · է ամաց , մայր նորա հիւանդացաւ մերձ 'ի մահ, և կոչեաց առ ինքն զկայսրն և ասէ ցնա ։ Արքայ՝ աղաչեմ զքեզ · զի ունիմ խնդիրք մի փոքրիկ 'ի քէն զի կատարեսցես ինձ ։ Ասէ կայսրն՝ խօսեա՛ց Թագուհի և ես շուտով կատարեցից զխնդրուածս քո ։ Ասէ Թագուհին · գիտեմ որ այս ցաւս որ դիպաւ ինձ՝ ցաւ մահու է · աղաչեմ զքեզ արքայ՝ զի յետ մահուան իմոյ յորժամ առնես այլ Թագուհի մի՛ տացես հրաման Թագուհւոյն քո որ իշխեսցէ 'ի վերայ որդւոյ իմոյ ։ Զի եթէ նա իշխեսցէ 'ի վերայ որդւոյ իմոյ , որդին իմ ոչ զերծանի 'ի մահուանէ ։ Այլ եղիցի պահեալ յօտար երկրի՝ մինչև զարգասցի և զօրասցի որդին իմ ։ Եթէ զայս արասցես՝ բազում բարութիս հանդիպի քեզ և որդւոյ իմոյ ։ Ասէ կայսրն · մի՛ սիրելի Թագուհի իմ կատարեցից զխնդրուածս քո ։

Եւ ապա յետ սակաւ աւուրց , վախճանեցաւ Թա-

գուհին · և արար կայսրն կոծ մեծ 'ի վերայ Թա-
գուհւոյն և Թաղեաց զնա պատուով ։

Յայնժամ Թագաւորն յետ կոծոյն սկսաւ արտմիլ և զմտաւ ածել Թէ զի՞նչ արասցէ զմիամօր որդին իւր ։ Եւ հարցեալ իշխանացն՝ Թէ զմիամօր որդին իմ զի՞նչ արարից ՝ որ և յետ մահուան իմոյ կառավարեսցէ զաԹոռն իմ ։ Իսկ նախարարքն և իշխանքն · արքայ յաւիտեան կաց ։ Կամ արտաքոյ քաղաքիս իմաստասէրք եօԹն կոչեա զմինն 'ի նոցանէ և տուր զորդին քո 'ի ձեռս նոցա զի իմաստնացուսցեն զնա ։

Յայնժամ հրամայեաց արքայն գրել հրովարտակ՝ զի եկեսցեն նոքա առ ինքն · որ և եկին իսկ ։

Եւ արքայն ողջունեաց զնա սիրով · և մեծարեաց զնա և պատուեաց ։ Եւ ասէ արքայն ցիմաստասէրսն գիտէ՞ք սիրելիք իմ Թէ վասն է՞ր կոչեցի զձեզ · և նոքա ասեն՝ ո՛չ գիտեմք ։ Ասէ արքայն · ունիմ զորդեակ մի՝ որ միամօր է ինձ · և կամիմ զնա տալ ձեզ · զի իմաստուԹեամբ ձերով ուսանիցի զհանճար · որ և յետ մահուան իմոյ կառավարեսցէ զաԹոռ ԹագաւորուԹեան իմոյ ։

Ասէ առաջին վարդապետն՝ որում անունն էր Պոնցիլիաս · ա՛րքայ յաւիտեան կաց · տուր զորդին քո 'ի ձեռս իմ · և ես ծառայեցից որդւոյ քո · և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն · մինչև ցեօԹն ամ ։ Եւ ասէ երկրորդ վարդապետն · ա՛րքայ յաւիտեան կաց · տուր զորդին քո 'ի ձեռս իմ ։ և ես ծառայեցից որդւոյ քո և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն՝ մինչև 'ի վեց ամ ։ և անուանի ծառայ քո ԶենԹուլոս ։ Եւ յառաջ գայ երրորդ վարդապետն

որում անունն էր Գնարդոն. խօսի և ասէ արքայ յաւիտեան կաց. տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես յօժարութեամբ ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա. զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն. մինչև 'ի հինգ ամ: Եւ խօսի չորրորդ դըպրապետն որում անունն էր Մալխիօրախ և ասէ. արքայ յաւիտեան կաց. տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես յօժար կամօք ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն. մինչև 'ի չորս ամ: Եւ յառաջեաց հինգերրորդ դպրապետն. խօսի և ասէ. յիշեա զիս տէր՝ զի բազում ամ ծառայեալ եմ հօր քո, արդ տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն մինչև յերեք ամ. և անուանի ծառայ քո Յովսէփ իմաստասէր: Եւ գայ յռ̃ջ վեցերորդ դպրապետն որում անունն էր Աղէօպաս և խօսի ասելով. արքայ յաւիտեան կաց. ծառայ եմ արքայիս իմոյ. արդ տուր զորդին քո 'իձեռս իմ. և ես միամտութեամբ ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեն. մինչև յերկու տարի:

Եւ եօթներորդ դպրապետն անուամբ Յովակիմ՝ ձայնեաց առ արքայն և ասէ. արքայ յաւիտեան կաց և ունկնդիր լեր ծառայիս զի ծառայ քո եմ ես և ընկերքն իմ. արդ տուր զորդին քո 'իձեռս իմ և ծառայեցից նմա յօժար կամօք. և ուսուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեմք. մինչև 'ի մի տարի: Եւ այսպէս եօթանեքին իմաստասէրքն խոնարհութեամբ և հեզութեամբ և ամօթխածութեամբ զայս արարին պատասխանի արքային:

Եւ ասէ արքայն. շնորհակալ եմ ձեզ ով իմաս-

տուն դպրապետք. որ սիրով ընդունեցիք զմիամօր որդեակն իմ: Բայց եթէ տաց զորդին իմ միայդ միայն, միւսքդ արհամարհեալ ելանէք աստի. արդ տաց զորդին իմ ձեզ ամենեցուն. և զձեզ յանձնեմ աստուծոյ. որ խնամ տանիք որդւոյն իմոյ յօժարական կամօք. և հոգաբարձութեամբ ուսուցանիք զիմաստասիրութիւն և զհանճար. մանաւանդ զաստուածագիտութիւն և զամենայն փիլիսոփայական արարողութիւն: Զայս ասացեալ արքային՝ համբուրեաց զմանուկն. և առեալ զձեռանէ որդւոյն ետ ՚ի ձեռս դպրապետացն և ասէ. երթիջիք խաղաղութեամբ և տէր եղիցի ընդ ձեզ:

Իսկ դպրապետքն խոնարհեալ երկիրպագին արքային. և առեալ զորդի արքային զմանուկն Դիոկղետիանոս՝ գնացին յօթեանս իւրեանց: Իսկ դպրապետն Պանցիլլաս՝ ետ կազմել գեղեցիկ դարպաս մի զարմանալի յօրինուածով արտաքոյ քաղաքին. և անդ եդին զորդի արքային: Իսկ զդարպասի բոլորն և զպատուարն՝ թէ ՚ի ներքուստ և թէ արտաքոյ դարպասին՝ զամենեսեանն բոլանդակ դրօշք լցին. զի յելանելն և ՚ի մտանելն՝ որդի արքային ՚ի գիրն հայի. և ինքեանք յօժարութեամբ և հոգաբարձութեամբ ուսուցանէին զմանուկն մինչև յամ մի: Իսկ ՚ի լնուլ ամին՝ ասէ Պանցիլլաս դպրապետն. որպէս փորձեցուք զաշակերտս մեր՝ թէ առեալ է ինչ ՚ի դպրութենէս մերմէ թէ ոչ: Պատասխանի ետ դպրապետն Պալթոս և ասէ. բարի է զոր ասեսդ. յորժամ նինջեսցէ՝ յայնժամ դիցուք ՚ի ներքոյ չորեցունց ոտիցն մահճին տերևս ծառոց, և մեք կացցուք յանդիման նորա մինչև զարթիցէ: և տեսանեմք թէ զինչ խօսի մեզ մանուկն:

Եւ դպրապետքն ամենեքեան ասացին՝ այս այդպէս արասցուք ։ Եւ յորժամ ննջեաց որդի արքային, յայնժամ եդին զձիւղս ծառոցն 'ի ներքոյ ոտից մահճին, և ինքեանք կացին յանդիման նորա մինչև զարթեաւ մանուկն ։ Եւ իբրև զարթեաւ պշուցեալ հայէր ընդ առաստաղն և ընդ գետինն. զոր տեսեալ դպրապետացն. ասեն որդեակ ընդէ՞ր պշուցեալ հայիս ընդ առաստաղն և ընդ գետինն ։ Պատասխանի ետ որդի արքային և ասէ վասն այն հայիմ զի կամ առաստաղ տաճարիս ցածացեալ է . և կամ գետնին յատակն բարձրացեալ է ։ Զայն լուեալ դպրապետացն՝ ասեն ցմիմեանս . եթէ մնասցէ մանուկս կենդանի . լինի կատարեալ իմաստասէր որպէս Պղատոն կամ որպէս Արիստոտէլ ։

Եւ յայնժամ ժողովեցան դպրապետքն և եկին առ կայսրն և ասեն ա՛րքայ յաւիտեան կաց . երանի է քեզ և երանի՛ է օր ծննդեան մանկանն քո . որ այսպիսի սուր միտք մանուկ չէ տեսեալ մեր . զի դեռ ամ մի է՝ և ջանայ որ զմեզ անցանի . և եթէ հասանի նա 'ի չափ հասակի ոչ լինի նմանն 'ի վերայ երկրի ։ Բայց լաւ էր քեզ ա՛րքայ՝ զի ունկնդիր լինէիր մեզ զոր ինչ խօսելոց եմք առաջի արքայիս . և մի՛ բարկանայցես խօսից մերոց ։

Ասէ կայսրն . վասն է՞ր բարկանամ եթէ բարի լինի խօսք ձեր ։

Ասեն դպիրքն . լաւ էր քեզ ա՛րքայ զի ամուսնանայիր դու և լինէր քեզ բազում որդիք . որ յայսպիսի իմաստս վարժէին . որպէս այս որդին քո Դիոկղետիանոս . որ և յետ մահուան քո՝ մի մի տիրեսցեն աթոռոյ թագաւորութեան քո ։

Հաւանեցաւ կայսրն՝ և ասէ․ ելէք 'ի խնդիր և գտանէք զեղեցիկ աղջիկ մի․ և ես առից զնա ինձ 'ի կնութիւն․ Եւ գնացեալ հրաւիրակքն՝ շուրջ եկին 'ի բազում տեղիս․ և գտին զդուստրն Մոգոլուի աղքատին՝ գեղեցիկ յոյժ․ և բերին առ կայսրն․ Որ և հաճոյ թուեցաւ աչաց կայսերն․ և արարին հարսանիս․ և եղև ուրախութիւն մեծ․ Եւ եդ կայսրն 'ի գլուխ նորա թագ․ և անուանեաց զնա թագուհի․ և սիրեաց զնա յոյժ վասն գեղեցկութեան նորա և պճնեաց զնա զարմանալի կերպիւ և կացին բազում ժամանակս և ոչ եղև նմա զաւակ․ Եւ կինն խիստ տարակուսեալ էր վասն անզաւակութեան իւրոյ․ կարծէր թէ յարքայէն է․

Եւ ետուր դտանել գաղտ 'ի յարքայէն գեղեցիկ երիտասարդ մի․ և բերեալ առ ինքն՝ պճնեաց զնա կանացի զգեստիւ․ և հանապազ շնայր ընդ նմա․ մի թէ զաւակ ծնանիմ ասելով․ և այսպէս պտունկէր և պահէր զնա 'ի սենեկի իւրում որպէս կոյս աղջիկ․ Յետոյ լուաւ թագուհին թէ ունի թագաւորն որդի մի միամօր․ և տուեալ է զնա 'ի ձեռս իմաստասիրաց՝ ուսանել զիմաստութիւն և զհանճար․ Եւ փաղփաղակն չար խորհեցաւ 'ի միտս իւր և ասէ․ լինէր որ մեռանէր որդի կայսերն․ և ես ծնանէի որդի՝ որ ժառանգ լինէր․ Եւ այսպիսի խորամանկութեամբ խորհէր օրըստօրէ թէ ո՞րպիսի հնարիւք կարող լինիցի ըսպանանել զմանուկն և գտեալ ժամ զի աղաչեսցէ արքային բերել զմանուկն․

## *ԽՆԴԻՐՔ ԹԱԳՈՒՀՒՈՅՆ ՚Ի ԿԱՅՍԵՐԷՆ՝ ԶԻ ՆԵՐԵՑԷ ԾՆՈՂԱՑՆ.

Եւ ՚ի գիշերի միում մինչդեռ ընկողմնեալ էր կայսրն ՚ի վերայ մահճին իւրոյ, խօսեցաւ ը̅ Թագուհւոյն և ասէ: Սիրելի տիկին իմ․ արդ ըզծածուկ խորհուրդ սրտի իմում ծանուցից քեզ․ գիտեմ՝ զի ոչ գոյ այլ ստեղծուած ՚ի ներքոյ երկնից որ սիրէ զքեզ առաւել քան զիս: Ասէ Թագուհին․ եթէ այնպէս իցէ որ սիրես զիս, փոքրիկ խնդիրք մի ունիմ՝ արդ խնդրեցից ՚ի քէն․ եթէ կատարես, երևի ապա սիրոյ նշան: Ասէ կայսրն․ զոր ինչ խնդրես՝ արարից վաղվաղակի: Ասէ Թագուհին․ տեսանես՝ զի դեռ զաւակ ոչ ունիմք որ մխիթարէ զմեզ․ արդ յղեա և կոչեա զորդին քո առ քեզ՝ զոր տուեալ ես ՚ի ձեռս իմաստասիրաց․ և ես տեսութեամբ նորին ուրախացայց․ մինչև տէր աստուածն իմ պարգևեսցէ մեզ զաւակ: Պատասխանի ետ կայսրն և ասէ․ ով սիրելի Թագուհի իմ․ է̅ ամ է որ ես չեմ տեսեալ զորդին իմ․ վասն աղերսանաց քոց՝ կատարեցից զխնդրուածս քո:

Եւ նոյն ժամայն հրաման արար արքայն գրել հրովարտակ առ է̅ իմաստասէրսն․ և կայսերական կնքովն կնքեալ առաքեաց․ զի ՚ի տօնի պենտեկոստէին բերցեն զորդի նորա: Եւ թէ յապաղեսցեն՝ մահու մեռանիցին:

Եւ յորժամ հասին թղթատարքն առ իմաստասէրսն, ետուն զհրովարտակն ՚ի ձեռս նոցա․ և նոքա առեալ բացին և ընթերցան․ և վերահասու եղեն կամաց արքային:

Եւ 'ի գիշերին եկեալ դպրապետքն հայեցան յաստղն. եթէ արքայի հրամայեալ օրն տարցուք զորդին, զի՞նչ լինիցի նմա։ Տեսին և ծանեան՝ զոր թէ հրամայեալ օրն տանիցեն, վնաս լինի մանկանն. և թէ ոչ տանիցեն՝ իւրեանց վնաս լինի։ Եւ այսպէս տրտմեալ և տարակուսեալ կային յոյժ. զի ոչ գիտէին թէ յոր կողմն դասէին. այլ լաւ համարէին իւրեանց մեռանիլն քան զորդւոյ արքային։

Եւ մանուկն տեսեալ զվարժապետսն այնպէս տրտում և տխուր՝ սկսաւ և ինքն տրտմիլ. և ասել ընդ միտս իւր թէ՝ զի՞նչ պատահեցաւ վարժապետաց իմոց որ այսպէս տրտում են. և երկնչէր հարցանել։ Եւ յետոյ վստահացեալ՝ սկսաւ հարցանել զվարժապետսն իւր և ասէ ասացէք ինձ զպատճառն յաղագս որո՞յ իրաց տրտմեալ էք։

Ասեն դպրապետքն. հայր քո զքեզ խնդրեալ է և հրամայեալ է թէ՝ 'ի տօնի պենտեկոստէին բերէք զորդին իմ։ Եւ յորժամ ընթերցաք զհրովարտակ հօր քո՝ 'ի նոյն գիշերին գնացեալ հայեցաք յաստղն. և տեսաք՝ որ թէ հրամայեալ օրն տարցուք զքեզ առ հայրն քո՝ նոյն ժամայն սրով մեռանիս դու. վասն այն տրտում եմք և ոչ գիտեմք թէ զի՞նչ արասցուք։

Ասէ մանուկն. ցուցէք ինձ զաստղն զայն՝ զի ես ևս տեսից զնա։

Եւ յորժամ ցուցին նմա զաստղն՝ հայեցաւ և ետես զայն յայտնի զոր ինչ ասացին վարժապետքն իւր։

Եւ մինչդեռ ապուշ մնացեալ էր և հայէր յաստղն, ետես այլ փոքրիկ աստեղունս շուրջ զնովաւ որպէս դիր դրեալ. և ցուցանէր թէ՝ մինչև

յեօթն օր եթէ ոչ խօսեսցի, մեայ կենդանի. բայց յեօթն օրն՝ է անգամ տարցեն զնա 'ի սպանումն. և բազում նեղութեամբ ազատի։

Իբրև ետես մանուկն զաստղն զայն կոչեաց ըզ-վարժապետսն իւր և ասէ. կարօղ էք դուք յայն եօթն օրն որ փրկէք զիս 'ի ձեռաց հօր իմոյ. և եցոյց նոցա զաստղն զայն։

Եւ նայեցեալ վարժապետքն զաստղն որ ստոյգ է խօսք մանկանն զոր ինչ և ասաց. Եւ ասեն. օրհ-նեալ է Աստուած որ այսպիսի շնորհս ետուր ա-շակերտին մերոյ. որ կատարեալ բուն իմաստա-սէր եղեալ՝ իմաստութեամբն իւրով և ողորմու-թեամբն Աստուծոյ՝ կարողացաւ իմանալ զմահն իւր և ուրախ ապրիլն. Եւ պատասխանեալ ա-սեն ցմանուկն. Աստուծոյ կարօղ զօրութեամբն՝ ամենքս մէկ մէկ օր փրկեսցուք զքեզ 'ի չար պա-տահմանէն որ գալոց է 'ի վերայ քո։

Եւ սկսան պատրաստել և դնել առ կայսրն։

Իսկ մանուկն մինչդեռ նստէր 'ի միջօրէի 'ի վե-րայ մահճին իւրոյ ետես յերազին՝ զի չորս ար-մատ ծառոց բուսեալ էր 'ի մահճի իւրում. և 'ի նոցանէ ելեալ եօթն ճիւղ. և 'ի միջի նոցա կին մի նման վիշապի՝ զոր կամէր 'ի ճիւղերն մահա-դեղ այնորիկ որ նստէր 'ի մահիճն։

Զարթեաւ որդի արքային 'ի քնոյն և պատմեաց զտեսիլն վարժապետաց իւրոց. Եւ վարժապետքն գնացեալ հայեցան յաստղն. և իմացան թէ զինչ էր երազն. և եկեալ պատմեցին որդւոյ արքային։ Եւ ասեն. չորս արմատքն ծառոյն՝ չորս տարերքն են. և կինն վիշապ՝ յետնամայրն է. և եօթն ճիւղքն՝ եօթն օրն է. եթէ խօսեսցիս յայն եօթն օրն՝ մահու մեռանիցիս. Յետ այսորիկ՝ եկան 'ի

ճանապարհ. և եկին առ հայրն առ արքայն. Եւ իբրև լուաւ զգալն որդւոյն իւրոյ կայսրն փան-ցկանոս, եւ ընդ առաջ նորա Թմբկօք և փողօք և զանազան արուեստականօք և բազում զօրօք: Եւ տեսեալ մանուկն զհայրն իւր՝ ասէ վարժապետացն. ահա գայ հայրն իմ. և դուք պատրաստ կացէք որ փրկէք զիս ի յայնմ պատահմանէն որ գալոցն է 'ի վերայ իմ: Նոքին դըպրապետքն. որդեակ մի՛ վախիր. ողորմութեամբն Աստուծոյ մեք պատրաստ եմք և ո՛չ մոռանամք զքեզ. այլ դու այսուհետև ո՛չ ևս խօսեսցիս, զի հասեալ է ժամ քո. զայս ետուն պատուէր որդւոյ արքային:

Եւ ահա գայր Թագաւորն ծանր փառօք և բազմութեամբ հեծելոցն. և խոնարհեալ՝ ետ ողջոյն վարժապետացն. և կոչեալ զձեռանէ որդւոյ իւրոյ դիրկս արկեալ համբուրեաց զնա և ասէ. որդեակ իմ սիրելի զի՞արդ կես. քանզի բազում ժամանակ է որ չեմ տեսեալ զքեզ: Եւ որդին խոնարհեալ երկիրպագ հօրն. և ոչ ինչ խօսեցաւ: Եւ կայսրն տեսեալ՝ զարմացաւ ընդ միտ իւր և ասէ. գուցէ ուսեալ է 'ի վարժապետացն իւրոց ո՛չ խօսիլ առաջի զօրացն: Եւ յորժամ եկին 'ի դարպասն, առեալ Թագաւորն զձեռանէ որդւոյն իւրոյ և տարեալ նստոյց մերձ առ իւր և ասէ. ո՛րդեակ իմ ո՞րպէս հրահանգեցին զքեզ վարժապետքն քո. և զի՞նչ ուսար 'ի նոցանէ: Եւ մանուկն խոնարհեալ երկիր եպագ հօրն իւրոյ և ո՛չ խօսեցաւ: Սքանչացաւ կայսրն և ասէ. ո՛րդեակ ընդէ՞ր ո՛չ խօսիս ընդ իս.

Եւ Թագուհին լուեալ զգալն որդւոյ արքային՝ ուրախացաւ յոյժ և ասէ. երթայց և տեսից զնա:

1008
36239

և ընտրեաց 'ի կուսիցն զգեղեցկատեսիլսն և ա-
ռեալ ընդ իւր՝ գնաց առ նա։ Իսկ կայսրն տե-
սեալ զԹադուհին՝ նստոյց մերձ առ որդին իւր։
Իսկ հարցեալ Թադուհին ցկայսրն և ասէ՝ այս
է որդին քո։ Ասէ կայսրն այո այս է. և ոչ գի-
տեմ զինչ եղև սմա որ ոչ խօսի ընդ իս։ Ասէ Թա-
դուհին. տուր ինձ հրաման և ես տարայց զնա
'ի սենեակն իմ և խօսեցայց ընդ նմա և նա խօ-
սեսցի ընդ իս։ Ասէ կայսրն. արի՛ կա՛ց յառնին որ-
դեակ իմ և գնա՛ ընդ մօր քո։ Իսկ մանուկն ե-
լեալ երկրպագեաց հօրն և գնաց ը̃ յետնամօրն։
Իսկ յետ տանելոյն զնա Թադուհին 'ի սենեակն
իւր՝ հրամայեաց ամենեցուն 'ի բաց գնալ յիւր-
մէ. և առեալ զձեռանէ մանկանն՝ նստոյց մերձ
առ իւր. Խօսի և ասէ. ով սիրելի իմ Դիոկ-
ղետիանոս՝ լուեալ էի զհամբաւ գեղեցկութեան
քո. և այժմ տեսանելով տեսի և ծանեայ դէմ
յանդիման զգեղեցկութիւն քո. և անձն իմ սի-
րեաց զքեզ յոյժ։
Արդ ով սիրելի իմ Դիոկղետիանոս ուրախ լեր
ընդ իս. զի վասն սիրոյ քոյ պահեցի զկուսութիւն
իմ. զի դու շատացեալ հանդիպես 'ի կուսութիւնս
իմ։ աղաչեմ զքեզ խօսեաց ընդ իս. և տուր ինձ
զոր ինչ և կամիս. և ես կատարել պատրաստ եմ
զամենայն զկամս քո։ Զայս ասացեալ 'ի գիրկս
արկեալ զմանկամբն՝ կամէր համբուրել զնա. և
մանուկն դարձուցեալ զերեսն իւր՝ ոչ ետ նմա
համբուրել։
Ասէ Թադուհին. ահա խնայոտացեր զիս ով սիրե-
լի իմ Դիոկղետիանոս եկ զի ննջեսցուք 'ի միասին
և ուրախ լինիցուք։ Իսկ մանուկն հայէր խոժոռ
յերեսս Թադուհւոյն։

Ասէ թագուհին. ով սիրելի իմ Գիսկղեալա-նաս՝ եթէ պատկառես և ոչ համարձակիս խօսե-լոյ ընդ իս, ահա կայ թուղթ և թանաք. առ և գրեա և ծանո՛ ինձ զկամս քո՝ եթէ լինի ինձ յոյս առ ՚ի վայելել զսէր քո։

Նա մանուկն առեալ զթուղթն՝ գրեաց այսպէս. ով թագուհի՝ ոչ կամիմ ես պղծել զսուրբն և զանկողին հօր իմոյ. քանզի ոչ ինչ լինի ինձ շահ· այլ չարաչար մահ է առաջի Աստուծոյ. աղաչեմ զքեզ մի՛ բանադատեր զիս. զի այդ գործդ որ դու խօսես՝ ինձ զզուելի է և վնասակար. և ամօթ ՚ի մարդ-կանէ. ոչ կարեմ գործել ես այդ գործդ. և ետ զթուղթն առ թագուհին։

Յորժամ էառ թագուհին զթուղթն ՚ի ձեռանէ մանկանն և ընթերցաւ, իսկոյն ձգեաց մեծաձայն և պատառեաց զհանդերձն և զքաճկոնն. և ե-ղնգամբն ճանկեաց զերեսն և եհան արիւն. և բա-ցեալ զգլուխն փետտեաց զհերսն. և սկսաւ աղա-ղակել և ասել՝ աղաչեմ զձեզ վասն Աստուծոյ օգնեցէք ինձ. զի կամի այս որդի արքային լլկել զիս չարեաք. ծանուցէք տեառն իմոյ գալ առ իս և տեսանել զեղկելիս. և ծանուցին ծառայքն արքային։

Նա կայսրն եհաս առ թագուհին և ասէ. ով սիրելի տիկին իմ զի՞նչ գործես. ընդէ՞ր այդպէս ձգես և լաս. զի՞նչ պատահեցաւ քեզ։

Ասէ թագուհին. տէր իմ արքայ ողորմեա ինձ. զի սա չէ որդի տեառն իմոյ արքայի. այլ սա չար է և մոլգամ. և բարուք շնացող։ Յորժամ բերի զդա ՚ի ներքս և ջանայի խօսեցուցանել, յանկար-ծակի սկսաւ ձեռն արկանել ՚ի յիս. և կամէր ընդ-դէմ մեղանչել։ Նա իբրև ես ոչ կամէի՝ պատառ-

ռեաց զհանդերձս իմ. և արկանեաց զերեսս իմ.
և այսպէս խայտառակեաց զիս. զոր տեսանէ տէրն
իմ արքայ։

Եւ տեսեալ կայսրն զերեսս Թագուհւոյն արիւ-
նաթաթախ և զհանդերձն պատառեալ՝ հաւատաց։
Եւ բարկացեալ ասէ՝ տարէք կախեցէք որ ոչ-
տեսանէ աչս իմ զայդպիսի անառակ որդին.
Եւ լուեալ նախարարացն՝ գան առ կայսրն և ասեն.
արքայ յաւիտեան կաց. Որդին քո միամօր է քեզ.
և ոչ ունիս այլ որդի որ ժառանգ լինիցի քեզ.
չէ՛ արժան որ առանց քննութեան սպանցես զոր-
դին քո վասն փոքր ինչ բանի. զի որդին քո ոչ խօ-
սի. ոչ գիտես ապա տէր մեր արքայ թէ արժա՛ն
է մահու թէ ոչ. Այլ պա՛րտ է արգելուլ զնա
'ի բանտ մինչև 'ի վաղուեան օրն. և արասցես դա-
տաստան իրաւամբք. և եթէ գտանիցի մահու ինչ
արժանի՝ մեռցի. Զի մի՛ ասիցեն ժողովուրդքն՝
թէ կայսրն արտմեալ՝ առանց իրաւանց և դա-
տաստանի՝ հրամայեաց սպանանել զմիամօր որդին
իւր։

Իբրև լուաւ կայսրն զայս 'ի նախարարացն իւրոց՝
շիջաւ սակաւիկ մի բարկութիւն նորա և ասէ.
տարէք արգելէք զնա 'ի բանտն մինչև 'ի վաղու-
եան օրն. զի լինիցի դատաստան և իրաւամբք
մեռցի։

Եւ թագուհին իբրև լուաւ թէ ոչ սպանեցին
զորդի արքային, սկսաւ ճչել և լալ և փոյթ տալ
անձինն։ Եւ այնպէս ահագին ճչէր՝ որ լսելի ե-
ղև ամենեցուն. և ծանուցին կայսրն։ Յայնժամ
ելեալ կայսրն 'ի գահոյից իւր՝ եմուտ առ թա-
գուհին. և տեսանէր զի յոյժ անմխիթար լայր.
Եւ ասէ կայսրն. ո՛վ սիրելի տիկին իմ զի՛նչ եղև

քեզ՝ որ այդպէս անմխիթար լաս։ Եւ Թագուհին անկեալ առ ոտս արքային և ասէ. մի թէ ոչ գիտես զինչ արար նզովեալ որդին քո. որպէս կամէր բռնադատել և լլկել զիս. որպէս դու իսկ տէրդ իմ տեսեր. և ասացեր թէ՝ կորուսից զնա դառն մահուամբ. և նա դեռևս կենդանի է.

Ասէ կայսրն. վասն այն արգելի զնա և ձգեցի'ի վաղիւն՝ զի կամիմ քննութիւն առնել առաջի նախարարացն իմոց. և թէ գտանիցեմ 'ի նմա մեղս ինչ մահու՝ յայնժամ հրամայեմ չարաչար սպանանել զնա.

Ասէ Թագուհին. եթէ որդին քո մնասցէ կենդանի՝ յայնժամ ելցէ քեզ որպէս եղև ծառի միոյ պտղատուի 'ի մօլեալ արմատոյ նորին.

Ասէ կայսրն. պատմեա ինձ զառակդ զայդ. Ասէ Թագուհին. պատմեմ քեզ զառակս զայս. բայց լուր 'ի միտ առ. Եւ սկսաւ ասել.

* Առաջին առակ Թագուհւոյն. որ հաւանեցոյց զկայսրն սպանանել զորդին.

Կայր 'ի քաղաքի միում այր մի. և ունէր գեղեցիկ դրախտ մի, և էր 'ի մէջ դրախտին ծառ մի երևելի. որ ամ յամէ տայր զպտուղս յոլովս. և պտուղ նորա այնպիսի զօրութիւն ունէր՝ որ ամենայն ցաւոց դեղ լինէր՝ բաց 'ի հոգւոց.

Եւ եղև յաւուր միում եկն տէր այգւոյն 'ի պարտէզ իւր. և նայեցեալ 'ի վերայ ծառին՝ ետես որ ահա փոքր ձիւղ մի ելեալ էր ընդ արմատն։ և կոչեալ զայգեգործն և ասէ. դարման տար ձղոյս այսորիկ. զի յուսամ՝ 'ի սմանէ աճել անուշ պտուղ՝ քան 'ի ծառոյն մեծ է.

Եւ յետ աւուրց դարձեալ եկն տէր այգւոյն 'ի պարտէզ իւր. և նայեցեալ ետես զծառոյն ձիւղն որ ոչ էր աճեալ. կոչեաց զայգեգործն և ասէ. վասն է՞ր ոչ աճէ ձիւղս այս ով այգեգործ: Պատասխանի ետ այգեգործն և ասէ. ծառս մեծ և բարձր է յոյժ. ոչ թողու ծագել արև 'ի վերայ սորա. վասն այն ոչ աճէ.

Ասէ տէր այգւոյն. հարթեա՛ զձիւղն ծառոյն՝ զի ծագեսցէ արեն և 'ի վերայ սորա, զայս ասացեալ՝ գնաց. և արար այգեգործն այնպէս.

Եւ դարձեալ եկն տէր այգւոյն. և նայեցեալ ետես՝ զի այժմ ևս ոչ էր աճեալ ձիւղն. կոչեաց զայգեգործն և ասէ. ընդէ՞ր և այժմ ոչ աճէ ըստ կամաց իմոց: Ասէ այգեգործն. ոչ է զարմանք որ ոչ աճէ զի բարձրութիւն ծառոյս ոչ թողու տալ անձրև 'ի վերայ սորա. վասն այն ոչ աճի: Ասէ տէր այգւոյն. հա՛տ զծառն մեծ. զի լաւ է ձիւղն քան զծառն մեծ: զայս ասաց և գնաց: և այգեգործն եհատ զծառն. և նոյնժամայն չորացաւ և ձիւղն.

Եւ յետ աւուրց ինչ դարձեալ եկն տէր այգւոյն 'ի պարտէզ իւր. և տեսեալ չորացեալ զծառն ձիւղովն ապուշ մնաց: քանզի զօրութիւն նորա 'ի ծառոյն էր. յայնժամ հատին զծառն՝ չորացաւ և ձիւղն.

Ասէ թագուհին. լուա՞ր տէր իմ արքայ զբան ծառոյն՝ որ անիմաստ խորհրդով 'ի զուր չորացաւ ծառն. որ և աղքատ և ցաւագարք նզովեցին ըն-չորացնօղն ծառոյն:

Ասէ արքայն. ո՞ւմ նմանեցուցեր զծառն զայն:

Ասէ թագուհին. ծառն մեծ և երևելի՝ դու ես. թէ աղքատք թէ ցաւագարք՝ ամենեքեան 'ի տի-

ութիւնն քո խնդամ․ և ամենայն տկարք և տը-
նանկք՝ խրատով քո ապրին։ Եւ որդին քո ջա-
նայ հարթել զճիւղս քո․ այսինքն զզօրութիւնս
քո․ և յետոյ խափանէ զքեզ՝ որպէս այգեգործն
զծառն․ և թագաւորեսցէ 'ի տեղի քո․ և ոչ կա-
րէ թագաւորել․ որպէս ճիւղն որ չորացաւ ընդ
ծառոյն։ Բայց խափանի թագաւորութիւն քո․
և դու ընդունիս անէծս յաղքատաց և տնանկաց․
զի խոստացար սպանանել զնա և ոչ սպաներ․
Ասէ կայսրն․ լաւ առակ ասացեր․ զի ոչ կարէ
որդին իմ այնպէս առնել՝ որպէս այգեգործն ըզ-
ծառն զայն․ զի ընդ լուսանալ առաւօտուն՝ ա-
ռանց քննութեան և առանց դատաստանի տամ
սպանանել․
Ասէ թագուհին․ թէ սպանանես՝ 'ի հանդիստ լի-
նիցիս․ և խաղաղութեամբ վայելեսցես զթագա-
ւորութիւն քո․

* Առաջին առակ տանելոյ զԴիոկղետիանոս 'ի մահ․
և Պանտիլէոս վարդապետն առաքէ փրկէ զնա․

Ի վաղիւ անդր նստեալ կայսրն 'ի գահոյսն իւր․
և հրամայեաց դահճապետին՝ խոկոյն առ ժա-
մայն տանել զորդին իւր 'ի տեղի սպանման՝ փո-
ղով ազդեցութեան։
Եւ հանեալ դահճապետն զորդի արքային 'ի բան-
տէն՝ կապեաց զձեռսն 'ի յետս․ որպէս օրէնն է
մահապարտաց։ Եւ ետ ձայնել առաջի նորա մու-
նետիկս ասելով․ թէ ով ոք կամի մեղանչել ընդ
յետնամօրն, այսպիսի մահուամբ մեռցի․
Եւ լուեալ ժողովրդոյն՝ ողբալով միաձայն ա-
ղաղակէին և ասէին․ աւա՜ղ աւա՜ղ և հազար վաս

միամօր որդւոյ կայսերն. որ տանէին 'ի զուր սպանումն:

Յայնժամ Պանցիլիաս դպրապետն՝ որընթաց երկվարօք եհաս նոցա և ասէ. մի՛ շտապիք սպանանել զդա՛. զի յոյս ունիմ առ Աստուած որ երթամ առ կայսրն և աղաչեմ զդա՛:

Եւ ժողովուրդքն փութացուցանէին զդպրապետն և ասէին. մեք աղերսեցուք զդահճսն. այլ դու փութա՛ փրկել զմանուկն զի մի՛ 'ի զուր մեռանիցի. Եւ մանուկն այլ խոնարհեցոյց զգլուխն վարժապետին իւրոյ. եբր թէ կամէր ասել՝ յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ: Եւ դպրապետն գնաց 'ի պալատն և եմուտ առ արքայն. և ողջունեաց մեծապատուով: Եւ կայսրն բարկութեամբ ասէ ո՛վ չար ծեր՝ ոչ լինիցիս դու ողջ: Ասէ դպրապետն. տէր՝ ողջութեան ծառայեցի և ոչ մահու: Ասէ կայսրն. սուտ է ամենայն խօսք քո: ետու զորդին իմ 'ի ձեզ լեզուաւ և խօսուն. ուսուցանել և դաստիարակել. արդ փոխանակ իմաստութեան և հանճարոյ՝ պապանձեալ եղև. և յաւել չարիս ևս զայս՝ զի կամեցաւ բռնադատել և լլկել զտիկինն իմ. վասն այնր գործոյ ահա՛ մեռանի այսօր. և զձեզ իսկ կորուսից դառն մահուամբ:

Ասէ դպրապետն. պապանձումն որդւոյ քո 'ի մէնջ ոչ է. զի ընդ մեզ խօսէր ուղիղ. Աստուած է դիտող թէ վասն է՞ր լուռ կայ: Եւ որ ասացեր թէ կամեցաւ բռնադատել զկինն իմ, ճշմարիտ ասեմ քեզ արքայ զի սուտ է բանդ այդ. զի գիտեմ զնա որ զայդպիսի իրս ոչ գործէ նա:

Եւ թէ վասն բանի կնոջ քո սպանցես զմիամօր որդին քո՝ դառնագոյն լիցի քեզ քան զայն, որ եղև զինաւորի միոյ. որ վասն բանի կնոջ իւրոյ

սպան զշուն իւր · որ ապրեցուցեալ էր զորդին
իւր 'ի մահուանէ :

Ասէ կայսրն · տամ զառակդ զայդ զի լսեցից :
Ասէ դպրապետն · ոչ տամ և ոչ աշխատիմ ·
զի մինչ ես պատմեցից՝ գուցէ սպանցեն զորդին
քո անդ · և զի՞նչ շահ լինիցի 'ի պատմութենէս :
Եւ թէ կամիս զի պատմեցից զառակս, նախ դարձո
զորդին քո 'ի մահուանէ և ած 'ի բանտ · և յոր-
ժամ լուիցես յինէն զառակ իմ՝ եթէ հաճոյ լի-
նիցի առաջի տեառնդ իմում, ապրեցո զորդին քո·
և թէ ոչ՝ սպա՛ն զնա :
Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զմանուկն
'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն :
Եւ սկսաւ տալ այսպէս :

*Առակ առաջին դպրապետին Պանդիլիոսայ · զոր տայ
կայսերն և փրկեաց զմանուկն 'ի մահուանէ :

Զինուոր մի կայր զօրաւոր և անուանի յոյժ ·
և ունէր որդեակ մի փոքր տղայ · և միամօր էր
որպէս որդին քո · և յոյժ սիրէր զնա : և երեք
նաժիշտք ծառայէին նմա : Առաջինն՝ դիեցուցա-
նէր և կերակրէր : Երկրորդն՝ լուանայր և զգե-
ցուցանէր : Երրորդն՝ օրօրէր և քնեցուցանէր :
Արդ՝ զինուորն այն՝ ունէր այլ ես շահէն մի և
շուն մի · և սիրէր զնոսա : Եւ շունն այն այն-
պիսի լաւութիւն ունէր՝ որ զինչ տեսանէր 'ի
վայրի՝ ընթանայր զկնի նորա · և ոչ դառնայր
դատարկ՝ մինչև ըմբռնէր · Եւ յորժամ ըմբռնէր՝
կանգնէր 'ի վերայ տատանն և հայէր · մինչև եկեալ
տէրն առնոյր զորսն 'ի նմանէ : Այլև՝ շունն այն

ունէր բնութիւն զայս ինչ. զի խմանայր զկենեյոյն. և յորժամ կամենայր տէրն ուրեք երթալ՝ եթէ բարի էր ճանապարհն այն՝ զայր շունն և երեւ խաղայր առաջի նորա. և եթէ չար լինէր ճանապարհն՝ ոչ գայր և ոչ խաղայր. այլ տրտում և տխուր հայէր. և տեսին՝ այնու ճանաչէր զչարն և զբարին: Այս շահէնն այն՝ ունէր սովորութիւն այսպէս. զի յորժամ յորս ելանէր տէրն իւր, ամենեւին զատարկ ոչ դառնայր. այլ հանապազ թռուցեալ ըմբռնէր զթռչունս և բերէր առ տէրն իւր: Այս յաւուր միում կոչեցեալ եղև 'ի խրախս առ զինուորականացն իւր և բազումք ժողովեցան 'ի խրախ այն: և ըմպեալ զինին և տեւեցին Ը աւուրս. և ուրախանայրն եւ. և մնաց տղայն միայն 'ի յօրօրոցին: Այս շունն պահէր զտղայն. և ննջէր շունն ընդ որմով օրօրոցին. և բազում նստէր 'ի վերայ ձագին: Այս տանն որմն պատառեալ էր. և կայր օձ մի 'ի ներքոյ որմին. և տեսեալ օձն որ ձայն մարդոյ ոչ էր անդ. այլ միայն գայր ձայն շնչոյ երախայոյ տղային 'ի յօրօրոցին. և հանեալ զգլուխն 'ի ծակէն դուրս՝ եսես և ահա ոչ ոք էր 'ի տանն. բայց միայն տղին շնչոյ ձայնն որ ննջէր 'ի մէջ օրօցին. և ելեալ օձն գայր ընդ օրօցք տղային զի սպանցէ զնա: Տեսեալ բազէյն որ ելաւ օձն 'ի ծակէն դուրս. և նայէր շանն. և եսես զի շունն խոր 'ի քուն էր. և թռեաւ բազէն շառաչմամբ թևոցն: Որ և խիթեալ զարթեաւ շունն 'ի ձայնէ թևոցն. և լքըև երաց զաչսն՝ եսես զօձն 'ի վերայ օրօցացն: և բարկացեալ շունն՝ անկաւ 'ի վերայ օձին. և օձն պատերազմեցաւ ընդ շանն: Օձն ջանայր սպանանել զտղայն: և շունն ջանայր սատակել զօձն: Այս այնչափ կռուեցան ընդ երեսս և վէրս եստուն

մեռելոցն՝ որք արիւնաթաթաւք եղեն շուրջ զօրանոցն՝ Իսկ արտասուեալ շանն՝ յարեալ ՚ի խայթոյ օձին ։ և ՚ի պատերազմելն ընդ մեռանելն ․ կործանեցաւ օրոցք տղայոյն ․ և մնաց ոչ եղև տղայն ։ Իսկ շանն այնչափ ջանաց մինչև սատակեաց զօձն ․ և նստէր ընդ պարապոյ օրանին ։ և լեզէր զվէրս իւր ։

Յետ այնորիկ փոքր ինչ մեծացեալ խաղն ․ և եկին նաժիշտքն՝ խառն յառաջ քան զանկելին ․ և տեսին զօրոցքն կործանեալ ․ և շուրջ զօրոցովքն լի արիւն ։ համարեցին թէ՝ շանն զտղայն կերեալ է ․ և անմիտ կանայքն ոչ կանգնեցուցին զօրանն զի տեսցեն թէ տղայն կայ թէ ոչ ։ Իսկ տեսեալ զմեռեալս եղկայք փախուցաք ապա թէ ոչ սպանանէ զմեզ տէրն մեր փոխանակ տղային ։ Իսկ իբրև փախչէին՝ պատահեցան տիկնոջն իւրեանց ։ Եւ ցնա տիկինն զի՞նչ է ձեզ զի՞նչ եղև ձեզ ։ Եւ նաժիշտքն ․ զաւլերեալ որդին տեառն մերոյ կերեալ է շանն ․ արդ վայ է մեզ թէ զի՞նչ լինիցի ։

Իսկ լուեալ տիկնոջն անկեալ յերկիր ՚ի վերայ երեսաց իւրոց առ դրան տաճարին ․ լալ եկոծէր զմանկն ասելով ։ ո՞չ թէ զի՞նչ պատահեաց ընդ որդեակին ։ Իսկ նոյնժամայն եկեալ զինուորն տեառն զինքն ետես զի լայր ողբալով և նաժիշտքն ընդ նմա ․ և հարցեալ՝ զի՞ է ձեզ ընդէ՞ր լայք ։

Եւ տիկինն ․ վայ է մեզ ․ զի շանն որ սիրելի՝ կերեալ է զմիամօր որդեակն քո ։ Յորժամ լուաւ զխօսս զայս ՚ի տիկնոջ իւրմէ՝ եմուտ ՚ի սենեակն ուր էր տղայն ․ և շանն իբրև ետես զտէր իւր՝ յարեաւ ընդ առաջ նորա և փաղաքշէր զնա ընդ առ նորա և ողորմանայր առաջի նորա ․ իբրև եւ սպանեալ զօձն և աղաղակեաց զտղայն ․ արդ սրտանց լցեալ պատրուակաց ։ Իսկ տէր նորա հանեալ զսուրն՝

էջարկ և կտրեաց ընդ մէջ . և սատակեցաւ շունն ։ Եւ գնացեալ 'ի յօրրոցք տղային՝ ետես զտղայն զի կենդանի էր և անվնաս ։ Եւ ետես մերձ 'ի յօրրոցքն օձ մի սատակեալ և եկեալ առ շունն՝ նայեցեալ ետես զի էր վիրաւորեալ յոյժ . և ծանեաւ զի շունն սպանեալ էր զօձն և զտղայն ազատեցուցեալ ։ Եւ տեսեալ բազայինն որ այնպիսի անխրատութիւն գործեաց տէրն իւր, նոյնժամայն Ճչեաց և կտրեաց զպարանն 'ի յոտիցն . և թռեաւ գնաց և այլ ոչ եկն առ տէրն իւր ։

Եւ ասէ զինուորն . աւա՜ղ թէ զինչ գործեցի լսելով կնոջն խրատում . և անկաւ 'ի մեղս մեծամեծս ։ Եւ ելեալ բոկ ոտամբ գնաց յանապատ . և անդ ապաշխարեաց զամենայն աւուրս կենաց իւրոց ։

Եւ յաւարտել առակին՝ ասէ դպրապետն ցկայսրն . լուա՞ր արքայ զոր ինչ ասացի քեզ ։ Ասէ կայսրն . լուայ և 'ի միտ առի . և յոյժ հաճոյ եղև ինձ բանքդ ։ Ասէ դպրապետն . Ճշմարիտ ասեմ քեզ արքայ՝ եթէ վասն բանի կնոջն քո սպանցես զորդին քո, դառնագոյն լիցի քեզ բանն՝ քան որ եղև նմա ։ Ասէ կայսրն . լաւ առակ ասացեր . և վասն քո բանիդ՝ ոչ սպանից զորդին իմ այսօր ։ Ասէ դպրապետն . եթէ ոչ սպանանես, շնորհակալ եմ քեզ . որ վասն բանից իմոց՝ կեանս շնորհեցեր այսօր որդւոյ քում և երկրպագեալ արքային՝ գնաց ։ Իբրև լուաւ թագուհին թէ մանուկն դեռևս կենդանի է, նստաւ 'ի վերայ մախրոյ . լայր լալեւն մեծ և ոչ կամէր 'ի վեր նայել ։ և ծառայքն ծանուցին կայսերն ։ Եւ լուեալ կայսրն՝ գնաց առ թագուհին և ասէ . զմէ՞ այդպէս տրտում ես և անմխիթար լաս ։ Ասէ թագուհին . միթէ ոչ գիտես դու թէ որպիսի ամօթ և նախատինք արար ինձ նզովեալ

որդլին քո . և դու խոստացար սպանանել զնա . և աՀա դեռևս կենդանի է : Ճշմարիտ ասեմ քեզ . զի լինելոց է քեզ 'ի յորդւոյ քումմէ որպէս եղև Հոլոսի միում ընդ վարազի խոզոյ * Ասէ կայսրն . աղաչեմ զքեզ ո՛վ սիրելի ամուսին իմ , պատմեա՛ ինձ զառակդ զայդ : Ասէ Թագուհին . զի՞նչ շաՀ ինձ պատմելն իմ . յերեկեան օրն այլ պատմեցի քեզ առակ մի՝ և ոչ ինչ շաՀեցայ :

Արդ պատմեցից քեզ առակ մի . եթէ 'ի միտ առցես՝ բազում շաՀս օգտիս : Եւ ասաց այսպէս :

*Սուտ երազոյդ . զոր ասաց Թագուհին վասն Հոլոսին և վասն վարազ խոզին . զոր Հաւանեալ կայսերն՝ յօժարէր սպանանել զորդին :

Թագաւոր մի էր յերկրի միում . և ունէր անտառ մի մեծ մայրեաց . և կայր 'ի նմա ծառ բազում լի՛ պտղօք :

Եւ կայր 'ի մէջ անտառին վարազի խոզ մի զօրեղ յոյժ . և շրջէր 'ի մէջ անտառին . ուտէր զպտուղն ծառոց :

Եւ ո՛չ ոք կարէր գնալ 'ի յանտառն այն կորել փայտ . այլ և գնացեալսն 'ի վերայ իւր՝ խողխողէր խոցն և կոտուսանէր : Մինչև Թագաւորն ձանձրացեալ 'ի նմանէ՝ Հրամայեաց քարոզ կարդալ ընդ ամենայն Թագաւորութիւնս իւր և ասել . եթէ ոք սպանցէ զխոզն զայն՝ տաց նմա զդուստրն իմ 'ի կնութիւն . և յետ մաՀուան իմոյ՝ ժառանգեսցէ զաԹոռ Թագաւորութեան իմոյ :

Եւ ո՛չ ոք եառ յանձն . զի երկնչէին 'ի զօրեղութենէ խոզին : Եւ էր 'ի ժամանակին յայնմիկ Հովիւ մի ոչխարաց , խորՀեցաւ ընդ միտս իւր և ասէ .

եթէ սպանանիցեմ ես զխոզն զայն ոչ միայն ինձ լինի բարի , այլ և ամենայն սիրելեաց և բարեկամաց իմոց .

Այլ նախ և յառաջ գնացից առ Թագաւորն և տեսից Թէ սպանանիցեմ ես զխոզն՝ տա՞յ ինձ զդուստրն իւր : Իսկ գնացեալ Հովիւն՝ եմուտ առ Թագաւորն և ասաց .

Տէր իմ Թագաւոր . եթէ սպանանեմ զխոզն զայն , տա՞ս ինձ զխոստացեալդ : Իսկ Թագաւորն երդուաւ և ասէ . այո Հովիւ՝ եթէ կորուսանես զխոզն զայն , ոչ Թէ միայն տամ զդուստր իմ , այլ և զԹագաւորութիւնս իմ տամ քեզ . որ յետ մահուան իմում դու Թագաւորես 'ի տեղի իմ : Յայնժամ ելեալ Հովիւն յերեսաց արքային . և էառ զգաւազանն 'ի ձեռն իւր . և ելեալ գնաց յանտառն այն ուր էր խոզն : Իսկ տեսեալ զնա խոզն՝ վազէր 'ի վերայ նորա . և Հովիւն փախեաւ և ել 'ի ծառ մի . և եկեալ խոզն սկսաւ ատամամբն փորել զտակ ծառին և կամէր կործանել զծառն : Իսկ ետես Հովիւն զի անկանի ծառն 'ի գետին , Հատանէր ձեռօքն զբաղցրահամ պտուղն որ կայր 'ի ծառն և արկանէր նմա : և խոզն տեսեալ զպտուղն՝ եթող զծառն և ուտէր զպտուղն . մինչև հանգեաւ և ընկողմնեցաւ առ ծառովն : Իսկ տեսեալ Հովիւն զի ընկողմնեցաւ խոզն՝ մեղմաբար էջ առ նա . և մին ձեռամբն զգուռն Հարեալ էր 'ի ծառոյն՝ և միւսովն քերէր զԹիկունս խոզին : զի Թէ կամեսցի խոզն Հարկանել զնա՝ փախիցէ դարձեալ 'ի ծառն : Իսկ այնչափ քերեաց՝ մինչ ննջեաց խոզն և եղև խոր 'ի քուն : Յայնժամ եՀան Հովիւն զսուրն իւր և սպան զխոզն : Իսկ այնու գործովն էառ զդուստր Թագաւորին . և յետ մահուանն նորա

ժառանգեաց զաթոռ նորա ։

Այս ասէ Թագուհին ցկայսրն • լուա՞ր արքայ և ՚ի միտ առեր ։

Ասէ կայսրն • այո՛ ՚ի միտ առի զոր ինչ ասացեր ։

Ասէ Թագուհին • մեկնեցից քեզ զառակս ։ Արքա-զոյն վայրենացեալ զօրեղութիւնն յոյժ՝ ցուցանէ զզօրութիւն քո • որ ոչ ոք կարէ կալ հակառակ հրամանաց քոց ։

Այս հովիւն՝ ցուցանէ զնշանեալ որդին քո • որ դաւաճանս խնամատութեան նորա՝ դիմեալ է ՚ի-վերայ քո • որպէս հովիւն այն քերելով զթիկունս խոզին՝ ննջեցոյց և սպան զնա ։

Նմանապէս և վարժապետքն նշանեալ որդւոյ քո՝ քծնեն զքեզ քաղցրաբան առակօք և սուտ խրեանց մինչև սպանցեն զքեզ • և զորդին քո թագաւորե-ցուցանել կամին ՚ի տեղի քո ։

Ասէ կայսրն • ոչ տացէ աստուած զայն օրն որ սպանանէ զիս որդին իմ • որպէս հովիւն զխոզն ։ արդ ահաւասիկ ոչ մեռայ նա կենդանի • և վասն այսո-րի քո տամ՝ չարաչար սպանանել զդա •

Ասէ Թագուհին • եթէ սպանանես մեծ լաւու-թիւն համարիմ քեզ զի նա չէ՛ արժանի որ մնայ կենդանի ։ այլ պատժոյ և պատուհասի արժանի է ։

Յերկրորդ անգամ հրամայէ զորդին սպանանել ՚ի հօրէ • և Զենոդոսոն փիլիսոփային գալ հասանէ և առակօք փրկէ զնա ։

Յերկրորդում աւուրն նստեալ կայսրն ՚ի գա-հոյսն իւր և կոչեաց բարկութեամբ զդահճա-պետն եւ ասէ • եթէ հան զորդին իմ ՚ի բանտէն • և տար առ ժամայն հատ զգլուխ նորա և հեռացո՛

զդլուխն 'ի մարմնոյ նորա ժ̃ կանգուն ։

Եւ եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային 'ի բանտէն . և կապեաց զձեռս 'ի յետս նորա երկու մահապարտի . և անցոյց ընդ մէջ քաղաքին. և մունետիկն առաջի նորա ձայնէր և ասէր ։ Ո՛վ որք որ կամի մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ՝ այսպիսի մահուամբ մեռցի ։ Եւ լուեալ ժողովրդոցն՝ ափսոսելով ասէին . ա՜հ ա՜հ ահա 'ի զո՛ւր տանին զմիամօր որդի արքային 'ի մահ և սպանումն ։

Յայնժամ Զենոնթուլոս դպրապետն սրընթաց երիվարաւ եհաս նոցա և ասէ . մի՛ շտապիք սպանանել զդա . քանզի յոյս ունիմ առ աստուած որ փրկեսցէ զդա այսօր 'ի մահուանէ ։

Եւ սաստեաց դահճապետին և ասէ . ընդէ՞ր կապեցեր զձեռս դորա . միթէ մահապարտ է որդի արքային. և ետ արձակել զձեռսն ։ Ասէ դահճապետն . ո՛վ դպրապետ՝ հրաման սաստիկ է թագուհւոյն թէ չարաչար սպան զնա . արդ եթէ կարօղ ես փրկել զդա՛ երթ առ կայսրն և աղաչեա՛ 'ի մահուանէ . և ես աստ արգելից զսա ։ Եւ մանուկն որպէս առաջնոյն աղաչէր զվարժապետն իւր փրկել զինքն 'ի մահուանէ ։ Եւ ժողովուրդքն առաւել փութացուցանէին զդպրապետն և ասէին ։ Ո՛վ բարի դպրապետ . յերեկեան օրն՝ ընկերն քո ազատեաց՝ այսօր դու՛ երթ առ կայսրն և աղաչեա՛ ։ Եւ դպրապետն ընթացեալ եմուտ 'ի պալատն . և եկաց առաջի կայսերն . երկրպագեաց և ողջունեաց զնա մեծաւ պատուով ։

Ասէ կայսրն . ո՛վ չար ծեր մի՛ մնասցես կենդանի ։ Ասէ դպրապետն . տէ՛ր՝ պարգևս առնուլ 'ի քէն ակն ունէի և ո՛չ անարգանս . Ասէ կայսրն . սո՛ւտ է ամենայն բան քո . ետու զորդին իմ 'ի ձեզ

լեզուս և խօսուն՝ ուսուցանել և դաստիարակել զնա • և արդ եղև պապանձեալ փոխանակ խնամութեան և հանճարոյ ։ յուել ես զչարլս զայս• զի կամեցայ բռնադատել և լլկել զկին իմ • վասն այն պատճառի մեռանի՛ նա այսօր ։ և զձեզ իսկ զամենեսեան կորուսից դառն մահուամբ ։ Ասէ դպրապետն • տէր արքայ՝ ասացեր թէ որդին իմ պապանձեալ եղև՝ և թէ մի՞ էր եղև աստուած է որ գիտէ • բայց խօսեցոյց է 'ի ժամանակի իւրում ։ Եւ որ ասացեր թէ կամեցայ բռնադատել զկին իմ, այդ ամենեւին սուտ է ։

Քանզի կին քո եթէ կրեալ լինէր զնա ինն ամս յորովայնի իւրում, այդպիսի վնաս ո՛չ դնէր 'ի վերայ նորա ։

Արդ զայս ասեմ քեզ արքայ • եթէ վասն բանի կնոջ քո սպանանես զխասօր որդին քո, դառնագոյն պատահեսցէ քեզ քան զայն՝ որ պատահեցաւ զինուորի միոյ • որ վասն կնոջն իւրոյ՝ անմեղ զդասապարտեզին 'ի մէջ հրապարակին ։ Ասէ կայսրն ասա՛ զառակդ զայդ թէ վասն է՞ր եղև այդպէս ։ Ասէ դպրապետն • ո՛չ ասեմ և ո՛չ աշխատեմ 'ի զուր և դատարկ • դուցէ եղիցի զի մինչ ես պատմեցից զառակս սպանցի որդին քո անդր • և զի՞նչ շահ լինիցի 'ի պատմութենէս ։ Արդ եթէ կամիս լսել զառակն իմ, նախ դարձո՛ զորդին քո 'ի մահուանէ 'ի բանտ • և ես պատմեմ զառակս ։ Եթէ հաճոյ լինիցի քեզ առակս՝ ապրեցո՛ զորդին քո, և թէ ո՛չ սպա՛ն զնա ։

Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն ։

Եւ սկսաւ ասել այսպէս ։

*Առակ երրորդ *Մովսեսեան · զոր առաց վասն հնոց մեր որ են զայն անեղ նի զատապարտութեան ։

Ի քաղաքի միում էր զինուոր մի ծեր · զոր առեալ էր մատաղաշ աղջիկ մի 'ի կնութիւն իւր · (որպէս տէր իմ արքայ առեալ է կին մատաղաշ ·) և յոյժ սիրէր զնա ։ և զամուսինքն ոչ ումեք հաւատայր ։

Այլ և ամենայն գիշեր փակէր զդուռն · և զբանալիսն պահէր 'ի ներքոյ բարձի իւրում ։ Իսկ զինուորըն այն ծեր էր · և ոչ ունէր կարողութիւն ամուսնութեան՝ կատարել զկամս կնոջ իւրոյ ։ վասն այն անգամ կինն սիրէր զայլս ։ Իսկ ամենայն գիշեր յորժամ ննջէր այրն իւր՝ առնոյր զբանալիսն գաղտ և բանայր զդուռն և երթայր առ սիրաւորն իւր՝ որ կատարէր զկամս նորա · և լցեալ ըղհեշտութիւն և զցանկութիւն մարմնոյն իւրոյ՝ դառնայր առ այրն իւր ։ Իսկ 'ի գիշերի միում յորժամ ննջեաց այրն, ել կինն և գնաց ըստ սովորութեան իւրոյ առ սիրաւն իւր ։ Իսկ զարթուցեալ այր նորա 'ի քնոյն՝ ոչ եգիտ զկինն իւր մերձ ինքեան ։ Իսկ ելեալ ետես զդրունսն 'ի բաց · և փակեալ պնդեաց · և ելեալ 'ի վերի դարպասն՝ հայէր 'ի պատուհանէն · զի տեսցէ զգալն նորա ։ Իսկ յետ խօսելոյ հաւուն՝ դարձաւ կինն փութալով 'ի տուն · զի մի՛ եկեալ պահապանքն գտցեն զնա արտաքս ։ Իսկ կայր 'ի քաղաքին այն սահման այսպիսի · զի յորժամ երեկոյ լինէր՝ յետ երիցս անգամ հաւուն խօսելոյ՝ հնչեցուցանէին զանգակս ։ Իսկ յետ հնչեցուցանելոյ զանգակին՝ եթէ զոք գտանէին արտաքոյ՝ ըմբռնէին և տանէին 'ի բանտ և փակէին

դատապարտելին զնա 'ի մէջ հրապարակին առաջի ամենեցուն 'ի նախատինս ։ Եւ եկեալ կինն՝ եգիտ զգլուխն փակեալ ․ զահի հարաւ և խորհէր Թէ զի՞նչ արասցէ ․ և յետոյ վստահացեալ՝ բաղխէր զդուռն ։ Ասէ այրն ․ ով չարեաց մակարդ-չար կին ․ այս քանիցս անգամ փորձեցի զքեզ ․ որ ելեալ յանկողնոյ իմոյ, երԹեալ պոռնկիս ընդ այլում ։ Ասեմ քեզ ստոյգ ․ կացցես դու այդր՝ մինչև պահապանքն եկեալ գտցեն զքեզ և տարցեն 'ի բանտ ․ և 'ի վաղիւն դատապարտեսցեն 'ի մէջ հրապարակին ։

Ասէ կինն ․ ով տէր իմ վասն էր ասես զայդ ․ ասեմ քեզ զճշմարիտն ․

Յորժամ ննջէի ես ընդ քեզ 'ի յանկողնին, եկըն աղախին մօր իմոյ՝ կոչեաց զիս և ասէ ․ փուԹա՛ եկ առ մայրն քո՝ զի յետի շունչն է ։ Եւ ես ոչ կամեցայ զարԹուցանել զքեզ 'ի քաղցր քնոյդ ։ և գնացի առ մայրն իմ ․ տեսայ՝ և փուԹով դարձայ առ քեզ ․ և այնչափ փուԹով ընԹացեալ եկի՝ որ վաստակեալ 'ի ճանապարհին տկարացայ յուժոյս ։ Արդ աղաչեմ զքեզ՝ բա՛ց ինձ զդրունս զի մտից 'ի ներքս ․ զի մի եկեալ պահապանքն զըտցեն զիս ․ Ասէ այրն ․ Ճշմարիտ որ ոչ բացից՝ մինչև եկեալ պահապանքն առցեն զքեզ ։ Ասէ կինն ․ վասն աստուծոյ աղաչեմ զքեզ՝ բա՛ց զդուռն և ա՛ռ զիս 'ի ներքս ․ զի ամօԹ և նախատինք առնես զիս ․ քեզի՝ և ծնողացն իմոց՝ և ազգականացս ։ Ասէ այրն ․ 'ի միտ ած Թէ քանիցս անգամ պղծեցեր զանկողին իմ պոռնկուԹեամբ քով ․ լա՛ւ է քեզ աստ չարչարել մարմնով վասն մեղաց քոց՝ և մի՛ 'ի դժոխս ։

Ասէ կինն ․ ով սիրելի տէր իմ վասն սիրոյ այ-

նորին որ խաչեցաւ վասն մեր՝ ողորմեա՛ ինձ և ա՛ռ զիս 'ի ներս :

Ասէ այրն • զո՞ր կաղաչես • զի այդպէս մրմռալո՛ց ես առաջի դռանդ՝ մինչև եկեալ պահապանքն տացեն զքեզ : Ասէ կինն • ո՛վ տէր իմ , գիտես զի ո՛չ է հեռի ջրհորն 'ի դրանէս • եթէ ոչ բացցես ըզ դուռն և տացես զիս 'ի ներքս , ընկեցից զիս 'ի ջրհորն և խեղդեցայց : Ասէ այրն վաղո՛ւց պարտ էր քեզ խեղդիլն :

Ասէ կինն • եթէ կամիս զխեղդիլն իմ , խեղդեցայց : Արդ մինչ խեղդեալ չեմ՝ արարից կտակ : Նախ և առաջին յանձն առնեմ զիս աստուծոյ զհոգի իմ • և 'ի տուրս կոյսն մարիամ • և յամենայն սուրբս • և զմարմին իմ յորժամ հանցեն 'ի ջրհորոյն՝ թաղեսցեն յեկեղեցւոջ սրբուհւոյն վարվառեայ • և զամենայն ինչս զոր ունիմ , դու գիտես տէր իմ • որպէս և կամիս այնպէս արասցես : Եւ զայս ասացեալ ՝ գնաց մերձ 'ի ջրհորն • և էր առ ջրհորովն վէմ մի մեծ • զոր առեալ երկուքին ձեռամբ էարկ 'ի ջրհորն :

Եւ լուեալ այրն զձայնն քարին յատակ ջրհորին՝ կարծեաց թէ կինն ընկէց զինքն 'ի հորն • և ասէ՝ աւա՛ղ թէ զի՞նչ գործեցի • զի կինն իմ խեղդեցաւ : Եւ վաղվաղակի իջեալ ընթացաւ 'ի ջրըհորն • և կինն թագեաւ յետոյ կողմանէ դրանն • և իբրև ել այրն՝ եմուտ կինն 'ի ներքս և փակեաց զդուռն 'ի ներքուստ և ել 'ի դարպասն : Եւ զինուորն կանգնեալ 'ի վերայ ջրհորին՝ աղաղէր զկինն և ասէր լալով • վա՜յ ինձ որ կորուսի զկինն իմ • չա՛ր էր ժամն որ ոչ բացի ըզդուռն :

Եւ կինն ծիծաղելով ասէ • ո՛վ նզովեալ ալեւոր

զինչ գործես մինչև ցայս վայր 'ի դուրս . Միթէ սակաւ էր քեզ չշատանալ մարմնով իմով . որ զամենայն գիշեր դնաս 'ի բոզատունս պոռնկել ընդ նոսա , Եւ այժմ լուեալ զձայն կնոջն՝ տուէ . օրհնեալ է աստուած . և գոհութիւն աստուծոյ որ ողջ ես . Մարդ բաց զդուռն զի մտից 'ի ներս ընդէ՞ր փակեցեր զդուռն . զի ես կամէի սակաւ մի խրատել զքեզ և երկուցանել . և այժմ բանալ զդուռն : Ասէ ցնա կինն . եթէ ոք փորեսցէ խորխորատ ընկերի իւրոյ՝ ինքն նախ ընկեսցի 'ի մէջ նորա : Դու ո՛չ կամէիր բանալ զդուռն ինձ . և ո՛չ ես բացից քեզ . մինչև տեսցեն զքեզ պահապանքն : Քանզի ես ո՛չ էի 'ի մէջ չարեաց՝ զոր ասացեր 'ի վերայ իմ , որպէս ասեն առակս թէ՝ սեպեցեալն մրով՝ մրճոտէ և զայլս :

Այնինքն՝ չար ոք՝ զամենայն ոք չար կարծէ . այնպէս և դու շնացօղ գոլով՝ զփեսան քո 'ի վերայ իմ բառնաս :

Ճշմարիտ ասեմ քեզ՝ զի ա՛յդր մնալոց ես դու մինչև տեսցեն զքեզ պահապանքն :

Ասէ այրն . ո՛չ երկնչիս դու յայդ . ընդէ՞ր Ճշմարտես զայդպիսի բան 'ի վերայ իմ : Ոերացոյ 'ի քաղաքիս այս 'ի մանկութենէ հետէ . և մինչև ցայժմ ո՛չ եղև անուն այդ 'ի վերայ իմ զոր դու ասես : Եւ թէ վաղուն նախատեն զիս 'ի մէջ հրապարակին՝ միթէ ո՛չ լինի ամօթ ինձ և քեզ . և նախնեաց մերոց մինչև յաւիտեան . վասն որոյ աղաչեմ զքեզ բաց զդուռն :

Ասէ կինն . ո՛չ բացից մի՛ աշխատ առներ զիս . և մի՛ աղաչեր ինձ 'ի զուր . լա՛ւ է քեզ աստ չարչարիլ վասն մեղաց քոց՝ քան թէ 'ի դժոխս :

Տե՛ս զի՞նչ առնէ իմաստութիւնն . երբեք բան ասելն է

անձին իմոյ ։ Աղքատ հպարտն ։ ստախօս մեծա-
տունն ․ և ծեր պոռնիկն ․ որպէս և դու իսկ ես
ծեր և շնացօղ ։ Այլ և այս մեծ ողորմութիւն
է աստուծոյ որ տանջիս աստ մարմնով և մի՛ տես-
ցես զտանջանսն յաւիտենականն ։

Ասէ այրն ո՛վ սիրելի տիկին իմ ․ Աստուած ո-
ղորմած է և գթած ․ և ո՛չ խնդրէ այլ ինչ՝ բայց
միայն զղջանալ ․ վասն Աստուծոյ սիրոյն աղա-
չեմ զքեզ բաց զդուռն զի մտից 'ի ներքս ․ և այլ
ո՛չ արարից զայդ զոր ասես 'ի վերայ իմ ․

Եւ կինն նշաւակելով ասէ ո՛վ արար զքեզ վար-
դապետ և քարոզօղ ․ եթէ զայդ գիտէիր որ աստ-
ուած ողորմած է , ընդէ՞ր ոչ բացեր զդուռն ինձ ․
Ճշմարիտ ասեմ քեզ՝ ո՛չ առից զքեզ 'ի ներքս ։

Եւ մինչդեռ նա զայս խօսէր , հնչեցուցին զզան-
գակն ։

Ասէ այրն ․ ահա՛ հնչեցուցին զզանգակն ․ բա՛ց
զդուռն՝ զի մի՛ եկեալ պահապանացն գտցեն զիս ։

Եւ մինչդեռ խօսէր՝ եկին պահապանքն և գտին
զնա արտաքս ։

Եւ ասեն ցնա ․ զի՞նչ գործես աստ 'ի ժամ գի-
շերիս ։ Եւ լուեալ կինն զձայն պահապանացն՝ ա-
սէ ցնոսա ․ ո՛վ եղբարք իմ աղաչեմ զձեզ՝ առէ՛ք
զդա այտի և արարէ՛ք դմա ըստ մեղաց իւրոց ․ զի
ամենայն գիշեր թողեալ զիս՝ երթայ ընդ բոզս ։
Եւ այսչափ ժամանակ համբերեցի և ո՛չ յայտ-
նեցի՝ թերևս դարձցի 'ի գործոյն այնմիկ և ո՛չ
դարձաւ ․ մինչև ինքն զինքն մատնեաց ։ Եւ պա-
հապանքն առեալ տարան զնա 'ի բանտ ․ և 'ի
վաղիւ անդր՝ դատապարտեցին զնա ըստ օրինաց
իւրեանց ։

Յայնժամ ասէ դպրապետն ցկայսրն ․ 'ի միտ ա-

ուէր արքայ զատախս զայս զոր ասացի քեզ ։ Ասէ կայսրն ․ այո՛ 'ի միտ առի ․ զի նզովեալ և չար կլինի այն՝ մատնեաց զայրն իւր դառն տանջանաց 'ի զուր ։ Ասէ դպրապետն ․ Ճշմարտիւ ասեմ քեզ արքայ եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո , դառնագոյն լիցի քեզ քան զինուորին այն ։ Ասէ կայսրն ․ ամէն ասեմ քեզ դպրապետ ․ ոչ սպանից զորդին իմ այսօր վասն բանի քոյ ։ Ասէ դպրապետն ․ եթէ լուիցես խրատու իմոյ և ոչ սպանցես զորդին քո , մեծ բարութիւն համդիպելոց է քեզ ․ զայս ասաց դպրապետն և երկիրպագ արքային և գնաց ․

Իբրև լուաւ Թագուհին թէ այսօր ևս ոչ մեռաւ որդի արքային , եմուտ 'ի սենեակ իւր և լայր անմխիթար ․ կոծէր զանձն ասելով ․ վա՜յ ինձ՝ զի ոչ կարացի խնդրուածք մի կատարել տալ արքային իմոյ ․

Այսպիսի աղիողորմ և բարձր ձայնիւ լայր և հառաչէր ․ մինչև ծառայքն ծանուցին արքային ․ Եւ ելեալ կայսրն՝ գնաց առնա և ասէ ․ ով սիրելի տիկին իմ վասն է՞ր այդպէս անողորմ լաս ․ Ասէ Թագուհին ․ եթէ սիրելի լինէի քեզ՝ ըզխնդրուածս իմ կատարէիր ․ և դարձեալ՝ թէ ոչ էի սիրեցեալ զքեզ 'ի բոլոր սրտէ՝ ոչ էր ինձ կսկիծ ․ բայց իմ վէրս խիստ մեծ է ․ զի 'ի մէջ նախատանաց թողեր զիս ․ և ոչ սպաներ զնզովեալ որդին քո ․ որ այսպիսի խայտառակեաց զիս զոր աչօք քով տեսեր տէր իմ արքայ ։ Այլ դու ունկնդիր ես եղեալ վարժապետաց որդւոյ քո , և ոչ գիտես թէ նոքա ինչ կու խորհին քեզ ․

Բայց ես առաւել կու սիրեմ զքեզ և կամիմ զառողջութիւն քո և դու ոչ գիտես ։ Ապա լե-

նելոց է քեզ այնպէս՝ որպէս եղև զինուորի մի-
ոյ. որ որդի իւր գլխատեաց զնիքն։ Ասէ կայսրն՝
ասա ինձ ո՛վ սիրելի Թագուհի իմ. Թէ ինչ
պատճառի համար արար այնպիսի անողորմ բան
հօրն իւրոյ։

Ասէ Թագուհին. տուեալ քեզ առակս ազնուա-
գոյնս, և դու տէր իմ լու 'ի միտ առ։ Եւ սկ-
սաւ ասել

*Երրորդ առակ Թագուհւոյն. որ հաւանեցոյց զկայսրն
ազատել զորդին։

Ի քաղաքի միում կայր անուանի զինուոր մի.
և ունէր որդի մի և դուստր երկու։ Եւ զին-
ուորն այն՝ սիրէր զխաղս. մինչև զամենայն ինչս
իւր և զստացուածս մսխեաց 'ի խաղս. և աղքա-
տացաւ յոյժ։

Եւ 'ի յայնմ ժամանակին՝ նստէր 'ի նոյն քաղաքին
կայսր Օգդախանոս անուն. որ մեծացաւ ընչիւք
քան զամենեսեան որ յառաջ քան զնա էին։

Եւ ժողովեաց բազում ոսկի և արծաթ. և շինեաց
բ աշտարակ. զմինն էլից ոսկւով, և զմիւսն ար-
ծաթով. և յանձնեաց զնոսա պահապանաց։

Իսկ զինուորն այն որ աղքատացաւ՝ կոչեաց զորդին
իւր և ասէ. որդ. աւասիկ աղքատացայ ես. և
կամիմ վաճառել զժառանգութիւն իմ զոր ու-
նիմ. և Թէ վաճառեցից՝ կորիցես դու և քոյրք-
ք քեզ յետ մահուան իմոյ։

Ասէ որդին ցհայրն. արդ խորհեալ Թէ զինչ ա-
րասցուք՝ զի լինիցիմք 'ի բարի կեանս. և ժառան-
գութիւնն մեր ոչ վաճառեսցի. Ասէ հայրն. որ-

դեռեւս գիտեմ զի կայսրն ունի երկու աշտարակս. մինն լի՛ ոսկւով, եւ միւսն լի՛ արծաթով. երթիցուք եւ գողասցուք անտի եւ ոչ վախճանեսցուք զմիջերս : Եւ ՚ի գիշերին այնմիկ եկեալ գնացին յաշտարակն հանել ոսկի. եւ մտեալ ՚ի ներքս՝ որչափ որ կարացին բառնալ՝ առին եւ դարձան Եւ ՚ի վաղիւն՝ տեսին պահապանքն աշտարակին զի բացեալ էին զաշտարակն եւ գողացեալ էին ՚ի յոսկւոյն. եւ վաղվաղակի գնացին առ կայսրն եւ պատմեցին նմա. թէ պատառեալ են զաշտարակն եւ գողացեալ են յոսկւոյն : Ասէ կայսրն. չէ՛ ինձ փոյթ. ՚ի ձեզանէ՛ գիտեմ ես զոսկին : Եւ պահապանքն եկեալ յերեսաց արքային խորհէին թէ զի՞նչ արասցեն :

Եւ ասէ մինն ՚ի նոցանէ. եկայք արասցուք այսպէս. առցուք պղինձ մի մեծ՝ եւ թաղեսցուք ՚ի ներքոյ կողմանէ աշտարակին. եւ լցցուք ՚ի մէջ նորա սոսինձ : եթէ դարձեալ գայցէ գողն՝ անկցի ՚ի պղինձն եւ սոսինձն ոչ թողուցու զնա ելանել անտի : եւ արարին այնպէս :

Եւ յետ սակաւ ինչ աւուրց՝ դարձեալ աղքատացաւ ծերունին այն. եւ կրկին եւս հանդերձ որդւովն առնուլ ոսկի յաշտարակէ անտի. եւ երթայր հայրն ընդ առաջ, եւ որդին զկնի : Եւ իբրեւ եմուտ ՚ի ներքս եւ խոր թաղեցաւ մինչեւ ցպարանոցն, աղաղակեաց ՚ի ձայն մեծ եւ ասէ. որդեակ իմ մի՛ գայցես այսր. քանզի այլ ոչ կարես ելանել : Ասէ որդին՝ եկից եւ փրկեցից զքեզ. եւ եթէ ես ոչ կարեմ օգնել՝ բերից եւ զայլս զի օգնեսցեն. եւ հանից զքեզ աստի, քանզի եթէ գտցեն զքեզ այդր զամենեսեան զմեզ կու սպանանեն :

Ասէ հայրն. մի՛ տացէ աստուած զայն օրն՝ զի գիտասցէ որ թէ ով եմ ես. արդ լաւ է ինձ

միայնոյ մեռանիլ՝ և ո՛չ ձեզ ամենեցուն ։ Ա՛ռ զսուրդ և հա՛տ զգլուխ իմ․ զի յորժամ դարձեն զիս առանց գլխոյ՝ ո՛չ ո՛ք կարէ ճանաչել թէ ո՛վ իցեմ ։ Ասէ որդին բարւոք տացեր հայր․ և հանեալ ըզսուրն՝ էհատ զգլուխ հօրն և էարկ 'ի հոր մի ։ Եւ երթեալ 'ի տունն՝ պատմեաց քուերցն զեղեալ գործն և նոքա լուեալ զմահ հօրն իւրեանց՝ սկսան ողբալ լալ և կոծալ ։

Եւ 'ի վաղիւ անդր եկեալ պահապանաց տեսին մարդ մի մեռեալ 'ի մէջ պղնձին․ և գլուխն չկայր․ և գնացեալ պատմեցին արքային ։

Եւ հրամայեաց կայսրն՝ զի զմարմինն զայն կապեսցեն 'ի յագի ձիոյ միոյ և շրջեցուսցեն փողոցէ 'ի փողոց և յոր տանէ լուիցեն ձայն լալոյ 'ի նոցանէ է մարդն այն ։ Եւ արարին այնպէս՝ ո՛պ հրամայեաց կայսրն․ և շրջեցուցանէին զնա փողոց փողոց ։ որ և եկեալ հասին առաջի դրան նորա ։ Եւ դստերացն տեսեալ զհայրն իւրեանց՝ լային դառնապէս ։ Եւ իբրև իմացան պահապանք շրջեցուցանողք դիոյն նոցա, իսկոյն որդի մեռելոյն առեալ դանակ՝ ծակեաց զերակ ձեռին իւրոյ որ էլ արիւն յոյժ սաստիկ ։ և 'ի քննելն նոցա՝ ասաց որդին թէ վասն ինձ լան քուերքն իմ ։ Վասն որոյ հաւատացեալ նոցա խօսիցն նորա՝ դարձան և շրջեցուցանէին զմարմինն ընդ քաղաքն ամենայն ։ Եւ իբրև ոչ գիտացին թէ ուստի էր․ տարեալ կախեցին 'ի փայտէ ։ Արդ նշովեալ որդին՝ մէկ որ սպանեաց զհայրն իւր, և երկու զի ո՛չ հանգոյց զմարմին նորա 'ի հող տապանին ։ Եւ ասէ Թագուհին․ տէր 'ի միտ առեր զառակս որ պատմեցի քեզ ։ Ասէ կայսրն․ այո՛ 'ի միտ առի ։ Ասէ Թագուհին․ երկնչիմ տէր իմ արքայ՝ գուցէ

և քեզ պատահեսցէ դառնագոյն քան զնորայն։ Ասէ կայսրն․ լաւ առաւել ասացեր ո՛վ սիրելի տիկին իմ․ որդին այն նզովեալ էր որ էհատ զգլուխ հօրն իւրոյ․ և զմարմին նորա ես ոչ եդ*ի գերեզմանի։ Ճշմարիտ ասեմ քեզ ո՛վ թագուհի իմ․ զի ոչ կարասցէ որդին իմ առնել այնպէս՝ որպէս նա արար․ քանզի ընդ լուսանալ առաւօտուն՝ տամ սպանանել զնա ։

*Երրորդ անգամ տանելն զորդի արքային 'ի մահ և գալ հասանելն Փաւթեան դպրապետին և առաջօք փրկելն զնա։

Ի յերրորդում աւուր գայ նստի կայսրն 'ի գահոյսն իւր․ և կոչեաց զդահճապետն և ասէ՝ հա՛ն զորդի իմ 'ի բանտէն․ և տա՛ր ընդ մէջ քաղաքին փողով ազդեցութեան․ և տա՛ր սպա՛ն ըզնա որպէս մահապարտ․ և հեռացո՛ զգլուխն 'ի մարմնոյն երեսուն կանգուն ։ Եւ եկեալ դահճապետն՝ եհան 'ի բանտէն զորդի արքային․ և կապեաց զձեռսն 'ի յետս որպէս մահապարտի․ և ետ ձայնել առաջի նորա մունետիկս ասելով՝ թէ ով ոք մեղանչել կամի ընդ յետնամօրն իւրոյ՝ այսպիսի մահուամբ մեռցի ։

Եւ մինչդեռ տանէին՝ եհաս դպրապետն սրընթաց երիվարաւ․ որում անունն էր Փաւթոս։ Եւ տեսեալ զորդի արքային որ այնպիսի խեղճ և ողորմելի տանէին 'ի մահ, բարկացեալ դահճապետին և ասէ․ ընդէ՞ր այդպիսի կապեր էք զորդի արքային․ և ետ արձակել զձեռս ։

Ասէ դահճապետն․ ո՛վ դպրապետ՝ հրաման թագաւորին սաստիկ է․ և թագուհոյն ես առաւել․ մեք զի՞նչ արասցուք։ Եւ ժողովուրդքն որ շուրջն

կայսին՝ ողբալով աղաղակելն և ասելն․ ո՛վ բարի դպրապետ՝ փութա՛ առ կայսրն և ազատեա՛ զորդի արքային և զաշակերտն քո․ որպէս ընկերքն քո ազատեցին։ Եւ մանուկն անմռունչ խոնարհեալ երկիրպագ վարժապետին իւրոյ․ որպէս թէ կամէր ասել՝ ազատեա՛ զիս ՚ի մահուանէ։

Ասէ դպրապետն․ դադարեցէք դուք ՚ի տեղիս այս՝ մինչ ես երթայց առ կայսրն․ զի յոյս ունիմ առ աստուած որ փրկեմ զդա այսօր ՚ի մահուանէ։

Եւ գնաց դպրապետն շտապով ՚ի պալատն․ եմուտ առ կայսրն․ և մեծաւ պատուով ողջունեաց զնա

Ասէ կայսրն․ ՚ի չարիս լինիցիս դու։

Ասէ դպրապետն․ տէ՛ր՝ պարգևեա ակն ունել ՚ի քէն և ո՛չ բարկանալդ

Ասէ կայսրն․ որպէս ծառայեցեր՝ նոյնպէս և ունիցիս․ քանզի ո՛չ պարգևի ծառայեցեր այլ մահու։ Ետու զորդին իմ ՚ի ձեզ լեզուաւ և խօսուն․ ուսուցանել և դաստիարակել․ և այժմ եղև պապանձեալ փոխանակ իմաստութեան և հանճարոյ։ Յաւել ես զչարիս զայս՝ որ կամեցաւ բռնադատել և լլկել զկինն իմ։

Վասն այնր գործոյն մեռանի ահա այսօր․ և ձեզ ես չարչարանք կազմեմ, որ աչօք ձերովք տեսանէք զմահ ձեր։ Ասէ դպրապետն․ տէր իմ արքայ զոր ասացեր թէ պապանձեալ եղև որդին իմ, այն աստուծոյ է դատաստան․ զի նա՛ է միայն որ խլից լսել տայ և համրոց խօսել․ և գիտեմ որ ո՛չ է պապանձումն լեզուի որդւոյ քո ճշմարիտ․ թէպէտ կամի խօսիլ՝ ապա զի չէ՛ ժամանակ։ Եւ

զոր ասացեր թէ կամեցաւ բռնադատել և լլկել զկինն իմ, մի՛ հաւատար տէր իմ արքայ. զի այդ զո՛ւր է 'ի վերայ նորա: Իսկ ո՛չ հաւատամ. վասն զի չկայ այլ ինչ չարագոյն 'ի վերայ երկրի քան զչար կանայս: և գիտեմ ցուցանել թէ որպէս լեալ են կանայք սուտք և զրախօսք:

Եւ դու թէ կամիցիս վասն բանի կնոջ քո սպանանել զորդեակն քո, լինելոց է քեզ որպէս եղև ումեմն. որ վասն բանի կնոջ իւրոյ՝ սպան զսիրակն անձեղն իւր:

Ասէ կայսրն. ասա՛ ինձ թէ որպէս ստախօսք են և զրախօսք կանայք. ասա՛ և վասն անձեղին:

Ասէ դպրապետն ո՛չ ասեմ և ո՛չ աշխատիմ. զի մինչ ես պատմեցից զառակս՝ զորդին քո անդր սպանցեն. և զի՞նչ շահ լինիցի 'ի պատմութենէս: Եթէ կամիս լսել զառակն իմ, նախ դարձո՛ զորդին քո 'ի բանտ. և ես պատմեցից զառակս: Եթէ լիցի հաճոյ կամաց քոց առակս՝ ապրեցո՛ զորդին քո. և թէ ո՛չ նոյնժամայն սպա՛ն զնա: Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր 'ի բանտ. մինչև պատմեսցէ դպրապետն զառակն. Եւ դարձուցին զորդի արքային 'ի բանտ: Եւ սկսաւ դպրապետն ասել:

այսպէս:

## *Առակ երրորդ դպրապետին. զոր ասաց վասն անձեղին 'ի վերայ սպանման խորամանկութեամբ կնոջն:

Ի քաղաքի միում՝ էր այր ոմն աղնուական և անուանի յոյժ. և ունէր անձեղ մի՝ զոր ուսուցեալ էր լեզու երբայեցերէն. որ երբև զմարդ ուղիղ խօսէր.

Եւ անծեղն այն զոր ինչ տեսանէր կամ լսէր՝
պատմէր զամենայն տեառն իւրոյ ։

Եւ այրն այն՝ ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ · նման Թագուհւոյն քո · Եւ կինն այն ոչ սիրէր զայրն իւր · այլ ատէր զնա և արհամարհէր և սիրէր զայլս ։ Եւ յորժամ գնայր այրն ՚ի վաճառականութիւն, նոյն ժամայն կոչէր կինն զսիրաւն իւր · և ննջէին ընդ իրեարս և պոռնկէին ։ Եւ յորժամ գայր այրն նորա, պատմէր նմա անծեղն զամենայն · Թէ այսպէս պոռնկեցաւ կինն քո ։ Եւ այնչափ եղև՝ մինչև ամենայն քաղաքն լուան զպոռնկութիւն կնոջն նորա ։ Եւ վասն այնորիկ՝ այրն բազում անգամ խրատէր զկինն և ասէր · ընդէ՞ր գործես զայս ։

Ասէ կինն ։ քա՛ւ լիցի ինձ տէր իմ գործել զայդ · այլ դու հաւատաս նզովեալ անծեղիդ · զի քանի որ նա կենդանի է՝ մեք ՚ի խաղաղութեան ոչ լինիմք · քանզի դու հաւատաս ստութեան նորա ։ Ասէ այրն · ո՞վ կին դու ո՞չ գիտես որ նա սուտ ոչ խօսի · այլ զոր ինչ տեսանէ և լսէ՝ զայն խօսի ։

Եւ յաւուր միում եղև, զի ել այրն իւր ըստ սովորութեան իւրում և գնաց ՚ի վաճառականութիւն ։ Եւ կինն յղեալ կոչեաց զսիրաւն իւր՝ զի եկեսցէ առ նա ։ Եւ եբրև երեկոյ եղև, եկն սիրաւն իւր և բաղխէր զդուռն ։ Եւ կինն ելեալ եբաց զդուռն և ասէ · մի՛ երկնչիր արի՛ վստահ ՚ի ներս · զի ոչ ոք կայ աստ որ տեսանէ ըզքեզ ։ Ասէ սիրաւն · ո՛վ սիրելի իմ · անծեղն տեսանէ և պատմէ ամենեցուն ։ Ասէ ցնա կինն եկ և մի՛ երկնչիր՝ զի յայսմ գիշերիս առից զվրէժս իմ ՚ի նմանէ ։

Եւ լուեալ անծեղն զխօսս նոցա և ասէ . ո՛վ եղկելի այր դու՝ ննջեա՛ տեառնն իմում . և նըն-ջես ընդ կնոջ նորա . Թէպէտ 'ի խաւար գիշերիս ո՛չ տեսանեմ զձեզ , այլ լսելով զձայնն ձեր՝ գի-տեմ թէ զի՛նչ գործէք . և յորժամ եկեսցէ տէ-րըն իմ , պատմեցից նմա զամենայն : Ասէ սիրաւն . ո՞չ ասացի քեզ թէ անծեղդ այդ խայտառակէ զմեզ . ահա լսես զի՛նչ ասէ : Ասէ ցնա կինն մի՛ երկնչիր . եկ ընդ իս զի 'ի սենեկի գնասցուք և ննջեսցուք . և գնացին ննջեցին 'ի միասին զգիշերն ողջոյն 'ի սենեկի անդ : Եւ 'ի հաւախօսին՝ ել կինն և կոչեաց զմինն 'ի յաղախնեացն իւրոց և ասէ . ե՛լ 'ի տանիսն և ա-ռա՛ ծակ 'ի վերայ գլխոյ անծեղին . ա՛ծ աւել 'ի վերայ բոլորի ծակոյն . զի հողն և աւաղն տանի-սին իջցէ 'ի վերայ գլխոյ անծեղին . և ջրձգեա՛ ջուր 'ի վերայ նորա : Եւ աղախինն արար այնպէս . մինչ զի եղև անծեղն կիսամահ : Եւ յառաւօտու պահուն՝ ել սիրաւն և գնաց :

Եւ յայնմ աւուրն եկն վաճառականն 'ի տուն իւր . և տեսեալ զանծեղն՝ ասէ . ո՛վ անծեղ՝ որպէս կեաս :

Ասէ անծեղն . տէր իմ զի՛նչ որ լուայ և տեսի՝ պատմեցից քեզ :

Կին քո 'ի գիշերիս յայսմիկ եբեր առ ինքն զսի-րաւն իւր . և ես անարգելով անարգեցի զնա և ասացի նմա , թէ յորժամ գայցէ տէրն իմ՝ պատ-մեցից նմա զամ և նա ոչ ինչ համարեալ զբանս իմ , եմուտ 'ի սենեակն քո և ննջեաց ընդ կնոջ քում : Եւ թէ զկեանս իմ հարցանես՝ հազիւ զերծեալ եմ 'ի մահուանէ . զի այն չափ անձրև և կար-կուտ եկն 'ի վերայ իմ զգիշերն ողջոյն , մինչ զի կիսամա՛հ արար զիս :

Իբրև լուաւ զայս կինն, ասէ ցայրն · զարմանամ ես ընդ խելս քո · զի հաւատաս դու այդ ստախօս անծեղիդ · և ահա կասէ թէ 'ի գիշերիս ե-կըն անձրև և կարկուտ · որ և յայսմ գիշերիս պարզ էր երկինքն քան զամենայն գիշերս · ոչ անձրև եկն և ոչ կարկուտ և թէ ինձ չես հաւատար՝ երթ հարց զդրացիսն եւ զամենայն մարդ ։ Եւ եկեալ այրն՝ գնաց եհարց զդրացիսն ։ Եւ նոքա ասեն · ճշմարիտ որ պարզ էր այս գիշերս քան զամենայն գիշեր ։ Եւ եկեալ այրն՝ ասէ ցկինն · ճշմարիտ եղեր՝ որ գիշերիս այս պարզակայ եղած է քան զամենայն գիշեր ։ Ասէ ցնա կինն · ով բարի և սիրելի այր իմ · ճշմարիտ ասեմ քեզ՝ զի անծեղդ այդ ստախօս է · և սուտ խօսելովն՝ ձգեաց 'ի մէջ մեր աղմուկ և այպն արար զմեզ 'ի քաղաքիս աստ · և անկաք 'ի լեզու ամենեցուն ·

Եւ գնաց այրն առ անծեղն և ասէ · ով անծեղ՝ վասն էր խաբեցեր զիս · և սուտ խօսեցար ընդ իս · և մոռացար զբարերարութիւն իմ, յորժամ ես ձեռամբ իմով կերակրեի զքեզ ։

Եւ դու քո սուտ խօսելովն՝ արկեր չարութիւն 'ի մէջ իմ և կնոջն իմոյ · և արարեր զմեզ զըրուց քաղաքիս ։

Ասէ անծեղն · գիտէ աստուած որ յիս ստութիւն ոչ կայ · այլ զոր ինչ տեսայ և լուայ զայն ասեմ ։ Ասէ այրն · սուտ խօսեցար · ընդ իս · որ ասացեր թէ յայսմ գիշերիս անձրև և կարկուտ եկաւ · և ստով քո՝ խռովեցուցեր զիս ընդ կնոջն իմոյ ։ Եւ բարկացեալ այրն՝ էառ զանծեղն և էհատ զգլուխն նորա · և մեռաւ անծեղն ։

Իբրև ետես կինն՝ ուրախացաւ և ասէ ցայրն իւր · արդ այժմ խաղաղութեամբ լինիցիմք · զի լաւ արարեր որ սպաներ զանձեղն ։ Եւ այրն հայեցեալ աստ և անդ՝ ետես 'ի վերայ բունոյ անձեղին որ ծակ մի կայր ծակեալ 'ի տանիխաէն ։ և եդեալ սանդուղ , ելաւ 'ի տանիխսն · և ետես անդ աման ջրոյ · և յեզերն՝ աւազ և փոշի ։ Եւ գիտաց այնու որ կինն արարեալ էր զայն · և ատեաց յոյժ զանձեղն · որ վասն բանի կնոջ իւրոյ սպան զայնպիսի լաւ և պատուական 'անձեղն ։ Եւ նոյն ժամայն այրն այն վաճառեաց զա̃մ ինչս իւր · և գնաց յաշխարհ հեռի · և այլ ոչ դարձաւ առ կինն իւր ։

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն · լուա՞ր ա՛րքայ զոր ինչ ասացի քեզ · Ասէ արքայն · այո՛ լուայ և 'ի միտ առի ։ Ասէ դպրապետն · եթէ վասն բանի կնոջ քո սպանանես զորդեակն քո՝ դառնագոյն պատահեսցէ քեզ՝ քան զնորայն ։ Ասէ արքայն · լաւ առակ ասացեր ո՛վ բարի դպրապետ · և սակաւ մի բարկութիւն սրտի իմոյ շիջաւ · այսօր վասն բանից քո ոչ մեռանի որդին իմ ։ Ասէ դպրապետն · և ես շնորհակալ եմ քեզ՝ որ ունկնդիր եղեր առակի իմոյ և ապրեցուցեր զորդին քո այսօր ։

Եւ ողջունեաց զարքայն՝ ասելով · օրհնութիւն իմ 'ի վերայ արքայիս իմոյ անպակաս եղիցի զայս ասաց դպրապետն և գնաց ։

Իբրև լուաւ թագուհին թէ այսօր ևս ապրեցաւ մանուկն 'ի մահուանէ , սկսաւ ճչել և լալ և բարձր աղաղակել · որ լսելի եղև ամենեցուն ։ Որ կոծէր զանձն ասելով · արդ զի՞նչ արարից · առ ո՞ երթայց · և կամ ո՞ւմ հարցից ։ Յար-

քայէս իմմէ ոչ գտի մի ինչ մխիթարութիւն․ արդ վա՛յ է ինձ որ անուանեալ կոչիմ Թագուհի․ լաւ էր որ մեռեալ էի՝ քան թէ յայս կենս բերեալ եղէ․ և ծառայքն եկեալ ծանուցին արքային․

Եւ եկեալ կայսրն՝ գնաց առ նա և ասէ․ ընդէ՞ր այդպէս ճչես և լաս․

Ասէ Թագուհին․ դու ես կայսրն հռոմայ․ և ես դուստր եմ Աողոլոս արքայի՝ կին քո․ արդ թողեր զիս 'ի ձեռն որդւոյ քո նզովելոյ՝ որ վիրաւորեաց և նախատեաց զիս, և այպն և զլուց արար զիս բոլոր հռոմայ․ որ և տէրդ իմ արքայ իսկ գիտակ է և աչօք քովք տեսեր․ և խոստացար սպանանել զնա․ և ահա դեռ ևս կենդանի է․ Ես ինչպէս դադարեմ 'ի լալոյ՝ կամ 'ի վերայ երկրի կենդանի կենալոյ․ արդ լաւ է ինձ մեռանել, քան թէ այսպիսի վիշտս և նախատինս կրել․ Ասէ կայսրն․ յօժար էի առնել զբանդ զայդ և սպանանել, ապա յերեկեան օրն եկն դպրապետ մի որդւոյն իմոյ առ իս և պատմեաց ինձ առակ մի և հաւանեցոյց զիս․ վասն այն ձգեցի զնա 'ի վաղիւն․

Ասէ Թագուհին․ դու այնչափ անկնդէր լինելոց ես դպրապետաց որդւոյ քո, մինչև պատահեսցէ քեզ այնպէս՝ որպէս պատահեաց Թագաւորի միոյ յիմաստասիրացն իւրոց․ որ նոցա էր յանձնեալ զքաղաքն․ Ասէ կայսրն աղաչեմ զքեզ ով Թագուհի իմ, պատմեա ինձ զառակդ զայդ թէ որպէս եղև․ Ասէ Թագուհին․ վասն էր 'ի զուր աշխատիմ․ եթէ գիտէի որ լինելոց էր ինձ սակաւ մի շահ՝ պատմէի քեզ զառակս․ Ասէ կայսրն․ զի՞նչ շահ կամիս լինել

քեզ. մի թէ աղաւտ արարի զխոնս զորդին իմ. այլ միայն երկարեցի զկեանս նորա մինչ 'ի վաղուեան օրն վասն բանի դպրապետին։ Ասէ Թագուհին. բանք դպրապետացն՝ քեզ մահ գուշակեն. և բանքն իմ, փրկեն զքեզ 'ի մահուանէ։ Արդ լուր բանից իմոց. և 'ի մտի առ զառակս իմ. և պահեա 'ի սրտի քում, զի բարի լինիցի քեզ։ Եւ սկսաւ ասել զառակս զայս։

Չորրորդ առակ Թագաւորուհւոյն. զոր ասաց ընդդէմ Թագաւորին և եօթն իմաստասիրացն նորա. որք չարախօսեցին զորդւոյ աշոյ նորա։

Ի ժամանակի միում կայր Թագաւոր մի մեծ և անուանի յոյժ և ունէր իմաստասէրս եօթն։ Եւ Թագաւորն այն՝ յանձնեալ էր զերկիրն իւր նոցա. և նոքա վարէին զամ երկիրն հրամանաւն իւրեանց. որպէս և այժմ դու. և առանց նոցա՝ բան ինչ ոչ առնէր. որպէս և այժմ դու։ Արդ այն իմաստասէրքն կախարդուք Թագաւորին այսպէս. զի քանի որ 'ի պալատն էր՝ տեսանէր զլոյս. և յորժամ ելանէր 'ի պալատէն՝ խաւարէր լոյս աչաց նորա։ Եւ վասն այնորիկ արարին զկախարդութիւնս զայս՝ զի ըստ կամաց իւրեանց իշխեսցեն երկրին։ Եւ յաւուր միում փորձէին զնոքեանս՝ եթէ կարասցեն բժշկել զկայսրն որ դարձեալ տեսցէ զլոյսն և ոչ կարացին։ Այլ հրաման առեալ էին 'ի կայսերէն. զի թէ ոք տեսանիցէ երազ՝ տացէ նոցա լիտր մի ոսկի զի մեկնեսցեն զերազն։ և եթէ ոչ բերցէ ոք՝ կրկնապատիկ տուգանս տացէ արքային։ Եւ այսու բանիւ՝ բազում գանձս ժողովեցին։

Եւ յաւուր միում նստէր թագաւորն այն ընդ թագուհւոյն իւրոյ· և էր տրտում յոյժ: Ասէ թագուհին· տէ՛ր արքայ ընդէ՞ր տրտում ես· և պատմեաց արքայն վասն կուրութեան իւրոյ: Ասէ թագուհին· արա՛ ըստ խրատու իմոյ՝ և առողջացիս դու: Ունիս եօթն իմաստասէր ՚ի տան քում· զոր իմաստութեամբ իւրեանց վարեն զա՟մ երկիրն որ ՚ի ներքոյ տէրութեան քո: Կոչեա՛ զնոսա և ասա՛ սպառնալեօք· յորժամ որ ելանեմ ՚ի պալատէս, վասն է՞ր ոչ տեսանեմ զլոյս: Արդ հրաման իմ այս է՝ զի արաջի՛ք ինձ դեղ· որ յորժամ ելանեմ ՚ի պալատէս ՚ի դուրս՝ տեսանեմ զլոյս· և զվնասն ձեր թողում· զի տեղեկացայ ես որ դուք արարիք ինձ զայս: Ապա թէ ոչ յանձն առնուք բժշկել զիս, հրամայեմ զձեզ զամենեսեան չարաչար մահուամբ կորուսանել:

Յետ այնորիկ կայսրն ըստ խրատու կնոջն՝ կոչեաց զիմաստասէրսն առ ինքն՝ և ասէ: Ո՛վ իմաստասէրք՝ հարցից ձեզ բան մի՝ և դուք տո՛ւք ինձ պատասխանի: Ասեն իմաստասէրքն հրամայեա՛ արքայ· և լուիցուք զխօսս տեառն մերոյ· և տացուք պատասխանի: Ասէ արքայն· յորժամ որ ելանեմ ՚ի պալատէս ՚ի դուրս, վասն է՞ր զլոյս ոչ տեսանեմ: Ասեն իմաստասէրքն ո՛չ գիտեմք: Ասէ կայսրն ըստ խրատու կնոջն: Լուեա՛լ է իմ որ արարեալ էք կախարդութիւն ինձ· յորժամ որ ելանեմ ՚ի դուրս՝ վասն այն ոչ տեսանեմ զլոյս: Արդ զվնասն ձեր թողից՝ եթէ դարձեալ առնուցուք ինձ հնարս զի տեսից զլոյսն յորժամ որ կելանեմ ՚ի դուրս: Ապա թէ ոչ զձեզ զամենեսեանդ դառն և չար մահ-

ուամբ կորուսանելոյ եմ. զօգուտն ձեր դուք գիտէք։ Ասեն իմաստասէրքն. արքա՛յ յաւիտեան կաց. զօ՛ւր է այդ 'ի վերայ մեր. մեք 'ի բանէդ այդմիկ ընաւ խապար ոչ ունիմք։

Ասէ արքայն. ես ոչ գիտեմ այդպիսի խօսք. այլ հրամանն իմ այս է որ բժշկէք զիս 'ի յախտից իմոց։ Ասեն իմաստասէրքն։ տէ՛ր մեր արքայ՝ թուլացո՛ զմեզ մինչև 'ի տասն օր. զի խորհեսցուք և պատասխանի բերցուք արքայիս մերոյ։

Ասէ կայսրն. եղիցի ըստ խնդրոյ ձերում։ Եւ նոքա ելեալ յերեսաց արքային խորհէին թէ զինչ արասցեն. և ոչ կարէին գտանել հնարք մի. Եւ տրտմեալ ասեն ցմիմեանս. եթէ ոչ բժշկեսցուք զկայսրն՝ մեք ամենեքեան մեռանիմք։ Շըրջէին 'ի մէջ քաղաքին այսու տրտմութեամբ. և եկին շուրջ գալով 'ի փողոց մի. և ահա տղայք փոքրիկք խաղային 'ի մէջ փողոցին։ Եւ այլ ոմն եկեալ առ իմաստասէրսն և ասէ. տեսեալ եմ երազ՝ մեկնեցէ՛ք զերազն իմ ո՛վ փառաւոր իմաստասէրք. և ես տաց ձեզ մէկ լիտր ոսկին։ Յայնժամ փոքր մանկունքն որ կու խաղային անդ, մինն 'ի նոցանէ յառաջ եկեալ ասէ ցայրն այն. մի՛ տար զոսկին դոցա՝ զի դոքա խաբեբայք են. այլ դու ասա՛ ինձ զերազն քո՝ և ես պատմեցից քեզ. և իմաստասէրքն ակնարկէին 'ի հեռաստանէ։ Եւ այրն սկսաւ պատմել այսպէս։ Տեսի յերազի իմում զի ելանէր աղբիւր ջրոյ 'ի մէջ անդաստանի իմում. և յորդեալ յոյժ. մինչև ելից զամ անդաստանն ջրով։ Ասէ մանուկն. գնա՛ 'ի տուն քո. և ա՛ռ փետատ մի։ և փորեա՛ զտեղին զայն յորում ելանէր ջուրն. և գտանիցես բազում գանձս, փարթամանաս դու՝ և

ազգատոհմն քո ամենայն : Եւ նոյնժամայն փու-
թացաւ այրն · և եկեալ փորեաց զտեղին զայն ·
և եգիտ բազում գանձս յոյժ · և փարթամա-
ցաւ ինքն և ամենայն ազգատոհմն իւր : Եւ
դարձաւ այրն առ տղայն · եւ տայր նմա բ̃ լիտր
ոսկի վասն երաւ մեկնելոյ զերազն իւր : Եւ տղայն
ո՛չ էառ զոսկին 'ի ձեռն · այլ ասէ՝ քաւ լիցի
ինձ առնուլ ոսկի 'ի քէն · այլ միայն աղօթեա՛
վասն իմ :

Տեսեալ զայս իմաստասիրացն՝ որ իմաստութեամբ
մեկնեաց զերազն զայն, ասեն ցնա · ո՛վ սիրելի
մանուկ դու՝ զի՞նչ է անուն քո : Ասէ մանուկն
անուն իմ կոչի Մերլինոս : Ասեն իմաստասէրքն ·
տեսանեմք որ իմաստութիւն քո մեծ է յոյժ · և
արդ հարցանեմք քեզ բան մի : Ասէ Մերլինոս ·
ասացէք ինձ զպատճառն, և ես տամ ձեզ պա-
տասխանի, Ասեն իմաստասէրքն · Թագաւորին
մերում աչքն կուրացեալ է · եթէ բժշկես զնա,
մեծամեծ պարգևս առնուս 'ի մեզանէ : Ասէ Մե-
րլինոս · բնաւի՞ն չի տեսանէր՝ թէ աչաց ցաւ-
ունի : Ասեն իմաստասէրքն · ո՛չ այդպէս այլ
քանի որ 'ի պալատն է՝ կու տեսանէ · և յոր-
ժամ 'ի պալատէն 'ի դուրս ելանէ՝ նոյն ժա-
մայն այլ ո՛չ կարէ տեսանել : Ասէ ցնոսա Մե-
րլինոս · երթայց և տեսից · և ապա հրամանաւն
աստուծոյ բժշկեցից : Ասեն իմաստասէրքն · եկ
ընդ մեզ՝ որ տարցուք զքեզ առ թագաւորն ·
և ելեալ գնացին 'ի միասին առ կայսրն :

Ասէ ցնոսա կայսրն · զի՞նչ արարէք · և զի՞նչ
պատուիրեցի ես ձեզ :

Ասեն իմաստասէրքն · ահա՛ բերաք բժիշկ մա-
նուկ մի՝ որ կատարէ զկամս քո : Ասէ կայսրն

ցիմաստասէրսն · գիտէք ստուգիւ որ կատարէ այդ մանուկդ զկամս իմ :

Ասեն իմաստասէրքն · այո՛ գիտեմք զի կարօղ է · և փորձեալ եմք ճշմարիտ զիմաստութիւն դորա : Ասէ կայսրն · բարի է զոր ասէքդ : Եւ դարձաւ կայսրն առ մանուկն և ասէ · զի՞նչ է անուն քո մանուկ դու : Եւ նա ասէ · անուն իմ կոչի Ակերիլնոս · որ և ծառայ քո է : Ասէ կայսրն · կարօ՞ղ ես զիս բժշկել յախտից իմոց : Ասէ Ակերիլնոս · ծառայ քո ո՛չ գիտէ զցաւս քո · այլ հրամայեսցէ արքայ իմ , և ես կարողանամ զօրութեամբն աստուծոյ բժշկել զքեզ : Ասէ կայսրըն : իմ նեղութիւն և ցաւն այն է , որ յորժամ ելանեմ 'ի պալատէս դուրս ո՛չ կարեմ տեսանել զլոյս : Ասէ Ակերիլնոս · հրամայէ՛ ամենեցուն 'ի բաց գնալ : Եւ հրամայեաց կայսրն ամենեցուն արտաքս ելանել և փակել զդրունսն : Ասէ Ակերիլնոս · մե՛րձ զիս 'ի սենեակն քո յորում նստես դու 'ի գիշերի · և անդ պատմեցից քեզ թէ զինչ առնելոց եմ : Եւ իբրև մտին 'ի ներքս՝ տեսեալ մանուկն զմահիճս արքային · և հրամայեաց ծառայիցն նորա փութով հանել 'ի դուրս զմահիճս արքային : և ասէ ցկայսրն · այժմ տեսանիցես զհրաշս որ է 'ի ներքոյ սորա : Եւ իբրև հանին զմահիճսն 'ի դուրս՝ տեսին 'ի ներքոյ նորա ակն աղբերոյ · եօթն առաջս բղխեալ և բաժանեալ եռայր : Ասէ մանուկն ցկայսրն · տէ՛ր իմ արքայ · ահա՛ որչափ աղբիւրս 'ի ներքոյ մահճի քո է եօթն գնացիւք իւրովք՝ ո՛չ կարես տեսանել զլոյս :

Ասէ կայսրն · ո՞րպիսի հնարիւք կորուսանել մարթ է զաղբիւրդ գնացիւքն իւրովք հանդերձ : Ասէ

մանուկն. եթէ ստուգիւ կամիս տեսանել զլոյս՝ մինչև ոչ գլխատես զեօթն իմաստասէրսն քո՝ ոչ կարես տեսանել զլոյս։ «Քանզի նոքա արարին զկախարդութիւնս զայս տեառն իմոյ արքայի. զի համարձակ իշխեսցեն 'ի վերայ երկրի։ Եւ նոյն ժամայն հրամայեաց կայսրն սպանանել զնոսա. որ և 'ի գլխատելն՝ իսկոյն կորեաւ աղբիւրն գնացիւքն իւրովք։ Ասէ մանուկն ցկայսրն. այժմ ելանեմք դուրս 'ի պալատէս. և տեսանեմք որ կու տեսանես՝ թէ ոչ։ Եւ նոյն ժամայն կայսրն ետուր զարդարել երկու ձիս. և նստաւ 'ի մինն արքայն, և 'ի միւսն մանուկն. և ելան 'ի դուրս. և տեսանէր արքայն զլոյս համարձակ. և ուրախացաւ յոյժ. և դարձաւ խնդութեամբ 'ի պալատն իւր. և մեծութիւն շնորհեաց մանկանն որպէս իշխանի միոյ։

Եւ ասէ Թագուհին ցկայսրն. լուա՞ր ա՛րքայ և 'ի միտ առեր զառակս իմ։ Ասէ կայսրն. Ճշմարիտ ասեմ քեզ ով Թագուհի իմ. լաւ առակ ասացեր։ Ասէ Թագուհին. ծանի՛ր ա՛րքայ՝ զի և դպրապետքն որդւոյ քո՝ նոյնպէս կամին առնել քեզ սուտ առակօքն իւրեանց։ Եւ այնչափ խաբեն զքեզ՝ մինչև ժամ պարապոյ գըտեալ՝ սպանանեն զքեզ. և թագաւորեցուցանեն զորդի քո նզովեալն 'ի տեղի քո։ Եւ նա ոչ կարացէ թագաւորել. յայնժամ կործանի թագաւորութիւնն քո. և ընդունիս դու զանէծս։ Ասէ կայսրն. ոչ թողից զնոսա զի առնիցեն ինձ այնպէս. այլ ընդ լուսանալ առաւօտուն՝ տամ զնա անպատճառ սպանանել։

### Չորրորդ անգամ տանելն զորդի արքային 'ի մահ. և գալ հասանելն Մաղխիօրայ դպրապետին և աղաչել փրկելն զնա։

Ի չորրորդում աւուրն նստեալ կայսրն 'ի գահոյսն իւր, և հրամայեաց կոչել զդահճապետն առ ինքն։ Եւ յորժամ եկն՝ ասէ ցնա կայսրն. հա՛ն զորդին իմ 'ի բանտէն և տա՛ր սպան զնա. և հեռացո՛ զգլուխն 'ի մարմնոյն ի̅ւ կանգուն։ Նոյնպէս և Թագուհին յառաջնմէ ազդեալ էր դահճապետին. թէ յորժամ տանիցես զորդի արքային 'ի սպանումն, ա̅մ մահապարտի որպէս առնես՝ նմա այլ ա՛յնպէս արասցես։

Եւ եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային 'ի բանտէն. և եդ զձեռսն 'ի յետոյ կապել որպէս մահապարտի. և մունետիկն յառաջոյն ձայնէր և գնայր ասելով. ո՛վ ոք որ կամենայ մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ՝ այսպիսի մահուամբ մեռանի։ Եւ այսպիսի նախատանօք ածեալ տանէին 'ի տեղի սպանման։ Եւ յորժամ տանէին զնա՝ տեսեալ ժողովրդեանն աղաղակէին մեծաձայն և ասէին. աւա՛ղ աւա՛ղ և հազար աւաղ զմիամօր որդի կայսերն որ 'ի զուր տանին 'ի սպանումն։ Եւ մինչդեռ տանէին՝ էհաս նոցա չորրորդ դպրապետն (որում անունն էր Մաղխիօրախ) սրընթաց երիվարաւն իւրով։ Եւ տեսեալ զորդի արքային այնպիսի խեղճ և ողորմելի որ տանէին 'ի մահ։ Յայնժամ բարկացեալ դպրապետն դահճապետին և ասէ. ընդէ՞ր այդպիսի կապեր ես զորդի արքային. և ետուր արձակել զձեռս նորա։ Ասէ դահճապետն. ո՛վ դպրապետ՝ հրաման սաստիկ է Թագուհւոյն. և

8

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱՐԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

մեք զի՞նչ արասցուք ։ Եւ ժողովուրդքն որ շուրջն կային՝ աղաղակով աղաղակէին և ասէին ․ ո՜վ բարի դպրապետ՝ փութա՛ առ կայսրն և ազատեա՛ զորդի արքային՝ զաշակերտն քո ․ որպէս և ընկերքն քո ազատեցին ։ Եւ մանուկն իբր աղերսալով երկիր եպագ վարժապետին իւրոյ ․ որպէս թէ կամէր ասել՝ ազատեա՛ զիս 'ի մահուանէ ։ Ասէ դպրապետն ․ դադարեցէք դուք 'ի տեղիս այս՝ մինչ ես առ կայսրն երթայց ․ զի յայս անիմ առ աստուած որ փրկեսցէ զձեզ այսօր 'ի մահուանէ ։ Եւ ընթացեալ եմուտ 'ի պալատն ․ և մեծաւ պատուով ողջունեաց զկայսրն ։ Եւ կայսրն խօսի բարկութեամբ և ասէ ․ նզովեալ ծեր՝ գայցէ զքեզ չարն վասն խաբէութեան քո զոր խաբեցեր զիս ։ Ասէ դպրապետն ․ տէ՛ր իմ արքայ՝ պարգեւի ակն ունէի 'ի քէն և ո՛չ այդպէս բարկանալոյ ․ և կամ վասն է՞ր խաբեցի զտէրն իմ արքայ ։ Ասէ արքայն ․ քանզի ետու զորդին իմ 'ի ձեզ յստակ զբաց և խօսող ․ [illegible] համրացեալ է ։ Եւ ես չարագոյն այն է՝ որ փոխանակ իմաստութեան և հանճարոյ՝ կամեցաւ բռնադատել և լլկել զկինն իմ ․ վասն այնր գործոյ մեռանի ահա՛ նա այսօր ․ և դուք ամենեքեան կորիցէք ընդ նմա ։ Ասէ դպրապետն ․ գիտէ աստուած որ ո՛չ լինի խաբէութիւն առաջի արքայիս ․ յայտ է թէ վասն էր ոչ խօսի որդին քո ․ սակայն խօսելոց է վաղվաջային ․ այլ զի չէ հասեալ ժամ նորա ․ ապա թէ համբերես և ոչ սպանանես՝ լսելոց ես զխօսս նորա ։ Եւ որ ասացեր թէ զկինն իմ կամեցաւ բռնադատել՝ յայսմիկ ո՛չ է պատշաճ հաւատալ կնոջ ։ Եւ թէ վասն բանի կնոջ քո սպա-

նանես զորդիդ՝ երկնչիմ թէ պատահեսցէ քեզ այնպէս՝ որպէս պատահեաց ծեր զինուորի միոյ 'ի կնոջէն իւրմէ ։ Ասէ կայսրն . ով դու չար ծեր . կամիս առնուլ ընդ իս այնպէս , որպէս երբեմն եօթն իմաստասէրքն արարին ումեմն կայսեր ։ Ասէ դպրապետն . տէր՝ ոչ կամիմ ես առնել քեզ բան չար . զի թէ մի ոմն կամ յոգունք չար առնեն՝ սակայն ոչ ամենեքեան այնու չարանան . զի միայն չարագործութիւնն՝ զմիւսոյն բարեգործութիւնն ոչ ապականէ . այլ իւրաքանչիւր գործ՝ 'ի վերայ գլխոյ գործողին է . եթէ բարի և թէ չար ։ քանզի 'ի մէջ ամէն ազգի գտանի բարի և չար ։ Այլ ես զայս ասեմ քեզ . եթէ վասն բանի կնոջ քո տացես այսօր սպանանել զորդին քո , յայնժամ պատահեսցէ քեզ չար ։ Եւ եթէ ոչ ունկնդիր լինիցիս ինձ , յետոյ ապաշաւես՝ այլ ոչ հասանես . և իս առակաւոր խօսիւք հաստատեցից զբանս իմ ։ Ասէ կայսրն . ասա զառակդ թէ որպէս եղև ։ Ասէ դպրապետն . ոչ ասեմ և ոչ աշխատիմ ։ զի մինչ ես պատմեցից զառակս՝ գուցէ զորդին քո անդ սպանցեն . և զինչ շահ լինիցի ինձ 'ի պատմութենէս ։ Եւ եթէ կամիս լսել զառակս՝ նախ դարձո զորդին քո 'ի մահուանէ 'ի բանտ . և ես պատմեմ քեզ զառակս ։ եթէ հաճոյ լիցի քեզ առակս՝ ապրեցի զորդին քո . և թէ ոչ՝ սպան զնա . զի 'ի ձեռս քո է թէ սպանանես և թէ կեցուցանես ։ Յայնժամ հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն ։

Եւ սկսաւ ասել ։

### Առակ չորրորդ դպրապետին· զոր ասաց վասն կնոջ միոյ որ կամէր սիրել զքահանայն:

Ի քաղաքի միում կայր զինուոր մի ծեր· արդար և երկիւղած յոյժ· և մեռաւ կին նորա· և մնաց բազում ժամանակս այրի· և ոչ կամէր առնուլ կին: Յետոյ եկեալ սիրելիքն իւր և բարեկամքն՝ ձեպեցին զնա որ էառ աղջիկ մի 'ի կնութիւն իւր· որպէս նախարարքն քո քեզ արարին: և էր գեղեցիկ յոյժ· զի 'ի դստերայն հռոմայեցւոց էր· և այրն սիրէր զնա· և կացեալ ընդ իրեարս ամս երեք՝ և ոչ եղև զաւակ նոցա:

Նա յաւուր միում եղ կինն եւ գնաց 'ի ժամ առաւօտեան· և պատահեալ նմա մայրն իւր՝ ողջունեաց զնա և ասէ· դուստր իմ զիա՞րդ կեաս· և զիա՞րդ է այրն քո ընդ քեզ: Ասէ դուստրն ցմայրն· ոչ է բարի այրն իմ· զի յորժամ ննջեմք՝ որպէս կոճղ անկանի 'ի վերայ մահճին· և բնաւ ոչ առնում 'ի նմանէ մխիթարութիւն մարմնական զուգակցութեան: վասն այնորիկ կամիմ սիրել զայլս՝ զի կատարեցից զփափագ ցանկութեան իմոյ: Ասէ մայրն· դուստրն իմ մի՛ արասցես զբանդ զայդ· զի մեղք մեծ է: Ահա՛ ես և հայր քո բազում ժամանակս բնակեմք՝ և զայդ ոչ գործեմք: Ասէ դուստրն· մայր իմ՝ ձեզ չէ՞ զարմանք եթէ ոչ գործէք զայդ· վասն զի երկոքեանդ տղայ հասակաւ՝ լցեալ էք զպարտըս միմեանց· և ոչ էիք որպէս զայրն իմ զըրկեալ յամենայնէ· որ կարողութիւն ես ոչ ունի շարժելոյ· այլ նման փայտի ընկնի 'ի մահիճն և ննջէ մինչև 'ի լոյսն· վասն այնորիկ

խորհեցայ ես սիրել զայս։ Ասէ մայրն․ ասա՛ ինձ զո՛վ կամիս սիրել։ Ասէ դուստրն։ զքահանայն եկեղեցւոյս այսորիկ։ Ասէ մայրն․ վասն է՞ր զքահանայն սիրես և ո՛չ զզինուորս․ կամ զայլ ոք․ զի փոքր լինէր մեղքն։ Ասէ դուստրն․ եթէ զզինուորս սիրեմ կամ զայլ ոք՝ վաղվաղակի թողեալ զիս՝ խայտառակէ առաջի ամենեցուն․ և լինիմ ամօթ և ՚ի նախատինս․ բայց քահանայն թագուցանէ․ վասն զի յայտնել ո՛չ կարէ․ այլև հանապազ ընդ իս լինի․ և զինչ որ խնդրեմ՝ տայ ինձ։ Ասէ մայրն․ լո՛ւր դուստր իմ խրատու իմոյ եւ բարի լինիցի քեզ․ զի ծերք բարկացօղք և խստասիրտք լինին․ փորձեա՛ զնա մէկ երկու անգամ և արա՛ վնաս առաջի նորա․ եթէ թողցէ քեզ զվնասն քո զոր առնես, յայնժամ սիրեսցես զո՛վ ոք և կամիս։ Ասէ դուստրըն․ ո՛չ կամիմ այդչափ երկար համբերել։ Ասէ մայրն․ համբերեա՛ դուստր իմ եթէ կամիս զօրհնութիւնս առնուլ։ Ասէ դուստրն․ վասն օրհնութեան քո՝ տանջեցայց և համբերից այլ ևս ժամանակ մի․ բայց ասա՛ ինձ թէ ո՞րպէս փորձեցից զնա։ Ասէ մայրն․ եթէ կայ այնպիսի ծառ ՚ի մէջ դրախտին որ առաւել սիրէ այր քո քան զամենայն ծառ, կտրեա՛ զնա․ և յորժամ գալու լինի այր քո ՚ի դրսէ, ձգեա՛ զայն ՚ի փուռն ՚ի մէջ կրակին․ և դի՛ր աթոռ յանդիման նորա․ որ այր քո նստի և տեսանէ զնա ՚ի մէջ կրակին։ և թէ թողու քեզ զվնասն զայն՝ յայնժամ սիրեսցես զքահանայն։ Ասէ դուստրն․ արարից զայդ ամենայն․ և գնաց ՚ի տուն իւր․

Ասէ այրն․ վասն է՞ր յուշացար այդչափ․ և

ուր էիր մինչև ցայժմ ։

Ասէ կինն . յեկեղեցին էի՝ և աղօթս առնէի 'ի դէմ սուրբ պատարագին . և յետոյ խօսէի ընդ մօրն իմում ։

Ասէ այրն . և ինձ հաճելի է բանդ այդ՝ որ ամէն առաւօտու երթիցես յեկեղեցին և խընդրեսցես զարքայութիւնն աստուծոյ ։

Յետ այնորիկ ելեալ այրն՝ գնաց ըստ սովորութեան իւրոյ յորս ։

Իսկ ելեալ կինն ասէ ցայգէգործն ով եղբայր՝ գնա՛ յայգին և կտրեա՛ ծառ մի և բեր . զի վառեցից զխուռս զի օրս ցուրտ է . և այրս ցրտացեալ գայ 'ի յորսոյն . վասն այն վառեցից աւելի զի ջերմասցի ։ Իսկ ելեալ այգեգործն՝ էառ զկացինն և գնաց յայգին . և տիկինն զկնի նորա ։ և մտեալ 'ի յայգին՝ ժողովէր զխաւխս յայսկոյս և յայնկոյս մինչև եկն 'ի ծառն այն որ յոյժ սիրէր այրն իւր . և ասէ ցայգեգործն՝ կտրեա՛ զծառս զայս ։ Ասէ այգէգործն . ո՛չ կարեմ կտրել զդա . զի տէր իմ յոյժ սիրէ զծառդ զայդ ։ Իսկ առեալ զկացինն կինն 'ի ձեռանէ այգեգործին՝ ինքն իւր ձեռօքն կտրեաց զծառն զայն . և եբեր 'ի տունն վառելոյ ։ Իսկ իբրև երեկոյ եղև՝ յորժամ մերձ եղև գալ առն իւրոյ՝ նոյնժամայն վառեաց զծառն ։

Իսկ եկեալ այրն նորա 'ի տունն . և կինն ընթացեալ եգիր աթոռ յանդիման հրոյն զի ջեռասցի ։ Իսկ նստեալ այրն՝ ջեռնոյր . և նայեցեալ ետես զծառն սիրեցեալ՝ որ այրէր 'ի մէջ հրոյն ։ Կոչեաց զայգեգործն և ասէ . ընդէ՞ր կտրեցեր զծառդ զայդ ։ Ասէ այգէգործն . տիկինն հրամայեաց ։ Ասէ կինն . ես արարի և պատ-

բաստեցի զձուս՝ զի դու եկեալ ջեռուցիս : Եւ այրն խաժառեալ աչօք հայէր 'ի կինն և ասէ · ով անզգամ և չար կին՝ վասն է՞ր արարեր զայդ · զի գիտէիր որ ես սիրէի զձուս զայս՝ և դու կերեցեր զնա : Եւ կինն սկսաւ լալ և ասել · ես վասն բարութեան քո արարի զի ջեռուցիս դու · արդ վասն փոխարինի բարութեան անարգես զիս · զայս ասէր և լայր դառնապէս : Ասէ այրն · դադարեա՛ 'ի լալոյդ · այժմ թողցի քեզ մեղդ այդ զոր գործեցեր · բայց պատուիրեմ քեզ մի՛ ևս իշխեսցես առնել միւսանգամ այդպիսի ինչ :

Եւ 'ի վաղիւ անդր եղ կինն և գնաց յեկեղեցին · և պատահեաց նմա մայրն իւր · և ողջունեցին զմիմեանս Ասէ դուստրն ցմայրն իւր · փորձեցի զայրն իմ և արարի զոր ինչ պատուիրեցեր ինձ · կոտրեցի զծառն զայն և այրեցի զամենայն · և այրն իմ ետես զփայտն իմ և բարկացաւ : Իբրև ես սկսայ լալ՝ եթող ինձ զփայտն իմ զոր արարի · և արդ կամիմ սիրել զքահանայն եկեղեցւոյս : Ասէ մայրն : դուստր իմ միւսանգամ ես փորձեա՛ · զի ծերք մի անգամ թողուն , և 'ի միւսումն կրկնապատիկ հատուցանեն · Ասէ դուստրն · ոչ կարեմ համբերել մայր իմ · Ասէ մայրն · ո՛վ սիրելի դուստր իմ · առաջի անգամն համբերեցեր վասն օրհնութեան իմոյ , և այժմ համբերեա՛ վասն օրհնութեան հօր քո · և միւսանգամ փորձեա՛ զայր քո · եթէ այժմ ևս թողցէ և ոչ անարգեսցէ զքեզ՝ ապա սիրեա՛ զքահանայն : Ասէ դուստրն · տանջանք մեծ է ինձ այդչափ երկար համբերելն · այլ վասն օրհնութեան հօր իմոյ համբերեցից և փոր-

ձեցից միւսանգամ, բայց ասա ինձ թէ՝ որպէս փորձեցից ։ Ասէ մայրն. գիտես զի այրն քո սիրէ զփոքրիկ շունն. սպան զնա առաջի աչաց նորա. և թէ թողցէ զվնասն քո՝ ապա կարող ես սիրել զքահանայն. և զայս ասացեալ գնացին 'ի տունս իւրեանց ։

Եւ իբրև երեկոյ եղև՝ զարդարեաց կինն զմահիճ առն իւրոյ. և այր նորա նստէր առ հրոյն. և շունն որպէս սովորեալ էր. խաղայր 'ի վերայ անկողնոյն ։ Եւ յանկարծակի առեալ կինն զշունն առաջի տեառն իւրոյ՝ եզարկ ընդ դուռն յորմն. որ յղեղ գլխոյն հեղաւ և սատակեցաւ ։ Եւ տեսեալ այր նորա ասէ. ո՛վ նզովեալդ 'ի մէջ կանանց. և չարդ 'ի մէջ կենդանեաց. զի՞նչ գործեցեր առաջի աչաց իմոց ։ Ասէ կինն. զինչ որ վասն շահու քո առնեմ և բարեկամութիւնս ցուցանեմ քեզ՝ ամենայնն ոչինչ է առաջի քո. և համապազ անարգես զիս ։ Տեսանես՝ զի զարդարեցի զմահիճս քո դիպակ անկողնօք. և նա՛ ել 'ի վերայ նորա շաղախեալ ոտիւք ։ Ասէ այրըն. դու ո՞չ գիտես որ ես առաւել սիրեմ զշունըն քան զդիպակ անկողինն քո ։ Ասէ կինն. զամենայն բարութիւնս որ 'ի վերայ քո առնեմ, ոչինչ է համարեալ առաջի քո. և զայս ասացեալ՝ սկսաւ լալ և եղուկ տալ անձին ։ Ասէ այրն. դադարեա՛ 'ի լալոյդ. և այժմ ես թողից քեզ զվնասդ. և մի՛ այլ ես գործեսցես այդպիսի վնաս ինձ. Ասէ կինն. յօժարութեամբ կատարէի զկամս քո, եթէ գիտէի թէ զի՞նչ է խորհուրդ սրտի քո ։ Եւ այրն այլ ո՞չ խօսեցաւ. և ելեալ ննջեաց ։

Եւ 'ի վաղիւն ելեալ կինն գնաց յեկեղեցին.

և եգիտ անդ զմայրն իւր և ասէ․ բարի լոյս քեզ մայր իմ․ Ահա՛ կատարեցի զխօսս քո վասն օրհնութեան քո և վասն օրհնութեան հօր իմոյ․ արդ այժմ սիրեմ զքահանայն․ բաւական է այսչափ համբերելս․ աւելի այլ ոչ կարեմ համբերել․ զի երկու անգամ փորձեցի զայրն իմ․ և յորժամ բարկացաւ ինձ՝ ես սկսայ լալ․ և նա նոյնժամայն եթող զվնասն իմ․ Ասէ մայրն․ գիտացի՛ր դուստր իմ զի ծերք դժուարաբնութիւնք լինին․ մի և երկու անգամ թողուն, բայց յետոյ տանապատելին խնդրեն զվրէժն․ փորձեա՛ զնա երրորդ անգամ․ Ասէ դուստրն․ զո՛ր է ասելդ քո մայր իմ․ այլ ոչ կարեմ համբերել և լռել քեզ․ Այսչափ ժամանակ է որ կայրիմ ես սակս քահանային այնորիկ․ և բորբոքի սիրտ իմ․ և կամ ես 'ի տանջանս․ և դու բնաւ ոչ խղճաս ինձ․ Ասէ մայրն․ այս մի անգամս այլ արա՛ զխօսս իմ և փորձեա՛ զնա․ և թէ թողցէ քեզ զվնասն քո, տէրն վկայ լինի դուստր իմ՝ ես ձեռօք իմովք ուխտեցից զքեզ քահանային․ և այլ ոչ նեղեցից զքեզ․ Ասէ դուստրն․ շատ նեղեցեր զիս մայր իմ․ և ես ո՞րպէս կարեմ համբերել այդչափ երկար 'ի սէր քահանային․ արդ ասա՛ թէ ո՞րպէս փորձեցից զայրն իմ այս անգամս այլ․ Ասէ մայրն․ 'ի յայս կիրակէիս առնելոց է այր քո ընդունելութիւն մեծ․ և հրաւիրեալ է զգինուորակիցս բազումս 'ի ճաշ․ Յորժամ եկեսցեն ամենեքեան և նստիցին 'ի ճաշ, եկ և դու նիստ․ և պնդեա՛ զպատուական սեղանոյն ընդ մէջ քո․ և ե՛լ յանկարծակի և գնա՛․ զի ցրուեսցի սեղանն առաջի բազմականին, և եթէ այր քո ոչ

խօսեսցի, և թողցէ քեզ զմնասս զայս ես որպէս առաջնոցն, յայնժամ կարող ես սիրել զքահանայն: Եւ զայս ասացեալ՝ գնացին 'ի տունս իւրեանց:

Եւ իբրև կիրակի եղև՝ եկին առ նա 'ի ճաշ ամենայն զինուորակիցքն իւր: Եւ իբրև դրին զսեղանն և բազմեցան ամենեքեան և բերին զճաշն, եկեալ և կինն բազմեցաւ ընդ նոսա 'ի սեղանն. և առեալ զդաստառակ սեղանոյն գաղտ 'ի նոցանէ կապեաց 'ի գօտի իւր: Եւ ասէ այրն. ով մարդասէր կին՝ մատայր բերել զդանակս իմ. արդ որո՞վ կերայց հաց: Եւ կինն փութով ել զի բերցէ զդանակն: Յայնժամ մերացաւ և դաստառակն ընդ նմա՝ և կործանեցաւ սեղանն. և ցրուեցաւ կերակուրն. և հեղաւ գինին. և կթխայքն արծաթէ անկան յերկիր: Եւ տեսեալ այր նորա՝ բարկացաւ յոյժ. բայց վասն բազմականացն չասաց նմա ինչ: Եւ հրամայեաց աղախնեացն դարձեալ կերակուր պատրաստել. և ո՛չ տրտմեցոյց զկինս իւր. և դարձեալ դրին սեղան. և բերին կերակուր. կերան և արբին և ուրախացան յոյժ: Եւ 'ի վաղիւ անդր՝ ել այր նորա և գնաց 'ի շուկայն. և եգիտ բժիշկ մի. և ասէ ցնա. եղբա՛յր՝ գիտես արիւն առնուլ: Ասէ բժիշկն. այո՛ քաջ գիտեմ: Եւ առեալ զնա եբեր 'ի տուն իւր. և ասէ ցկինն իւր՝ արի՛ կաց 'ի մէջ. զի բերի քեզ բժիշկ մի որ առցէ 'ի քէն արիւն. զի բազմացեալ է արիւնդ՝ և խելքդ ցրուեալ է. թող զի ելցէ արիւնդ 'ի քէն՝ եւ խելքդ ժողովի 'ի գլլուխդ քո:

Ասէ կինն. մինչև ցայժմ ոչ եմ առեալ արիւն.

և այժմ ես ոչ կամիմ առնուլ : Ասէ այրն · ոչ կամիս գիտել թէ այս երկցս անգամ զինչ գործեցեր դու ընդ իս : Եւ բանութեամբ կա_լեալ կապեաց զձեռս նորա · և եառ ծակել զերակսն երկոսին ձեռացն · և արիւնն հեղոյր որպէս զառու · և այնչափ եթող՝ որ մինչև ու_շաթափեցաւ կինն · Եւ յետ այնորիկ տարեալ եդ ՚ի վերայ մահճին և ասէ կաց ՚ի վերայ մահճիդ մինչև ստացցես լաւ բնութիւն · և ե_լեալ գնաց այրն ՚ի յոյս :

Եւ կինն նստեալ ՚ի զօրութենէ՝ կոչեաց զմինն ՚ի յաղախնեացն և ասէ · փութա և գնա առ մայրն իմ և ասա՛ ցնա որ շուտով եկեսցէ · զի ահա՛ մեռանիմ : Եւ գնաց աղախինն և պատ_մեաց մօրն : Եւ երբև լուաւ մայրն՝ եկն խնդա_լով առ նա · Իբրև ետես աղջիկն զմայրն՝ ասէ ցնա · ով քաղցրիկ մայր իմ · հազիւ զերծեալ եմ ՚ի մեռանելոյ · զի բազում արիւն հեղաւ յինէն : Ասէ ցնա մայրն · չասացի՞ քեզ թէ ծերք խիստ դժուարաբնութիւնք կու լինին · այժմ կամի՞ս սիրել զքահանայն : Ասէ դուստրն · սա_տանայք թող սիրեն զքահանայն այլ և զամե_նեսեան · այսուհետև ոչ զոք սիրեմ բայց միայն զայրն իմ :

Յայնժամ ասէ դպրապետն ցկայսրն · տէր իմ արքայ ՚ի միտ առեր և հաւանեցա՞ր զառակս իմ : Ասէ ցնա կայսրն · ՚ի մէջ առակաւոր բանիցս զոր լուայ՝ այս առաւել հաճոյ թուեցաւ ինձ : Օ՜ ի նզովեալ կինն այն՝ երիս վնաս արար առն իւրոյ · և առանց կարծեաց զչորրորդն կատարե_լոց էր զչար խորհուրդ սրտի իւրոյ : Ասէ ցնա դպրապետն · վասն այն ասեմ քեզ զի զգոյշ լե_

նիցես 'ի կնոջէ քումմէ. զի մի՛ պատահեսցէ քեզ խստագոյն քան զնորայն՝ եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո: Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ ո՛վ դպրապետ՝ ոչ մեռանի որդին իմ այսօր. ե՛րթ 'ի խաղաղութիւն: Ասէ դպրապետն. շնորհակալ եմ քեզ տէր իմ արքայ. որ վասն առակի իմոյ ապրեցուցեր զորդին քո. և օրհնութիւն իմ անպակաս եղիցի 'ի վերայ քումմէ. զայս ասացեալ դպրապետն և գնաց:

Յետ այսր ամենայնի իբրև լուաւ Թագուհին թէ այսօր ևս ոչ մեռաւ որդի արքային, յայնժամ եմուտ 'ի սենեակն իւր և ժողովեաց զամենայն զգեղեցկագոյն զգեստս իւր և զամենայն զպիտոյսն. և հրամայեաց ծառայից իւրոց համետել զկառս և զգրաստս զի առ հայր իւր երթիցէ:

Եւ վերակացուացն տեսեալ՝ ծանուցին արքային թէ վաղիւն Թագուհին գնալոց է առ հայրն իւր: Եւ կայսրն լուեալ զայս՝ եմուտ 'ի սենեակ Թագուհւոյն և ասէ. ո՛վ սիրելի տիկին իմ ո՞ւր կամիս գնալ: Ասէ Թագուհին. առ հայրն իմ: Ասէ կայսրն. վասն է՞ր: Ասէ Թագուհին. զի բարութեամբ վայելեցից զկեանս իմ: Ասէ ցնա կայսրն. ես կարծէի թէ ո՛չ զոք սիրես առաւել քան զիս. արդ՝ ո՞րպէս զատուելոյ կամիս և հեռանաս յինէն: Ասէ Թագուհին. Ճշմարիտ է որ քան զամենայն առաւել կու սիրեմ զքեզ: Այլ վասն այնորիկ կու հեռանամ 'ի քէն, զի մի՛ տեսից զչարչարանօք մահն քո՝ որ առնելոց է քեզ որդին քո. զի լաւ համարիմ զմահն քո 'ի հեռուստ լսել քան թէ առաջի աչաց իմոց տեսանել: Ման

զի դու այնքան ունկնդիր լինելոյ ես դպրապետս որդւոյ քո, մինչև պատահեսցէ քեզ այնպ որպէս պատահեաց Օդդուխանոսի կայսեր. որ վասն ագահութեան իւրոյ՝ կենդանւոյն թագեցին զնա նախարարքն նորա. լցեալ ոսկի ընդ կոկորդս նորա։ Ասէ կայսրն. ով սիրելի տեկլին իմ պատմեա ինձ թէ ինչ կերպիւ եղև։ Ասէ թագուհին. ես բանից քոց այլ ոչ հաւատամ և ոչ պատմեմ քեզ առակս. այլ 'ի բաց հեռացայց 'ի քէն։ Ասէ կայսրն. քաւ լիցի քեզ առնել զայդ. և գնալ առ հայրն քո. և զիս առանց թագուհի թողուլ։ Ասէ թագուհին. Ճշմարտիւ պարտ էր որդւոյ քո կորնչել և մի մնալ կենդանի՝ թէ ես թագուհի էի կայսեր և դուստր տիեզերակալ արքայի. որ այսպիսի նախատեաց զիս. որ աչօք քո տեսեր և խոստացար սպանանել զնա և ոչ սպաներ։ Վասն այդմ իբր ոչ ես հաւատամ այսուհետև խօսից քոց. զի սուտախօս երևեցար. և չէ պարտ թագաւորաց սուտախօս լինել։ Ասէ կայսրն. ով սիրելի տեկլին իմ. ամենից որ տեսաքեն՝ պարտ է ունկնդիր լինել բանից. և հաւաստեաւ քննել. զի մի թիւր գայցէ բանն և ամօթ մեծ եղիցի. Վասն որոյ աղաչեմ զքեզ՝ զի պատմեսցես ինձ բան ինչ շահաւէտ և օգտակար. որպէս զի 'ի մէջ բանիցս այսոցիկ՝ կարացից առնել իրաւունս։ Ասէ թագուհին. պատմեցից քեզ առակ մի այլ. բայց արդ՝ այսուհետև մի ևս լուիցես դպրապետաց քոց։ Եւ սկսաւ ասել այսպէս։

Հինգերորդ առակ Թագաւորոյն · զոր առաց վասն Օղդախանոսի կայսերն ագահութեան:

Ի քաղաքի միում կայր հզօր Թագաւոր մի · և էր անուն նորա Օղդախանոս կայսր · և էր նա ինքնակալ՝ որպէս և դու · և էր յոյժ ագահ և ընչասէր · և ամենայն ումեք որ ինչ կերպիւ զրոյցս առնէին առաջի նր՝ հաւատայր · որպէս դու որ հաւատաս փորձագետաց նզովեալ որդւոյ քո : Յորոյ ժամանակին արարին քաղաքացիքն հակառակութիւն · և բազում Թագաւորս թշնամի յարուցին ՚ի վերայ քաղաքին այնմիկ : Եւ յաւուրսն յայնոսիկ կայր ՚ի քաղաքն այն դպրապետ մի Վերգիլիոս անուն · որ հռչակեալ էր իմաստութեամբ և հանճարով ընդ ամենայն երկիր · եւ առաւել կախարդական արուեստիւ : ՚Ի սմանէ խնդրեցին քաղաքացիքն զի իւրով իմաստութեամբն գտցէ հնարս ինչ՝ որով կարասցեն ընդդէմ ունել թշնամեացն · և նա կախարդական արուեստիւն արար հնարս այսպէս : Հրամայեաց շինել աշտարակ մի · և ՚ի վերայ աշտարակին քանդակել զամենայն ազգաց պատկերս՝ երկրօքն հանդերձ որ կայ ՚ի մէջ աշխարհիս · կերպիւ կերպիւ պատերազմուն : Եւ ՚ի մէջն արար պատկեր մի՝ որ ՚ի ձեռին իւրում ունէր ոսկի խնծոր մի : Եւ ազգաց պատկերքն որ շուրջ զաշտարակաւն էին ունէին ՚ի ձեռս իւրեանց զանգակս · և իւրաքանչիւր պատկերք՝ զդէմն իւրեանց յայն երկիրն ունէին՝ յորոյ անուն և դրոշեալ էին : Եւ մի երկիր որ կամէր ապստամբել և հակառակ կալ այն քաղաքին՝ յայնժամ պատկերն այն որ յանուն նորա էր նկարեալ՝ հնչե-

յա յանէր զվանդակն․ և զօրքն քաղաքին՝ այնու-
նշանաւ դիմէին ՚ի նա․ և հարկանէին զերկիրն
այն մեծաւ յաղթութեամբ։ Եւ այսպիսի հը-
նարիւք ամենայն երկիր՝ ամենեքին ոչ իշխէին
ընդդէմ կալ այն քաղաքին․ որ զաշտարակն զայն
կանգնեալ էր փիլիսոփայն Աերկլէոս պատկե-
րօքն հանդերձ։

Յետ այնորիկ այլ ևս արար հնարս իմաստասէրն
Աերկլէոս․ զի ՚ի տեղի մի բացարձակ ՚ի մէջ
քաղաքին արար հուր անշէջ․ որ միշտ աղքատք
ջեռնուին։ Եւ առ հրովն արար աղբիւր ջրոյ․
զի աղքատք ըմպեսցեն և լուասցին։ Եւ առ ըն-
թեր նորա արար պատկեր մի կանգուն․ և գիր
՚ի վերայ նորա այսպէս թէ ով որ հարկանէ զիս՝
առից ՚ի նմանէ զվրէժ իմ վաղվաղակի։ Եւ
պատկերն այն եկաց այնպէս ՚ի բազում ժամա-
նակս։ Յետ այնորիկ եկն դպիր մի․ և ընթեր-
ցաւ զգիրն զայն և ասէ․ զի՞նչ վրէժ առնելոց
ես դու յինէն։

Ես դիտեմ թէ հարեց և կործանեցից զքեզ՝
գտանեմ ՚ի ներքոյ ոտից քոց զանձս բազումս․ և
վերացուցեալ զձեռն՝ եհար զպատկերն։

Յորժամ եհար՝ անկաւ պատկերն․ հուրն շիջաւ․
ջուրն ցամաքեցաւ․ և զանձ ոչ գտաւ։ Եւ
տեսեալ զայն աղքատացն անիծելով ասեն․ տա-
ցէ տէր զի նա ինքն կորիցէ՝ որ կորոյս զպատ-
կերս՝ և եհան ՚ի մէնջ զայնպիսի խնդութիւնս
մեր։

Յետ այնորիկ ժողովեցան ՚ի միասին թագաւորք
երեք․ որ մեծ նեղութիւնս կրէին ՚ի յայն քա-
ղաքէն յորում աշտարակն կայր․ և ասեն՝ ո՞ր-
պիսի բանիւք կարեմք առնուլ զվրէժս անտի։

Եւ տեսանք 'ի նոցանէ աւելին անշահ է մեզ փոր-ձելն․ զի որքան աշտարակն այն կայ պատկերօքն, ոչ ինչ կարասցուք առնել ։ Եւ լուեալ զայս զինուորք երեք՝ և ասեն զի՞նչ կամիք տալ մեզ եթէ կործանեսցուք զաշտարակն հանդերձ պատկերօքն․ և դուք կարասջիք պատերազմել ընդ նոսա ։ Ասեն ցնոսա թագաւորքն․ զինչ որ կամիցիք՝ տամք ձեզ ։ Ասեն զինուորքն․ արդ տո՛ւք մեզ յառաջմէ չորս ամանս լի ոսկի․ զի երթիցուք մեք 'ի քաղաքն այն․ և յորժամ կործանեսցուք զաշտարակն՝ յայնժամ կամք ձեր է՝ զոր ինչ արժանն է տուք մեզ ։ Ասեն թագաւորքն, զի՞նչ կամիք առնել զայն չորս աման ոսկին ։ Ասեն զինուորքն․ զայս չորս աման ոսկին՝ հնարիւք նոցա տամք և ապա՛ կարողանամք կործանել զաշտարակն զայն ։ Յայնժամ ետուն նոցա չորս աման լի՛ ոսկի ։

Յետ այնորիկ առեալ զինուորացն զչորս աման ոսկին՝ եկին 'ի քաղաքն այն․ և ունէր քաղաքն այն չորս դուռն․ և թաղեցին գաղտ զամէն մէկ աման 'ի մէկ մէկ դուռն ։ յետոյ մտեալ 'ի քաղաքն՝ գնացին առ կայսրն․ և մեծաւ պատուով ողջունեցին զկայսրն ։

Ասէ ցնոսա կայսրն․ յաղագս որո՞յ իրաց եկեալ էք դուք աստ ։

Ասեն զինուորքն․ տէ՛ր արքայ՝ մեք յերկրէ հեռաստանէ եմք․ և մեք եմք երազատեսք․ և երազն մեր ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց միայն ոսկի և գանձս՝ թաղեալ 'ի ներքոյ երկրի գտանեմք ։ Եւ լուեալ զհամբաւ բարերարութեանդ քո՝ եկեալ եմք առ քեզ․ և եթէ հաճոյ թուեսցի տեառն մերում արքայի ծառայել մեզ՝ ծառա-

յեսցուք առաջի քո։ Ասէ կայսրն նախ փորձեմ զձեզ. և եթէ գտանիցեմ ուղղութիւնս ՚ի ձեզ՝ պարգևս մեծամեծս առնուցուք յինէն։ Ասեն զինուորքն. պարգևս ոչ խնդրեմք ՚ի քէն. այլ միայն զկէս ոսկւոյն զոր գտանեմք։ Ասէ կայսրն. բարւ՛ է զոր ասէքդ. և կոչեաց զնոսա յընթրիս։ Եւ յետ ընթրեացն՝ ասեն ցկայսրն. տէ՛ր՝ եթէ կամիս ՚ի գիշերիս այս՝ երիցագոյնն մեր Հայեսցի երազ. և ՚ի վաղիւն պատմեսցուք քեզ։ Ասէ կայսրն. գնացէք խաղաղութեամբ. տացէ՛ աստուած ձեզ երազ բարի. զի կարասցուք գտանել զանձս։ Եւ նոքա գնացին ուրախութեամբ յօթևանս իւրեանց՝ ծաղր առնելով զկայսրն։ Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն. և ասէ երիցագոյնն ՚ի նոցանէ։ Արքայ յաւիտեան կաց. տեսայ երազ բարի՝ զի աման մի լի ոսկւով թաղեալ կայ առաջի դրան քաղաքիս. երթիցուք անդր. գայցէ և տէրութիւն քո ընդ մեզ։ Ասէ կայսրն երթայց և տեսից թէ ճշմարիտ իցէ զոր ասէքդ։ Իբրև եկին ՚ի դուռն քաղաքին, ասեն զինուորքն ցկայսրն Հրամայեա՛ տէր զի բրեսցեն զտեղիս զայս։ Եւ յորժամ բրեցին՝ հանին զակին զոր ինքեանք թաղեալ էին. զոր տեսեալ կայսրն՝ ուրախ եղև յոյժ. և ետ նոցա զկէս ոսկւոյն։

Յայնժամ ասէ երկրորդն ցկայսրն տէ՛ր իմ արքայ՝ քոյին աղօթիւքդ վաղիւն ես Հայեցեմ երազ. Ասէ կայսրն. տացէ՛ տէր աստուած ձեզ երազ բարի։ Եւ ընդ առաւօտն՝ եկեալ առ կայսրն և ասեն. յերկրորդում դրան այլ քաղաքիս՝ կայ աման ինչ լի ոսկւով։ Եւ ելեալ կայսրն՝ գնացին ՚ի միասին ՚ի տեղի այն. և եցոյց կայսերն

զտեղին ոսկւոյն:

Եւ կայսրն Հռոմայեցւոց բրել զտեղին այն. և յորժամ բրեցին՝ նոյն ժամայն հանին զամանն զոր ինքեանք թաղեալ էին: Եւ տեսեալ կայսրն ուրախ եղև յոյժ. և ետ նոցա զկէս ոսկւոյն: Յայնժամ ասէ կրտսերագոյն զինուորն՝ որ է երրորդն. տէր իմ արքայ՝ 'ի գլխէս այս ես հայեցայց երազ: Ասէ կայսրն. տացէ ձեզ տէր աստուած բարի երազ. և օրհնեալ է ժամն այն որ դուք եկիք աստ: Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն և ասեն արքայ յաւիտեան կաց. զանձ բազում կայ յերկրի քում: Ասէ արքայն՝ ո՞րպէս: Ասեն զինուորքն. յերրորդում և 'ի չորրորդում դրունքն քաղաքիս՝ կան ամանք լի ոսկւով: Ասէ կայսրն՝ երթիցուք և տեսցուք թէ ճշմարիտ է: Ասեն զինուորքն. այո՛ գայցէ տէրութիւնդ քո ընդ մեզ: Եւ իբրև եկին 'ի դուռն երրորդ բրեցին և հանեցին աման լի ոսկւով: Եւ գնացեալ 'ի չորրորդ դուռն, անտի այլ բրեալ հանեցին աման լի ոսկւով. և ուրախացաւ թագաւորն յոյժ. և ետ նոցա զկէսն: Եւ ասէ կայսրն ցնախարարսն իւր ո՛չ երբէք լուեալ է իմ կամ տեսեալ այր արդարախօս որպէս զդոքա: Եւ նոքա առեալ զկէս ոսկւոյն՝ գնացին յօթևանս իւրեանց:

Եւ 'ի վաղիւն կոչեաց զնոսա կայսրն 'ի յընթրիս իւր և մեծարեաց զնոսա:

Եւ յետ բազում խօսիցն՝ ասեն զինուորքն ցկայսրն. մինչև ցայսօր տեսաք իւրաքանչիւրոք զիւր երազ. արդ՝ այժմ կամօքն աստուծոյ 'ի միասին երազ մի հայեսցուք. և 'ի ձեռն երազոյն այնորիկ՝ ունիմք յոյս որ գտանեմք գանձս

բազում։

Ասէ կայսրն. տացէ ձեզ տէր աստուած երազ բարի և շնորհաւոր։

Եւ նոքա ելեալ յերեսաց արքային գնացին ուրախութեամբ. ծաղր առնելով զկայսրն։ Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն և ասեն ցնա. արքայ յաւիտեան կաց. և աւետիս տեառն արքային մերոյ։ Ասէ կայսրն. ո՞րպիսի։ Ասեն զինուորքն. տեսաք երազ կերպիւ նման մեռելոց. զի 'ի ներքոյ հիման այն աշտարակին յորում պատկերքն է՝ այնչափ ոսկի կայ որ 'ի դիր և 'ի համարս մտանել անկար է. և որչափ դրամ որ կայ 'ի քաղաքս, միանգամայն բաւական ոչ կարեն։ Ասէ կայսրն. քաւ լիցի ինձ կործանել զաշտարակն զայն. որ պատկերօքն զգուշացուցանէ զմեզ 'ի թշնամեաց մերոց։ Ասեն զինուորքն. տէր արքայ՝ երբ գտեր զմեզ սուտս առաջի քո։ Ասէ կայսրն։ ոչ երբէք ասեմ թէ սուտ էք. այլ միշտ արդարախօս և ճշմարիտ։ Ասեն զինուորքն տէր արքայ հաւատա մեզ. և մեք հնարիւք փորեմք զալորս աշտարակին. և առանց կործանման և վնասու առնումք զոսկին անտի։ Բայց պարտ է 'ի գիշերի առնել զայն. զի մի տեսցեն քաղաքացիքն և ուժգնութեամբ եկեալ 'ի վերայ մեր՝ առցեն զոսկին 'ի ձեռաց մերոց։ Ասէ կայսրն. բարի է զոր ասէքդ. և երթայք շնորհիւն աստուծոյ. և ես ընդ առաւօտն եկից առ ձեզ։ Եւ նոքա ուրախութեամբ գնացին։ Եւ 'ի մէջ գիշերին՝ սկսան փորել մինչ զի աշտարակն մերձ եղև 'ի կործանումն։ Յետ այնորիկ՝ լուցին հուր զաշտարակաւն. և ինքեանք փախեան 'ի քաղաքէն. և սկսաւ այրել աշտա-

րակն՝ մինչև կործանեցաւ։

Եւ ընդ առաւօտն յորժամ տեսին մեծամեծքն զաշտարակն կործանեալ՝ տրտմեցան յոյժ. և դը-նացեալ առ կայսրն՝ ասեն ցնա. տէր վասն էր կործանեցաւ աշտարակս այս. յորմէ ունէաք զզու-շութիւն 'ի թշնամեաց։ Ասէ կայսրն. երեք խա-բեբայ արք եկեալ ասացին ինձ. եթէ բազում ոսկի կայ 'ի ներքոյ հիման աշտարակին. որչափ որ ամենայն գրաստ կայ 'ի քաղաքիս՝ միանգա-մայն բառնալ ոչ կարեն զհամայնն։ Եւ ուխ-տեցին ինձ թէ առանց կործանելոյ աշտարակին՝ հանեմք զոսկին 'ի ներքուստ իմաստութեամբ մե-րով։ Ասեն ցնա նախարարքն և քաղաքացիքն. եթէ այդպիսի ցանկութիւն ունիս ոսկւոյ, այժմ կատարեսցուք զցանկութիւն քո որ կորուսեր վասն այն զզուշացուցանօղն մեր 'ի թշնամեաց մերոց։ Եւ նոյնժամայն յափշտակեցին զկայսրն. կուեցին ընդ կոկորդն նորա ոսկի. և կենդանւոյն թաղե-ցին զնա։ Յետ այնորիկ ոչ բազում աւուրց ան-ցելոյ 'ի վերայ, եկեալ թշնամիքն պատերազմե-ցան ընդ քաղաքացիսն և յաղթեցին նոցա։

Յայնժամ ասէ թագուհին ցկայսրն տէր ար-քայ 'ի միտ առե՞ր զոր ինչ ասացի քեզ։ Ասէ կայսրն. այո՛ 'ի միտ առի. բայց պատմեա՛ զէու-թիւն աշտարակին։ Ասէ թագուհին. աշտա-րակն այն պատկերօքն՝ անձն և զօրութիւն քո է. որ ոչ ոք կարէ 'ի թշնամեացն քոց առնել քեզ վնաս։

Տեսանես զնզովեալ որդւոյ քո զդպրապետքն՝ որ խորհէին կործանել զքեզ 'ի ձեռն սուտ ա-ռակացն իւրեանց որ պատմեն քեզ։ Եւ դու մեծաւ ունկնդրութեամբ լսես նոցա. զոր սկսեալ

են բերել շուրջ զաշտարակաւ մարմնոյ քո․ Եւ յորժամ տեսանիցեն զքեզ անզգոյշ՝ յայնժամ սպանեալ կործանիցեն զքեզ ։

Ասէ կայսրն․ ով Թագուհի՝ լաւ տուաք տա-ցեր ինձ․ այսուհետև ոչ կարեն կործանել զիս որպէս զաշտարակն զայն․ վասն որոյ աշխատա-նաց այսօր մեռանիցին նոքա ։ Ասէ Թագուհին․ եթէ այդպէս արասցես իմաստութեամբ տա-նես․ և կեցցես դու երկար 'ի կեանս և հզօր ելցես ։

**Հինգերորդ անգամ տանելն զորդի արքային 'ի մահ․ և գալ հասանել Յոսեփոս դպրապետին և առակօք փրկելն զնա ։**

Ի վաղւն եկեալ կայսրն և նստաւ 'ի գահոյսն իւր․ և իսկոյն կոչեաց զդահճապետն և ասէ․ հա՛ն զորդին իմ 'ի բանտէն․ և ես առ ժամայն տա՛ր սպան զնա առանց պատճառանաց․ Եւ եկեալ դահճապետն էհան զորդի արքային 'ի բանտէն և հրամայեաց կապել զձեռսն 'ի յետս նորա ։ Եւ մունետիկն ընդ առաջն ձայնէր և գնայր ասելով․ եթէ որ մեղանչել կամի ընդ յետնամօրն՝ այսպէս մահուամբ մեռանի ։ Եւ յորժամ լուան ժողովուրդքն եթէ այսօր ես մատնեցաւ որդի արքային 'ի մահ, սկսան լալ․ և ողբալով ասէին՝ ո՛հ ո՛հ աւաղ և հազար աւաղ զուր կու գնայ 'ի մահ ։ Եւ մինչդեռ տանէին՝ եհաս հինգերորդ դպրապետն․ որում անունն էր Յովսեփոս՝ սրընթաց երիվարաւն ։ Եւ տե-սեալ զորդի արքային այնպէս խեղճ և ողորմելի՝ սաստեաց դահճապետին և ասէ․ ընդէ՞ր այդպէս

կապերնք զորդի արքային . և ետուր արձակել զնա ։ Եւ որդի արքային տեսեալ զվարժապետն իւր՝ երկիր եպագ նմա . իբր թէ կամի ասել՝ յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ . զի ահա՛ զուր կոգնամ 'ի մահ ։ Եւ ժողովուրդքն առաւել ևս աղաչէին զվարդապետն զի շուտով երթիցէ առ կայսրն և ազատեսցէ զորդի արքային ։

Ասէ վարդապետն դահճապետին . կաց դու առ և մի՛ շտապեր սպանանել զդա . զի յոյս ունիմ առ աստուած որ այսօր ապրեցուցանեմ զդա ։ Եւ զայս ասացեալ գնաց 'ի պալատն . և եմուտ առ կայսրն . և հեզութեամբ աղաչանեաց զնա ։ Ասէ կայսրն . տացէ աստուած քեզ չարիք՝ զի ունելիս ընկերօքդ հանդերձ . որ կարծէք նենգել զիս՝ որպէս այն երեք զինուորքն նենգեցին ումեմն կայսեր . և կործանեցին պաշտարանէն պատկերօքն ։ Ասէ վարդապետն . տէր իմ արքայ՝ նոքա որպէս նենգեցին՝ ես ոչ գիտեմ . այլ զայս գիտեմ որ քո թագաւորութեանդ ես ոչ եմ ծառայեալ այնպէս զոր դու կարծես ։ Ասէ կայսրըն ով անիմաստ՝ ետու զորդին իմ 'ի ձեզ յատակ և լաւ զուսուցանել զիմաստութեան հանճարն . փոխանակ իմաստութեան՝ յուսել չարիս իսկ և զայս՝ որ կամեցաւ բռնադատել և լլկել զկինն իմ ։ Ասէ վարդապետն . խօսելն որդւոյ քո՝ 'ի ձեռն իւր է . թէ խօսի և թէ լռէ . բայց յետ լըց ես զձայնն յետ երից աւուրց՝ եթէ մինասցէ կենդանի ։ Եւ որ ասացեր թէ կամեցաւ բռնադատել զկինն իմ՝ այդմ ես ոչ հաւատամ . և միտք իմ ոչ վկայէ . և կին իմաստուն՝ այդպիսի բան ոչ խօսի . զի որդեակն քո իմաստուն գոլով՝ այդպիսի անպատեհ բան գործէ՞ . քա-

ցեն 'ի նմանէ ։ Այլ զայս ասեմ քեզ · եթէ տացես սպանանել զորդեակն քո վասն բանի կնոջ քո՝ դառնագոյն պատահեսցէ քեզ՝ քան որ պատահեաց Բոքրատեսի ընդ Կալենոսի թոռին իւրոյ · որ 'ի պիտոյական ժամուն՝ եղև վրէժ յաստուծոյ 'ի վերայ Բոքրատեսի ։ Ասէ կայսրն զայդ ես ես կամիմ լսել վասն Բոքրատեսի թէ որպէս եղև ։ Ասէ դպրապետն · եթէ կամիս լսել զԲոքրատեսի առակն, դարձո զորդին քո 'ի բանտ · և ես պատմեցից զբանս իմ · յայնժամ խղճմտանք քո արասցէ զատ · թէ սպանանելոց ես՝ թէ ոչ ։ Այս հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն ։

Եւ սկսաւ ասել այսպէս ։

## Առակ հնգետասաներորդ դպրապետին · զոր ասաց վասն Բոքրատեսի բժշկին · և Կալենոսի թոռին նորա ։

Ի քաղաքի միում կայր ոմն իմաստասէր · որ էր անուանի յոյժ · որում անունն էր Բոքրատէս և էր ճարտար բժիշկ · որև էանց զամենեքումբք արուեստաւորն իւրով ։

Եւ ունէր թոռն մի · որում անունն էր Կալենոս · և յոյժ սիրէր զնա ։ Եւ Կալենոսն այն յոյժ սրամիտ էր · և հանապազ կամակած էր արուեստին՝ զի կարասցէ ուսանիլ 'ի պապուն իւրմէ ։ Եւ Բոքրատէս տեսեալ զջանն նորա՝ թաքուցանէր 'ի նմանէ զարուեստն · զի երկնչէր 'ի սրութենէ մտաց նորա թէ ուսանիցի զարուեստն բժշկութեան և անցցէ զնովաւ ուսմամբն իւրով ։ Եւ Կալենոս ծանեաւ զկամս պապոյն

իւրոյ․ և առաւե՛լ եւս ջան եդեալ ուսաւ զա-
մենայն․ և եղև կատարեալ բժիշկ․ և հայէր
Բոքրատեսի որ ոչ հաճոյանայր ընդ նմա ։ Եւ
՚ի ժամանակին յայնմիկ Թագաւորն մաճարաց՝
առաքեաց հրեշտակս առ Բոքրատէս․ զի եկես-
ցէ առ նա և բժշկեսցէ զորդի իւր ։ Իսկ Բոք-
րատէս ոչ կամեցաւ գնալ՝ պատճառելով ըզ-
ծերութիւնն․ այլ գրեաց թուղթ և առաքեաց
զթոռն իւր զԿալենոս փոխանակ իւր․ զի գի-
տէր զնա կատարեալ արուեստին բժշկութեան ։
Որ բժշկեսցէ զորդի արքային․ կամ թէ ոչ
կարասցէ բժշկել՝ սպանցի անդ ։ Որև ուղևո-
րեցաւ Կալենոս և գնաց յերկիրն մաճարաց․ և
մտեալ առ Թագաւորն՝ մեծաւ պատուով ողջու-
նեաց զնա ։ Եւ Թագաւորն բազում հարկս
արար Կալենոսի․ բայց սքանչացաւ վասն ոչ
գալոյն Բոքրատեսի ։ Եւ Կալենոս պատասխանի
ետ և ասէ․ ծեր է՝ և բան ծանր կայ ՚ի վե-
րայ․ վասն այն ոչ կարաց գալ․ այլ փոխա-
նակ իւր՝ առաքեաց զիս․ և ես շնորհիւն աս-
տուծոյ բժշկեսցից զորդի քո․ և հաճոյ եղև Թա-
գաւորին պատասխանին Կալենոսի ։ Եւ եմուտ
Կալենոս առ որդի արքային․ և իբրև ետես զգոլ
նորա, ասէ ցԹագաւորն և ցԹագուհին․ պիտոյ
է զի տեսից զերկոցունցդ այլ զջուր․ զի եւ լա-
ւագոյն կարացից ճանաչել զպատճառ հիւանդու-
թեան մանկանս․ և Թագուհին խոստացաւ տա-
նել զայն ՚ի վաղիւն ։ Եւ իբրև ետես զջուր
երկոցունցն, ասէ Կալենոս ցԹագուհին․ հրա-
մայեա՛ աղախնեացդ արտաքս ելանել ; և ունիմ
բան ծածուկ ասել քեզ․ և արար Թագուհին
վաղվաղակի ։ Ասէ Կալենոս․ ո՛վ Թագուհի աղա-

չեմ զքեզ արդ՝ ասա՛ ինձ զճշմարիտն՝ ո՞վ է հայր մանկանս այսորիկ։ Ասէ Թագուհին. հայր դորա՝ տէր իմ արքայ է։ Ասէ Կալենոս. ոչ է արքայն հայր մանկանս։ Ասէ Թագուհին. եթէ գիտենայի զայդ ուղիղ սրտէ ասացեալ՝ գլուխ քո 'ի քէն հատեալ լինէր։ Ասէ Կալենոս. ես զճշմարիտն կամիմ զի ոչ է Թագաւորն հայր սորա. բայց ես եկեալ եմ աստ զի պարգեւօք պատուեցից. և ոչ թէ գլխատեցից. եթէ ես աստ ունիմ գլխատել՝ յանձն առնեմ զքեզ աս-տուծոյ ու գնամ. և դուք գտէք ձեզ այլ բը-ժիշկ։ Լուեալ Թագուհւոյն զայս և ասէ. ով սիրելի բժիշկ մի՛ գնար. զի ունիմ 'ի քեզ պատ-մել զծածուկ խորհուրդ իմ. բայց զիս մի՛ խայ-տառակեսցես։ Ասէ Կալենոս. քաւ լիցի ով Թագուհի վասն է՞ր խայտառակեմ զքեզ։ Ասէ Թագուհին. 'ի ժամանակի միում պորտնկաց-ւոց Թագաւորին դեսպանն եկն առ մեզ. և յաջղմանէ չարին՝ 'ի նմանէ յղացայ զմանուկս զայս։ Ասէ Կալենոս ճշմարիտ է զոր ասեսդ. մի՛ երկնչիր այսուհետև. կամօքն աստուծոյ բը-ժշկեցից զորդին քո։ Յայնժամ ետ մանկանն ուտել միս ցլոյ՝ և ջուր ըմպելոյ. և ողջացաւ մանուկն։ Եւ իբրև ետես Թագաւորն զորդի իւր ողջացեալ, յայնժամ խիլաթեաց զբժիշկն. ևս առաւել Թագուհին խիլաթեաց զնա։ Եւ Կա-լենոս գաղտ պատուիրեաց Թագուհւոյն. թէ կուզես որ մանուկն հանապազ առողջ մնայ՝ միս ցլոյ կերցուր. և ջուր ըմպելոյ տուր. զի այլ կերակուր չէ՛ պարտ դորա ուտել. Եւ Կա-լենոս ողջունեալ զԹագաւորն և զԹագուհին, ել 'ի Ճանապարհ և եկն առ Բոքրատէս պաւն

խւր ։ Եւ Բոքրատէս համբուրեաց զԿալենոսն և ասէ ․ ողջացուցե՞ր զմանուկն ։ Ասէ Կալենոս ․ այո՛ ողջացուցի ։ Ասէ Բոքրատէս, ի՞նչ ցաւ ունէր ։ Ասէ Կալենոս ․ ես զցաւն ո՛չ գիտեմ ․ այլ ետու նմա կերակուր միս ցլու ․ և ջուր 'ի յարբումն ։

Ասէ Բոքրատէս ․ մի՛ թէ բո՞զ էր մայր նորա ․ ասէ Կալենոս՝ այո՛ ․

Յայնժամ Բոքրատէս նախանձեցաւ Կալենոսի և ասէ ընդ միտս իւր ․ եթէ սա՛ մնայ կենդանի՝ իմ անուանն կորնչի ․ արդ պա՛րտ է սմա կորնչիլ՝ Ու մի՛ փնձ ․ և յայնմ օրէ խորհէր սպանանել զնա ։ Մանորոյ և յաւուր միում կամեցաւ գը-նալ 'ի պարտէզն իւր Բոքրատէս վասն ծաղկանց ․ և կոչեաց զԿալենոս և ասէ ․ սիրելի որդեակ իմ, եկ երթիցուք 'ի պարտէզն ժողովել զծաղ-կունս ․ ասէ Կալենոս ․ ահաւասիկ եմ հայր իմ ։ Եւ ելեալ գնացին երկոքեանն 'ի միասին ։ Եւ իբրև մտին 'ի պարտէզն ասէ Բոքրատէս ․ եթէ հատ ծաղկի խմնոս լաւ և զօրաւոր, խոնարհեաց և կորեա՛ զնա 'ի գետնոյ ․ և Կալենոս արար այնպէս ։ Եւ իբրև գնացին ևս 'ի ներքագոյն պարտէզն՝ ասէ Բոքրատէս ․ կայ այս ինչ ծաղ-կի հատ՝ որ գոյնն ընդ ոսկւոյ է ․ որոնեա՛ և գխա զնա՝ զի բազում իրաց պիտոյ է ։ Եւ Կա-լենոս գնեալ՝ և խոնարհեցաւ զի հատցէ զծա-ղիկն ։ Իսկ Բոքրատէս հանեալ զնետն 'ի յե-տուստ կողմանէն՝ եհար Կալենոսի ․ որ եմուտ մինչև 'ի սիրտն ․ և նոյնժամայն մեռաւ 'ի տեղ-ւոջն յայնմիկ ։

Եւ յետ ոչ բազում աւուրն՝ հիւանդացաւ Բոք-րատէս մինչև 'ի մահ ․ և էր փորացաւ և որպէս

ջուր հեղոյր որովայն նորա · և անկեալ դնէր ՚ի մահիճս · և ոչ կարէր բժշկել զինքն ։ Եւ լուեալ աշակերտացն նորա, եկին առ Բոքրատէս զի օգնեսցեն վարժապետին իւրեանց · և ոչ կարացին օգնել ինչ ։ Ասէ Բոքրատէս աշակերտացն իւրոց · բերէք ինձ աման լի ջրով · և նոքա բերին · և ասէ՝ ածէք ՚ի ներքս այս ինչ ծաղկանց զոր ասացից ձեզ · և նոքա լցին · և ասէ · ծածկեցէք զամանն և արարէք մինչև հարիւր ծակս զի հեղցի ջուրն · և արարին այնպէս՝ և ոչ հեղաւ ջուրն ։ Եւ ասէ Բոքրատէս ահա՛ որդեակք իմ վրէժն աստուծոյ եհաս ինձ · որ յայտնի տեսանէք զի է հարիւր ծակս լայն և ընդարձակ · և վասն զօրութեանց ծաղկանցն որ ՚ի ներքս կայ՝ չթողուն որ կաթ մի ջուր ելանէ ։ Արդ՝ ես ոչ եթէ միայն զայդ ծաղկունսդ՝ այլ ես ՚ի բազում ծաղկանց արբեալ եմ դեղ յաղագս փարատելոյ զցաւս իմ · և դուք ամենեքեան ես աշխատեալ՝ ոչ կարացիք բժշկել զիս ՚ի ցաւէս ։ Սիրելի թոռն իմ Գալենոս զոր ուսանի՝ եթէ էր նա կենդանի՝ յոյժ բարի լինէր ինձ · և առողջացուցանէր զիս · ահա՛ վրէժն աստուծոյ է որ եկն ՚ի վերայ իմ · և զայս ասացեալ՝ դարձոյց զերեսս իւր ՚ի յորմն և եհան զհոգին ։

Ասէ դպրապետն ցկայսրն · տե՛ր ՚ի միտ առէ՞ր զասացեալս իմ ։ Ասէ կայսրն · այո՛ լաւ ՚ի միտ առի ։ Ասէ դպրապետն · ինչ լաւ էր եթէ Գալենոս կենդանի մնացեալ էր ։

Ասէ կայսրն · ապաքէն յոյժ բարի լինելոց էր · զի Գալենոս թէ կենդանի լինէր՝ Բոքրատէս դեռևս ոչ մեռանէր ։ Վասն արդար դատաստա-

նէն աստուծոյ՝ սպեղանիքն ո՛չ եղեն օգնական․ և ո՛չ կարացին աշակերտքն փրկել զնա ՚ի հիւանդութենէն։ Ասէ դպրապետն․ յաղագս որոյ ասեմ քեզ մ՛րքայ՝ զի խստագոյնս պատահեսցէ քեզ եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զմիամօր որդին քո․ որ ՚ի դէպ ժամու օգնելոց է քեզ։ Ասէ կայսրն․ ամէն ասեմ քեզ՝ ո՛չ մեռանի այսօր որդին իմ։ Ասէ դպրապետն․ եթէ զայդ արասցես՝ բարի լինելոց է քեզ․ որ վասն առակի իմոյ ապրեցուցեր զորդին քո․ և ես շնորհակալ եմ քեզ․ և օրհնութիւն իմ անպակաս եղիցի ՚ի քեզանէ․ զայս ասաց դպրապետն և ողջունեալ զկայսրն գնաց։

Իբրև լուաւ Թագուհին թէ այսօր ևս ոչ սպանաւ որդի արքային, իսկոյն պատառեաց զպատմուճան իւր ճչելով․ և դժգոհելով զարքայէ ասէ․ վա՜յ է ինձ որ եկեալ եղէ ես ՚ի սահմանըս այս․ և թէ ո՞րպէս է թագաւորութիւն ՚ի տան հօր իմոյ․ և ես աստ միայն կամ ՚ի տրտմութիւնս և ՚ի նախատինս։ Իբրև լուեալ կայսրըն զաղաղակ Թագուհւոյն՝ եմուտ առ նա և ասէ․ սիրելի տիկին իմ, պատճառն ի՞նչ է որ այդչափ տրտմեցուցեր ես զանձն քո․ և ո՛չ դադարես ՚ի լալոյ։ Ասէ Թագուհին․ զի՞արդ կարացից լռել․ զի անուանիմ դուստր Թագաւորի և կին կայսեր․ և կրեցի այսքան նախատինս ՚ի ներքոյ ձեռաց քոց․ և աղաղակեցի առ քեզ այսքան՝ և դու բնաւ ինձ ո՛չ լսեցեր։

Ասէ կայսրն․ վասն է՞ր ասես զայդ․ և ի՞նչ պակաս է քեզ։ Ասէ Թագուհին։ մի թէ ո՞չ գիտես որ ինչ արար ինձ նզովեալ որդին քո․ և դու աչօքդ քո տեսեր՝ որև վկայ իսկ պիտոյ չէ․

և զի խոստացար ինձ և հաւատացուցեր զիս թէ կորուսանեմ զնա · և ես ոչ կարացի ընդունել զայդ առ 'ի քէն · զի առնէիր զկամս իմ ։ Ասէ կայսրն · ո՜վ Թագուհի՝ ոչ գիտեմ ես թէ զի՞նչ արարից · շաքաթ մի է որ դու ջանաս սպանանել զորդի իմ, և դպրապետքն ջանան ապրեցուցանել զնա · և ես ոչ գիտեմ թէ յո՛ր կողմն դասիմ · և ո՛րն է 'ի ձէնջ ճշմարիտն · ես ոչ կարացի իմանալ ։ Ասէ Թագուհին · դու առաւել հաւատաս դպրապետաց քոց՝ քան ինձ · բայց պատահելոց է քեզ այնպէս՝ որպէս պատահեաց Թագաւորի ումեմն յիշխանէ իւրմէ · որ էր սենեկապետ նորա ։ Ասէ կայսրն աղաչեմ զքեզ ո՛վ Թագուհի՝ պատմեա ինձ զառակդ զայդ · զի և ես կարացից շահել բան 'ի քեզանէ · և թէ հաւանիմ առակիդ՝ առ ժամայն տամ սպանանել զնա ։

Ասէ Թագուհին · զամենայն ինչ առնեմ ես ըստ կամաց քոց, բայց դու զիմ կամն ոչ երբէք հաճեցուցանես ։ Բայց աղաչեմ զքեզ զի լաւ հայեսցիս զխօսս իմ · և այլ մի՛ ունկնդիր լինիցիս դպրապետացն որդւոյ քո ։

Նա սկսաւ ասել այսպէս ·

## Վեցերորդ առակ Թագուհւոյն · զոր ասաց վասն Ջրդողեալ Թագաւորին · և վասն հնոյ սենեկապետի նորին

Ի քաղաքի միում կայր Թագաւոր ոմն Ջրդողեալ և անմաքուր · և կանայքն ոչ կամէին գնալ առ նա այլ արհամարհէին զնա ։

Նա Թագաւորն այն խորհեցաւ առնուլ բռնու-

Թեամբ 'ի հռոմայ զմարմինքն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի վասն բժշկութեան իւրոյ: Եւ յորժամ եղ 'ի Ճանապարհ և եկն 'ի քաղաք մի, կոչեաց զսեննեկապետն իւր որ էր յոյժ պատուական նմա և ասէ: Ո՛վ սիրելի սեննեկապետ· 'ի քեզանէ բան մի խնդրեցից· ոչ գիտեմ թէ կարօ՞ղ ես կատարել: Ասէ սեննեկապետն· հրամայեա տէր իմ արքայ՝ և ես առ ժամայն կատարեցից: Ասէ արքայն· խնդրեա կին մի գեղեցիկ ընդ որում ես ննջեցից 'ի գիշերիս: Ասէ սեննեկապետն· տէր՝ կանայք ամենայն գիտեն զի ջրգողեալ և ուռուցեալ ես դու· վասն այն ոչ կամին գալ առ քեզ· եթէ ոչ տացես մեծամեծ պարգևս: Ասէ թագաւորն· մի թէ ո՞չ իցէ իմ մեծութիւն· խնդրեսցէ կինն այն՝ զինչ և կամեսցի· և ես տաց նմա մինչև հազար դահեկանս:

Եւ սեննեկապետն այն էր ագահ և արծաթասէր· վասն որոյ ելեալ յերեսաց արքային՝ եկն առ կինն իւր և ասէ· ո՛վ կին իմ սիրելի՝ այժմ 'ի ձեռս քո է հաճոյն քո և կամք· եթէ կամեսցիս 'ի գիշերիս յայսմիկ՝ առնուցուս հազար դահեկանս· զի կինն էր գեղեցիկ յոյժ: Ասէ կինն· պատմեա ինձ թէ ո՞րպիսի իրք: Ասէ այրն· տէրն իմ արքայ խնդրէ կին մի ունել առ իւր 'ի գիշերիս· և զի գիտես դու որ անմաքուր է· և կանայք ոչ կամին գնալ առ նա· և ինձ խոստացաւ տալ հազար դահեկանս· վասնորոյ սիրելի իմ տարայց զքեզ 'ի մահիճ նորա 'ի գիշերիս· և ընդ առաւօտն ելեալ դայցես· և 'ի մի գիշերի՝ շահիս հազար դահեկանս: Ասէ կինն· և թէպէտ չիցէր ջրգողեալ՝

այլ մաքուր ես լեցէ՝ քաւ լիցի ինձ գործել զայդ առաջի աստուծոյ, և անկանել 'ի մեղս մեծամեծս: Ասէ այրն. երդնում յաստուած՝ եթէ ոչ արտաքսեմ զկամս իմ, ոչ ունիս յինէն բառութիւն զամենայն աւուրս կենաց իմոց: Եւ կինն լուեալ զայս՝ երկեաւ յոյժ. և առ ահուն՝ խոստացաւ նմա զանձն իւր ակամայ կամօք:

Եւ եկեալ սենեկապետն առ Թագաւորն և ասէ. տէր՝ կալայ կին մի 'ի փորձու գեղեցիկ յոյժ. և կամի զի տացես հազար դահեկանս. այլ և ոչ կամի գալ 'ի ցերեկի. այլ 'ի գիշերի կամի գալ՝ և ընդ առաւօտն կամի և գնալ. զի մի՛ ոք գիտասցէ զնա: Ասէ ցնա Թագաւորն. խիստ բարւոք: Եւ իբրև երեկոյ եղև՝ եբեր սենեկապետն զկինն իւր 'ի մահիճ Թագաւորին. և փակեալ զդրունսն՝ ել և գնաց: Եւ մտեալ Թագաւորն առ նմա 'ի մահիճն՝ զարմանս ետես 'ի նմանէ: Եւ 'ի հաւախօսին՝ եկեալ սենեկապետն առ Թագաւորն և ասէ. տէր արքայ՝ լայն մերձ է. թէ արձակէիր զկինն և տայիր զհազար դահեկանն որ երանէր՝ լաւ է. զի մի՛ ոք 'ի մարդկանէ տեսանիցէ զնա: Ասէ Թագաւորն. ամէն ասեմ քեզ՝ զի դեռևս ոչ ելանիցէ կինս աստի. վասն զի յոյժ հաճոյ եղև ինձ:

Եւ լուեալ զայս սենեկապետն՝ տրտմեցաւ յոյժ. էանց պահ մի՝ և դարձեալ եկն առ Թագաւորն և ասէ. տէր արքայ սկսեալ է լոյսն՝ արձակեա՛ զդա: Ասէ Թագաւորն՝ ոչ արձակեմ. ել դու արտաքս և փակեա՛ զդուռն: Եւ սենեկապետն ել և գնաց տրտում յոյժ. թուէր թէ շունք ես խածատեցին զինքն. և կսկծեալ շրջէր աստ և անդ՝ մինչև ծագեաց լոյսն առաւօտին. Եւ

ԻՒՂԱԲԵՐ
ՄԵՐՈՒԺԱՆ ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

դարձեալ երրորդ անգամ եմուտ առ Թագաւորն և ասէ․ տէր արքայ՝ լոյս է․ և կինն ամօթի հարկցի եթէ ոք տեսցէ զնա․ փութով արձակեա զդա։ Ասէ Թագաւորն՝ ոչ արձակեմ փութով։ Նա լուեալ սեննեկապեան զխօսս արքային՝ այլ ոչ ևս կարաց ժուժել և ասէ․ տէր արձակեա զդա՛ զի կին իմ է։

Յորժամ լուաւ Թագաւորն՝ ասէ․ բա՛ց զպատուհանն զի տեսից զոր ասեսդ․ և նա եբաց զպատուհանն․ և տեսեալ Թագաւորն զի կին նորա էր։ Նա ասէ․ ո՛վ նզովեալ այր՝ վասն սակաւ ինչ փողոյ խայտառակեցեր զկին քո․ և բերիր առ իս առանց գիտութեան․ փութա՛ և ե՛լ յերկրէ իմմէ որ 'ի ներքոյ տէրութեան իմոյ է․ և թէ այսօր ոչ ելանիցես՝ չարաչար մահուամբ մեռանիցիս։ Նա փախեաւ սեննեկապեան յերեսաց արքային․ և այլ ոչ երևեցաւ առաջի նորա։

Յետ այնորիկ Թագաւորն չու արարեալ գնաց 'ի Հռոմ․ և պաշարեալ պահէր զնա 'ի բազում աւուրս․ մինչև Հռոմայեցիքն կամեցան տալ նմա զոսկերաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ Նա էին յայնմ ժամանակի 'ի Հռոմ իմաստասէրք եօթն․ որպէս և քոյդ․ որ իմաստութեամբ իւրեանց զամենայն քաղաքն 'ի ձեռին ունէին։

Յայնժամ եկին Հռոմայեցիքն առ իմաստասէրսրն և ասեն․ զինչ արասցուք՝ զի քաղաքս 'ի մէջ մեծ նեղութեան է․ և ցուցանէ թէ՝ կամ տացուք զքաղաքս, կամ զմարմին սուրբ առաքելոցն։ Ասէ առաջին դպրապետն․ ես պահեմ զքաղաքս և զմարմին սրբոցն օր մի՝ որ ոչ մատնի

'ի ձեռս նոցա ։ Եւ ամենայն դպրապետքն կարգաւ զայս ասացին ։ Որպէս և քո որդւոյ դպրապետքն խոստացեալ են որդւոյ քո այսպէս ։ Եւ իբրև Թագաւորն սկսաւ արտաքուստ ճակատել ընդ քաղաքին՝ յայնմ ժամու ել առաջին դպրապետն 'ի քաղաքէն 'ի դուրս, և սկսաւ իմաստութեամբ խօսել ընդ Թագաւորին, մինչև դադարեցոյց զԹագաւորն 'ի պատերազմելոյ ընդ քաղաքին ։ Եւ այսպէս ամենայն իմաստասէրքն կարգաւ զնոյն արարին, մինչև եկն կարգն 'ի յետին դպրապետն ։ Իսկ յեօթներորդում աւուրն ամենայն քաղաքացիքն եկեալ առ եօթնում դպրապետն և ասեն, ով սիրելի դպրապետ՝ արդ Թագաւորն երդուաւ զի 'ի վաղիւն ունիցի զքաղաքս, և եթէ ունիցի՝ մեք ամենեքեանս մեռանիմք, արդ՝ ապրեցո՛ զմեզ որպէս և ընկերակիցքն քո արարին ։ Ասէ դպրապետն, մի՛ վախէք, զի վաղիւն գործ մի գործեմ ես՝ որ փախիցէ Թագաւորն ամենայն զօրօքն իւրովք ։ Եւ 'ի վաղիւն իբրև սկսաւ Թագաւորն տալ զպատերազմ ընդ քաղաքին, զգեցաւ դպրապետն ազգ մի հանդերձ, որ պէսպէս Թռչնոց փետրով յօրինեալ էր, սիրամարգի, արծուոյ, ջայլամու, և այլ Թռչնոց, և էառ երկու սուսերս փայլունս՝ յերկու ձեռս իւր, և ել 'ի բարձր աշտարակ մի միայն յանդիման Թագաւորին, և այսր և անդր շրջեալ՝ փայլեցուցանէր զինքն որպէս փայլակն, վասն զի զարմանալի ունէին սուսերքն զփայլուածսն, ևս առաւել ինքն ։

Եւ զօրք Թագաւորին տեսեալ զայն 'ի բանականէ իւրեանց՝ ասեն ցԹագաւորն, տէր՝ տեսե՞ր զսքանչելին որ է 'ի վերայ աշտարակին ։

Ասէ Թագաւորն շատ զարմանք է այդ զոր տեսանեմ ես. այլ թէ զինչ կամի լինիլ՝ ոչ գիտեմ։ Եւ նոքա ասեն. աստուածն է քրիստոնէից որ 'ի յերկնից է իջեալ. և կամի սուսերօքն այնմիկ զմեզ զամենեսեան կոտորել եթէ յամեսցուք աստ։

Եւ Թագաւորն տեսեալ՝ երկեաւ և ասէ զինչ ապրասցուք։ Ասեն զօրքն. եկայք փութով փախիցուք 'ի տեղւոջէս՝ զի մի՛ աստուածն նոցա կոտորեսցէ զմեզ սրով. և սկսան փախչիլ Թագաւորն և ամենայն զօրքն ընդ նմա։ Եւ տեսեալ Հռոմայեցիքն զփախուստ նոցա՝ առեալ զզօրականսն իւրեանց՝ ընթացան զկնի նոցա. և զբազումս 'ի նոցանէ կոտորեցին. և զԹագաւորն նոցա սպանին. և սակաւք 'ի նոցանէ մազապուրծ փախեալ զերծան. և այսպիսի պատճառաւ յաղթեցաւ ամենայն զօրքն 'ի յաւուրէ միոջէ։

Յայնժամ ասէ Թագուհին ցկայսրն 'ի միտ առե՞ր զասացեալս իմ։

Ասէ կայսրն. այո՛ 'ի միտ առի։ Ասէ Թագուհին ոչ ապաքէն լուար վասն իշխանին՝ թէ որպէս սիրեցեալ էր 'ի Թագաւորէն, և վասն ցանկութեան սակաւ ոսկւոյ՝ անձթի հարեալ կորոյս զկեն իւր. և ինքն վարեցաւ յերկրէն։ Այնպէս և որդին քո վասն ցանկալոյ տէրութեան և իշխանութեան քո՝ կամի խայտառակել զքեզ և կորուսանել, զի ինքն Թագաւորեսցէ 'ի տեղի քո։ Այլ դու ո՛յնպէս արա՝ որպէս արար Թագաւորն այն իշխանին իւրոյ։ Եւ թէ ոչ կամիս սպանանել՝ աքսորեա՛ զնա և արտաքսեա՛ յերկրէ քումմէ. զի այլ մի՛ երևեսցի առաջի քո. և դու եղիցիս 'ի խաղաղութեան։

Լուար և զայն թէ որպէս թագաւորն այն պաշարեաց զքաղաքն · և որպէս նենգեցաւ 'ի դըրբապետացն որ եթող զքաղաքն 'ի ձեռանէ . և ինքն ազատեալ եղև պատճառանօք միոյ ալևորի ·
և զօրքն յաղթահարեալ են :

Այսպէս և դպրապետքն որդւոյ քո՝ կամին քեզ այնպէս առնել խորամանկութեամբն իւրեանց · և խաբեալ զքեզ՝ յետոյ սպանանեն և թագաւորեցուցանեն զորդին քո 'ի տեղի քո : Ասէ կայսրն · ամէն ասեմ քեզ՝ ոչ լինի այդպէս · քանզի ընդ լուսանալ առաւօտուն՝ տամ զնա սպանանել :

Առաւօտուն [illegible] [illegible] զորդին արքային 'ի [illegible] ·
և Աստուած [illegible] [illegible] [illegible] զնա ·

Ի վաղիւն եղեալ կայսրն՝ նստէր 'ի գահոյսն իւր · և իսկոյն կոչեաց զդահճապետն և ասէ · հան զորդին իմ 'ի բանտէն · և առ ժամայն տար սպան զնա առանց պատճառանաց և հեռացո զգլուխ նորա 'ի մարմնոյն վաղթառուն կանդուն : Նոյնպէս և թագուհին աղաչէր զդահճապետն և պարգևս տայր և ասէր · մի յապաղէր սպանանել զնա · այլ և պատուէրս իմ քեզ այս լիցի՝ զի չարաչար մահուամբ կորուսցես զնա · և եթէ արասցես այնպէս , բազում մեծութեան հասուցանեմ զքեզ :

Նա և եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային 'ի բանտէն · և հրամայեաց կապել զձեռսն 'ի յետս նորա · և քարոզն առաջի նորա կարդայր և երթայր ասելով , եթէ ոք մեղանչել կամի յետնամօրն հետ՝ այսպիսի մահուամբ մեռանի :

Եւ յորժամ լուան ժողովուրդքն եթէ այսօր ես մատնեցաւ որդի արքային 'ի մահ, սկսան լալ և ողբալ. և ասէին՝ ո՜հ ո՜հ աւաղ և հազար աւաղ որ 'ի զուր կու գնայ որդի արքային 'ի մահ։

Եւ մինչդեռ տանէին, եհաս վեցերորդ դպրապետն. որում անունն էր Կղէոպաս՝ որընթաց երիվարուն իւրով։ Եւ տեսեալ զորդի արքային խեղճ և ողորմելի՝ առ ժամայն սաստեաց դահճապետին և ասէ. ընդէ՞ր այդպէս կապեր էք զորդի արքային միթէ մահապա՞րտ իցէ. և ետուր արձակել զնա։ Ասէ դահճապետն. ո՜վ դպրապետ՝ հրաման սաստիկ է թագաւորին. արդ ես զի՞նչ արարից. և դպրապետն ոչ տայր թոյլ խօսել դահճապետին։ Եւ որդի արքային տեսեալ զվարժապետն իւր՝ երկիր եպագ նմա. իբր կամէր ասել թէ յիշեա զիս առաջի հօր իմոյ. զի ահա զուր կու գնամ 'ի մահ։ Եւ ժողովուրդքն ես առաւել աղաչէին զդպրապետն զի շուտով երթիցէ առ կայսրն և ազատեսցէ զորդի արքային։ Ասէ դպրապետն դահճապետին. կա՛ց դու աստ և մի՛ շտապեր սպանանել զդա. զի յոյս ունիմ առ աստուած որ այսօր ապրեցուցանեմ զդա։

Եւ զայս ասացեալ՝ գնաց և եմուտ 'ի պալատն. և մտեալ առ կայսրն՝ երկիր եպագ նմա. և հեզութեամբ ողջունեաց զնա։ Ասէ կայսրն. պատահեսցէ քեզ աւուրք չարեաց։

Ասէ դպրապետն. գիտէ աստուած որ ոչ այդմ բանի արժանի ծառայեցի քեզ, այլ յուսայի առաւելաբար պարգևս առնուլ 'ի տեառնէս իմմէ. և մի՛ լսել այդպիսի բան։ Ասէ կայսրն

սատեցէք ինձ· զի ետու զորդին իմ 'ի ձեզ լեզուաւ և խօսուն· և արդ եղև համր· այլ եւս չարագոյն այն է՝ որ կամեցաւ բռնադատել և լլկել զկինն իմ· վասնորոյ ահա՛ մեռանի այսօր· և ձեզի չարչարանքներ կազմեմ, որ աչօք ձերօք տեսանիցէք զմահ ձեր: Ասէ դպրապետն· այն զոր ասացեր թէ պապանձեալ է՝ ես գիտեմ որ ո՛չ է ստոյգ պապանձումն 'ի նմա· զի կարէ խօսիլ՝ բայց չէ՛ ժամանակ· զի ժամանակս լռելոյ է նմա· և յետ երկուց աւուրց լուիցես զխօսս նորա եթէ մնասցէ կենդանի: Եւ որ ասացեր թէ՝ զԹագուհին իմ կամեցաւ բռնադատել, ընդ այդմ յոյժ զարմացեալ եմ· զի այր իմաստուն ես դու· և վասն բանի կնոջ քո հաճեալ լինիս և հաւատաս նմա: Եւ թէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո՝ պատահեսցէ քեզ որպէս պատահեաց զինուորի միոյ· որ հաւատաց բանի և խրատու կնոջ իւրոյ և յետոյ կապեալ եղև ամէհի ձիոյ ագի· և կախեցաւ 'ի փայտէ:

Ասէ կայսրն· վասն սիրոյն Քրիստոսի ասա՛ զառակդ զայդ· զի կարացից ելանել յընկղմանէս յայսմանէ:

Ասէ դպրապետն· ո՛չ ասեմ և ո՛չ աշխատիմ 'ի զուր· եթէ կամիս լսել զառակն իմ, նախ դարձո՛ զորդին քո 'ի մահուանէ· և ա՛ծ զնա 'ի բանտ· և ես պատմեցից քեզ զառակս· ապա եթէ հաճոյ թուիցի քեզ՝ ապրեցո՛ զորդին քո· և թէ ոչ՝ սպա՛ն զնա:

Յայնժամ հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր 'ի բանտ:

Եւ դպրապետն սկսաւ առաջի ամենեցուն ասել զառակս՝ այսպէս:

Ուստի մեծերուդ ողորմածութեան. զոր տալոյ վասն հնոյ
ամենն ծերոց՝ որ առան զերկի զքնութիւն. և յետոյ
զենտն և զայլն այն աղանոյն չարաչար մահուամբ:

Ի քաղաքի միում էր կայսր մի. և ունէր երկու
զինուորս քաջամարտիկս. և յոյժ սիրէր զնոսա:
Եւ 'ի նոյն քաղաքին՝ էր մի ծեր զինուոր մի.
և ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ. որպէս
զԹագուհին քո. և յոյժ սիրէր զնա:
Եւ կինն այն էր երգեցող. մինչ զի զբազումս
առ ինքն ձգէր 'ի տուն իւր քաղցր ձայնիւն իւ-
րով. որ և յոգունց եղև ցանկացեալ:
Զաւուր միում նստեալ երգէր 'ի տանն իւրում
մերձ առ Ճանապարհաւն. և հայէր զանցորդսն
Ճանապարհին. և սկսաւ քաղցրաձայն եղանակել
յոյժ. և զամենեսեան զմայլեցուցանէր: Եւ 'ի
պատահմանէ՝ եկեալ անցանէր զինուոր մի յար-
քունական պալատէն 'ի դրանէ նորա. և լուաւ
զքաղցր եղանակ նորա. և ամբարձեալ զաչս իւր՝
պշուցմամբ հայէր ընդ նա. և բորբոքեցաւ 'ի սէր
նորա. և եմուտ առ նա 'ի տունն. և սկսաւ
խօսել ընդ նմա և ասել զանկարգս. և ասէ՝
զի՞նչ տաց քեզ սիրելի իմ զի ննջեսցես ընդ իս
գիշեր մի: Ասէ կինն. տուր ինձ հարիւր դա-
հեկան և ննջեցից ընդ քեզ գիշեր մի: Ասէ զին-
ուորն. յօժար եմ տալու. բայց միայն ասա՛
Թէ յորում ժամու եկից առ քեզ:
Ասէ կինն. յորժամ ժամ ունիցիմ, ծանուցից
քեզ: Եւ զինուորն ողջունեալ զկինն՝ գնաց 'ի
պալատն. 'ի մտի ունելով զխոստումն նորա:
Յերկրորդում աւուրն նոյնպէս նստեալ առ պա-
տուհանն՝ և քաղցր ձայնիւ եղանակէր. և 'ի

պատահմանէ եկեալ անցանէր երկրորդ զինուորն՝ ընկեր առաջին զինուորին․ և լուեալ զձայն նորա՝ բորբոքեցաւ 'ի սէր նորա․ և սկսաւ խօսել ընդ նմա զանպատեհս․ և ասէ՝ սիրելի զի՞նչ տաց քեզ զի կարասցես խաղալ ընդ քեզ ։

Ասէ կինն․ հարիւր դահեկան ։ Ասէ զինուորն․ յօժար եմ տալ քեզ զհարիւր դահեկանն․ կամ այլ աւելի պարգևս․ բայց ասա ինձ թէ յորում ժամու եկից առ քեզ եւ կատարեցից զսէրն իմ ։ Ասէ կինն․ յորժամ ժամ ունիցիմ, ծանուցից քեզ․ երթ այժմ 'ի սենեակն քո՝ զի չէ ժամանակ ։ Եւ զինուորն զերկս արկեալ ողջունեաց զնա․ և գնաց 'ի պալատն իւր ։ Երրորդում աւուրն նոյնպէս նստեալ առ դըրանն և քաղցր ձայնիւ եղանակէր․ և երրորդ զինուորն որ էր ընկեր առաջին զինուորացն՝ եկն և անց ընդ նոյն Ճանապարհաւն․ և լուեալ զձայն նորա՝ այնպէս զմայլեցաւ 'ի սիրուն՝ համարելով թէ մեռանելոց իցէ եթէ ոչ խօսեսցի ընդ նմա ։ Եւ մտեալ 'ի տունն՝ խօսի ընդ կնոջն և ասէ․ զի՞նչ տաց քեզ որ կատարես զկամս իմ ։ Ասէ կինն հարիւր դահեկան ։ Ասէ զինուորըն յօժար եմ տալ քեզ զհարիւր դահեկանն․ բայց ասա ինձ թէ յորում ժամու եկից առ քեզ ։ Ասէ կինն․ ես զգուշացուցանեմ քեզ զժամն որ առանց վրդովմանց լինիցի․ դու երթ այժմ 'ի սենեակն քո ։ Եւ զինուորն հաւանեալ խօսից նորա․ ողջունեալ զնա գնաց 'ի պալատն ։

Եւ նորա երեքեանն այսպիսի գաղտ բանիւք 'ի միմեանց՝ ուխտ եդին ընդ կնոջն ։ Եւ կինն այն խորամանկ և լի ամենայն չարեօք՝ յորժամ

երեկոյեաց և եկն այր իւր 'ի տուն, ընդ առաջ ել առն իւրում և ասէ. բարի եկիր սիրելի տէր իմ. ունիմ բան ինչ ծածուկ խօսել ընդ քեզ, եթէ արասցես ըստ բանից իմոց՝ մեծութեամբ կու հանդիպիմք. զի ահա՛ աղքատք եմք: Ասէ այրն. ո՛րպիսի իրօք. Ասէ կինն. երեք զինուորք յարքունականն պալատէն եկին առ իս՝ մի զկնի միոյ գաղտ 'ի միմեանց. Եւ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ՝ խոստացեալ եղեն ինձ տալ հարիւր դահեկանս. զի կատարեցից զկամս նոցա: Արդ լինէր այնպէս որ առնէաք զոսկին 'ի նոցանէ և չի ննջէի ընդ նոսա մեծ իմաստութիւն էր: Ասէ այրն. զինչ որ քեզ հաճոյ է՝ այն և ինձ է հաճոյ: Ասէ կինն. տամ քեզ լաւ խորրատ մի. զառաջին զինուորն կոչեցից յերեկոյին՝ դահեկանօքն. զերկրորդն՝ յերկրորդ պահուն գիշերոյ. և զերրորդն՝ 'ի հաւախօսին: Եւ յորժամ նոքա եկեսցեն առ իս՝ յայնժամ դու կացցես յետոյ դրանն և սուր մերկ 'ի ձեռին քում. և որ ոք 'ի նոցանէ որ մտանէ մի հետ ընդ միոյ՝ հարցես և սպանցես. և այնպէս առնումք զոսկին: Ասէ այրն. երկնչիմ եթէ ոք 'ի մարդկանէ զայս գիտասցէ՝ և չարաչար մահուամբ ըսպանցեն զմեզ: Ասէ կինն. մի՛ երկնչիր. ես ինքնին խորհեցայ զգործդ զայդ, և ես կատարեցից զդա՛: Զայս լուեալ այրն և ասէ. զամենայն ինչ զոր դու ասիցես ինձ՝ ես առնեմ զայն:

Յայնժամ յղեալ կինն և կոչեաց զառաջին զինուորն զի փութով եկեսցէ առ նա. և նա իբրև լուաւ եկն փաղփաղակի: Ասէ կինն. սիրելի իմ եթէ կամիս վայելել զսէր իմ, եկեսցես յերեկոյին. և բերցես զոսկին ընդ քեզ. և

կատարեսցես զկամս քո ։ Ասէ զինուորն․ պատրաստ եմ առնել զայդ․ և դրկեալ զկինն՝ համբուրեաց և գնաց ։ Յետ այնորիկ առաքեաց առ երկրորդ զինուորն զի եկեսցէ․ և նա եկն փաղփաղուկի․ և նորա ևս զնոյն բան ասաց․ և ժամադիր եղև զի եկեսցէ յերկրորդ պահու գիշերոյն․ և նա ուրախութեամբ դրկեալ համբուրեաց զկինն և գնաց ։ Դարձեալ առաքեաց առ երրորդ զինուորն զի եկեսցէ առ նա․ և նա փաղփաղուկի եկն․ և նորա ևս զնոյն բանս ասաց․ և ժամադիր եղև նմա զի եկեսցէ 'ի հաւախօսին․ և նա ուրախութեամբ դրկեալ համբուրեաց զնա և գնաց ։

Եւ իբրև երեկոյ եղև, եկն առաջին զինուորն և բաղխէր զդուռն․ և այր կնոջն որպէս պատուիրեալ էր՝ կայր յետոյ դրանն․ և եբաց զդուռն և իբրև եմուտ՝ եհար և սպան զնա․ և զմարմին նորա քարշեցին 'ի ներքս 'ի նսեմ սենեկին․ Եւ յերկրորդ պահու գիշերուն՝ եկն երկրորդ զինուորն․ և զնա այլ այնպէս սպանին․ և զմարմին նորա քարշեցին առ միւսն մօտ 'ի նսեմ սենեկին ։ Եւ 'ի հաւախօսին՝ եկն երրորդ զինուորն․ և զնա այլ այնպէս սպանին․ և զնորա մարմինն ևս քարշեցին մօտ առաջնոցն 'ի նսեմ սենեկին․ և այսպէս արարեալ՝ առին զոսկիսն 'ի նոցանէ ։

Եւ իբրև այս այսպէս եղև, ասէ ցնա այրն․ ով սիրելի կին իմ, եթէ գտցեն զմարմինս դոցա աստ առ մեզ, յայնժամ չարաչար մահուամբ սպանցեն զմեզ․ զի ոչ է հնար եթէ ոչ խնդրեսցի այս 'ի պալատէն արքունի թէ զի՞նչ եղև նոցա ։

Ասէ ցնա կինն. ես սկսայ զգործս՝ և ես կատարեցից զդա. դու մի՛ ինչ հոգար. դեռևս ո՛չ գիտես զհնարագիտութիւնս կանանց: Եւ կնոջն կայր եղբայր մի հարազատ. և էր գիշերապահ քաղաքին այնմիկ: Եւ իբրև եկին պահապանքն շրջել զքաղաքաւն, ել կինն և կանգնեցաւ առ դրամբ տանն իւրոյ. և ետես զեղբայր իւր որ անցանէր ընդ այն. կոչեաց զնա և ասէ. ունիմ խորհուրդ ինչ ծածուկ ասել քեզ. մնա ՚ի ներքս և պատմեցից քեզ. և իբրև եմուտ, ընկալաւ զնա սիրով այր նորա. և նստաւ առ հաւն: Յայնժամ ասէ ցնա կինն. ով սիրելի եղբայր իմ. այս է պատճառ կոչելոյն զքեզ իմ. զի զծածուկ խորհուրդ սրտի իմոյ յայտնեցից քեզ. Յանցեալ գիշերիս զինուոր ոմն եմուտ աստ. և վիճեալ ընդ տեառն իմում՝ սկսաւ անարգել զտէրն իմ. և տէրն իմ բարկացեալ սպան զնա. և ահա մարմին նորա անկեալ կայ ՚ի ներքին սենեկի: Սիրելի եղբայր իմ հարազատ. ՚ի քէնէ զատ չունիմ զոք յոյս. զի եթէ մարմին նորա գտանիցի աստ՝ չարաչար մահուամբ սպանցեն զմեզ: Արդ աղաչեմ զքեզ՝ զի առեալ զմարմին նորա տար և թաղցես զնա ՚ի տեղւ ուրեք զի մի՛ գտանիցի աստ. և վասն այր երկուցն ոչինչ ասաց նմա: Ասէ եղբայրն. ծանր բան ասացեր ինձ քոյր իմ. բայց սակայն օգնեցից քեզ: Դի՛ր զնա ՚ի պարկ մի. և ես առեալ տարայց զնա և ընկեցից ՚ի ծով. զի մի՛ երբեք երեւեսցի մարմին նորա: Եւ լուեալ զայս կինն՝ ուրախացաւ. և առեալ ըզ մարմինն առաջին զինուորին՝ եդ ՚ի պարկ մի և ետ ցեղբայրն. և նա փաղփաղակի ընթացաւ և

ընկեց 'ի ծովն • և դարձաւ առ քոյրն և ասէ • բե՛ր ինձ բարեհամ գինի վասն փրկելոյս զքեզ ։ Ասէ քոյրն • տէր աստուած հատուսցէ քեզ զբարին եղբայր իմ • և առեալ ամանն զի բերցէ գինի, իսկոյն 'ի մտանելն 'ի սենեակն ուր դէշքն էին՝ աղաղակեաց մեծաձայն և ասէ • փառք մարդասիրին աստուծոյ • տեսէք զմեծ զարմանս • որ զինուորն ընկեցեալ 'ի ծով՝ դարձեալ եկեալ է աստ ։

Նա եղբայրն լուեալ զայս զարմացաւ յոյժ • և ասէ • տո՛ւր ինձ տանիմ • և տեսից եթէ միւանգամ գայցէ ։ Նա առեալ զմարմին երկրորդ զինուորին՝ կարծելով թէ առաջինն է • և տարեալ զնա առ ափն ծովուն՝ կապեաց վէմ մի մեծ 'ի պարանոցն և ընկեց զնա 'ի ծով • որ ձայնն հասանէր 'ի քաղաքն ։ Նա դարձաւ առ քոյրն իւր և ասէ • արդ՝ տո՛ւր ինձ անուշ գինի • զի այժմ առանց կարծեաց փրկեցայ ։ Ասէ քոյրն • օրհնեալ լիցի դու յաստուծոյ ։ և եմուտ 'ի սենեակն որպէս զի բերցէ գինի • և ճչեաց բարձր ձայնիւ և գոչելով աղաղակեաց և ասէ • ո՜հ ո՜հ ո՜հ թէ որպէս վայ եկն ինձ • ահա դարձեալ եկեալ է զինուորն աստ ։ Նա լուեալ զայս եղբայրն և ասէ • մի թէ սատանա՞յ իցէ զինուորդ այդ • որ անգամ մի ընկեցի 'ի ծով և ել • և երկրորդումն վէմ կապեցի 'ի պարանոցն և ընկեցի 'ի ծով • և դարձեալ ել • արդ տո՛ւր ինձ զդա՝ և երրորդումս տարայց ։ Նա առեալ զերրորդ զինուորն՝ կարծելով թէ առաջինն է • և ելեալ հանդէպ քաղաքին՝ եդ 'ի մէջ փոսի միոյ • և կուտեալ փայտ 'ի վերայ նորա՝ վառեաց հուր մեծ • և այրեաց զզինուորն • և ինքն հեռացեալ 'ի

հրոյն՝ դիտէր զնա։ Եւ ոմն օտարական զինուոր հեծեալ ՚ի ձի՝ անցանէր ընդ այն․ որ սառուցեալ ՚ի ցրտոյն՝ եկն և ջեռնոյր․ կանգնելով յեզեր հրոյն։ Եւ տեսեալ սորա զզինուորն կանգնեալ՝ եկեալ եհարց զնա և ասէ․ ո՞վ ես դու որ կանգնեալ կաս․ և նա ասէ՝ զինուոր եմ մեծ ազգէ։ Եւ սա ասէ ցնա․ ո՛չ ես դու զինուոր՝ այլ սատանայ ես դու․ զի առաջին անգամն ընկեցի զքեզ ՚ի ծով և ելեր․ և յերկրորդ անգամն վէմ մի մեծ կապեալ ՚ի պարանոցդ ընկեցի ՚ի ծով, և դարձեալ ելեր․ և յերրորդ անգամն ՚ի հուրս ընկեցի զքեզ՝ և ահա ոչ այրեալ՝ կանգնեալ կաս։ Եւ զայս ասացեալ՝ յափշտակեաց զնա և ընկեց ՚ի հուրն հանդերձ երիվարաւն և այրեաց զնա․ և ինքն դարձաւ առ քոյրն իւր․ և պատմեաց նմա զամենայն թէ որպէս այրեաց զնա ՚ի հուրն երիվարաւն․ և ասէ՝ բեր այժմ զանուշահամ գինի զի արբից։

Եւ լուեալ քոյրն նորա ասէ․ զինուորն այն որ ՚ի վերայ ձիոյն էր՝ օտար ոմն էր․ և փաղփաղուկի ելեալ ետ նմա զգինին․ և գոհացեալ զնմանէ՝ ել և գնաց։

Եւ յետ ոչ բազում աւուրց՝ զինուորն ծեր բարկացեալ կնոջ իւրում՝ եհար ապտակ ընդ երեսն․ և կինն սրտմտեալ ասէ առաջի ամենեցուն։ Ո՜վ թշուառական այր․ միթէ և զիս կամիս սպանանել՝ որպէս սպաներ զերիս զինուորսն։

Լուան զայս մարդիքն և պատմեցին արքային․ և արքայն բերեալ առաջի իւր զնոսա՝ զրուցել ետուր թէ որպէս սպանին զերիս զինուորսն և

առին երեք հարիւր դահեկանի։ Եւ իբրև ստուգեցաւ առաջի բազմութեանն ճշմարիտն, հրամայեաց կայսրն որ կապեցին զերկաքեանն 'ի միասին զայրն և զկինն ամեհի ձիոյ ագի․ և տարեալ 'ի տեղի սպանման՝ կախեցին զփայտէ․

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն․ տէր՝ 'ի միտ առեր զառակս զայս։ Ասէ կայսրն․ այո՛ 'ի միտ առի՝ զի նոյնպէս էր կինն այն քան զամենեսեան․ որ ինքն սատակելոց էր չար մահուամբ՝ և սատակեցաւ․ բայց զայրն իւր՝ անմեղ մատնեաց 'ի սպանումն։ Ասէ դպրապետն․ ստոյգ ասեմ քեզ արքայ՝ դառնագոյն քան զնա լինիցի քեզ՝ եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո։

Ասէ ցնա կայսրն․ ճշմարիտ ասեմ քեզ ո՛վ դպրապետ՝ զի որդին իմ այսօր ո՛չ մեռանի։ Ասէ դպրապետն․ շնորհակալ եմ 'ի քեզանէ՝ որ վասն առակի իմոյ ազատեցեր զորդեդ քո այսօր 'ի մահուանէ։

Եւ իբրև լուաւ թագուհին՝ թէ որդի արքային այժմ ևս ոչ սպանաւ, սրտմտեալ նման դիւահարի՝ ընթացաւ առ կայսրն և ասէ․ վա՛յ է ինձ այսօր․ արդ լաւ էր ինձ մեռանել՝ քան զայսպիսի կեանս կրել։ Եւ կամիմ այժմ զիբովին մեռանել՝ քան թէ կենդանի մնալ և զայսպիսի վիշտս կրել․ զի նախատինք եղայ 'ի մէջ ազգին իմոյ՝ և դու ո՛չ կատարեցեր զկամս իմ։ Ասէ ցնա կայսրն։՝ աստուած պահէ զքեզ այդպիսի չարէ․ կնքեա՛ զքեզ նշանաւ սուրբ խաչին․ և համբերեա՛ սակաւ մի․ ունիմ յոյս առ աստուած՝ զի գոր քդ այդ 'ի ծայր ելանէ։ Ասէ թագուհին․ գիտեմ զի ծայրն 'ի չար կատարե-

յոց է. զի ամօԹ ինձ և քեզ լինիցի. այլ զայս ասեմ քեզ՝ զի պատահելոց է քեզ այնպէս՝ որպէս պատահեաց Թագաւորի ումեմն ՚ի զինուորէն իւրմէ։ Ասէ կայսրն. աղաչեմ զքեզ մի սիրուն սիրելի Թագաւորի իմ. ասա՛ ինձ Թէ որպէս եղև նմա։ Ասէ Թագաւորին. ասեմ քեզ և զառակս զայս յորդոր սրտիւ. և դու բազում օգուտս ունիցիս եԹէ լուիցես ինձ։ Եւ սկսաւ ասել այսպէս։

Յիսներորդ առակ ԹագաւորուԹեան. զոր ասաց վասն Թագաւորի ումեմն որ ունէր զինուոր մի յոյժ սիրելի. որ էառ զԹագուհին և փախեաւ։

Ի քաղաքի միում կայր Թագաւոր մի սիրէր զԹագուհին իւր յոյժ և պահէր զնա ՚ի մէջ ամուր աշտարակի միում. և զփականս դրանն առ ինքըն պահէր. և վասն այնորիկ յոյժ վշտանայր կինն։ Եւ էր զինուոր մի քաջամարտիկ և ուժեղ յոտար երկիր. և ետես նա երազ ՚ի միում գիշերի. որ էր տեսիլ նորա այսպէս։ Որպէս Թէ Թագուհի մի յոյժ գեղեցիկ և ցանկալի քան զամենեսեան. զոր տեսեալ՝ տպաւորեցաւ գեղեցկուԹիւն երեսացն ՚ի սիրտ նորա։ Եւ Թագուհին այլ ետես երազ ՚ի նոյն գիշերին. զի տեսանէր զզինուորն զայն. իբր Թէ խօսէին ընդմիմեանս։ Եւ զարԹեաւ ՚ի քնոյ Թագուհին. և ցանկայր տեսանել զզինուորն. և զինուորն այլ ցանկայր տեսանել զԹագուհին զայն։ վասն փորձելոյ զերազն։ Եւ յետ տեսանելոյ երազին՝ ոչ կամեցաւ դադարել յերկրի իւրում և ոչ օր մի զինուորն այն, այլ ելեալ ՚ի խնդիր Թագու-

ւոյն զի գտցէ զնա զոր ետես յերազին։ Եւ հեծեալ 'ի ձի՝ շրջէր զբազում Թագաւորութիւնս․ մինչև եկն 'ի քաղաքն այն յորում կայր Թագուհին բնակեալ 'ի մէջ աշտարակին․ և զկայ առեալ բնակեցաւ 'ի քաղաքն այն։

Եւ յաւուր միում շրջէր զինուորն այն շուրջ զաշտարակաւն․ ոչ գիտելով թէ անդ իցէ Թագուհին զոր յերազին տեսեալ էր։ Եւ Թագուհին ըստ սովորութեան իւրում ընկողմնեալ էր 'ի պատուհանի աշտարակին և հայէր յանցորդս ճանապարհին։ Եւ զինուորն ամբարձեալ զաչս իւր՝ ետես զնա․ և իսկոյն ճանաչեաց թէ նա՛ էր զոր 'ի յերազին ետես․ և սկսաւ սակաւ սակաւ արձակել ձայնս և երգել եղանակաւ։ Եւ իբրև լուաւ Թագուհին զձայն նորա, և հայեցեալ՝ նա ևս ծանեաւ զնա որ յերազին տեսեալն էր։ Եւ զինուորն այն յետ այնորիկ հանապազօր անցանէր շուրջ զպարսպաւ աշտարակին, և եղանակէր քաղցրաձայն․ և գիտէր թէ ընդ ո՞ր միտանիցէ և խօսիցէ ընդ Թագուհւոյն։

Եւ Թագուհին իմացեալ զկամս նորա թէ խօսակցել խնդրէ ընդ ինքեան՝ գրեաց թուղթ և ընկէց 'ի վերուստ աշտարակէն առ նա։ Եւ զինուորն բացեալ զթուղթն ընթերցաւ․ և ծանեաւ զկամս նորա․ և ուրախ եղև յոյժ։ Եւ սկսաւ արշաւել և խաղալ 'ի խաղս․ մինչև համբաւ նորա եհաս յականջս Թագաւորին։

Եւ Թագաւորն կոչեաց զնա և ասէ․ ո՛վ զինուոր՝ բարութիւնս լուեալ եմ վասն քո․ եթէ կամիս՝ բնակեա՛ 'ի յիս։ Պատասխանի ետ զինուորն և ասէ․ տէր իմ արքայ՝ բնակիմ առ քեզ ամենայն սիրով և յօժար կամօք եթէ տացես

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻՂԱՐԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԵԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

ինձ տեղի առ պարապու քով՝ զի շինեցից ինձ տուն բնակութեան. և եթէ լիցի տեառնդ իմոյ կոչել զիս՝ 'ի գիշերի կամ 'ի ցերեկի. փութով ժամանեցից առ քեզ: Ասէ ցնա թագաւորն կատարեցից զխնդրուածս քո և տաց քեզ զպարապու իմով տեղւք զի շինեսցես քեզ տուն բնակութեան որպէս և կամիս դու:

Յետ այնորիկ յորժամ կատարեաց զինուորն այն զտունն ընդ պարապու աշտարակին յորում կայր թագուհին, խօսեցաւ ընդ մի Ճարտարացն և, ասաց. արա դու ինձ գաղտ դուռ մի յոյժ: իմաստութեամբ. որ չկարասցէ ոք տեսանել 'ի մարդկանէ. և ես տաց քեզ զոր ինչ և կամիս:

Եւ երբև արար Ճարտարն այն զդուռն գաղտ, անդէն եհար զինուորն զՃարտարապետն և սպան զնա. և զմարմին նորա թաղեաց 'ի տան իւրում զի ոչ ոք իմասցի. և կամ թագաւորն իմասցի:

Յետ այնորիկ եմուտ զինուորն ընդ դուռն առ թագուհին և սիրով ողջունեաց զնա: Եւ թագուհին տեսեալ զնա՝ զարմացաւ և ասէ. ընդ ո՞ր մտեր այսր: Ասէ զինուորն: սէր քո եբեր զիս աստ. և մտայ ընդ գաղտագողի դուռն զոր արարի 'ի ներքոյ պարսպի աստ. վասն զի կամիմ լինել ընդ քեզ. և քանզի դու այն ես որ յերկրի իմում տեսի յերազի. և ահա՛ օրհնեալ գտի զքեզ: Ասէ ցնա թագուհին. մի՛ տայցէ զայդ տէրն որ անկայց 'ի մեղս առաջի տեառն իմոյ արքայի, և կատարեցից զկամս քո. քաւ լիցի ինձ առնել զբանդ զայդ: Ասէ զինուորն. եթէ կամաւ քով և սիրով ոչ տեսցեմ զանձն քո՝ 'ի սուր իմ մաշեցից զքեզ: Եւ նա երկուցեալ 'ի մահուանէ՝ ննջեաց ընդ նմա. և

զինուորն կատարեալ զկամս իւր՝ ել և գնաց ։ Յետ այնորիկ խորհէր Թագուհին ընդ միտս իւր և ասէր ․ եթէ ծանուցէց զայս արքային իմոյ՝ յայնժամ պատահեսցէ ինձ մեծամեծ չարիս ։ զի ես ինքնին խայտառակիմ ․ և տէրն իմ արքայ բարկասցի յոյժ ։ և զինուորն խայտառակեսցէ զիս ․ և վասն այն ոչ ասաց ինչ ումեք ։ Եւ յորժամ կամէր զինուորն՝ մտանէր առ նա և կատարէր զկամս իւր և ելանէր ․ և սիրեցին զմիմեանս յոյժ անասելի ։

Յետ այնորիկ ՚ի բազում սիրոյն, ետ նմա Թագուհին մատանի մի ազնիւ ․ որ տուեալ էր նմա Թագաւորն ՚ի նշան սիրոյ ։ Եւ զինուորն այն ՚ի խաղս ասպարիսին առնոյր յաղթութիւնս յոյժ ․ վասն որոյ յոյժ սիրեցեալ եղև յաչս արքային ․ և արար զնա սենեկապետ ․ և կարգեաց զնա ՚ի վերայ ամենայն երկրին որ էր ընդ տէրութեամբ իւրով ։ Եւ յաւուր միում կամեցաւ արքայն ելանել ՚ի յորս ․ առաքեաց հրաւիրակս առ սենեկապետն և ասէ ․ պատրաստ լինիցիս ընդ իս ելանել ՚ի յորս ։ Եւ նա նոյնժամայն պատրաստեցաւ և ել ընդ արքային ՚ի յորս ․ և շրջեալ զօրն ողջոյն և եկեալ իջևանեցան ՚ի ձոր մի ․ և զինուորն այն յանդիման արքային նընջէր ․ և մատանին ՚ի ձեռն նորա կայր ․ զոր տուեալ էր ՚ի Թագուհւոյն ․ և զձեռն իւր ձըրգեալ դնէր հանդէպ արքային ։ Իբրև ետես արքայն զմատանին՝ իսկոյն ծանեաւ զնա ․ և ասէ ընդ միտս իւր՝ մատանիս այս՝ նման է մատանոյն իմոյ զոր տուեալ եմ Թագուհւոյն իմոյ ՚ի նշան սիրոյ ․ Եւ նոյն ժամայն զարթեաւ զինուորն ՚ի քնոյ անտի ․ և գիտաց որ արքայն տե-

ռեալ էր զմատանին · և իսկոյն արար զինքն որ-
պէս հիւանդի · և ասէ ցարքայն՝ տէր իմ արքայ
հիւանդութիւն անկաւ 'ի վերայ իմ · արդ ձե-
պեմ երթալ 'ի տուն : Ասէ ցնա արքայն՝ երթ ·
և նա հեծեալ 'ի ձի՝ եկն 'ի տուն իւր · և ե-
մուտ առ Թագուհին ընդ գաղտ դռնովն և ասէ :
Առ զմատանին զոր ետուր ինձ · զի ետես ար-
քայն զմատանին 'ի ձեռս իմ · և քանզի գիտեմ
զի յորժամ եկեսցէ՝ իսկոյն հարցանելոց է զմա-
տանին · վասն այն յառաջեցի ես քան զարքայն
գալ առ քեզ զի մի՛ յամօթ կրեսցուք և ետ
զմատանին և գնաց :

Յետոյ եկեալ արքայն 'ի պալատն իւր՝ եմուտ
առ Թագուհին և ասէ · ո՛վ սիրելի տիկին իմ,
ո՞ւր է մատանին այն զոր ետու ես քեզ 'ի նշան
սիրոյ քո · ցո՛յց ինձ զնա :

Ասէ Թագուհին · ահա՛ կայ 'ի ափին · և ես
այլ բազում ժամանակ է որ չեմ 'ի մատս զը-
րեալ : Ասէ ցնա արքայն · բեր զի տեսից զնա :
Ասէ Թագուհին · զի՞նչ եղև քեզ որ այսչափ
ժամանակ է ոչ հարցանէիր՝ և այժմ կամիս տե-
սանել : Ասէ արքայն · եթէ ոչ տեսից զմա-
տանին՝ ճշմարիտ ասեմ քեզ որ դու այսօր մե-
ռանիս : Իսկ Թագուհին եղեալ նոյնժամայն ե-
բաց պտուղին · և հանեալ զմատանին ետ ցար-
քայն և ասէ ահա՛ մատանին առ և տե՛ս : Իսկ
տեսեալ արքայն զմատանին և ասէ · ո՛րպէս նը-
մանի է մատանիս մատանւոյն որ տեսայ 'ի ձեռն
սենեկապետին իմոյ · և բարկացայ 'ի վերայ քո ·
և կարծեցի զքէն չար · զի գիտէի ես թէ այլ
ուրեք ո՛չ գտանի այնպիսի մատանի : Ասէ Թա-
գուհին · ո՛վ տէր՝ ո՛չ է զարմանք եթէ նմանես-

ցի մատանւոյն մենեկապետին քո · և որ խոր-
հեցար վասն իմ և կարծեցեր զինէն չար, Թող-
ցէ քեզ տէր աստուած զյանցանքն զայն: Նա-
յետ ոչ բազում աւուրց՝ ասէ զինուորն ցար-
քայն · տէր իմ արքայ՝ կին մի սիրեր եմ ես
յերկրին քում · և այսօր առնելոց եմ ընդու-
նելութիւն կնոջն այն · և աղաչեմ զտէրն իմ
զի նստիցի այսօր 'ի սեղան իմ · և կերիցէ ընդ
իս և ընդ կնոջն իմոյ զոր սիրեմ ես · և եղիցի
ինձ փառք առաջի ամենեցուն:

Ասէ Թագաւորն · արարից զկամս քո՝ և ցուցից
զտէրն իմ զոր ունիմ առ քեզ: Եւ զինուորն
ուրախացեալ՝ գնաց ընդ գաղտ դուռն և եմուտ
'ի դարպասն և ասէ ցԹագուհին · զգեցիր պատ-
ուական զգեստ, զի այսօր 'ի սեղան իմ ուտե-
լոց ես ճաշ համդերձ արքայիւ: Ասէ ցնա Թա-
գուհին · կամք քո եղիցի՝ լինիմ պատրաստ վասն
սրտի քո: Եւ յորժամ պատրաստեցաւ ճաշն՝
եկն Թագաւորն 'ի տուն զինուորին · յետ նորա
եկն և Թագուհին: Եւ իբրև ետես զնա Թա-
գաւորն · ասէ ցզինուորն · ով է դա այդպէս
գեղեցիկ և հաճոյ աչաց հայելոյ հարս գեղաչէն:
Ասէ զինուորն · տէր իմ արքայ՝ դա է զոր ես
սիրեմ · և նստոյց զնա առ ընթեր Թագաւորին:
Եւ Թագաւորն հայէր աստ և անդ: խորհէր
ընդ միտս իւր Թէ որպէս նման է կինս այս Թա-
գուհւոյն իմոյ · և խաբէր զինքն ամրութիւն աշ-
տարակին · և առաւել հաւատայր բանիցն զին-
ուորին քան աչաց իւրոց: Եւ սկսաւ Թագու-
հին խօսիլ ընդ արքային և ասէ · տէր իմ ար-
քայ հրամայէ կեր զինչ որ աստուած տուեալ է
մեզ: Եւ արքայն լուեալ զձայն նորա՝ ասէ ընդ

միտս իւր · փառք քեզ աստուած՝ թէ որպէս կլինս այս 'ի տեսս և 'ի խօսս՝ 'ի գործս և 'ի շարժմունս՝ ամենայնիւ իրօք նման է կնոջ իմոյ · և ամրութիւն աշտարակին խաբէր զնա · և ոչ իշխէր ասել թէ կինն իմ է կամ ոչ · այլ աղաչէր զզինուորն զի փութով եղիցի ճաշն · քանզի փութայր մտանել 'ի պալատն իւր և տեսանել եթէ իցէ թագուհին 'ի դարպասն : Ասէ զինուորն · տէր մի՛ շտապիր 'ի կարօտանաց : Ասէ թագաւորն · գործ ինչ է իմ 'ի պալատն՝ վասն այն շտապեմ գնալ : Ասէ թագուհին · տէրն իմ արքայ սատ ուրախացի, և թագուհին քո անդ ուրախասցի 'ի դարպասի իւրում : Ասէ արքայն ցզինուորն · ժողովեա՛ զսեղանս · և նա արար ըստ հրամանի արքային : Եւ իբրև ժողովեցին զսեղանն՝ արքայն գոհացեալ զնմանէ՝ ել և գնաց 'ի պալատն իւր, և զինուորն ընդ գաղտ դուռն եմոյծ զթագուհին 'ի դարպասն իւր : Եւ թագուհին յորժամ եմուտ 'ի դարպասն իւր, առժամայն հանեալ յանձնէ իւրմէ զհանդերձն՝ նստաւ առ պատուհանն և հայէր յանցորդս ճանապարհին :

Եւ թագաւորն յորժամ եկն 'ի պալատն, ոչ նստաւ 'ի գահոյսն իւր · այլ առ ժամայն եմուտ առ թագուհին · և ետես զի նստեալ էր թագուհին 'ի պատուհանն · և գրկեալ համբուրեաց զնա և ասէ · ով սիրելի տիկին իմ, այսօր ես մեղանչեցի քեզ :

Ասէ թագուհին · որպէսի իրօք՝ ասա ինձ զպատճառն : Ասէ թագաւորն · գնացի այսօր 'ի տուն զինուորի իմոյ և կերայ ճաշ ընդ սիրողի նորա · 'ի ծննդենէ մօր իմոյ մինչև ցայժմ ոչ երբէք

տեսի զոր տեսայ այսօր անդ. զի 'ի տեսս 'ի խօսս 'ի գործս և 'ի շարժմունս' ամենայն իրօք նման քեզ էր կինն այն. մինչ զի փութացայ տեսանել զքեզ. Ասէ Թագուհին. օրհնեալ է աստուած' այժմ ես մեռայ տէր իմ արքայ. մի թէ ոչ գիտես զամրութիւն աշտարակին' որ ոչ ոք կարէ մտանել աստ կամ ելանել. այլ և զայս ոչ գիտենաս որ զփախչման դռամին դու ինքնին ունիս: Այլ և միտք մարդոյ վկայէ. զի մարդ մարդոյ նման լինի. և չէ զարմանք. որպէս յայնժամ մատանին զինուորին' նմանեցաւ մատանւոյն քո: Ասէ Թագաւորն. Ճշմարիտ ասես Թագուհի իմ. այլ և յայնժամ վասն մատանւոյն մեղայ ես քեզ.

Յետ այնորիկ յորժամ անցին աւուրք բազում, եկն զինուորն առ արքայն և ասէ. տէր իմ արքայ' բազում ժամանակ եղև զի ծառայեցի քեզ. արդ աղաչեմ զտէրդ իմ զի տացես ինձ հրաման որ երթամ 'ի սեպհական երկիրն իմ: Ասէ արքայն. տամ քեզ հրաման զի երթայցես. բայց լաւ էր եթէ ոչ երթայիր. զի ոչ ունիմ քեզ նման բարեկամ 'ի յերկրի իմում: Արդ' եթէ խնդիրք ունիս' խնդրեա. և կատարեցից զխնդրուածս քո. Ասէ զինուորն. վասն բազում ծառայութեան իմոյ որ ծառայեցի քեզ' զայս կու խնդրեմ 'ի տեառնէ իմմէ. զի զկինն զայն զոր կու սիրեմ և տէրդ իմ իսկ տեսեր զնա, կամիմ զի տացես 'ի կնութիւն ինձ և պսակեցեմ 'ի մէջ եկեղեցւոյն: Եւ աղաչեմ զտէրդ իմ զի զշնորհս զայս արասցես ինձ' որ դու քոյին ձեռամբն տացես զնա ինձ առաջի ամենեցուն. և եղեցի այն ինձ փառք և պատիւ 'ի մէջ առաջի

ամենայն ժողովրդեանն. և գիտասցեն թէ 'ի պալատէ քումմէ առից զնա ինձ 'ի կնութիւն: Ասէ ցնա Թագաւորն սիրելի զինուոր իմ արարից քեզ զայդ և կատարեցից զկամս սրտի քո: Եւ զինուորն ժամ եդ թէ յորում աւուր այս լինիցի:

Եւ իբրև եհաս օրն այն և եղև ժամ, եկն Թագաւորն յեկեղեցին. և բազմութիւն ժողովրդեանն ընդ նմա: Եւ զինուորն յառաջագոյն խրատեալ էր զԹագուհին՝ զի ժողովեսցէ զամենայն ինչս 'ի գանձարանէ Թագաւորին. և ելցէ ընդ գաղտ դուռն զոր արարեալ էր: Եւ եկեալ զինուորն և Թագուհին յեկեղեցին: Եւ քահանայքն զգեստաւորեալ և յառաջ եկեալ ասեն. ով տայ զկինս՝ զինուորիս այս: Ասէ Թագաւորն. ես տամ: Եւ առեալ զձեռանէ Թագուհւոյն և ասէ. սիրելի տիկին՝ դու յոյժ նման ես Թագուհւոյն իմոյ. վասն այն յոյժ սիրեմ զքեզ. այլև պալատէ իմմէ՝ կին զինուորի իմոյ լինիցիս. զայս ասացեալ՝ տայ 'ի ձեռն զինուորին զկինն: Եւ քահանայն պսակ եդեալ՝ օրհնեաց զնոսա: Եւ յետ պսակին՝ ասէ զինուորն ցարքայն. տէր իմ արքայ՝ նաւն պատրաստական է ընդ որում երթալոց եմ: Արդ աղաչեմ զքեզ զի նստիցիս ընդ իս 'ի կառս. և խրատես զկինն իմ օգտակար բանիւք առաջի ամենեցուն. թէ որպէս պարտ է նմա այսուհետև սիրել զիս առաւել քան զամենեսեան: Ասէ Թագաւորն արարից զայդ ես վասն քո: Եւ նստան 'ի կառս և գնացին 'ի միասին 'ի նաւն. և բազմութիւն ժողովրդեանն ընդ նոսա. վասն զի յոյժ սիրէր զնա Թագաւորն. և տրտմէր վասն

բաժանելոյն 'ի նմանէ. Նա եւ իբրեւ եկին մերձ 'ի նաւն, ասէ Թագաւորն ցԹագուհին. սիրեցեալ տիկին՝ լուր խրատու իմոյ եւ բարի լիցի քեզ. Արդ այժմ նա է այր քո. պարտ է քեզ զի սիրեսցես զնա որպէս զանձն քո. զի աստուած զայն պահանջէ 'ի քէն. զի դու ամենայնիւ ամենայն իրօք հաւատարիմ եւ հնազանդ լինիցիս նմա: Զայս ասացեալ՝ ետ զնա 'ի ձեռն զինուորին եւ ասէ. երթայք խաղաղութեամբ եւ տէր եղիցի ընդ ձեզ. Նա զինուորն էառ զԹագուհին. եւ երկրպագեալ արքային մտին 'ի նաւն: Նա նաւապետն բարձրացոյց զառագաստն. եւ զի հողմն յաջողակ էր՝ գնայր նաւն արագօրէն:

Նա Թագաւորն եկաց առ ափն ծովուն եւ հայէր. մինչեւ աներեւոյթ եղեւ նաւն յաչաց նորա. եւ ապա դարձաւ 'ի պալատն իւր: Նա իբրեւ եմուտ 'ի դարպասն եւ ոչ եգիտ անդ զԹագուհին, տրտմեցաւ յոյժ. եւ շուրջ եկեալ աստ եւ անդ՝ եգիտ զգաղտ դուռն ընդ որ ելեալ էր Թագուհին. եւ ասէ՝ վայ է ինձ. ընդ որում յուսացի ես եւ առաւել սիրէի՝ նա էառ զկինն իմ յինէն եւ փախեաւ:

Նա լայր դառնապէս եւ ասէր. միթէ խելագարեցայ ես. որ աչաց իմոց ո՛չ հաւատացի՝ եւ խօսից զինուորին խաբեցայ.

Յետ այնորիկ ասէ Թագուհին ցկայսրն. տէ՛ր 'ի միտ առե՞ր զասացեալս իմ: Ասէ կայսրն. այո՛ 'ի միտ առի: Ասէ ցնա Թագուհին. արդ որպէս Թագաւորն այն հաւատայր զինուորին այնմիկ, նոյնպէս եւ դու հաւատաս վարժապետաց նզովեալ որդւոյ քո. որ այսպիսի որոգայթս պատրաստեն քեզ խաբէութեամբն իւրեանց: Զի

ես որ կին քո եմ, ոչ հաւատաս ինձ քան թէ նոցա հաւատաս · որ այսպէս նախատինք արար ինձ և խայտառակեաց զիս · որ դու տէրդ իմ արքայ ինքնին տեսեր ։ Այլև զայս տեսանես՝ զի դեռևս օղնեն բանիւք նշաւակեալ որդւոյ քո ։ Յորմէ երկիցես՝ զի մի լինիցիս նման Թագաւո-րին այնմիկ զոր ասացի քեզ զայդ ամենայն ։ Ասէ կայսրն՝ ոչ լինի · այլ 'ի վաղիւն անպատճառն տամ սպանանել զնա ։ Ասէ Թագաւորն · եթէ այդպէս առնես՝ մեծ իմաստութիւն է քեզ · զի չէ պարտ նմա կենդանի մնալ ։

Եօթներորդ անգամ առնելն զորդի արքային 'ի նաւ. և եօթնամ վարդապետն Յովսէփ անուանեալ՝ առակօք կրկնելն զնա ·

Յեօթներորդում աւուրն՝ եկեալ կայսրն նստէր 'ի դահոյսն իւր · և հրամայեաց կոչել զդահ-ճապետն · և ասէ՝ երթ հան զորդին իմ 'ի բան-տէն և տար սպան զնա · և հեռացո զգլուխն 'ի մարմնոյն նեռաձիգ մի ։ Եւ Թագաւորն յառաջ-մէ կոչեալ զդահճապետն՝ ետ նմա բազում պար-գևս · իբր թէ նման մահապարտի սպանցէ զնա ։ Եւ եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային 'ի բանտէն · և ետ զձեռսն 'ի յետսն կապել որպէս մահապարտի · և մունետիկն առաջի իւր ձայնէր ասելով · եթէ ոք կամենայ մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ, այսպէս մահուամբ մե-ռանի ։

Եւ Թագաւորն հայէր 'ի պատուհանէն · և ու-րախանայր ընդ միտս իւր թէ այսօր կու կորնչի որդի արքային ։

Եւ այսպէսի նախատանօք՝ տանէին զորդի արքային 'ի մահ. և նա աղէկատր սրտիւ երթայր. և ժողովուրդքն ախտատալով ասէին. աւա՛ղ աւա՛ղ և հազար աւաղ որ այլ կու տանին զորդի արքային 'ի դուր սպանումն:

Եւ եօթներորդում դպրապետն որում անունն էր Յովակիմ, հեծեալ սրընթաց երիվարաւն նոյնժամայն եհաս նոցա և ասէ. զի՞նչ գործէք. և բարկացեալ դահճապետին ասէ. ընդէ՞ր այդպէս նախատինք ես արեր զորդի արքային. և տուր արձակել զձեռսն: Ասէ դահճապետն ով բարի դպրապետ՝ ոչ գիտեմ թէ զինչ արարից. զի հրաման թագաւորին սաստիկ է. եթէ կարօղ ես ազատել՝ ես արգելից զսա՛ յաստ. և դու գնա՛ առ կայսրն և ազատեա՛: Եւ ժողովուրդքն աղաղակէին եւ ասէին. փութա՛ առ կայսրն և ազատեա՛ զաշակերտն քո՝ որպէս ընկերքն քո արարին: Եւ որդի արքային երկիր եպագ վարժապետին իւրոյ. իբր կամէր առնել թէ ազատեա՛ զիս 'ի մահուանէ: Եւ դպրապետն փութանակի եկն առ կայսրն. և երկրպագեալ մեծաւ պատուով ողջունեաց զնա: Ասէ կայսրն. աստուած կորեսցէ զչարիքն 'ի քէն: Ասէ դպրապետն. տէր արքայ զի՞նչ գործ գործեցի որ այդպէսի բանի խօսիս ընդ իս: Ասէ կայսրն. ետու զորդին իմ 'ի ձեզ՝ ձարտար լեզուաւ 'ի բանս և 'ի խօսս. և այժմ համրացեալ է:

Ետու զորդին իմ 'ի ձեզ՝ զի պարկեշտ վարս ուսանիցի, և նա զկինն իմ կամեցաւ լլկել. վասն այնր գործոյն ահա՛ մեռանի նա՛ այսօր, և զձեզ զամենեսին դառն մահուամբ կորուսից:

Ասէ ցնա դպրապետն. տէր արքայ՝ ունկն դիր բանից իմոց և երկայնամիտ լեր. ասացեր թէ որդին իմ պատուհասեալ է: Ասէ կայսրն՝ այո: Ասէ դպրապետն. զանձն իմ եդից 'ի մահ՝ և ընկերքն իմ ամենայն. եթէ ոչ խօսի 'ի վաղիւն յառաջ քան զեօթներորդ ժամն առաջի ամենե-ցուն:

Ասէ կայսրն. եթէ առնես և շատ է ինձ: Ասէ դպրապետն. այլ մի՛ ունիցի կենդանութիւն եթէ ոչ եղէ 'ի ժամուդ՝ որ անխրատ զրպարտեաց զնա թագուհին քո: Այլ զայս ասեմ քեզ. եթէ տայցես սպանանել զորդին քո վասն բանի կնոջ քո՝ պատահեսցէ քեզ այնպէս զոր պա-տահեաց զինուորի ումեմն. որ մեռաւ վասն կնոջ իւրոյ: Ասէ կայսրն. աղաչեմ զքեզ ասա ինձ զառակդ զայդ: Ասէ դպրապետն. վասն է՞ր 'ի զուր աշխատիմ և ասեմ. զի մինչ ես պատ-մեցից զառակս՝ զորդին քո սպանցեն: Եթէ կամիս լսել զառակս իմ, նախ դարձո՛ զորդին քո 'ի բանտ. և ես պատմեմ զառակս աղուա-գոյնս: Յայնժամ խղճմտանք քո դատեսցեն վասն նորա. կամ սպանանել կամ կեցուցանել զնա: Ասէ կայսրն. դարձցի 'ի տուն և ոչ 'ի բանտ. առաւել վասն բանին այնորիկ՝ զոր ասացեր թէ 'ի վաղիւն խօսելոց է առաջի ամենեցուն:

Եւ դարձուցին զմանուկն 'ի տուն և պահա-պանս եդին նմա. և դպրապետն սկսաւ ասել զառակս զայս:

Մասն եօթներորդ · զոր տայ Յովհաննէս Պողոս-պետն եւ փրկեաց զմանուկն · եւ խոստացաւ զխօսելն նորա ։

Ի քաղաքի միում' էր զինուոր մի ազատազն ։ և ունէր կին գեղեցիկ ։ որպէս զԹագուհին քո և յոյժ սիրէր զնա առաւել քան զամենայն · մինչ զի ամենեւին առաջի նորա ուրեք դադարումն ոչ առնոյր ։

Եւ յաւուր միում խաղային այրն և կինն 'ի միասին խաղս ոսկոր կամ մէգս · և զինուորն այն ունէր 'ի ձեռին իւրում դանակ մի փոքրիկ · և կինն 'ի խաղալն ընդ նմա՝ զարկոյց զձեռն իւր ընդ դանակն և վիրաւորեաց զփոքրիկ մատն · և ել սակաւ մի արիւն ։ Իբրև ետես այրն զարիւնն 'ի ձեռն կնոջն՝ անկաւ և ուշաթափեցաւ · որպէս թէ ոք հարկանիցէ զկառափն նորա ։ Եւ կինն ջուր ցանեաց յերեսս նորա զի ուշաբերեսցի փութով · և նա եբաց զաչսն և ասէ կոչեցէք փութով զքահանայն · զի աւա՜ղ մեռանիմ վասն արեան կնոջ իմոյ ։ Եւ ծառայքն ընթացան կոչել զքահանայն՝ զի եկեալ հաղորդեսցէ զնա · բայց առաւել հոգալոյն վասն սակաւ մի արեան կնոջ իւրոյ՝ մինչև եկեալ էր քահանայն՝ մեռաւ ։ Եւ բարեկամքն նորա կոծէին և աւաղէին զնա որ 'ի զուր մեռաւ ։ և կինն լայր դառնապէս և ասէր՝ վա՜յ ինձ · արդ զի՞նչ լինիցիմ ես · այսուհետև նման տատրակի մնացի միայն ։ Եւ տարեալ թաղեցին զնա մեծաւ պատուով ։ և կինն անկեալ 'ի վերայ գերեզմանին լայր անմխիթար ։

Եւ ազգատոհմք նորա կամէին զնա տանել 'ի

տուն էր · այլ նա երդմամբ ասէր ցնոսա · Ե-
թէ 'ի տեղւոջէս յայսմանէ ոչ ուրեք երթայց ·
այլ աստ մեռայց վասն սիրոյ առն իմոյ ։

Ասեն ցնա բարեկամքն · ով բարի տիկին՝ միթէ
այդպէս առնելովդ՝ շահ մի լինի՞ հոգւոյ նորա ·
որ սաստ անկեալ կայ · լաւ է զի երթիցես 'ի
տուն քո և արասցես ողորմութիւն վասն հոգւոյ
նորա ։ Ասէ ցնոսա կինն · չար է խրատն ձեր զոր
տայք ինձ · զի ես 'ի տեղւոջէս այլ ուրեք ոչ
շարժեցայց · այլ աստ մեռայց վասն սիրոյ առն
իմոյ · զի նա վասն սիրոյ իմոյ մեռաւ ։

Իբրև տեսեալ բարեկամացն թէ ոչ կամի գնալ
'ի տուն՝ արարին նմա խուց մի փոքրիկ 'ի վե-
րայ գերեզմանի առն նորա · և բերին առ նա
անդ կերակուր և զամենայն պէտս նորա ։

Յայնմ ժամանակին սահման կայր 'ի քաղաքին
յայնմիկ և յամենայն թագաւորութեան նորա ·
եթէ գող մի որ կախիցեն՝ քաղաքացի մի պահի
որ պահէ զկախեալն · զի մի եկեալ ընկերքն գո-
ղասցեն զմարմին նորա ։

Իբրև եթէ անփոյթ արարեալ պահապանին գողա-
ցուսցէ զմարմին կախելոյն , զամենայն ինչս նո-
րա յարքունիս տուգանել · և զինքն ևս 'ի տե-
ղի նորա կախել ։ Իբրև յաւուրսն յայնսիկ՝ կա-
խեալ եղև գող մի · մերձ 'ի գերեզմանի զին-
ուորին այնմիկ · և քաղաքացի մի եղև կարգեալ
պահապան՝ առ 'ի պահել զգողն · որ էր դրացի
զինուորին · և էր այրի ։

Որև զգեցեալ զրահ · և առեալ զէնս և հե-
ծեալ 'ի ձի՝ եւ հանդէպ քաղաքին 'ի պահել
զկախեալն ։

Իբր 'ի մէջ գիշերոյն՝ եղև ցուրտ և պարզ յոյժ ·

եւ սառնոյր այրն որ պահապանն էր . եւ ոչ կա-
րէր ժուժել . եւ հայեցեալ ետես զի հուր ինչ
ցոլայր 'ի տեղւոջէն ուր էր կինն 'ի վերայ գե-
րեզմանի զինուորին . եւ գնացեալ անդ՝ բաղխէր
զդուռն : Ասէ կինն . ո՞վ է այդ որ այժմ յայս
ժամուս եկեալ է աստ : Ասէ պահապանն . սի՛-
րելի տիկին՝ ես եմ դրացի քո . եւ պահապան
եմ 'ի գիշերիս վասն զօրուն . եւ սառուցեալ եմ
'ի ցրտոյ . բայց զի սակաւ մի ջեռնում առ հր-
ոյն . զի ոչ կարեմ ընդդիմանալ ցրտոյս : Ասէ
կինն . մուծանել զքեզ 'ի ներքս՝ բայց երկնչիմ
զի անպատշաճ խօսս խօսիս առաջի իմ :
Ասէ պահապանն . երդնում հաստատութեամբ
զի զբանս զորս դու կարծես ոչ բնաւ խօսեցայց
առաջի քո . այլ սակաւ մի ջեռայց եւ գնացից .
քանզի լուեալ եմ վասն քո՝ որ կին սուրբ ես .
եւ վասն սիրոյ առն քո բնակեալ ես աստ : Եւ
կինն երաց զդուռն . եւ եմուտ նա 'ի ներքս . եւ
նա սկսաւ ջեռնուլ : Եւ իբրեւ ջեռաւ՝ ասէ
պահապանն ցկինն . տիկին բարի՝ մի՛ չար թուես-
ցի եթէ ասացից ինչ քեզ : Ասէ կինն . ասա՛
եւ ես տաց քեզ պատասխանին : Ասէ պահա-
պանն . սիրելի տիկին՝ դու կին գեղեցիկ ես փա-
ռաւոր եւ ընչաւէտ . լաւ էր քեզ 'ի տան քում
բնակել եւ ողորմութիւնս առնել վասն հոգւոյ
առն քո՝ քան թէ աստ բնակել եւ լալով զկեանս
քո անցուցանել : Ասէ կինն . եթէ գիտացեալ
էի որ զայդ խօսէիր՝ ոչ մուծանէի զքեզ 'ի ներ-
քս . բայց զայս ասեմ քեզ՝ զոր ամենից ասա-
ցի . եւ դու լաւ գիտես թէ որպէս սիրէր զիս
այրն իմ . եւ վասն սիրոյ իմոյ մեռաւ՝ տեսեալ
սակաւ մի արիւն 'ի ձեռս իմ . նոյնպէս եւ ես

վասն սիրոյ նորա կամիմ մեռանել աստ: Լու-
եալ զայս պահապանին՝ ողջունեաց զնա և գնաց
տեսանել զգողն: Եւ հայեցեալ ետես զի գո-
ղացեալ էին զմարմինն կախեալ. և երկեաւ յոյժ
և ասէ՝ վայ ինձ որ կորուսի զամենայն ինչս իմ.
արդ զի՞նչ արարից. կամ առ ո՞ երթայց հար-
ցանել խրատ: Գնացից առ սուրբ կինն և 'ի
նմանէ ուսայց զխրատս. Եւ եկն առ նա և ա-
սէ. տիկին բարի՝ ես եմ պահապանն որ աստ
առ քեզ ջեռայ. այժմիկ ունիմ ծածուկ բան
ինչ ասել քեզ. աղաչեմ զքեզ՝ վասն աստու-
ծոյ սիրուն բաց ինձ զդուռդ: Եւ կինն երաց
զդուռն. և նորա մտեալ 'ի ներքս և ասէ. բա՛-
րի տիկին՝ խնդրեմ 'ի քէն ուսանել բարի խր-
րատ: Օսահման երկրիս գիտես թէ որպէս
պարտ է պահել զկախեալն. և եթէ գողա-
ցեն՝ յայնժամ պահապանն կորուսցէ զամենայն
ինչս իւր. և զինքն 'ի տեղի նորա կախեսցեն:
Եւ ես մինչ աստ ջեռայ՝ գողացեալ են զգողն
'ի կախաղանէն: Վասն որոյ աղաչեմ զքեզ՝ խրատ
ինչ ուսո ինձ թէ զի՞նչ արարից. վասն զի զրկիմ
յամենայն ընչից իմոց. և զիս 'ի տեղի նորա
կախեսցեն. զայս ասացեալ անկաւ առ ոտս կը-
նոջն և աղաչէր: Ասէ ցնա կինն. ցաւ է ինձ
վասն սահմանի քաղաքիս. որ այսպիսի հաստա-
տեալ են: Եւ արդ՝ լո՛ւր խրատու իմոյ և ո՛չ
կորուսցես զինչս քո և 'ի մահուանէ ես ապրեա-
ցիս: Ասէ պահապանն. ասա՛ սիրելի տիկին. զի
զամենայն զոր ինչ և ասիցես դու՝ արարից ես
ըստ խրատու քո. զի վասն այն եկեալ եմ առ
քեզ՝ որ քոյին խրատովդ ազատեցայց 'ի վնասու
յայսմանէ: Ասէ կինն. ահա՛ դու կին ոչ ունիս.

եթէ զիս առնես 'ի կնութիւն քեզ , տամ քեզ խրատ ։ Ասէ պահապանն ․ այժմ գտայ շնորհս առաջի քո ․ որ կամիս ելանել 'ի գերեզմանէս՝ ունելով զիս քեզ այր ։ Ես յօժարութեամբ արարից զինչ և ասիցես ․ զի դու ոչ հայեցար յաղքատութիւնս իմ և սիրեցեր զիս ։ Ասէ ցնա կինն ․ ես միայն զքեզ կամիմ և ոչ զայլ ոք ։ Ասէ պահապանն ․ ես այլ ոչ զոք կամիմ քանի որ դու կենդանի ես ։ Ասէ կինն ․ այրն իմ որ մեռաւ վասն սիրոյ իմոյ ․ որ և դու իսկ գիտակ ես ․ զնա յերեկեան օրն թաղեցին ․ հան զնա 'ի գերեզմանէն և տար կախեա 'ի տեղի գողոյն որ ազատիս 'ի մահուանէ ։ Ասէ պահապանն ․ որպէս կամիս՝ այնպէս եղիցի ․ և բացին զգերեզմանն և հանին զմեռեալն ։ Ասէ պահապանն ․ երկնչիմ յոյժ ․ զի գողոյն այնմիկ 'ի վերի կողմն երկու ատամն հատեալ էր ․ և եթէ զդա կախեսցուք՝ ատամամբն ճանաչիցեն թէ ոչ է այն ։ Ասէ կինն առ քար և հան զատամ դորա ։

Ասէ պահապանն ․ սիրելի տիկին՝ այր քո սիրելի էր ինձ և ընկերակից և բարեկամ էր 'ի կենդանութեան իւրում ․ այլ նախատինք ինձ որ հատանեմ զատամունս մեռելոյն ։

Ասէ կինն ․ ես հանեմ զատամունս դորա վասն սիրոյ քո ․ և առեալ քար՝ եհան վերի զատամունս մեռելոյն և ասէ ․ տար կախեա զդա այժմ ։ Ասէ պահապանն ․ դեռևս երկնչիմ կախել զդա ․ զի գողն այն՝ ունէր վէր մեծ 'ի գլուխն իւր ․ և զերկոսին ականջսն ոչ ունէր ․ եթէ գտանիցեն զդա առանց վիրաց և ականջաց՝ ասիցեն թէ ոչ է այն ․ և ինձ ամօթ մեծ եղիցի ։ Ասէ

կինն · հա՛ն զսուրդ և հա՛ր զգլուխ դորա · և
հարթեա՛ զականջսն : Ասէ պահապանն · սիրե-
լի տիկին՝ որպէս հանեցիր զսուրն՝ այնպէս և
զայս այլ դու արասցես :

Ասէ կինն · տու՛ր ինձ զսուրդ քո և ես արարից
վասն սիրոյ քո · և նա ետուր : Եւ նորա ա-
ռեալ զսուրն՝ արար վէր մեծ ՚ի գլուխ նորա ·
և կորեաց զերկոսին ականջսն և ասէ արդ տար
կախեա՛ զդա · Ասէ պահապանն · ունիմ այլ
ևս երկիւղ · զի գողն այն ոչ ունէր երանս · և
եթէ զդա երանօք տեսանիցեն՝ ճանաչիցեն թէ
ոչ է այն : Ասէ կինն · ոչ եմ տեսեալ այր
երկչոտ քան զքեզ ՚ի վերայ երկրի · արդ կո-
րեա՛ զերանք դորա և տար կախեա՛ : Ասէ պա-
հապանն · ո՛վ սիրելի տիկին՝ դու լաւ գիտես
որ առանց երանաց այր՝ չէ կատարեալ մարդ ·
և եթէ կորեցից զերանք դորա, նոյն և ինձ պա-
տահի · վասն այն և զայդ ևս դու արասցես : Ասէ
կինն · Ճշմարիտ է զոր ասես · և ես վասն սիրոյ
քո զամենայն ինչ առնեմ : Եւ նոյնժամայն ա-
ռեալ զսուրն՝ կորեաց զերանք մեռելոյն որ էր
տէր իւր և էարկ շանց · և ասէ՝ արդ տարեալ
կախեսցես զայրդ ագեղեալ դիմօք ՚ի նողս :
Ասէ պահապանն · այդպէս արարից · և տարեալ
կախեաց զմեռեալն ՚ի տեղի գողոյն և ապրեցաւ
պահապանն : Յետ այնորիկ ասէ կինն · ո՛վ սի-
րելի իմ արդ ազատեցար յամենայն տրտմութե-
նէ · եկ երթիցուք յեկեղեցին · և առաջի ամե-
նեցուն առցես զիս ՚ի կնութիւն :

Ասէ պահապանն · ուխտ եդեալ եմ աստուծոյ
որ դու քանի կենդանի ես՝ ես այլ կին ոչ ա-
ռից · Ասէ կինն · վասն է՞ր : Ասէ պահապանն ·

ով Թշուառական և նզովեալդ 'ի մէջ կանանց. ով տացէ քեզ նման նզովեալ և չար կին 'ի կնութիւն ինքեան ։ Օ՞ է այր քո որ վասն սակաւ արեան քո զանձն ետուր 'ի մահ , դու այդպէս խայտառակ արարեր զնա . զատամունսն Թափեցեր . զգլուխն վիրաւորեցեր . զականջսն կըտրեցեր . և զերանսն հատեալ՝ շանց ընկեցեր . և ես վասն այդորիկ առից զքեզ 'ի կնութիւն զի և ինձ զայդ արասցես ։ Ո՛չ Թողից զքեզ կենդանի՝ զի միւսանգամ գործեսցես զայդ . և զայս ասացեալ եհան զսուրն իւր և կտրեաց զգլուխ կնոջն ։

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն . տէր արքայ 'ի միտ առեր զասացեալսն իմ ։ Ասէ կայսրն . այո 'ի միտ առի . զի վասն ամենայն չարեաց կանանց զոր լուեալ էի՝ դա չարագոյն էր քան զամենայն և նզովեալ ։ Սակայն ով դպրապետ՝ եթէ զձայն որդւոյ իմոյ լուէի որ խօսէր , և թէ մեռանէր՝ ոչ էր ինձ կսկիծ ։ Ասէ դպրապետն . աստուած պահէ զքեզ 'ի մեռանելոյ . այդ տուր զորդին քո 'ի յիս . և 'ի վաղիւն՝ ժողովեսցին առ քեզ ամենայն իշխանք քո և ամենայն կուսակալքն քո ։ Եւ մեք ընկերօքս հանդերձ՝ բերցուք զորդին քո 'ի քեզ . և լուիցես զձայն որդւոյ քո . նոյնպէս և ամենայն իշխանքն և կուսակալքն քո ։ Քանզի յոյս ունիմ առ աստուած՝ զի վաղիւն յայտնելոց է Ճշմարիտն 'ի մէջ որդւոյ և Թագուհւոյն քո . որ անիրաւ զրպարտեաց Թագուհին զորդին քո ։

Եւ նոյնժամայն հրամայեաց արքայն՝ տալ զորդին 'ի ձեռն Յովակիմ դպրապետին ։ Եւ էառ դպրապետն զորդի արքային և գնաց առ ընկեր-

որն էր ։

Իսկ Թագուհին իմացեալ որ ոչ սպանաւ որդի արքային, յայնժամ սաստէ ցբարեկամն իւր ։ արդ զի՞նչ արարից՝ զի այսօր եօթն օր է որ ջանացի սպանանել զորդի արքային և ոչ կարացի ։ ահա եհաս ժամ զի 'ի վաղիւն խօսելոց է ։ և ես ոչ գիտեմ զի՞նչ արարից ։ զի երկնչիմ թէ 'ի կենացս ելանեմ ։ Իսկ բարեկամքն Թագուհւոյն մխիթարէին զնա և ասէին ։ մի՛ երկնչիր ով Թագուհի զի՞նչ առնելոց է քեզ որդի արքային ։ Իսկ կայսրն՝ մտեալ երեկոյին առ Թագուհին և ասէ ։ ահա՛ որդին իմ 'ի վաղիւն խօսելոց է ով սիրելի Թագուհի իմ ։ և յայնժամ տեսցուք թէ 'ի ձէնջ ո՞րն է ճշմարիտ ։ Օ՜ի այսօր եօթն օր է որ դուն ջանացեր սպանանելոյ զորդին իմ, և դպրապետքն ջանացին ապրեցուցանել ։ ահա՛ վաղիւն տեսցուք աստուած ինչ կյաջողէ ։ և Թագուհին ինչ ոչ խօսեցաւ ։

Յութերորդում աւուր ժողովեցան դպրապետքն ։ և առեալ զորդին արքային ։ և բերեալ ժողովրդոց բերանն առ կայսրն և խօսելն ։

Յութերորդում աւուրն ժողովեցան եօթանեքին դպրապետքն 'ի միասին ։ և հարցանէին որդւոյ արքային և ասէին ։ եղե՞ քեզ ժամ խօսելոյ ։ Ասէ որդի արքային ։ այժմ եհաս ինձ ժամ խօսելոյ և ապրեցուցանելոյ զիս և զձեզ այսօր ։ և դուք բնաւ մի՛ տրտմիք թէ զի՞նչ խօսելոց եմ 'ի ժամուն այնմիկ ։ Իսկ դպրապետքն զգեցուցին նմա զբեհեզեայ պատմուճանն ։ և բազմեցուցին զնա 'ի վերայ ոսկիակազմ երիվարի ։

Եւ չորս 'ի նոցանէ յառաջ երթային երկու
երկու. և երեքն զկնի՝ ոսկխակազմ երիվարօքն :
Եւ փողովք ազդեցութեան՝ սրընկօք եւ թմբկօք
և ամենայն արուեստականօք և բազում ժողովր-
դօք և մեծաւ փառաւորութեամբ և խնդութեամբ
եկին առ կայսրն :
Եւ կայսրն լուեալ զձայնն ուրախութեան՝ ասէ
ցնոսա որ շուրջն կային զի՞նչ է այդ զոր լսեմ
ես : Եւ նոքա ասեն. ա՛րքայ յաւիտեան կաց՝
որդին քո գայ առ քեզ. զի այսօր առաջի քո
և առաջի ամենայն նախարարաց քոց խօսեսցի :
Եւ նոյնժամայն մտեալ 'ի պալատն. որ և դը-
ղրդեցաւ պալատն : Եւ մտեալ յառաջ դպրա-
պետքն առաջի կայսերն. և ողջունեցին զնա մե-
ծաւ պատուով : Եւ կայսրն մեծարեաց զնոսա :
Եւ զկնի վարժապետացն՝ եկն որդի արքային ա-
ռաջի հօրն. երկիր եպագ նմա և ասէ : Ո՛ղջ լեր
զօրովագութ հայր իմ և տէր արքայ : Եւ դար-
ձեալ ողջունեաց զմեծամեծսն և ասաց : ողջոյն
ընդ ձեզ իշխանք հօր իմոյ՝ և մեծամեծք բոլոր
հռօմայ : Իբրև լուաւ արքայն զձայն որդւոյ իւ-
րոյ՝ 'ի մեծ խնդութենէն անկաւ յաթոռոյ իւր-
մէ. և դարձեալ նստուցին յաթոռն իւր : Եւ
զորդի արքային՝ նստուցին մերձ առ հայրն իւր.
և ամենայն մեծամեծք և իշխանք՝ եկեալ երկըր-
պագին որդւոյ արքային : Եւ որդի արքային
կամէր խօսել ընդ հօրն իւրում, բայց 'ի ժողո-
վըրդենէն ոչ լինէր լսելի բան նորա : Եւ կայ-
սրըն հրամայեաց ծառայից իւրոց զի ոսկի և ար-
ծաթ ցանեսցեն 'ի փողոցսն. որ այնու գնասցեն
ժողովուրդքն անտի. և ինքն կարիցէ լսել զխօ-
սելն որդւոյ իւրոյ :

Սակայն ժողովուրդքն 'ի խնդութենէ բանից որդւոյ արքային՝ ոչ հայէին յոսկին և արծաթն . և ոչ ոք շարժեցաւ 'ի տեղւոջէն իւրմէ : Եւ տեսեալ կայսրն որ ոչ շարժեցաւ ժողովուրդն՝ հրամայեաց քարոզ կարդալ և ասել զի լռեսցեն ամենեքեան . և եթէ ումեք ձայն լսելի լինիցի ,

նոյնժամայն սպանցեն զնա :

Եւ իբրև լռեցին ժողովուրդքն ամենեքեան որ ոչ ընաւ խօսէին , ասէ որդին ցկայսրն . Տէր արքայ՝ ոչ խօսեցայց մինչև գայցէ Թագուհին քո աստ : Աղաչեմ զքեզ՝ զի հրամայես կոչել զնա աստ առաջի քո և առաջի նախարարաց քոց : և ամենայն կուսանքն և օրիորդքն իւր եկեսցեն ընդ նմա : Եւ իսկոյն հրամայեաց կայսրն կոչել զԹագուհին զի ժամանեսցէ անդ ամենայն կուսանօքն իւրովք : Եւ եկեալ ծառայիցն ծանուցին

զհրամանն արքային :

Եւ ելեալ Թագուհին ժողովեաց զամենայն աղջկունսն իւր . և եկեալ առ կայսրն խոնարհեալ անձամբ եւ տրտմեալ սրտիւ : Յորժամ ետես որդի արքային զԹագուհին , յայնժամ բարկութեամբ ասէ ցԹագուհին . կացցես դու այդր առաջի ամենայն ժողովրդեանդ և առաջի ամենայն մեծամեծաց հօր իմոյ . և ամենայն կուսանք քո՝ կարգաւ կացցեն ընդ քեզ . զի ամենեքեան տեսցեն զձեզ . զի ունիմ բան ինչ խօսելոյ : Յայնժամ կանգնեցաւ Թագուհին հանդէպ արքային . և ամենայն աղջկունքն կարգաւ կացին առ ընթեր

Թագուհւոյն :

Խոստովանելն Պոլիքսեփիանոսի զՄագակին. և Մերկացուցանելն զերիտասարդն ՚ի կանացի զգեստէն.

Յայնժամ ասէ որդի արքային ցհայրն իւր. տէր արքայ՝ ամբարձ զաչս քո և հայեաց ՚ի կուսանսն Թագուհւոյ քո. և առաւել ընդ այն որ գեղեցկագոյնն է զգեցեալ քան զամենեսեան. և կայ առ ընթեր Թագուհւոյն կանանց պատմուճանաւ: Ասէ կայսրն. այո՛ գիտեմ որդեակ իմ. տեսանեմ և ճանաչեմ զնա՝ զի նա է ՚ի վերայ ամենեցուն. և յոյժ սիրէ զնա Թագուհին. և գովէ զնա ինձ՝ թէ լաւ է քան զամենեսեան: Ասէ որդին. հայր իմ աղաչեմ զքեզ՝ հրամայեա մերկացուցանել զնա առաջի ամենեցուն. և ցուցից քեզ զբարութիւն Թագուհւոյն քո՝ թէ աղջիկ ունի յանկողնի իւրում: Իբրև լուեալ կայսրն զխօսս որդւոյն իւրոյ՝ զարմացաւ և ասէ. որդեակ իմ ամօթ մեծ է մերկացուցանելն զկինն առաջի ժողովրդեանն: Ասէ որդին. հրամայեա հայր իմ մերկացուցանել. և եթէ ոչ հրամայես ծառայից քոց մերկացուցանել՝ ես ինքնին մերկացուցից զնա: Իսկ առ ժամայն հրամայեաց կայսրն մերկացուցանել. և խսկոյն մերկացուցին զնա անդ. Իսկ երբև մերկացուցին՝ տեսին ամենեքեան զի ոչ է աղջիկ. այլ երիտասարդ մանուկ. և զարմացան ամենեքեան. վարժապետքն և իշխանքն թէ որպէս ծանեաւ զնա որ երիտասարդ էր: Ասէ որդին ցհայրն տէր իմ արքայ՛ երիտասարդդ այդ՝ հանապազ պառնկէր յանկողնի քում ընդ Թագուհւոյն քո. և չէ զարմանք որ առաւել սիրէ զնա և գովէ զնա քեզ: Իսկ տեսեալ կայսրն զայս՝ յամօթոյն

իւրոյ որպէս խելագար եղև. և հրամայեաց զն առ ժամայն այրեսցեն հրով զԹագուհին և զե-րիտասարդն։ Ասէ որդին. տէր իմ արքայ և հայր իմ սիրելի՝ Թող այժմ զդոսա զի տաս-ցեն զՃշմարիտն զոր ինչ վնաս եդին 'ի վերայ իմ ։ Ասէ կայսրն. ո՛վ սիրելի որդեակ իմ, 'ի ձեռս քո ետու զդատաստանս դոցա. զի դու իմաստնագոյն ես քան զիս։ Ասէ որդին. ո՛չ ես և ո՛չ դու՝ այլ օրէնքն դատաստանին դա-տեսցեն զդոսա. եԹէ խոստովանեսցին զատու-Թիւնս իւրեանց։ Զի յորժամ հրամայեցեր ինձ գալ առ քեզ, յայնժամ ամենայն վարժապետ-քըն իմ հայեցան յաստղն և ես ընդ նոսա հա-յեցայ. և տեսաք՝ զի եԹէ յեօԹն օրն այն Թէ խօսէի բան մի՝ մահու մեռանէի. և վասն այն պատՃառի 'ի լռու կայի։ Իսկ Թագուհին քո որ ասաց քեզ Թէ բռնադատել կամեցաւ զիս, ստեաց քեզ յայտնի. Զի յորժամ առ ըն-Թեր քո նստած էի և եկն Թագուհին՝ և հար-ցեալ քեզ Թէ ա՞յս է որդին քո՝ և դու ա-սացեր ա՛յո այս է և ոչ խօսի, յայնժամ էառ զիս հրամանաւն քո և տարեալ զիս 'ի սենեակն իւր և հրամայեաց ամենեցուն 'ի բաց գնալ իւր-մէ, և սկսաւ խօսիլ ընդ իս այսպէս։ Սիրելի իմ Դիոկղետիանոս՝ զկուսուԹիւն իմ վասն քո պա-հեալ եմ. լուեալ էի զհամբաւ գեղեցկուԹեան քո արդ այժմ տեսայ և ծանեայ զգեղեցկուԹիւն քո. եկ ննջեսցուք 'ի միասին. և կամէր համ-բուրել զիս. և ես հեռանայի 'ի նմանէ։ Իսկ յորժամ այս այսպէս եղև, ետուր ԹուղԹ և Թանաք և ասաց. գրեա՛ 'ի վերայ ԹղԹին և ծանո՛ ինձ զկամս քո. ահա՛ խնդացուցեր զիս ո՛վ

սիրելի իմ Պոլիկղետիանոս : Եւ իմ առեալ զԹուղԹն՝ գրեցի այսպէս . ո՛վ Թագուհի՝ ոչ կամիմ ես պղծել զտուն և զանկողին հօր իմոյ . ոչ ինչ է ինձ շահ՝ այլ մեծամեծ մեղք է առաջի աստուծոյ . և ետու զԹուղԹն 'ի ձեռս նորա : Եւ երբև էառ նա և կարդաց , նոյնժամայն ցսեաց զերեսս իւր . և պատառեաց զհանդերձն իւր . և զվնասն 'ի վերայ իմ ասաց : Եւ լուեալ կայսրն զայսոսիկ 'ի յորդւոյն իւրմէ՝ խոժոռեալ նայէր դէպ 'ի Թագուհին և ասէր : Ո՛վ Թշուառական՝ ոչ բաւականացար առ սերատն քո . այլև կամեցար զորդեակն իմ ձգել 'ի մահ :

Եւ Թագուհին անկեալ խնդրէր ողորմութիւն : Ասէ ցնա կայսրն . ո՛վ նզովեալ կին՝ դու ոչ մի մահու ծառայեցեր , այլ բազում : Նախ և առաջ պոռնկեցար առաջի իմ և պղծեցեր զանկողին իմ : Երկրորդ . զոր կամեցար զորդին իմ ընդ քեզ ձգել 'ի մահ : Երրորդ՝ որ զուր վնաս եդեր 'ի վերայ նորա : Չորրորդ՝ զի յորդորեցեր սպանանել զնա :

Եւ Թագուհին լայր և խնդրէր ողորմութիւն : Ասէ կայսրն . հրամանքն ցուցանեն քեզ Թէ որպէս պարտ է ողորմել քեզ : Ասէ որդին . տէր արքայ գիտեա՝ զի վասն մատնելոյն նմա զիս՝ անմեղս տարեալ եղէ ամենայն աւուրս 'ի կախաղանն . այլ աստուած փրկեաց զիս մինչև ցայսօր 'ի ձեռն վարժապետաց իմոց . և այսօր փըրկեաց զիս տէր՝ ես և զվարժապետքն իմ . Եւ Թէպէտ կամօքն աստուծոյ՝ լինէր այնպէս որ Թագաւորէի և տիրէի 'ի կենդանութեան քում որպէս Թագուհին զրպարտեաց զիս , սակայն ես

պատուէի և 'ի մեծարանս պահէի զքեզ որպէս վայել է որդւոյ մեծարել զհայր իւր. և դու առանց աշխատանաց լինէիր 'ի հանգստեան. Այլ ուսուցանէիր զիս թէ որպէս վարեցից զթագաւորութիւնս իմ. և ըստ կամաց քոց առնէի զամենայն. զի 'ի քէն ուսանէի: Որպէս զինուոր ոմն որ զորդի իւր ընկեց 'ի ծով. այլ աստուած փրկեաց զնա և եղև թագաւոր եգիպտացւոց. և եգիտ զհայր և զմայր իւր. և պահէր 'ի պատուի որքան կենդանի էին:

Թէպէտ նոքա ընկեցին զորդին իւրեանց 'ի ծով, այլ նա ոչ արհամարհէր զնոսա. այլ մեծարէր և 'ի մէջ փառաց պահէր:

Ասէ կայսրն. ով քաղցրիկ որդեակ իմ. օրհնեալ է ժամն այն որ դու ծնար յերկրի. զի լսեմ 'ի քէն բան իմաստութեան: Արդ՝ եօթանեքին վարժապետքն քո՝ դեղեցին տուախօքն իւրեանց ապրեցուցին զքեզ. և այժմ դու ասասցես մեզ զեղեցկագոյն առակ մի և զուարճացուսցես զմեզ: Ասէ որդին. հայր իմ՝ հրամայեա զի լուեսցեն ամենեքեան մինչև պատմեցից զբանս իմ: Եւ հրամայեաց կայսրն զի լուեսցեն. և իբրև լուռ եղեն ամենեքեան՝ սկսաւ որդի արքային ասել:

Առակ Դիոկղետիանոսի Արքայ որդւոյն. ասացեալ 'ի լուր ամենայն հրապարակին:

Կայր 'ի քաղաքի միում յեգիպտական սահմանին զինուոր մի և ունէր որդեակ մի միամօր. որպէս և դուն զիս ունիս. և յոյժ սիրէր զնա: Եւ 'ի տղայութեան հասակին առաքեաց զնա առ

իմաստասէր ոմն. որպէս և դուն զիս ետուր վարժապետաց իմոց. զի իմաստնասցի և դաստիարակեսցի յիմաստութեան աճումն։ Եւ մանուկն էր սուր միտք. աճէր և զօրանայր օրըստօրէ իմաստութեան արուեստիւն. և եղև բուն իմաստասէր. եղեալ առ վարժապետն ամս եօթն։ Յաւուր միում կամեցաւ հայր նորա բերել զմանուկն։ Գրեաց առ նա թուղթ և ասէ. 'ի հասանել քեզ նամակիս՝ եկեսցես առիս։ Եւ մանուկն հնազանդեալ հրամանի հօրն իւրոյ՝ եկն առ նա 'ի ժամադրեալ օրն։ Եւ ուրախացան ծնօղք նորա 'ի գալն նորա. և մանուկն էր յոյժ գեղեցիկ տեսլեամբ և իմաստուն։ Եւ յաւուր միում նստեալ էին հայրն և մայրն իւր 'ի սեղանն. և մանուկն կանգնեալ կայր առաջի նոցա և ծառայէր։ Եւ յանկարծակի եկն պիւլպիւլ մի և նստաւ 'ի վերայ դատիկոնի սրահին և կարդայր քաղցրաձայն։ Եւ այնչափ քաղցր կարդայր որ զմայլեցաւ զինուարն և ասէ. 'ի չափ ծերութեան հասայ և այսպիսի քաղցր եղանակ ոչ եմ լուեալ։ և երանի այնմիկ որ գիտէ զլանն և զխօսս դորա։

Ասէ որդին ցհայրն իւր. տէր իմ և սիրելի հայր՝ գիտէ ծառայ քո զխօսս դորա. բայց երկընչիմ մեկնել առաջի քո. զի մի՛ չար թուեսցի առաջի ձեր։ Ասէ հայրն. ասա՛ որդեակ իմ զի տեսից և իմացայց. և վասն է՞ր բարկանալոց եմ քեզ.

Ասէ որդին. պիւլպիւլս այս՝ վասն իմ խօսի. և այսպէս ասէ 'ի կարդալն իւրում։ որպէս թէ լինելոց եմ ես մեծատուն և անուանի յոյժ. զի ամենեքեան 'ի պատիւ ունիցեն զիս։

Եւ հայր իմ հարազատ՝ ջուր արկցէ լուանալ զձեռս իմ. և մայր իմ դաստառակ առեալ ՚ի ձեռին իւրում տացէ ձեռաց իմոց: աՀա այս է որ եղանակէ և կու խօսի պիւլ պիւլն. Յայնժամ սրտմտեալ մայր իւր և ասէ. մի հացես յօրն այն որ ես և հայր քո ծառայեսցուք քեզ:

Ասէ որդին. ես զհաւանելն և չի հաւանելն ոչ գիտեմ. այլ զխօսս պիւլպիւլին մեկնեցի առաջի ձեր. և աՀաւասիկ եմ զոր ինչ առնելոց էք ինձ: Եւ էր մայր նորա այնպէս՝ որպէս Թագուհին քո ինձ է. և կամէր սպանանել զմանուկն. և հայրն ոչ կամէր զի միամօր էր. այլ Թոյլ տայր առնելով. համբերեա՛ կին տեսցուք վերջն ուր կու դադարի: Եւ կինն էր անհամբեր որպէս զԹագուհին քո. ետուր բերել փայտեայ տապան մի. և ձիւԹով ամրացուցին ՚ի ներքուստ և արտաքուստ. և եդին զմանուկն ՚ի մէջի նորա սակաւ ինչ կերակրօք և ըմպելեօք, և ամրացուցին զբերանն. և ետուր ընկենուլ զնա ՚ի ծովն. և ասաց՝ աՀա Թող մեծացուցանէ զքեզ պիւլպիւլն: Եւ փայտեայ տապանն լողայր ՚ի մէջ ծովուն և հանդիպեցաւ նաւի միոյ. և նաւապետն կարծեաց Թէ նաւ ընկղմեալ է. և ասաց Թէ՝ ջրոյ կամ գինւոյ ամանէ: Եւ ուղարկեաց ըզ սանտալն զի երԹեալ բերցեն ըզ փայտեայ տապանն. և իբրև ՚ի վեր առին և բերին ՚ի նաւն. նաւապետն բացեալ զբերան տապանի՝ ետես զմանուկն. և զարմացաւ, և ասէ ցմանուկն ով եդ զքեզ ՚ի փայտեայ տապանիս. և մանուկն պատմեաց կարգաւ զամենայն նաւապետին: Եւ նաւապետն զարմանեաց զմա-

նուէն․ մինչև գնացեալ հասին յեգիպտոս․ զի անդ գնային ։ Եւ յորժամ հասին ՚ի յեգիպտոս․ վաճառեաց նաւապետն զմանուկն նախարարի միոյ արքային եգիպտացւոց ։ Եւ նախարարն այն յոյժ սիրեաց զնա վասն յաջողակ լինելոյն յամենայն բանս իւր ։

Եւ յայնմ ժամանակին Թագաւորն եգիպտացւոց՝ կոչեաց զամենայն նախարարսն իւր և զամենայն մեծամեծս և իշխանս իւր՝ վասն իրիք ինչ խորհրդոյ ։

Եւ ժողովեցան առ նա ամենայն իշխանքն և նախարարքն ՚ի պալատն արքունի ։

Եւ նախարարն այն որ առեալ էր զմանուկն ՚ի նաւապետէն՝ տեսանէր որ յոյժ իմաստութեամբ շարժէր՝ հագոյց նմա պատմուճանս գեղեցիկս․ և առեալ ընդ իւր գնաց ։

Եւ տեսեալ Թագաւորն որ ժողովեցան առ նա ամենայն իշխանքն ․․ եկին և նստան յատենին ․

Յայնժամ ասէ Թագաւորն ցիշխանսն իւր․ սիրելի իշխանք իմ և մեծամեծ նախարարք իմ․ գիտէ՞ք զպատճառն կոչելոյն իմ զձեզ․

Ասեն նախարարքն՝ ոչ գիտեմք․ այլ հրամայեսցէ արքայ՝ և մեք տացուք պատասխանի ։ Ասէ Թագաւորն․ սիրելիք իմ եթէ ուտիցեմ եթէ ըմպիցեմ, եթէ նստիցիմ և եթէ կանգնիցիմ, երեք ագռաւք սեաւք միշտ թռուցեալ աղաղակեն զկնի իմ հանապազ անդադար ձայնիւ․ և ահացուցանեն զիս ՚ի հայելն իմ զնոսա ։ Եւ մինչդեռ արքայն խօսէր ընդ նախարարաց իւրոց եկին ագռաւքն և սկսան աղաղակել․ և ասէ արքայն՝ ահա եկին ։ Եթէ ոք գիտասցէ զպատճառ աղաղակի դոցա թէ վասն էր աղաղակեն զկնի իմ

հանապազ. և եթէ հալածեսցէ ոք զնոսա զի մի այլ երևեսցեն ինձ և ոչ լուիցեմ զձայն աղաղակի նոցա, երդնում 'ի թագաւորութիւնս իմ որ տաց նմա զդուստրն իմ 'ի կնութիւն և յետ վախճանի իմոյ՝ թագաւորեսցէ 'ի տեղի իմ. Եւ ագռաւքն աղաղակէին և ահացուցանէին զամենեսեան:

Եւ ո՛չ ոք գտաւ անդ 'ի նախարարացն պատասխանի տալ արքային. քանզի ո՛չ կարէին հալածել զագռաւսն և ո՛չ իսկ ճանաչէին զխօսս նոցա: Յայնժամ մանուկն ասէ ցտէրն իւր. գիտենայի եթէ արքայ կատարէր զխոստմունսն իւր, ես թարգմանէի զայն: Ասէ ցնա տէր իւր. եթէ կարես պատմել ստուգիւ՝ ես ծանուցից արքային վասն քո: Ասէ մանուկն տէր՝ զանձն իմ փոխան տաց եթէ ոչ թարգմանեցից ստուգիւ: Եւ նախարարն որ էր տէր մանկանն՝ եկեալ առ արքայն երկիր եպագ և ասէ. տէր իմ և հզօր արքայ՝ գիտեմ ոմն մանուկ որ գիտէ թարգմանել զայդ. եթէ տացես նմա զոր խոստացարն: Ասէ ցնա թագաւորն. երդնում 'ի թագաւորութիւնս իմ որ զամենայն ինչ զոր խոստացայ բանիւ՝ կատարեցից գործով: Եւ դեռևս աղաղակէին ագռաւքն: Եւ նախարարն լուեալ զայս յարքայէն՝ կոչեաց զմանուկն առաջի արքային:

Եւ տեսեալ արքային զմանուկն՝ ասէ ցնա. ո՛վ պատանեակ՝ կարե՞ս պատասխանի տալ առ այս: Ասէ մանուկն. այո՛ կարող եմ տէր իմ և հզօր արքայ: Ասէ արքայն. զի՞նչ աղաղակեն դոքա: Ասէ մանուկն. թարգմանութիւն դոցա այս է որ հետևեալ են արքայիս իմոյ և աղաղակեն թախանձանօք: Ագռաւքդ այդոքիկ՝ են արու և

եգ․ և երրորդն ձագ դոցա է։ Ի ժամանակի միում եղև սով սաստիկ․ որ մարդ և անասունք և թռչունք մեռանէին 'ի սովու․ և ձագ դոցա՝ նըստէր 'ի վերայ բունոյն․ յայնժամ մայր նորա թողեալ զձագն իւր՝ թռուցեալ գնաց յերեսաց սովուն․ և այլ ոչ եկն առ ձագն իւր։ Եւ հայր իւր՝ սնոյց զնա մեծաւ ջանիւք․ զի թռուցեալ յօդս՝ զոր ինչ և գտանէր կերակուր ինքեան՝ զայն ոչ ուտէր․ այլ բերէր ձագոյն․ և ինքն սոված մնայր։ և այնչափ կերակրեաց զձագ իւր՝ մինչև թռոյց զնա։ Եւ յորժամ էանց սովն՝ եկն մայր նորա և կամէր բնակիլ և ընկերակցիլ ընդ նմա․ և այրն նորա որ էր հայր ձագոյն՝ ոչ թողոյր զնա ասելով․ Թէ որպէս 'ի ժամ սովուն 'ի բաց մեկնեցար 'ի մէնջ, այժմ եւս մի՛ ուրախասցիս ընդ մեզ։ Ասէ ցնա էգն․ ես ցաւօք ծնայ՝ և կամիմ վայելել 'ի սէր նորայ․ զի իմ է ուրախանալ և ընկերակցել ընդ ձագոյն՝ և ոչ արուին։ Ասեն այն զկնի արքայիս թռուցեալ աղաղակեն անդադար․ զի դատաստան արասցես 'ի մէջ նոցա․ թէ ո՛ 'ի նոցանէ ունիցի ընկերակցութիւն ձագոյն։ Արդ տէր իմ և հզօր արքայ՝ իրաւունս արա և հա՛ն զվճիռ նոցա, զի գիտասցեն թէ ո՛ 'ի նոցանէ ունիցի զձագն․ և այլ ոչ երբեք քեզ ագռաւքդ։ Մինչև ցայսվայր՝ ոչ աղաղակէին ագռաւքն։ Ասէ թագաւորն․ յորժամ մայրն եթող զձագն իւր 'ի ժամ սովուն և գնաց, այժմ եւս 'ի բաց կացցէ 'ի նմանէ։

Եւ եթէ առիցէ զնեղութիւն 'ի ժամ ծնանելոյն, այն նեղութիւն եղև նմա ցնծութիւն յորժամ ետես զաւակ իւր․ այլև պատճառ ծննդեան նորա հայրն է․ և յաւել որ սնոյց զնա և կերակ-

ընաց 'ի ժամ սովուն. և ինքն նուաղէր և կայր սովեալ։ Վասն որոյ հրամայեաց ձագոյն լինել ընդ հօր իւրում. և մայրն նորա մի՛ ունիցի մասն ինչ 'ի նմանէ։ Լուեալ զայս ագռաւքն՝ մեծաձայն աղաղակեցին. իբր թէ շնորհակալ եղեն յար-քայէն. և թռուցեալ հեռացան յերկրէն այնմա-նէ։

Յայնժամ ասէ թագաւորն ցմանուկն. որդեակ՝ զի՞նչ է անուն քո։ Ասէ մանուկն. անուն իմ աղէքսանդր կոչի։

Ասէ թագաւորն. որդեակ իմ աղէքսանդր՝ այ-սուհետև մի՛ զոք անուանեսցես քեզ հայր՝ բայց յինէն. զի զդուստր իմ տաց քեզ 'ի կնութիւն. և յետ վախճանի իմոյ՝ դու լիցիս թագաւոր 'ի վերայ երկրին եգիպտացւոց։

Եւ մանուկն աղէքսանդր՝ երկիր եպագ արքային. և բնակեցաւ առ արքային ժամանակ ինչ. և ա-մենեքեան սիրէին զնա։

Յետ այնորիկ մանուկն աղէքսանդր արար հե-ծեալս. և արշաւեալ առնէր պատերազմ և յաղ-թէր ամենեցուն։

Եւ ո՛չ ոք իշխէր մարտնչել ընդ նմա. և կամ բաւական լինել իմաստութեան նորա. և ամե-նայն ոք հարցանէր խրատ և ուսանէր 'ի նմանէ։ Կայր 'ի ժամանակին յայնմիկ կայսր մի որ կոչիւր անուամբ տիւրոս. որ անցեալ էր իմաստութեամբ և մեծութեամբ զամենայն թագաւորս երկրի. և նստէր յաղէքսանդրիայ. համբաւ նորա տարա-ծեալ էր ընդ ամենայն տիեզերս։

Եւ եթէ ոք կամէր ուսանել մարդաւարութիւն. և տեսանել մեծազարդ գեղեցկութիւն ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ գայն

առ նա և ուսանէին մարդաւարութիւն . քանզի ամենայն ինչ գտանէր առ նա :

Աղէքսանդր լուեալ զկայսրն տեւրա՝ եկն առ արքային և ասէ . Հայր՝ ամենայն աշխարհ գովէ զտիւրոս կայսրն . զկարգ և զսահման նորա . զի ցանկալի 'ասեն լինել զսահման 'ի պալատ նորա :

Արդ աղաչեմ զքեզ՝ եթէ հաճոյ թուեսցի յաչս քո՝ առաքեա զիս առ նա : Թերևս կարացից ուսանել իմաստութիւն ինչ և 'ի նմանէ :

Ասէ ցնա թագաւորն . և ինձ հաճոյ է այդ առ ընդ քեզ բաւական ոսկի և արծաթ և գնա . վասն զի այդ լիցի ինձ անուն , և քեզ շահ . Բայց պատշաճաւոր համարիմ զի նախ առցես զդուստր իմ և ապա գնասցես .

Ասէ Աղէքսանդր . տէր իմ արքայ և հայր սիրելի՝ համբերեա սակաւ մի ժամանակ և յորժամ դարձայց՝ յայնժամ մեծաւ պատուով առից զդուստրն քո 'ի կնութիւն ինձ :

Ասէ թագաւորն . որպէս հաճոյ է քեզ՝ այնպէս արա որդեակ իմ :

Յայնժամ արքայն գրեաց հրովարտակ և ետ 'ի ձեռն Աղէքսանդրի :

Եւ Աղէքսանդր երկրպագեալ արքային՝ և առեալ ընդ իւր գանձս բազումս՝ և ծառայս անիւս և քաջամարտիկս՝ և եկեալ յԱղէքսանդրիա գնաց 'ի դուռն արքունի և դռնապանն եմոյծ զնա 'ի ներքս :

Եւ նա մտեալ՝ երկիր եպագ կայսերն . ողջունեաց զնա մեծաւ պատուով . և ետ զհրովարտակն 'ի կայսրն :

Եւ կայսրն հարցեալ զԱղէքսանդր և ասէ . որդեակ՝ յորմէ՞ երկրէ ես դու . և զի՞նչ է բան քո

տաս տուխ ։

Պատասխանի ետ աղէքսանդր և ասէ ․ տէր իմ արքայ՝ որդի եմ արքային եգիպտացւոց ․ և ժառանգ աթոռոյ նորա ․ և եկեալ եմ ծառայել քեզ՝ եթէ գտի շնորհս առաջի մեծութեան քո ։ Քանզի ընդ ամենայն աշխարհ հռչակի համբաւ մեծութեանդ ․ և շնորհք գիտութեան քոյին ․ և ես կամիմ ծառայել 'ի պալատի քում ։

Եւ կայսրն ընթերցեալ զհրովարտակն ․ և իմացեալ զկամս նորա՝ ասէ ցնա ․ ո՛րդեակ իմ զի՞նչ անուն է քո ։ Եւ նա ասէ ցնա ․ աղէքսանդր կոչի անուն իմ ։ Ասէ կայսրն ․ ո՛րդեակ իմ աղէքսանդր՝ տացէ քեզ աստուած ունել զբարիս ․ և զայս ծառայութիւնս կու պատրաստեմ քեզ ․ զի ամենայն աւուր դու պատրաստես զճաշ իմ ։ Պատասխանի ետ աղէքսանդր և ասէ ․ տէր՝ պատրաստ եմ կատարել զկամս քո ։

Եւ նոյնժամայն սենեկապետն արքայի՝ եցոյց նմա դարպաս մի ․ զանդ լինիցի համդերձ ծառայիւքն իւրովք ։ Եւ աղէքսանդր՝ զամենայն ինչ իմաստութեամբ առնէր առաջի կայսերն ․ և ամենեքեան սիրէին զնա ։

Յետ այնորիկ ո՛չ յետ բազում աւուրց՝ եկն որդի արքային խորայէլացւոց ․ որում անունն էր լուդփիկ ։

Որ և նա ևս եկեալ էր զի ծառայեսցէ կայսեր ․ և ուսանիցի կարգ և սահման ։ Որ և զնա ընկալաւ մեծաւ պատւով կայսրն ․ հարցեալ զանուն նորա և զտոհմ և զերկիր նորա ։

Եւ նա պատասխանի տուեալ ասէ ․ անուն իմ կոչի լութֆիկ ․ որդի ծառային ձերոյ՝ արքային խորայէլացւոց ։

Ասէ ցնա կայսրն․ կարգեալ եմ զԱղէքսանդր զի բերցէ ձայն առաջի իմ․ արդ կամիմ և զքեզ զի դու առցես բաժակ 'ի ձեռին քում և տացես ինձ գինի 'ի սեղան իմ ։ Ասէ Լութֆիկն․ տէր՝ պատրաստ եմ կատարել զկամս քո ։

Եւ նոյնժամայն սենեկապետն եցոյց նմա բնակութիւն 'ի նոյն դարպասի յորում բնակեալ էր Աղէքսանդր ։

Եւ նոքա երկոքեանն՝ Լութֆիկն և Աղէքսանդրն յոյժ նման էին միմեանց՝․ դիմօք և շարժմամբ 'ի բանս և 'ի խօսս ամենայն իրօք․ մինչ զի ոչ ոք կարէր ճանաչել զնոսա թէ ո՞րն է Լութֆիկն կամ Աղէքսանդրն ։

Եւ նոքա երկոքեան՝ յոյժ սիրեցին զմիմեանս ։

Եւ էր Աղէքսանդր յոյժ զօրեղ և փոյթ․ բայց Լութֆիկն՝ էր կամկար և անուժ այսուիկ միայն ոչ էին նման միմեանց ։

Եւ կայսրն ունէր միայն դուստր մի միամօր․ որ կոչէր անունն Ֆլօրենցիա․ որև նա էր ժառանգ կայսերն․ և հայրն նորա՝ յոյժ սիրէր զնա ։

Եւ աղջիկն էր պարկեշտ և գեղեցիկ յոյժ․ և էր առանձնակի 'ի դարպասի մի հանդերձ ծառայիւք և աղախնօք իւրովք ։ Եւ յամենայն աւուր 'ի մեծամեծաց դայր ախորժակ թագաւորական․ և 'ի նոցանէ բաժանէր կայսրն մասն ինչ՝ և ուղարկէր դստերն իւրոյ ձեռամբ Աղէքսանդրի ։

Եւ դուստր կայսերն՝ յոյժ սիրէր զԱղէքսանդրն․ ոչ թէ վասն ծառայութեան, այլ վասն իմաստութեան․ զի իմաստութեամբ և շնորհօք առնէր

զամենայն բան ։

Եւ յաւուր միում գործ մի մեծ լինչ էր Աղեքսանդրի․ եւ 'ի ժամ ճաշոյն ոչ գտաւ անդ․ եւ Լութֆիկն ծառայէր փոխան նորա ։ Եւ յորժամ կերաւ կայսրն 'ի յետին աւարժակ կերակուրն , ասէ ցԼութֆիկն կարծելով թէ Աղեքսանդրն է․ որդեակ՝ տարցես զայս յինէն գաւէլն իմոյ ։

Եւ Լութֆիկն՝ դեռեւս չէր տեսեալ զդուստր կայսերն․ եւ երբեւ եմուտ 'ի դարպասն՝ երկիրպագ նմա եւ ողջունեաց զնա․ եւ ետ նմա զկերակուրն եւ ասէ․ Հայր քո առաքեաց զայս քեզ ։

Եւ երբեւ ետես զնա դուստրն կայսեր , իսկոյն ճանաչեաց զնա զի ոչ էր Աղեքսանդրն ։ Ասէ Ֆլօրէնցիայն․ սիրելի իմ զի՞նչ է անուն քո․ եւ ուստի եկես դու ։

Ասէ Լութֆիկն․ անուն իմ կոչի Լութֆիկ․ եւ ուստի եմ թագաւորին իսրայելացւոյ․ եւ ծառայ կայսերն ։

Ասէ ցնա աղջիկն , ողջ լեր 'ի տէր եւ երթ 'ի խաղաղութիւն․ եւ շնորհակալ լեր հօրն իմոյ յինէն ։ Եւ Լութֆիկն երկիր եպագ նմա եւ ելեալ գնաց ։

Եւ յորժամ Լութֆիկն առ նմա էր՝ ոչ ոք էր առ կայսրն որ տայր նմա զբաժակն․ եւ եկեալ Աղեքսանդրն ետես զի ոչ ոքէր անդ՝ եւ ծառայեաց նմա փոխանակ Լութֆիկին որպէս նա փոխան նորա արար ։

Յետ այնորիկ անկաւ Լութֆիկն 'ի մահիճ հիւանդութեան մեծ ։

Լուեալ Աղեքսանդրի՝ եմուտ առ նա եւ ասէ․ ով սիրելի իմ Լութֆիկ զի՞նչ է այդ որ կայ 'ի

մահիճս ։
Ասէ Լութֆիլն . հիւանդութիւն մեծ անկաւ ’ի վերայ իմ . կարծեմ թէ մեռանելոց եմ ’ի հիւանդութենէս ։

Ասէ Աղեքսանդրն . Ճշմարտիւ գիտեմ ես զպատճառ հիւանդութեան քո . զի յերեկեան օրն փոխանակ իմ տարեր կերակուր դստերն կայսեր . և տեսեր զնա և հայեցար ’ի դէմ դիմաց նորա . և ’ի նմանէ խոցեցաւ սիրտ քո , այդ է պատճառ հիւանդութեան քո ։

Ասէ ցնա Լութֆիլն . եղբայր Աղեքսանդր՝ եթէ բժիշկք համօրէն աշխարհի ’ի մի վայր ժողովեսցին, ոչ կարեն ճանաչել զցաւս իմ որպէս դու ճանաչեցեր . և այս ոչ միայն հիւանդութեան , այլ և մահու ես լինի ինձ պատճառ . Ասէ Աղեքսանդր , եղբայր իմ Լութֆիլ՝ լեր դու հաստատ . և ես օգնեցից քեզ ’ի բանդ . մի երկնչիր եղբայր իմ , զի զանձն իմ դնեմ ’ի վերայ քո և կատարեմ զբանս քո ։ զի մի ’ի զուր մեռանիցիս ։ Իսկ եկեալ ’ի նմանէ՝ գնաց ’ի շուկայն . և գընեաց իւր արծաթով զաստառակ մի մետաքսեայ ոսկեթել և լի ակամբք պատուականօք . առանց գիտութեան Լութֆիլն ։ Իսկ տարեալ առ աղջիկն և ասէ . ով սիրելի եւ քոյր իմ Ֆլորենցիա Լութֆիլն առաքեաց զաստառակս զայս քեզ պարգև ։ Իսկ աղջիկն տեսեալ զայն և ասէ . ով Աղեքսանդր ո՞ր կարաց գտանել Լութֆիլն զայսպիսի գեղեցիկ իրքս . և վասն էր առաքեաց զայս ինձ . զի ոչ երբէք եսես նա զիս բայց մի անգամ ։ Ասէ Աղեքսանդր . որդի է թագաւորին իսրայէլացւոց . և զամենայն ինչ ունի ընդ իւր բաւական ։

Եւ եթէ հարցանես թէ վասն է՞ր առաքեաց քեզ զպարգեւս զայս ձեռամբ իմով , այնպէս գիտասցես՝ զի վասն սիրոյ քո հիւանդացեալ է մերձ 'ի մահ . եւ եթէ հասանի նմա մահ , դու մահապարտ լինիս . վասն որոյ ասեմ քեզ զի փոքր ինչ մխիթարեսցես զնա Ասէ աղջիկն ով Աղեքսանդր՝ խրատով քո կամիս զի ապականել տացես զկուսութիւնս իմ . քաւ լիցի ինձ առնել զայդ . եւ ոչ կամիմ ես շահել զայդպիսի գործ , 'ի բա՛ց զնա յինէն . եւ այլ մի՛ եւս յիշեսցես առաջի իմ այդպիսի բան :

Եւ Աղեքսանդր երկրպագեաց նմա եւ ել 'ի շուկայն կրկին անգամ . եւ գնեաց իւր արծաթաման աւելի գնով մարգարտով ընդելուզեալ եւ ակամբ պատուականօք յօրինեալ մէկ լաւ իր մի՝ առանց գիտութեան Լութֆիկէն . եւ տարեալ յերկրորդում օրն՝ յորժամ տարաւ 'ի հօրէ իւրմէ զախորժակ կերակուրն՝ եդ զնա առաջի աղջկանն . եւ ասաց թէ՝ Լութֆիկին առաքեաց քեզ զողջոյն զայս : Եւ աղջիկն տեսեալ զմեծագին պարգեւն՝ սկսաւ ասել ցԱղեքսանդր . զարմանամ ես քեզ զի դու միշտ եւ հանապազ տեսանես զիս՝ եւ վասըն քո երբէք ինչ ոչ տացեր .

Ասէ ցնա Աղեքսանդր . այդպիսի իրք ոչ պատահեաց ինձ որպէս նմա . եւ ինձ պա՛րտ է սիրել զընկերն իմ իբրեւ զանձն իմ . արդ աղաչեմ ըզքեզ՝ վասն աստուծոյ մի՛ տար նմա մոռանալ եւ կորել վասն քո 'ի զուր . սակաւ մի մխիթարեա՛ զնա : Ասէ աղջիկն . 'ի բա՛ց զնա յինէն՝ զի այժըմ ոչ տամ քեզ պատասխանի .

Եւ ել Աղեքսանդր յերեսաց նորա եւ գնաց 'ի շուկայն . եւ գնեաց այլ մեծագին պարգեւ մի .

և յերրորդում աւուրն յորժամ տարաւ 'ի հօրէն ուրմէ զախորժակ կերակուրն, խոնարհեալ երկիր եպագ նմա. և եդեալ առաջի նորա զմեծագին պարգևսն՝ անկաւ յոտս նորա և ասաց. ով սիրելի իմ Փլօրէնցիա՝ պարգևս զայս Լութֆին առաքեաց առ քեզ այրեցած սրտով: Եւ աղջիկն ծիծաղեցաւ և ասէ, կու զարմանամ ով Աղէքսանդր սիրելի իմ որ այսչափ կու ջանաս վասըն նորա: Եւ երդուաւ Աղէքսանդրն և ասաց. օն և օն աստուած է կենդանի՝ եթէ ոչ մխիթարես զնա, 'ի սիրոյ քո նա, 'ի զուր կու մեռանի, և դու մահապարտ կու լինիս. զի կարի յոյժ վիրաւորեալ է 'ի քո սիրոյն. խեղճ և ողորմելի անկեալ կայ 'ի մահիճս և հայր քո օրըստօրէ հարցանէ զիս, թէ որպէս կայ Լութֆին: Ասէ աղջիկն. եթէ այդպէս իցէ՝ վասն սրտի քո երթալով առ Լութֆիկին. զի երբ կամիցի՝ գայցէ մտցէ և ելցէ. և ոչ ոք խօսիցի նմա. զի բացեալ լիցին դրունք առ նա:

Եւ Աղէքսանդրն յորժամ լուաւ զխօսս 'ի Փլօրէնցիայէն՝ ուրախացաւ յոյժ. և խոնարհեալ երկիր եպագ նմա. և ելեալ գնաց առ Լութֆին և ասէ. եղբայր իմ Լութֆի՛կ աւետիս քեզ և ուրախ լեր. զի հաստատեցի զսէր քո ընդ աղջկանն. և յորժամ կամիցիս՝ երթիջիր առ նա. և գտցես զնա պատրաստ. և ես ծառայիւքս իմովք պահապան լինիմ քեզ: Յորժամ լուաւ Լութֆին զխօսս 'ի յԱղէքսանդրէն՝ զարթեաւ որպէս 'ի քնոյ և ողջացաւ: Եւ 'ի միւս գիշերին՝ եմուտ առ աղջիկն և ննջեաց ընդ նմա: Եւ ընդ այնմ օրէ կապակցեցաւ հոգի Լութֆիկին՝ ընդ հոգւոյ Աղէքսանդրի. և սիրէին զմիմեանս յոյժ:

Եւ Լութֆիլն յամենայն ժամ երթայր առ աղջիկն․ մինչև ամենայն բանն յայտնի եղև 'ի պալատին ։ Եւ զինուորքն սպառազինեալք՝ պահէին զճանապարհ նորա ․ զի 'ի գիշերի սպանցեն զնա։ Եւ լուեալ Աղէքսանդր՝ ել 'ի միւս կողմանէ համդերձ ծառայիւքն իւրովք․ եդեալ զանձն 'ի մերայ ընկերին․ և պատրաստ էր 'ի մեռանիլ վասըն նորա։ Եւ թշնամիքն Լութֆիլին յորժամ տեսին զԱղէքսանդր համդերձ ծառայիւքն իւրովք զինուք և սուսերօք, ոչ կարէին մերձենալ առ Լութֆիլն ։

Եւ Լութֆիլն աներկիւղ մտանէր և ելանէր ։ Եւ Աղէքսանդրն ամենայնիւ իրօք ամու նման էր Լութֆիլին․ որ ոչ ոք կարէր ճանաչել զնոսա՝ բաց յաղջկանէն ։

Յաղագս Աղէքսանդրի Աղաչէ արքային առ նա․ զի թողուլ ժամանեսցէ առ իւրսն։

Յետ այնորիկ եհաս նամակ Աղէքսանդրի՝ զի փութալ հասցէ անդ վասն մահուան հօրն իւրոյ․ զի թագաւորեսցէ 'ի տեղի նորա ։ Եւ Աղէքսանդր լուեալ զայս՝ պատմեաց զնոր գնալն Լութֆիլին և աղջկանն ; Եւ երկու խնայեցան զգնալն Աղէքսանդրի առ հայրն իւր՝ կարի յոյժ տրտմեցան ։ Եւ Աղէքսանդր եմուտ առ կայսրն և ասէ․ տէր արքայ՝ թուղթ եկեալ է ինձ վասըն մահուան հօր իմոյ․ վասն որոյ աղաչեմ զքեզ հրաման տուր ինձ երթալ յերկիրն իմ և յաթոռն հօր իմոյ․ զի առանց հրամանի քո ոչ կարեմ երթալ թէ․ և կորուսից զժառանգութիւն իմ․ և ետ զթուղթն 'ի կայսրն ․

Եւ կայսրն առեալ զԹուղԹն՝ ընԹերցաւ եւ ասէ ցԱղէքսանդր. ոչ է ինձ հաճոյ գնալն քո. զի չունիմ ոք իմաստուն առ իս իբրեւ զքեզ ։

Եւ եԹէ ոչ Թողուցում զքեզ գնալ, Թուի Թէ քեզ դժուարանք լինիցի ։ Մանաւանդ տամ քեզ հրաման երԹիջիր խաղաղուԹեամբ . եւ տէր եղիցի ընդ քեզ ։ Եւ կոչեալ կայսրն զսենեկապետն եւ ասէ . Աղէքսանդր որչափ գանձի պէտ ունիցի՝ տացես նմա ։ Եւ առեալ ընդ իւր բաւական ոսկի . եւ գոհացեալ զարքայն՝ երկիր եպագ նմա եւ ողջունեալ զամենեսեան որ էին ՚ի պալատն անդ ։

Եւ բազումք ՚ի նոցանէ լային եւ ողբային զգնալն նորա զի ամենեքեան սիրէին զնա ։ Եւ ԼուԹֆին եւ Փլօրէնդիայն ամենայն ծառայիւք եւ աղախնեօքն իւրեանց՝ գնային ընդ նմա մինչ եօԹն . եւ կամէին այլ եւս երԹալ եւ ոչ եԹող զնոսա Աղէքսանդր ։

Յայնժամ երկոքեանն նոքա ԼուԹֆին եւ Աղէքսանդրն՝ անկան զպարանոցէ միմեանց եւ լային ։ Ասէ Փլօրէնցիայն . ով սիրելի իմ ԼուԹֆիկ լաց որչափ եւ կարես ։ Քանզի մեծ բարեկամն մեր՝ հեռանայ այսօր ՚ի մէնջ ։ Եւ եԹէ չէր եղեալ նա, ոչ երբէք վայելէիր դու զկէրն իմ ։

Քանզի իւրեան արծաԹոյն գնեաց ոսկով եւ մարգարտով նկարեալ երեք մեծամեծ պարգեւս եւ ետ ինձ որպէս Թէ դու ուղարկեալ ես, զայս աբար առանց գիտուԹեան քո ։ Եւ հանապազ սպաւաղինեալ պահէր զքեզ ՚ի Թշնամեաց քոց . եւ արդ ահա այժմ հեռանայ ՚ի մեզանէ ։ Եւ զայս ասացեալ նորա՝ անկան յերկիր եւ լային դառնապէս ։ Յարոյց զնոսա Աղէքսանդր ՚ի գետ-

նորն և տէ՛, օսիրելիք իմ մի՛ ողբայք զգնալն ’ի ձէնջ. քանզի երթամ և ողորմութեամբն աստուծոյ թագաւորեցից անդ. սակայն զձեզ ոչ մոռանամ թղթով և գրով.

Բայց ունիմ ինչ ասել քեզ եղբայր իմ Լութփիկ. քան զի ունելն զօրս ամ է՝ որ որդի արքային սպանիացւոյ կամի ծառայել կայսեր. և է անուն նորա Ալդոն: Արդ՝ եթէ յուզէ զգնալն իմ աստի, խկոյն եկեսցէ նա աստ: Նա ծառայելոց է կայսեր. և դու զգո՛յշ լեր մի՛ ինչ անիցես առաջի նորա վասն դստերն կայսեր. զի թէ լուիցէ և իմասցի զապականելն քո զկուսութիւն նորա, վաղվաղակի ասասցէ առաջի կայսերն. և դու չարաչար մահուամբ մեռանիցես: Ասէ Լութփիկն. ով եղբայր Աղէքսանդր՝ կէս հոգւոյ իմոյ. լաւ եղև որ զգուշացուցեր զիս վասն այդորիկ բայց յառաջ քան զգաժանելն քո ’ի մէնջ՝ խնդրեմ ’ի քէն բան ինչ. Ասէ Աղէքսանդր. խնդրեա զինչ և կամիս: Ասէ Լութփիկն. ունիմ առ իս պատուական մատանի մի՝ որ տուեալ է ինձ մայրն իմ: աղաչեմ զքեզ զի զնա դնիցես ’ի մատն քո. և հանապազ ընդ քեզ ունիցիս. և որքան տեսանես զնա ’ի մատն քո՝ միշտ յիշես զիս. Ասէ Աղէքսանդր. բարի է եղբայր իմ Լութփիկ. առից զմատանին քո յիշատակ անուան քո. բայց դու զասացեալսն իմ ’ի միտ պահեա. և ես արդ երթայց յանձըն առնելով զձեզ աստուծոյ:

Գնալն Աղէքսանդրի յերկիրն իւր 'ի Եգիպտոս. Եւ գալն Սերգոնի՝ որդւոյ սպանիացւոց թագաւորին:

Եւ գնաց Աղէքսանդր զճանապարհ իւր. և աղջիկն և Եւթփիկն դարձան 'ի պալատն իւրեանց:

Յետ այնորիկ՝ լուաւ Սերգոն որդի արքային ըս-պանիացւոց՝ եթէ գնաց Աղէքսանդր յերկիրն իւր, եկն առ կայսրն և խնդրէր ծառայել նմա:

Ասէ ցնա կայսրն. յառաջ քան զքեզ էր առ իս մանուկ մի որում անունն էր Աղէքսանդր. արդ նա թագաւոր է եղիպտացւոց. և յոյժ ծառայեաց ինձ իմաստութեամբ. և զկերակուրն իմ նա պատրաստ էր ինձ. արդ այժմ զտեղի նորա քեզ տամ: Եւ Սերգոն շնորհակալ եղև կայսերն: Եւ սենեկապետն՝ եցոյց նմա զդարպասն յորում բնակէր Աղէքսանդր. զի ընդ Եւթփիկին բնակեսցին 'ի միասին: Եւ Եւթփիկն ջանայր հեռանալ 'ի նմանէ. պատճառելով զպատճառս բազումս. սակայն ոչ եղև հնար. և ակամայ կամօք յանձն էառ զհրաման սենեկապետին: Տեսեալ Սերգոն թէ ոչ կամի Եւթփիկն գնալ առ իւր, ատելութիւն կալաւ ընդ նմա. Եւ Եւթփիկն տեսանէր զնա զի զշարէր ընդ նմա. և բազում ժամանակս ոչ երթայր առ աղջիկն. և յետոյ դարձեալ գնայր որպէս յառաջագոյն առնէր:

Զոր տեսեալ Սերգոն՝ ուրախ եղև յոյժ. և լըրտեսէր հանապազ. մինչ զի՝ ստուգիւ տեղեկացաւ որ ապականեալ էր Եւթփիկն զկուսութիւն աղջըկանն. և պատճառ ապականութեան նորա՝ էր Աղէքսանդր:

Յաւուր միում գնաց կայսրն զբօսութեան և

զյաջողակութիւն Աղեքսանդրի ։ Ասէ ցնա Սիդոն. տէր՝ մի՛ այդպէս գովաբաներ զԱղեքսանդր մարդն զի նա՛ էր դաւաճան քո ։ Ասէ կայսրն ․ որպէս ։ Ասէ Սիդոն ․ դուստր մի ունիս միամօր՝ որ ժառանգ լինելոց է քեզ ․ Դութփիկն՝ գիտութեամբ Աղեքսանդրի՝ ապականեալ է զկուսութիւն նորա ․ և յորժամ կամի՝ մտանէ և ելանէ ։ Եւ յորժամ լուաւ զայս կայսրն ՚ի Սիդոնէ՝ տրտմեցաւ յոյժ ։

Եւ մինչդեռ զայս խօսէր Սիդոն ընդ կայսերն ․ եմուտ Դութփիկն ընդ պալատն ։ Եւ իբրև եմուտ՝ ետես զնա կայսրն ․ և կոչեաց զնա առ ինքըն և ասէ ․ զի՞նչ է այս որ լսեմ զքէն ․ եթէ ճշմարիտ իցէ բանդ, չարաչար մահուամբ կորուսից զքեզ ։

Ասէ ցնա Դութփիկն ․ տէր արքայ ասա՛ ինձ թէ ինչ բան է՞ ․ քանզի՝ ոչ գիտեմ ես ինչ ։ Ասէ ցնա Սիդոն . ես մատնեցի զքեզ առաջի տեառն իմոյ արքայի ․ քանզի դու ապականեցեր զմիամօր դուստր նորա ․ և արդ ես ննջեմ ընդ նմա ․ և ՚ի նշան այդմիկ՝ յաւուր միում մարտնչեցայց ընդ քեզ ։

Ասէ Դութփիկն ․ և ես պատրաստ եմ յաւուրըն յայնմիկ մարտնչել ընդ քեզ ․ և չար քո՝ հանեց ՚ի գլուխդ քո ։

Եւ դարձեալ ասէ Դութփիկն ցկայսրն ․ տէր իմ, թէ վասն էր չարախօսեաց զիս Սիդոն առաջի տեառն իմոյ՝ ճանուցից արքայիս իմոյ ։ Եւ ասէ կայսրն ․ ո՞րպէս ։ Ասէ Դութփիկն ․ յորժամ որ եկն Սիդոն ծառայել քեզ , անենկալեան եցոյց նմա զընակութիւն Աղեքսանդրի ․ և ես ոչ կամեցայ բնակել ՚ի միասին ․ զի լուեալ էի յառա-

ջադոյն զչարութիւն գործ. և սենեկապետն ա-
կանայ կամօք բնակեցոյց ընդ իս. վասն այն ահա
չարախօսեաց զիս առաջի տեառն իմոյ։

Ասէ կայսրն. երբ այդպէս իցէ՝ նշանակեմ ձեզ
օր մարտի այս նիշ օր. և տեսանեմ թէ 'ի ձէնջ
որն է ճշմարիտ։ Եւ յանձն եառ Նութփիլն։
Եւ երբև այսպէս եղև այս, եմուտ Նութփիլն
առ աղջիկն և ասէ. այժմ եղէ որդի՞ մահու.
որպէս ասաց ինձ Աղեքսանդր՝ նոյնպէս եղև։
Քանզի Սիդոն մատնեաց զիս առաջի հօր քո՝ թէ
ապականեալ եմ զքեզ. և հայր քո բարկացաւ
ինձ յոյժ։

Նաև Սիդոն վասն փորձելոյ զարդարութեան ճըշ-
մարտութիւն՝ նշանակեաց օր մարտնչել ընդ իս.
և ես ոչ կարեմ՝ կալ ընդդէմ նորա՝ քանզի տը-
կար եմ. և վասն տկարութեան իմոյ մեռանիմ։
Ասէ ցնա աղջիկն. եթէ այդպէս իցէ և ոչ
է հնար զերծանել, արա՛ ըստ խրատու իմոյ և ե-
ղիցի քեզ բարի։

փութա՛ և գնա՛ առ կայսրն և ասա՛ ցնա. թէ
թուղթ ուղարկեալ է ինձ հայրն իմ. քանզի
հիւանդացեալ է. և գրեալ է թէ փութով հաս-
ցես ինձ մինչ դեռ կենդանի եմ, և խնդրեա՛
հրաման՝ զի տացէ քեզ երթալ առ հայրն քո. և
զօր մարտին՝ յերկարեսցես յերթալդ և գալդ.
Եւ յորժամ կայսրն տացէ քեզ հրաման երթալ,
երթիցես վաղվաղակի առ Աղեքսանդր արքայ 'ի
ծածուկ՝ զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ աղաչեա՛ զնա
վասն աստուծոյ և վասն սիրոյ մերոյ՝ զի օգնեսցէ
քեզ միւսանգամ. և եկեալ աստ պատերազ-
մեսցի փոխանակ քո. զի դուք նման էք միմեանց.
և ոչ ոք է որ կարիցէ ճանաչել զձեզ և բաժա-

նել 'ի մեռեանց՝ բաց լինէին : Թէ արտասուես զայս՝ ապրեցիս 'ի մահուանէ · և զպատիւ քո և զիմ յաւելցես :

Ասէ ցնա Լութֆիկն · լաւ խրատ տացեր · բայց երկնչիմ գուցէ թէ ոչ թողցէ Աղեքսանդր ըղթագաւորութիւն իւր և գայցէ աստ · Ասէ աղջիկն · ոչ երբէք դարձցի նա զերեսս իւր 'ի մէնջ · վասն որոյ յուսամ յաստուած՝ զի և այժմ ես ոչ դարձուցանէ զերեսս իւր վասն կենդանութեան քո :

Յայն ժամ Լութֆիկն սահմանեաց թուղթ մի · և եդ 'ի հաւատարիմ մի 'ի ծառայից իւրոց և ասաց · բեր այս ինչ օր զթուղթս զայս՝ յորժամ ես սպասաւորեմ կայսերն 'ի սեղան · և տուր առաջի ամենեցուն զկնքեալ թուղթս ինձ և կամ սենեկապետին : Եւ արար ծառայն ըստ հրամանի տեառն իւրոյ · և եբեր զթուղթն և ետ սենեկապետին ·

Եւ սենեկապետն բացեալ զթուղթն կարդաց և տեղեկացաւ · և ծանեաց Լութֆիկն : Լութֆիկն և սենեկապետն ծանուցին արքային թէ հայրն հիւանդացեալ է · և փութով խնդրեալ է զորդին զի տեսանիցէ :

Եւ արդ խնդրէ յարքայէս հրաման զի երթեալ և տեսանիցէ զհայրն և դարձեալ գայցէ · Ասէ կայսրն՝ երթիցես · բայց 'ի ժամադրեալ աւուրն եկեսցես : Ասէ Լութֆիկն · աղաչեմ զմեծութիւնդ քո ահէ՝ զի յայլում աւուր տեսցես ըղմարմինքն մեր ընդ մեռեալս : զի կարացից ժամանել :

Եւ կայսրն երկարեաց զօր մարտին և ասէ , նայեաց յանձն քո՝ զի եկեալ հասցես 'ի ժամադրեալ

օրն։ Նա եթէ ոչ եկեսցես՝ յարուցից 'ի վերայ քո պատերազմ. և քայքայեալ աւերեցից զերկիրն ձեր. և գերեալ չարաչար տամ սպանանել։ Ասէ Լութֆիկն. անպատճառ եկից 'ի ժամադրեալ օրն. թէ և կորուսից զժառանգութիւն իմ. և երկիր եպարտ արքային և եղ։ Նա փաղխաղակի հեծեալ 'ի ձի՝ գնաց յեգիպտոս. և ազդարար զգնալն իւր Աղէքսանդրի. և ինքն կեցեալ 'ի Թաքստի։ Նա արքայն Աղէքսանդր լուեալ զգ-գալուստ նորա՝ ուրախ եղև յոյժ. և եղ ընդ ա-ռաջ նորա. և իբրև ետես զնա, համբուրեաց և ասէ. բարի եկիր սիրելի եղբայր իմ. և ա-ռեալ եբեր 'ի պալատն իւր և արար ընդունելու-թիւն մեծ. և հարցեալ վասն Ֆլօրէնցիային թէ

որպէս կեայ. և վասն արքային։

Ասէ Լութֆիկն. տէր իմ և ընկերակից. այ-ժմ մահ իմ և կեանք իմ 'ի ձեռս քո է. զի որպէս ասացեր վասն Սիդոնի՝ նոյնպէս եղև. քան-զի մատնեաց զի առաջի կայսերն՝ թէ ապակա-նեալ եմ զդուստրն նորա։ Նա կայսրն կարգեաց մեզ օր մարտնչել ընդ միմեանս. զի փարձեսցի և յայտնեսցի ճշմարիտն. արդ նա զօրեղ է քան զիս և ես տկար. ոչ կարեմ պատերազմել ընդ նմա։ Նա լուեալ զբանս Ֆլօրէնցիային՝ զայս խը-րատս ետ ինձ. զի եկից առ քեզ խնդրել վասն օգնութեան. զի դու բազում անգամ օգնեցեր ինձ. և այժմ դարձեալ 'ի քէն եղիցի ինձ օգ-

նութիւն միայն՝ որ ոչ մեռանիմ 'ի զուր։

Ասէ Աղէքսանդր. գիտէ՞ և այլ ոք զգալուստ քո աստ, թէ միայն Ֆլօրէնցիայն։ Ասէ Լութ-ֆիկն. ոչ ոք գիտէ զգալն իմ առ քեզ՝ բաց 'ի Ֆլօ-րէնցիայէն։ «Քանզի հրաման առի 'ի կայսերէն՝

եթէ երթայց տեսից զհայրն իմ զի հիւանդացեալ է. և շուտ առի եկից առ քեզ: Օ՜հ Ֆլորէնցիայն ասաց թէ դուք նման էք միմեանց. և ո՛չ ոք ճանաչէ զձեզ բաց յինէն: Իբրև զայս ասաց՝ անկաւ առ ոտս նորա և սկսաւ լալ:

Իսկ արքայն Աղէքսանդր՝ յարոյց զնա և ասէ. ո՛վ սիրելի իմ ասա ինձ յորում աւուր եդեալ է ձեզ ժամ մարտնչելոյ: Ասէ Լութփիկն. այս նիշ օր մարտնչելոց եմք: Ասէ Աղէքսանդր. այժմ կայսրն համարէ զօրն. և եթէ ես յամեցեմ զգիշերս զայս անհնար է ինձ ժամանել 'ի ժամադրեալ օրն: Իսկ ես 'ի վաղիւն առնելոց եմ զդուստր Թագաւորին 'ի կնութիւն. 'ի ձեռն նորա Թագաւորելոց եմ աստ. և ամենայն նախարարք նորա եկեալ են 'ի հարսանիս: Իսկ եթէ վասն հարսանեացս յամեցից աստ, կորիցես դու 'ի յաւիտեան: Բայց լաւ է ինձ թողուլ զԹագաւորութիւն իմ և զկինն իմ և զքեզ ո՛չ. Իսկ առեալ զնա՝ եմուծ 'ի սենեակն իւր. և հանեալ 'ի յանձնէն զիւր հանդերձն՝ ագոյց Լութփիկին. և զհանդերձն՝ Լութփիկին՝ զգեցաւ ինքն: Իսկ եցոյց զամենայն դարպասն բոլորովին և ասաց. աւրարանցուք այսպէս. ես երթայց անդ և հասից 'ի ժամադրեալ օրն. և դու նստցիս 'ի տեղի իմ որպէս Թագաւոր. բայց յորժամ մտանիցես 'ի մահիճ աղջկանն՝ հաւատարիմ լինիցիս ընդ իս: Իսկ իբրև զայս ասաց՝ նոյնժամայն հեծեալ 'ի ձի՝ գնաց առ կայսրն փոխանակ Լութփիկին: Իսկ Լութփիկն 'ի վաղիւ անդր փոխանակ Աղէքսանդր՝ Թագաւորի (քանզի ո՛չ ճանաչէր զնա ոք) էառ զկինն Աղէքսանդր Թագաւորին և արար հարսանիս. և յորժամ եղև գիշեր՝ եմուտ Լութ-

փինն 'ի մահճէն · և բերին զԹագուհին անդ առ նմա ։ Յայնժամ Ռութփին առեալ սուր մերկ՝ եդ 'ի մէջ իւրն և աղջկանն · զի մարմին աղջկանն՝ 'ի մարմին իւր ոչ հասցէ ։

Եւ Թագուհին զարմանայր վասն բանիս այսորիկ· բայց ինչ ոչ ասէր ընդ նա Թէ վասն էր առնես զայդ · և ամենայն գիշեր այնպէս առնէր մինչև եկն Աղեքսանդր արքայ ·

Իսկ յորժամ Աղեքսանդր գնաց առ կայսրն փոխանակ Ռութփինին՝ ասէ ցարքայն · տէր՝ զհայր իմ Թողեալ 'ի մահճէն հիւանդութեան՝ եկի աստ վասն ժամադրեալ աւուրն ։ Ասէ ցնա կայսր· հաւատարիմ եղեր 'ի բանիդ այդմիկ և յաւելեր զպատիւ քո ։

Եւ լուեալ Փլորենցիայն դքսուհին նորա՝ ուրախ եղև յոյժ · և զաղտ կոչեաց զնա առ ինքն ։ Իբրև ետես զնա համբուրեաց և ասէ · օրհնեալ է օր ծննդեան քո · արդ ասա ինձ Թէ ո՞ւր Թողեր զՌութփին ։ Եւ Աղեքսանդր պատմեաց նմա զամենայն զոր ինչ եղեն · և Թէ որպէս եԹող զնա Թագաւոր փոխանակ իւր ։ Եւ յետ խօսիցն ողջունեաց զաղջիկն · և ելեալ գնաց անտի և եմուտ 'ի սենեակ Ռութփինին · իբր Թէ ինքն իցէ Ռութփին · քանզի ոչ ոք էր ծանուչէր զնա Թէ ոչ է Ռութփին բայց 'ի Փլորենցիայէն ։ Եւ 'ի վաղիւն անդր նախ քան զժամ մարտին՝ ասէ Աղեքսանդր ցկայսրն · Արդօնս այս դշխարեալ ինձ մատնեաց զիս քեզ · որպէս Թէ զդուստր քո ապականեալ եմ ·

Արդ՝ փորձեցից զդա այսօր 'ի մարտին զօրս · և առից զվրէժ իմ 'ի դմանէ ։ Ասէ Արդոն · այո՛ ճշմարիտ է զոր ասացեր, զի դու ապականեցեր

զգաստ կայսերս · և կամիմ փորձել զայդ 'ի-մերոց քո ։ Եւ երբ ասաց զայս՝ երկաքեանն 'ի միասին հեծան 'ի ձի · և սկսան հարկանել զմիմեանս և մարտեան ։ Եւ եհար սրով Աղեքսանդր թագաւորն և կտրեաց զգլուխն Միդոնի ։ և տարեալ ետ աղջկանն · և աղջիկն մեծաւ խնդութեամբ տարաւ առ հայրն և ասէ ։ Ահա հայր իմ զգլուխն այնորիկ որ ստութեամբն իւրով ապականեալ եցոյց զիս ։ Եւ կայսրն տեսեալ զյաղթութիւն՝ կոչեաց զԱղեքսանդր առ ինքն՝ կարծելով թէ Լութֆիկն է և ասէ · ով սիրելի Լութֆիկ՝ ապրեցուցեր այսօր զքեզ և զդուստրն իմ և յաւելեր զպատիւ իմ · արդ սիրելի իմ՝ եղիցիս դու 'ի յաւիտեան ։ Ասէ Աղեքսանդր · աստուած է որ փրկէ զայնոսիկ որք յուսան 'ի նա ։

Բայց զհայրն իմ թողեալ հիւանդ և եկի վասն կռուոյս · արդ աղաչեմ զմեծութիւնդ՝ զի հրաման տացես ինձ երթալ առ հայրն իմ · և տեսանել զնա թէ որպէս եղև · և դարձեալ փութով եկից ։ Ասէ ցնա կայսրն · երթիջիր խաղաղութեամբ · և դարձեալ փութով եկեսցես · և 'ի կամս քո ունիցիս զամենայն ինչ ։ Եւ Աղեքսանդր ողջունեաց զարքայն · և ելեալ գնաց յերկիրն իւր ։ Եւ Լութֆիկն լուեալ զգալուստ Աղեքսանդրի ուրախ եղև յոյժ և ասէ · սիրելի եղբայր իմ զի՞նչ գործեցեր անդ · և որպէս եղև բանն ։

Ասէ Աղեքսանդր · երթ առ կայսրն և ծառայեա նմա որպէս յառաջն · քանզի խոստացայ նմա փութով դառնալ առ նա · և քո թշնամոյն հատի զգլուխն ։ Եւ Լութֆիկն շնորհակալ եղև նմա և ասէ · ով սիրելի իմ Աղեքսանդր՝ ես որ-

պէս կարացից հատուցանել քեզ զփոխարէնս՝ փոխանակ այդ ամենայն բարութեանց քոց · որ բազում անգամ փրկեցեր զիս 'ի մահուանէ · ես տուել տամ՝ որ զամենեսեան անցոյց ։ Ասէ Աղեքսանդր · երթ 'ի խաղաղութիւն և տէր եղիցի ընդ քեզ · է աստուած յերկինս որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց ։

Եւ Լութֆին ողջունեալ զնա , դարձաւ տակայարն ։

Եւ 'ի գիշերի միում Աղեքսանդր նստաւ յաթոռն իւր և ոչ ոք գիտաց զգնալն և զգալն նորա ։ Եւ երբև երեկոյ եղև՝ եմուտ Աղեքսանդր 'ի մահիճն առ Թագուհին · և սկսաւ խաղալ ընդ նմա և համբուրել ։

Ասէ Թագուհին · հաղև եհաս ժամ զի ցուցես ինձ նշան սիրոյ փոքր 'ի շատէ ։ Ասէ Աղեքսանդր · վասն էր ասես զայդ ։ Ասէ Թագուհին · յայնմ օրէ որ առեր զիս՝ յամենայն գիշեր մերկ սուր դնեիր 'ի մէջ մեր · զի մի հասցէ մարմին քո 'ի մարմին իմ ։

Եւ Աղեքսանդր լուեալ զայս՝ ասէ ընդ միտս իւր · թէ ընկերն իմ Լութֆին՝ հաւատարիմ եկաց ընդ իս ։

Եւ դարձեալ ասէ ցԹագուհին · ով սիրելի ոսկին՝ ես ոչ արարի զայն վասն չարութեան , այլ վասն փորձելոյ զքեզ ։

Եւ Թագուհին ասէ ընդ միտս իւր · դու արարեր զայդ ինձ , և ես առից զվրէժ իմ 'ի քէն ։ Եւ իսկոյն սկսաւ սիրել զինուոր ոմն 'ի պալատէն և պոռնկէր ընդ նմա · և խորհէին սպանանել զԹագաւորն Աղեքսանդր ։

Եւ արբուցին նմա մահադեղ · և դեղն ոչ մահա-

ցոյց զնա․ բայց բոր գոլով եղև ամ մարմին նորա ։ Եւ տեսեալ նախարարացն թէ ոչ վայելէ՝ զօթոյ թագաւորութիւն, աքսորեցին զնա յերկրէ անտի ։ Եւ յայնմ ժամանակի՝ մեռաւ անդրաս կայսրն․ և լութֆիկն եառ զդուստր նորա ՚ի կնութիւն․ և թագաւորեաց ՚ի տեղի նորա ։ Եւ յետ ոչ բազում աւուրց՝ մեռաւ և թագաւորն խարայելացւոց․ և Լութֆիկն տիրեաց միանգամայն ՚ի վերայ երկրի նոցա․ այսինքն՝ երկրի կայսեր , և երկրի հօրն իւրոյ ։

Եւ լուեալ Աղէքսանդր՝ ասէ ընդ միտս իւր․ արդ՝ ընկերն իմ Լութֆիկն եառ զդուստրն տիրոջ ՚ի կնութիւն․ և եղև կայսր ՚ի տեղի նորա և թագաւոր խարայէլի․ և ես յոյս ունիմ, առտուած զի երթայց անդ և մխիթարեցայց ՚ի նմանէ․ որ համայնայն զանձն իմ դնէի ՚ի վերայ նորա ։ Եւ նոյնժամայն ելեալ ՚ի գիշերի և առեալ ցուպ ՚ի ձեռին՝ եկն առ Լութֆիկ ընկերըն իւր որ եղեալ էր կայսր ։ Եւ յորժամ եհաս ՚ի դուռն պալատին՝ ետես առ դրանն զի մի կողմն նստեալ էին աղքատք՝ և միւս կողմն գօթիք առնուլ ողորմութիւն․ ինքն ևս նստաւ ՚ի մէջ գօթուցն ։ Եւ ելեալ կայսրն Լութֆիկ եանց․ և Աղէքսանդր՝ ընդ այլ աղքատսն խնդրէր ողորմութիւն․ բայց ինչ ոչ եառ ։ Եւ երրե ժամ եղև ճաշոյ և նստաւ կայսրն ՚ի ճաշ , եկն առքայն Աղէքսանդրն և սկսաւ բաղխել զդուռն ։ Եւ ելեալ դռնապանն հարցանէր զնա թէ վասըն էր բաղխէր զդուռն ։ Ասէ Աղէքսանդր ես բարոտեալս ՚ի գօթութեան՝ աղքատ և արհամարհեալ յամենեցուն՝ աղաչեմ զքեզ վասն աստուծոյ զի հասուցես զբանս իմ առ կայսրն ։ Ասէ դռնա-

պանն · զի՞նչ է խնդիրք քո ։ Ասէ Աղէքսանդր · երթ աղաչեա զկայսրն և ասա ցնա յինէն՝ վասն աստուծոյ սիրուն և վասն Աղէքսանդր Թագաւորի սիրուն հրամայեսցէ վասն իմ զի երթայց և նստայց առաջի աչաց նորա և կերայց հաց ։ Ասէ դռնապանն · զարմանամ քեզ զի զայդպիսի իրս խնդրես 'ի տեառնէ իմմէ · քանզի պալատ նորա լի՛ է իշխանօք · և թէ տեսցեն զքեզ լի բորոտութեամբ՝ գարշեսցին ոչ կարիցեն ուտել կերակուր · բայց որ աղաչես զիս վասն աստուծոյ ծանուցից տեառն իմում զբանս քո ։ Եւ մտեալ դռնապանն առ կայսրն և ասէ · տէր իմ և հզօր արքայ՝ բորոտ մի կացեալ առ դրանն և խնդրէ 'ի Ձէնջ վասն աստուծոյ և վասն Աղէքսանդր Թագաւորի սիրուն՝ զի մտցէ 'ի ներքս և առաջի աչաց քոց նստիցէ և ուտիցէ կերակուր ։ Եւ լուեալ կայսրն զանուն Աղէքսանդր Թագաւորին՝ ասէ ցդռնապանն մոյծ զնա այսր և կերիցէ հաց առաջի իմ ։ Եւ դռնապանն խաղյն եմոյծ զնա 'ի ներքս · և նա մտեալ նստաւ 'ի վերայ գետնոյ առաջի կայսերն ։

Եւ կայսրն ուղարկեաց նմա քաղցրահամ կերակուր · և Աղէքսանդր կերեալ զայն՝ կոչեաց առ ինքն զմինն 'ի ծառայիցն կայսեր և ասէ · սիրելի եղբայր իմ վասն աստուծոյ սիրուն երթ առ կայսրն և ասա ցնա · թէ աղքատն այն բորոտ՝ աղաչէ վասն աստուծոյ և վասն Աղէքսանդր Թագաւորի սիրուն տացէ ինձ զինի իւր սկուտեղամբն · Ասէ ցնա ծառայն · մի՛ եղբայր ոչ գիտես թէ զինչ խնդրես · վասն զի անպատշաճ բանս կամիս ուզել , զի թէ միանգամ ըմպիցես դու զինի 'ի բաժակէ անտի զոր տէրն իմ ըմպէ , յաւել

ես ոչ կարէ ըմպել 'ի նմանէ, բայց վասն աղաչանաց քոց՝ պատմեցից կայսերն զբանս քո: Եւ գնացեալ ծառայն առ կայսրն և ասէ. տէր՝ թագաւորն շնորհեաց ինձ զոր ինչ առնլոց լինեմ տեառն իմում. բաժակն այն որ նստեալ կայ 'ի վերայ գետոյն, խնդրէ վասն աստուծոյ և վասն սիրոյ Աղէքսանդր Թագաւորին՝ զի սկահակն զոր ըմպէ տէրդ իմ, տացես նմա զինի նոյն սկահակն ըմպել: Եւ լուեալ կայսրն զանուն Աղէքսանդր Թագաւորին՝ զուարթ երեսօք հրամայեաց տալ նմա անապակ գինի. և ծառայն տարեալ ետ ցբարոն: Եւ Աղէքսանդրի առեալ գոհացաւ զարքայէն և ըմպեաց զբաժակն. և իբրև ըմպեաց՝ հանեալ զմատանին 'ի ձեռանէ՝ արկ 'ի սկիհն. և ասէ ցծառայն՝ սիրելի եղբայր իմ տար զսկիհդ և զմատանիս տեառն քում: Եւ ծառայն առեալ տարաւ և ետ 'ի կայսրն: Եւ կայսրն իբրև ետես զմատանին, ետես ճանաչեաց զնա՝ զոր ինքն տուեալ էր Աղէքսանդր Թագաւորին 'ի նշան սիրոյ. և խանդաղատեցաւ սիրտ նորա և ասէ 'ի միտս իւր. կամ Աղէքսանդր արքայ մեռեալ է, կամ բարոնդ այդ գողացեալ է զմատանիս զայս:

Եւ հրամայեաց կայսրն ծառայից իւրոց և ասէ. բարոնն այն մի ելցէ 'ի պալատէս մինչև խօսեցայց ընդ նմա:

Եւ յետ ճաշոյն՝ առեալ կայսրն զբարոն մեկուսի՝ որ էր ինքն Աղէքսանդր արքայն՝ և ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յաստուած կենդանի՝ ասա ինձ թէ որպէս անկաւ մատանիս այս 'ի ձեռս քո: Ասէ Աղէքսանդր. տէր՝ մի թէ ճանաչես զմատանիս զայս: Ասէ կայսրն. որ-

պէս չեմ ճանաչեր՝ զի իմ է մատանիս այս և ես ետու Աղեքսանդր Թագաւորի ընկերիս իմոյ 'ի նշան սիրոյ : Ասէ Աղեքսանդր · այս այն Աղեքսանդրն է՞ աչաւ որում տեսեր զմատանիդ : Եւ լուեալ զայս կայսրն՝ պատառեաց զպատմուճան իւր և անկեալ յերկիր լայր դառնապէս և ասէր · ով սիրելի իմ Աղեքսանդր կէս հոգւոյ իմոյ՝ զիարդ կամ որպէս եղև վիրաւորեալ փափուկ մարմին քո : Ասէ Աղեքսանդր · դու որ ունէիր զմեծ սէրն քո ընդ իս՝ և եղեալ էիր սուր մերկ 'ի մէջ քո և 'ի մէջ Թագուհոյն կնոջ իմոյ , սակս այնորիկ բարկացաւ նա յոյժ · և սիրեաց զզինուոր մին 'ի պալատէս և պատուէր ընդ նմա· վասն այս պատճառի դեղեցին զիս և արբուցին ինձ մահադեղ թէ մաանի, և ես եղէ այսպէս վիրաւորեալ բոլոր · և յետ այնորիկ արտաքսեցին զիս 'ի Թագաւորութենէս : Եւ լուեալ զայս կայսրն յարուցեալ համբուրեաց զնա եւ ասէ · վա՜յ է ինձ կէս հոգւոյ իմոյ՝ զի՞նչ արարից քեզ և կամ որպէս բժշկել տաց քեզ · համբերեա՛ փոքր մի և ես առաքեցից առ ճարտար բժիշկս · զի եթէ հնար իցէ՝ բժշկեսցեն զքեզ 'ի բարսաւթենէդ :

Ո՜վ սիրելի իմ Աղեքսանդր՝ մի՛ ունիր յայտնեւցես զայս · ես առաւել Թագուհոյն իմոյ Փլորենցիայէն՝ զի մի՛ անկանիցի 'ի մեծ տրտմութիւն. Եւ նոյնժամայն ետ նմա դարպաս մի առանձին. և զամենայն պէտս նորա :

Եւ առաքեաց զծառայս իւր ընդ ամենայն երկիր առ իմաստուն բժիշկն · զի առանց ինչ յապաղելոյ հասցեն առ նա: Եւ նորա սրբնթաց երիվարաւ փութանակի ժողովեցան առ կայսրն բը-

ժիշկք խնամատուք՝ համարով երեսուն · յոյժ անուանիք և հնուաց արհեստից ։ Զոր տե-սեալ զնոսա կայսրն՝ ուրախ եղև յոյժ · և ասէ ցնոսա՝ սիրելիք՝ մէկ բարեկամ իմ վիրաւորեալ է յոյժ · եթէ բժշկէք զնա ՚ի վիրաց անտի , պար-գևս մեծամեծս առնուցուք յինէն ։ Ասեն բը-ժիշկքն · տէր՝ զոր ինչ հնար է և գիտեմք՝ ա-րարցուք · և յորժամ տեսին զվէրս նորա՝ ասեն · ոչ կայ դմա հնար ողջանալոյ · զի դորա մահա-դեղ է արբուցած ։ Զոր լուեալ կայսրն՝ տրտ-մեցաւ յոյժ · և հրամայեաց կոչել զաղքատս և զկրօնաւորս և զքահանայս՝ զի աղօթս արասցեն վասն նորա · զի ՚ի սոցանէ եղիցի բժշկութիւն նմա ։

Եւ ինքն կայսրն պահօք և աղօթիւք խնդրէր յաս-տուծոյ առողջութիւն Աղեքսանդր թագա-ւորին ։ Եւ ՚ի միում գիշերի Աղեքսանդր կայր յաղօթս · և յաղօթելն նորա՝ ձայն եղև յերկնից առ նա և ասէ · զհնդեսին տղայքն կայսեր՝ ծը-նեալ է նմա թագուհին՝ եթէ զենցէ ձեռամբն իւ-րով և ոչ երկմտիցի՝ և արեամբն նորա լուասցէ զմարմինս քո , նոյնժամայն բժշկեսցիս յաղտէ քում-մէ · և եղիցի մարմին քո փափուկ իբրև զմանկան տղայի ։

Զոր լուեալ զայս Աղեքսանդր՝ ասէ ընդ միտս իւր · ոչ է պիտոյ և ոչ է արժան յայտնելոյ զայս ումեք · ո՞վ է որ զմին որդին իւր զենցէ սրբել զվէրն իմ , որ նա զհնդեսին որդեան զենցէ վա-սն իմ · վասնորոյ ոչ յայտնեաց ումեք ։ Եւ կայ-սրն ՚ի գիշերի և ՚ի տուընջեան աղաղակէր առ տէր վասն առողջութեան Աղեքսանդրի ։

Եւ ՚ի միում ժամու կայր աղքատին յաղօթս՝ լը-

ուաւ ձայն յերկնից որ ասէր . վասն էր աղա-
ղակես առ իս . Աղէքսանդր թագաւորն՝ ընկեցե-
ալ է զդեղ աստուածութեան իւրոյ :

Յորժամ լուաւ զայս կայսրն՝ գնաց առ Աղէք-
սանդր և ասէ . ով Աղէքսանդր հեզ Հօրեայ ի-
մոյ՝ լուայ զբարբառ ՚ի յերկնից որ դու ընկեցեր
զկանս զդեղ աստուածութեան քո և վասն էր ինձ
ոչ ասես : Ահա ասեմ քեզ . ես կարծէի թէ
զամենայն ինչ քո յայտնես ինձ : և ոչ մի բան
թագուցանես յինէն . արդ ասա ինձ թէ որպէս
բժշկիս : Ասէ Աղէքսանդր . ոչ է զարմանք որ
թագուցի ՚ի քէն զդեղ աստուածութեան իմոյ . վա-
սն զի յոյժ դժուար թուեցի քեզ ասել
զայն :

Ասէ կայսրն . ասա ինձ որպէս դժուարին է :
Ասէ Աղէքսանդր . ոչ բերէ համբերութիւն
սիրտ ՚ի բերան առնուլ եւ ճշել զնա : Եւ կայ-
սրն բռնադատել երդմնեցոյց զնա՝ զի պատմեսցէ
նմա թէ իւ ելք լինելոյ է նմա բժշկութիւն :
Ասէ Աղէքսանդր . մինչդեռ յաւուրն կայի յա-
ղօթս . և լուայ բարբառ ՚ի տեառնէ՝ որպէս .
եթէ դու զՀնդեսին որդին քո զենցես և ոչ եղի-
մանիցես՝ և արեամբն նորա լուասցես զիս , եղիցի
մարմին իմ որպէս էրն յառաջագոյն իբրև զմատաղ
տղայի և ես վասն այն լռեցի և ոչ պատմեցի քեզ .
զի անհնար է սպանանել քեզ զորդին քո վասն
աստուածութեան իմոյ : Ասէ կայսրն . ով եղբայր
Աղէքսանդր՝ թերահաւատեցեր զիս . ոչ հաւա-
տաս որ սպանանեմ ես զորդեակն իմ վասն աս-
տուածութեան քո . ոչ թէ զՀնդեսին միայն , այլ
թէ լինէր և տասն՝ սպանանէի զամենեսեան վա-
սն քո :

Յետ այնորիկ կայսրն սպասէր գտանել զժամ պարապոյ՝ զի մի՛ անդ լիցի Թագուհին : Եւ իբրեւ գնաց Թագուհին յեկեղեցին ամենայն աղախնօքն իւրովք, եմուտ կայսրն 'ի սենեակն անդր ուր մանկունքն նորա ննջէին հանդերձեան 'ի միասին . և առեալ զսուր՝ զենեաց զհնդեալն որդիսն ձեռամբն իւրով . և ելից զարիւն նոցա յաման մի. և առեալ եբեր Աղեքսանդրի . և ասաց շուտով լուացիլ :

Եւ իբրև լուացաւ՝ նոյն ժամայն ճեղքեցաւ մարմինն , և անկան որպէս կեղեւանք 'ի նմանէ և սրբեցաւ մարմինն նորա . և եղև փափուկ իբրև զմարմին տղայի : Եւ տեսեալ Ութփիլին՝ ճանաչեաց զնա . և անկան զպարանոցաւն միմեանց և համբուրեցին զմիմեանս : Եւ ասէ Ութփիլըն . ով Աղեքսանդր՝ օրհնեալ եղիցի ժամն այն որ սպանեցի զորդիքն իմ վասն առողջութեան քո :

Եւ նոյն ժամայն ագոյց նմա զգեստս Թագաւորական . և իւղով անուշիւ եօծ զնա : և ասէ՝ եղբայր իմ , մինչ Թագուհին որ ոչ է եկեալ յեկեղեցւոյն , գնասցես յինէն մղոնս քսան . և առաքեսցես առաջի քո հրեշտակ՝ զի եկեալ հռչակեսցէ զգալուստ քո . և ես մեծաւ պատուով ելանեմ ընդ առաջ քո . և դու եկեալ բնակեսցես ընդ իս 'ի միասին՝ մինչև տէր աստուած բացցէ քեզ զդուռն ողորմութեան : Ասէ Աղեքսանդրոս . բարի է խորհուրդ այդ :

Եւ նոյնժամայն գնաց 'ի գիշերի եւ բազում ամբոխիւք և գնաց մղոնս քսան . և առաքեաց հրեշտակս առ կայսրն զի ծանուսցէ նմա զգալուստն Աղեքսանդրի Թագաւորին 'ի յեգիպտոսէ : Եւ

Թագուհին լուեալ ուրախ եղեւ յոյժ և առէ ցկայս-
րըն․ Եւ դու ընդ առաջ նորա բաղում զօրօք և
ես զինի քո ելից ամենայն աղախնեօքս և ծառա-
յիւք իմովք։ և զմահ տղայոց իւրոց ոչ գիտէր։
Եւ կայսրն ել մեծաւ զօրօք և մեծաւ պատուով
ընդ առաջ նորա․ և Թագուհին զկնի․ և եկին
առ Աղէքսանդր Թագաւորն ։ Եւ տեսեալ զմի-
մեանս՝ անկան զպարանոցէ․ և ցմեծ ժամս համ-
բուրեցին զմիմեանս։ Նոյնպէս և Թագուհին․ և
եկին 'ի պալատն արքունի։

Եւ յորժամ եղեւ ճաշ՝ բազմեցուցին զԱղէքսանդր
արքայն 'ի մէջ իւրեանց․ այսինքն՝ 'ի մէջ Թա-
գուհւոյն և կայսերն։ Եւ Թագուհին յոյժ ու-
րախ եղեւ․ և զուարթ երես և պայծառ սիրտ ցու-
ցանէր նմա ողչափ և կարէր․ և ինքն ձեռամբ
իւրով մատուցանէր նմա ուտել ճաշ։ Տեսեալ
զայն կայսրն՝ առէ ցԹագուհին․ ով սիրելի տի-
կին իմ Փլօրէնդիա․ ուրախ եմ 'ի բանդ զոր դու-
տանես․ և սէր ցուցանես եղբօր մերում Աղէք-
սանդր արքայի։ Ասէ Թագուհին․ տէր իմ, ա-
ռաւել ես քեզ արժան է սէր ցուցանել վասն
դալոյ Թագաւորիս մերոյ Աղէքսանդրի․ քանզի
ոչ այլ ինչ իրաց՝ այլ միայն վասն այն՝ զի 'ի
ձեռն սորա ետ մեզ Աստուած հասանել մեծու-
թեանս այսմիկ ։ Ասէ կայսրն․ ով Փլօրէնդիա՝
լուր բանից իմոց․ տեսե՞ր դու զբորոտն զայն՝ որ
անցեալ յաւուրն նստեալ կայր առաջի մեր․ և
ըմպեաց զինի 'ի սկհւոյն իմմէ․ Ասէ Թագուհին․
տեսի՝ որ ոչ երբէք տեսեալ է իմ այնպէս գարշ
այր և վիրաւորեալ որպէս այրն այն։ Ասէ կայսրն․
այն Աղէքսանդր արքայ ինքն էր որ այժմ 'ի մէջի
մերում նստեալ կայ։ Ասէ ցնա Թագուհին․ քա-



Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
23

լեալ և հեռի եղեալ յԱղէքսանդր արքայէ մերձ
այնպիսի պատուեղն կերպարանք։

Ասէ կայսրն. Ճշմարիտ ասեմ քեզ ով Թագուհի
որ Աղէքսանդր արքայ ինքն էր։ Ասէ Թագու-
հին. եթէ այն էր՝ ապա վասն էր ոչ ասացեր
ինձ։ Ասէ կայսրն. վասն այն ոչ ասացի քեզ որ
չի վշտանայիր։ Ասէ Թագուհին. ապա ին ևլէք ե-
ղև դեղ առողջութեան սորա։ Ասէ կայսրն. յոր-
ժամ ստուգիւ իմացայ որ Աղէքսանդր արքայ
ինքն էր, նոյնժամայն ետու կոչել որչափ որ բժ-
ժիշկ կայր. և նոքա յորժամ տեսին զնա, ասա-
ցին թէ՝ նմա մահաբեր է արբուցած՝ ճար չի լինիր։
Յայնժամ ապաւինեցայ յաստուած և իւր ամե-
նակարող զօրութիւնն. կոչեցի զպատքասս և զկրօ-
նաւորս և զքահանայս. և ետու նոցա պարգևս՝
զի աղօթս արասցեն վասն նորա։

Եւ ես այլ պահօք և աղօթիւք խնդրէի յաս-
տուծոյ տալ նմա առողջութիւն։

Եւ յաւուր միում մինչ կայի յաղօթս և աղա-
չալէի, նոյնժամայն ձայն եղև առ իս և ասաց.
զի՞ աղաչես՝ Աղէքսանդր Թագաւորն ինքնին
գիտէ զդեղ առողջութեան իւրոյ։

Եւ յառաջմանէ արդ եղեալ էր եղբօրս իմում.
և սա յինէն թագուցեալ էր և ոչ ասէր։ Եւ
իմ եկեալ բռնադատեցի զնա. և երդմնեցուցի
մինչև պատմեաց ինձ. և ասաց թէ վասն այն
թագուցի՝ որ յոյժ դժուարին է բանս։ Եւ իմ
հարցաքննեալ թէ որպէս. և նա ասաց. եղբայր
իմ եթէ զհնդկեային որդեակն քո զենցես ձեռամբ
քով և նոցա արեամբն լուասցես զնա, նոյնժամայն
բժշկի։ Եւ իմ սպասէի գտանել ժամ պա-
րապոյ՝ որ սպանանէի զնոսա. և դու յորժամ զը-

նացեր յեկեղեցին , նոյն ժամայն սպանի՝ և արեամբն լուացի . յայնժամ ճեղքեցաւ մորթ նորա և թափեցաւ որպէս կեղևամբք ։ Ապա տեսի և ճանաչեցի զնա . և աղաչեցի նմա բեհեզս թագաւորական . և ասացի՝ գնասցես և հեռասցիս մինչ քանի . և առաքեսցես հրեշտակս որ եկեալ հռչակեսցէ զգալուստ քո . և ես ելանեմ ընդ առաջ քո . և եկեալ բնակեսցուք 'ի միասին ։

Եւ արդ մի թագուհի իմ՝ եթէ յառաջմանէ խնացեալ էիր , տայի՞ր հրաման որ սպանանէի զորդեակսն իմ վասն առողջութեան նորա ։ Այլ թագուհին ընդէ՞ր փորձես զիս . ոչ եթէ զհինգն այլ եթէ լինէր և տասն՝ տայի սպանանել վասն առողջութեան արքայիս իմոյ ։ Զի եթէ հոգի նորա երթայր՝ այլ ոչ դառնայր , բայց որդիքն իմ եթէ մեռան՝ այլ տայ Աստուած ինձ փոխանակ նոցա . քանզի դեռևս ոչ եմ ծերացեալ ։

Զայս լուեալ դայեակք մանկանցն ողբալով մեծաձայն մտին առ մանկունսն 'ի սենեակ անդր ։ Եւ երբև մտին՝ տեսին զմանուկսն որք պար առեալ խաղային և օրհնէին զԱստուած . և եկեալ պատմեցին առաջի կայսերն և առաջի ամենեցուն՝ թէ մանկունքն կենդանի են և երգեն զերգս օրհնութեան ։ Եւ ամենեքեան մտեալ 'ի սենեակն՝ տեսին և փառս ետուն Աստուծոյ . որ այնպիսի սքանչելիս արար առաջի ամենեցուն ։

Գնալն Յու[illegible] կայսերն զօրօք յԵգիպտոս · և ըմբռնելն [illegible] ընդ [illegible] Աղեքսանդրի · և այրելն զԹագուհին ։

Յետ այնորիկ կայսրն բազում զօրս գումարեալ՝ գնաց յԵգիպտոս · և ըմբռնեաց զԹագուհին Աղեքսանդրի · և հրամայեաց հրով այրել ընդ սիրական իւրում ։

Եւ ունէր կայսրն քոյր մի · ետ զնա Աղեքսանդրի 'ի կնութիւն · և արքայ Աղեքսանդր՝ հնազանդեցոյց զերկիրն 'ի ներքոյ ձեռին իւրում · և կայսրն դարձաւ յերկիրն իւր ·

Եւ արքայն Աղեքսանդր՝ խնամութեամբ վարէր զերկիրն իւր · և զթշնամիս իւր զամենայն կոտորեաց ։

Յետ այնորիկ 'ի միտ էած զհայր և զմայր իւր՝ որ ընկեցին զինքն 'ի ծով · և բնակութիւն նոցա՝ էր ընդ հրամանաւ տէրութեան իւրոյ ։ Առաքեաց առ նոսա հրեշտակս և ասէ · թէ այս ինչ օր Թագաւորն գայցէ առ ձեզ և նստիցի ընդ ձեզ 'ի ճաշ ։ Եւ հրեշտակն գնաց 'ի սահմանն այն՝ ուր էին ծնօղք Թագաւորին · և ոչ ոք գիտէր թէ ծնողքն էին արքային ։ Եւ եկեալ առ նոսա հրեշտակն՝ ողջոյն մատուցանէր նոցա յարքայէն Աղեքսանդրէ · և ասէ ցնոսա՝ ով սիրելիք իմ, տեսէք զպատրաստութիւն ձեր · զի տէրն իմ արքայ՝ կամի ընդ ձեզ այս ինչ օր 'ի սեղան նստիլ և ճաշակել ընդ ձեզ ։

Ասէ զինուորն · որ էր հայր Թագաւորին · ով սիրելի իմ օրհնեալ եղիցի ժամն այն յորում աւուր նստելոց է տէր արքայ ընդ մեզ 'ի ճաշ ։

Ապա և մայրն ասէ ցհրեշտակն. այսպէս ասասցես տեառն մերոյ արքայի՝ եթէ ոչ լինի մեզ ցնծութիւն և առաւել ուրախութիւն մեծ քան զայն. որ նստիցի ընդ մեզ 'ի ճաշ. քանզի ծառայք նորա եմք։ Եւ դարձաւ հրեշտակն առ արքայն և ասէ. տէր արքայ՝ ծանուցի զհրամանս քո. և նոքա ուրախ եղեն յոյժ վասն գնալոյն քո առ նոսա։

Յետ այնորիկ ոչ բազում աւուրց՝ եկն արքայն բազում զօրօք առ հայր իւր. և հայրն ել ընդ առաջ նորա։ Եւ իբրև եհաս առ արքայն՝ էջ 'ի ձիոյն և անկեալ երկիր եպագ արքային. և ոչ գիտէր թէ իւր որդին է որ ընկէց զնա 'ի ծով, և արքայն յարոյց զնա 'ի գետնոյն և հրամայեաց դարձեալ հեծանել 'ի ձի։ Եւ նա հեծեալ 'ի ձի՝ երթային երկոքեանն 'ի միասին. մինչև եկին 'ի տուն զինուորին։ Եւ մայրն եւս ել ընդ առաջ նորա. և անկեալ երկիր եպագ նմա. և արքայն յարոյց զնա։ Եւ ասէ մայրն. տէր արքայ՝ ուրախութիւն է մեզ մեծ այսօր. որ տէրն մեր արքայ՝ փառաշուք անձամբն իւրով նստելոց է ընդ մեզ 'ի ճաշ։ Եւ իբրև պատրաստեցաւ ճաշն՝ ասէ զինուորն ցարքայն. տէր արքայ՝ ժամ է ճաշելոյ։ և ել արքայն նստիլ 'ի ճաշ։

Յայնժամ զինուորն եառ 'ի ձեռն իւր ջուր ծառայել արքային. և կինն նորա որ էր մայր արքային՝ առեալ սրբիչ 'ի ձեռն՝ կայր յանդիման արքային։

Եւ արքայն իբրև ետես զայս՝ ծիծաղեցաւ և ասէ ընդ միտս իւր. ահա կատարեցաւ բանն պլուլ-պլուլին. զի ահա հայր իմ և մայր իմ՝ առին ջուր և սրբիչ՝ և սպասեն լուանալոյ ձեռաց իմոց։

Ասէ Թագաւորն ցծառայս իւր · առէ՛ք զջուրն
'ի ձեռանէ զինուորին՝ և զսրբիչն 'ի ձեռանէ կը-
նոջն · և դո՛ւք ծառայեցէ՛ք ինձ:
Ասէ զինուորն ցարքայն · տէ՛ր՝ ընդէ՞ր ոչ համա-
րիս արժանի զմեզ ծառայել քեզ · և եղիցի մեզ
փառք յաւիտենից:
Ասէ Թագաւորն · նստարո՛ւք դո՛ւք՝ քանզի ծերա-
ցեալ էք · և վասն ծերութեան ձերոյ պատուեմ
զձեզ: Եւ երբև բազմեցաւ արքայն 'ի սեղանն,
նստոյց զհայրն 'ի յաջմէ և զմայրն 'ի յահեկէ ·
և նոքա որչափ և կարէին՝ ուրախացուցանէին զար-
քայն:
Եւ յետ ճաշոյն՝ եմուտ արքայն 'ի ներքսագոյն
սենեակն · և հրամայեաց զինուորին և կնոջ նորա՝
մտանել զկնի իւր · և ամենեցուն հրամայեաց ար-
տաքս ելանել և փակել զդուռն: Եւ ասէ ցնո-
սա արքայն · սիրելի՛ք իմ աղաչեմ զձեզ՝ հայցից
ձեզ բան մի և ասացէ՛ք ինձ զճշմարիտն: Ունէի՞ք
զաւակ 'ի վերայ երկրի՝ թէ ոչ · և նոքա ասեն ·
ո՛չ որդի և ո՛չ դուստր:
Ասէ Թագաւորն · ընդէ ո՞չ է ծնեալ ձեզ որդի:
Ասէ զինուորն · ունէաք որդի մի և մեռաւ: Ասէ
Թագաւորն · որպիսի մահուամբ մեռաւ:
Ասէ զինուորն · իւր մահուամբն: Ասէ Թագա-
ւորն · եթէ լուայց որ այլ մահուամբ մեռեալ
է, յայնժամ դարձուցից զատութիւն ձեր 'ի գը-
լուխ ձեր: Ասէ զինուորն · տէր արքայ՝ ընդէ՞ր
քննելով հարցանես վասն որդւոյ մերոյ: Ասէ
Թագաւորն · ո՛չ է առանց պատճառանաց, և կա-
միմ գիտել թէ ո՞րպէս մեռաւ: լուեալ է իմ
եթէ սպանեալ էք դուք զորդին ձեր · և եթէ ոչ
պատմէ՛ք ինձ զստոյգն, մեռանիցի՛ք և դուք: Եւ

նորա լուեալ զբանն արքային՝ անկան 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր՝ և խնդրէին զներումն: Իբրև ետես զնոսա արքայն անկեալ յերկիր առաջի իւր՝ յարոյց զնոսա և ասէ. կարծեմ թէ սպանեալ էք դուք զորդին ձեր: Ասէ ձկնորսն. Տէր արքայ ողորմեա մեզ. էր մեզ որդեակ մի՝ և մեկնեաց մեզ զխօսս պիւլպիւլին. երբ թէ լինելոց էր նորին մեծատան՝ որ ես և մայրն նորա ծառայելոց լինէաք նմա. և մեք լցեալ նախանձու՝ ընկեցաք զնա 'ի ծով:

Ասէ թագաւորն. զի՞նչ չար լինէր եթէ կատարէր. այդպէս. այլ պատիւ և փառք ձեր յաւելուին: Եւ արդ՝ մեզ ծառայութիւն գործեսջիք առաջի աստուծոյ. քանզի յոյժ յիմարութիւն է հակառակ լինել կամացն աստուծոյ: Յետ վճար խօսիցն՝ ասէ ցնոսա թագաւորն. ով քաղցրիկ ծնողք իմ ես եմ Աղէքսանդր որդին ձեր զոր ընկեցէք 'ի ծով: Եւ աստուած ողորմութեամբն իւրով փրկեաց զիս և հասոյց այսպիսի մեծութեան. և կատարեցաւ խօսքն պիւլպիւլին՝ որ հայրդ իմ ջուր առեալ 'ի ձեռսն լուանալ զձեռս իմ. մայրդ իմ զսրբիչն. և խօսքն աստուծոյ ոչ խափանեցաւ: Եւ նոքա լուեալ զայս՝ երկեան յերկիւղ մեծ. և անկան 'ի վերայ երեսաց իւրեանց առ ոտս որդւոյն իւրեանց. և խնդրէին ներումն և ողորմութիւն: Ասէ ցնոսա թագաւորն. մի երկնչիք՝ զի ոչ ինչ լինի ձեզ չար. և եթէ ոչ էիք ընկեցեալ զիս 'ի ծով, ոչ հասանէի այս մեծութեանս:

Եւ համբուրեաց զհայր և զմայր իւր և մայրն յաւուել խնդութենէն լայր:

Ասէ ցնոսա թագաւորն. մի լայք՝ այլ քաջա-

լերացարութք. և ամենայն ինչ որ 'ի ներքոյ ձեռին
իմոյ է՝ հնազանդ լիցի ձեզ:

Եւ առեալ զնոսա մեծաւ պատուով և ախրախողմ կատօր՝ դարձաւ յետս 'ի քաղաքն 'ի պալատն իւր: և եկին ծնողքն նորա 'ի պատուի զամենայն աւուրս
կենաց իւրեանց.

Եւ իբրև վճարեաց դիոկղետիանոս զաւուրս իւր, դարձեալ առ կայսրն և ասէ. տէր արքայ և հայր իմ սիրելի՝ 'ի միտ առեր զբանս իմ զոր ասացի: Ասէ ցնա կայսրն. այո 'ի միտ առի: Ասէ որդին. այսպէս թէ և ինձ շնորհէր աստուած իմաստութիւն, ես ոչ հանէի 'ի ձէնջ զտէրութիւն ձեր. և ոչ պակասեցուցանէի զպատիւ ձեր. այլ օրբարօրէն յաւելուի զպատիւ ձեր. որպէս նմա արար
ծնողաց իւրոց:

Ասէ կայսրն. ով քաղցրիկ որդեակ իմ լաւ առակ ասացեր մեզ: Այսուհետև 'ի քեզ յանձնեմ զթագաւորութիւնս իմ. և ես բնակիմ առանձին, վասն զի ծերացեալ եմ: Ասէ որդին. Հայր իմ՝ այդ լիցին իրաւունք թագաւորին: Եւ հրամայեաց կայսրն դատաւորաց քննութիւնս առնել, Ասեն դատաւորքն ցկայսրն. տէր արքայ զի՞նչ քննեսցուք զդա. զի ինքնին բերանով իւրով խոստովան եղև: Եւ այլ մեծագոյն վկայ
սիրաւն իւրոյ գտաւ կանացի զգեստս:

Եւ նոյնժամայն հրամայեաց որդի արքային՝ որ կապեցին զթագուհին ամեհի ձիոյ ագի. և քարշել փողոցէ 'ի փողոց տարեալ այրեցին ընդ սիրաւն իւրում: Եւ ամենեքեան օրհնէին զաստուած. որ զանպարտն փրկեաց և զթագուհին
պատժեաց:

Յետ այնորիկ ոչ բազում աւուրց մեռաւ կայ-

կայսրն ․ և թագաւորեաց 'ի տեղի նորա որդի ար-
քայն Դիոկղետիանոս ․

Նա զդպրապետսն մեծացոյց եւս քան զեւս յոյժ ։
Նա իմաստութեամբ վարէր զամենայն երկիրն որ
'ի ներքոյ տէրութեան իւրոյ էին ․ և ամենեքեան
օրհնէին զաստուած և գովէին զիմաստութիւն Դիո-
կղետիանոսի կայսերն ․ և սիրէին զնա որ այն-
պիսի քաղաքավարութեամբ վայելէր զաթոռն իւր ։
Նա կեցեալ բարի կենօք՝ ծաղկեալ որդւովք և
դստերօք՝ լի՛ աւուրբք հանգեաւ խաղաղութեամբ ։
Նա քրիստոսի մարդասէրին՝ փառք յաւիտեանս
յաւիտենից ամէն



Ա Բ Գ Դ Ե

Զ Է Ը Թ Ժ

Ի Լ Խ Ծ Կ

Հ Ձ Ղ Ճ Մ

Յ Ն Շ Ո Չ

Պ Ջ Ռ Ս Վ

Տ Ր Ց Ւ Փ

Ք

(Ա.)

Սուրբ երրորդութիւնն փրկէ զքեզ յամենայն փորձութենէ. փարատեսցէ ցաւ սրտի քո. մեծ ուրախութիւն և շնորհ յաստուծոյ. և դու բարձանաս մեծ պատուով: Ամ յոր-ժամ ընծայեցար ՚ի ծնողաց քոյ՝ մեծ հիւանդու-թիւն կրեցեր. և հալածական եղար ՚ի յազգա-կանաց քոց և ՚ի բարեկամաց: Բայց պատրաստ կացի զանձն քո ՚ի դաւաճանաց և յանօրինաց. զի փալթորակ կայ առաջի քո. և չարախօսքն քո շատ են. դնա՛ աղօթ.ք սրտի առ Աստուած որ փրկէս ՚ի նոցանէ. և ՚ի խորհուրդս քո զինչ որ ըղձա-նեալ ես և կամիս՝ այնպէս կատարի. վիճակ բա-րի եղաւ քեզ:

(Բ.)

Բանն Աստուած մանկըն՝ որ ՚ի հօրէ առաքեցաւ, նա՛ է յոյս նեղելոց. որ փրկէ զքեզ յամենայն փորձութենէ. փարատեսցէ ցաւ սրտի քո. և կատարեսցէ վճիռն քո ՚ի բարին. զինչ բան որ՝ բռնես Աստուած յաջողէ քեզ և առաջնորդէ: Ար-

ւոմ զխորհուրդ քո․ Թէ վաճառ ունիս՝ շահիս․ Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս․ Թէ հեռաւոր ունիս՝ բարով տեսանես․ Թէ հիւանդ ունիս՝ շուտով ողջանայ․ զոր կորուսեալ ես՝ գտանես․ աքրահամու վիճակնէ ։

(Գ․)

Գնա՝ մինչ հարցանէր՝ զի բազում նեղութիւն ունիս․ և տրտմութիւն կայ առաջի քո․ և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ․ և եհաս 'ի վերայ քո նեղութիւն մեծ․ չկայր քեզ օգնական և ոչ սիրելի․ զի 'ի հայրենական ժառանգութենէ զրկեցար․ և այժմ տարակուսեալ ես փասըն կենացդ ։ Արդ աղաչեմ զաստուած և ուխտ կատարեմ նմա․ որ կործանէ զթշնամին քո․ և հանէ զքեզ 'ի նեղութենէ 'ի լոյս․ և քո սրտի կամքն 'ի բարին կատարի․ 'ի ջրէ պատրաստ կաց։ յունանու վիճակն է ։

(Դ)

Դու ով սիրելի՝ վասն այդ բանիդ հարցանես և հոգաս հանապազ․ Աստուած փրկէ զքեզ և հանէ յամենայն նեղութենէ զանձն քո․ և յանկարծակի 'ի տեղւոյ մի բաղձալիս՝ ուստի ակն ոչ ունիս․ և բանայ Աստուած դուռն բարի։ 'Ի ճանապարհ երթաս և բարով գաս․ և թշնամին քո յամօթ լինի։ հեռաւոր ունիս՝ տեսանես․ վիշտք մահու տրտմեցուցին զքեզ՝ բայց մոռանաս զայն․ փախել կամիս 'ի տեղւոջէ 'ի տեղ, սակաւ մի համբերէ և ապա փախիցես․ և բարի գտանես․ մե-

ծանիսս և ուրախ լինիս · յուսամ առ Աստուած որ չվճառնի · ցանկելի վիճակն է ։

(Ե)

Երանի՛ է քեզ ով սիրելի՛, զի Աստուած է քեզ օգնական · բայց դու շատ ես աշխատել և չեղաւ քեզ հանգստութիւն · և չեղաւ քեզ օգնական · ոչ եղբայր և ոչ սիրելի ։ Որպէս գալին ծովու կու ծփաս · և քո կենացդ հանգիստ չես գտաներ · ով սիրելի տուր փառս Աստուծոյ զի ուրախութիւն հասանի քեզ յԱստուծոյ և առողջութիւն · թէ փոխիս ՚ի տեղացդ բարոյ հանգիստս · և ամենայն դժուարութիւն ՚ի բարին դառնայ · ՚ի յաւազաց պատրա՛ստ կաց · որոգայթ կուցուցանէ · ՚ի յընկերաց և ՚ի մանկանց պատրաստ կացիր ։ սուրբ գրիգորի վիճակն է ։

(Զ)

Զարմացեալ եմ ով այր՝ զի երկմտեալ ես և ՚ի թշնամեաց սասանիս · և խորհիս վասն մեծանալոյ · և ոչ խորհիս առնել զաղաչանս Աստուծոյ ։ աղօթից ծուլ կու կենաս · վասն այնորիկ եկն ՚ի վերայ քո նեղութիւն մեծ · և թշնամին քո զօրացաւ ՚ի վերայ քո ։ Գնա՛ աղաչեա՛ նմա զի հանցէ զքեզ յամենայն նեղութենէ · և ազատես յորոգայթէ · վաճառ ունիս՝ սիրով շահիս · մատթէոսի վիճակն է ։

(Ժ)

Ո՛վ այր՝ անուս զոր խորհիս և ուրախ լինիս. և ազատիս 'ի չարէ. զնա գոհացիր զոյ: բայց մարդ մի կայ որ մտօք չար կու խորհի քեզ, բայց ա՜ծ հանէ զքեզ յամենայն նեղութենէ և որոգայթէ. զի դու բարի ես և ա՜ծ բարի առաջնորդէ քեզ: զինչ 'ի ձեռքդ բան բանես՝ յաջողէ քեզ Աստուած, զոր ցանկաս՝ տեսանես. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հիւանդ ունիս ողջանայ. թէ տուն շինես կամ հողագործութիւն առնես՝ բարի գայ և բազակով կատարի: 'Ի կախարդ կանանց պատրանօք կայ. մօլնէ ոք վիճակին է:

(Ի)

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութեան եկն 'ի վերայ քոյ. և արտաքսեցար յազգականաց քոց և 'ի բարեկամաց. և այժմ թշնամիք եղեն քեզ. և եղև աւերումն տան քո. և շրջեցար դու 'ի վերայ երկրի: Այլ գոհացիր զաստուածոյ. զի գալոց է քեզ ուրախութիւն մեծ, և զոր ուզես տեսանես. թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս. զինչ բան առնես՝ յաջողէ քեզ Աստուած: զուխտն զոր խոստացեր ես մի կատարէ: թէ վաճառ առնես՝ շահիս. այլ արտահետս կացիր: սեթայ վիճակին է:

(Թ)

Ո՛չ յառաջնեցար 'ի բարին. զոր ունէիր՝ զրկեցար. ո՛չ կայր քեզ օգնական. ո՛չ եղբայր և ո՛չ սիրելի։ Արդ աղաչեա՛ զաստուած որ փրկէ զքեզ և հանէ 'ի նեղութենէ զանձն քո. Բայց դու անլսաւորդ ես, և աղօթից ծուլ կը կենաս, վասն այնորիկ եկն 'ի վերայ քո նեղութիւնն. և դու շրջեցար յոտար երկիր՝ բայց ո՛չ խրատեցար։ Այլ թէ ո՛չ դառնաս 'ի կամս Աստուծոյ. գայ 'ի վերայ քոյ նեղութիւն. և լինի յափշտակումն ընչից քոց և աւերումն տան քոյ. և ամենայն բան զինչ որ բռնես՝ ո՛չ յաջողի. և զոր ուղես՝ ո՛չ տեսանես. զոր կորուսեալ ես՝ ո՛չ գտանես։

Այլ թէ դառնաս 'ի կամս աստուծոյ, նա փակած դուռն բացուի քեզ և յաւելու բարիքն քո։ Գնա՛ աղօթք արա՛ առ աստուած և ուխտ կատարէ. որ այլ չի գործես զչարիս. և ազատիս 'ի տանջանացդ։ սուրբ գրիգորի վիճակն է.

(Ժ)

Որ ինչ 'ի ձեռքդ բան բռնես, յաջողէ քեզ Աստուած. և արա՛ զխորհուրդ սրտի քո։ Աւետիս տուր անձին քո՝ զի ուրախանալ կամիս 'ի բանդ որ բռնել ես։ 'Ի ձեռաց քոյ ելանէ ողորմութիւն. և բազումք կերիցեն 'ի վաստակս ձեռաց քոց. Այլ հիւանդացար շատ. որ 'ի մահ գնացեր. և Աստուած եհան զքեզ 'ի նեղութենէ և ապրեցոյց։ 'Ի հեռաւոր տեղաց մի ուստի ալին ոչ ունիս՝ բարի դալոց է քեզ. և տրամու-

թիւն քո՝ ուրախութիւն փոխարկի․ զի դու բա_րի ես՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ․ և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ ։ Բայց 'ի սի_րելեաց քախտ ոչ ունիս․ վասն այնորիկ պա_րապ կացիր՝ զի 'ի դուր լեզու անկանիս և տա_ղանք տաս ։ Գնա՛ աղաչեա՛ զա̃ծ և ուխտ կա_տարեա՛ նմա․ զի ողորմութիւն նորա եկեսցէ 'ի վերայ քո։ Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս՝ և բարւոյ հասանիս ։ սողոմնի վիճակն է ։

(Ի)

Ո՛վ այր՝ ապաւինեալ ես 'ի խորհուրդ քո և մո_ռանաս զուխտն Աստուծոյ։ զի տրտմութիւն քո՝ ուրախութիւն փոխարկի ․ 'ի հեռաւոր տեղաց՝ ձայն աւետեաց լսես․ կամ հեռաւոր մարդ աւե_տանես ․ և Աստուծոյ ողջութիւն գտանես ․ և դարձեալ սիրելեաց քոց ոչ պակասի։ բայց ծնողաց քոց դիմադարձ մի՛ լինիր ․ նա զինչ որ ուզես յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած ։ Եւ փոխիլ տեղւջէ 'ի տեղ՝ բարի լինի քեզ ․ և յամենայն դժուարութենէ ազատիս։ և զինչ խորհուրդ զոր ունիս և բան որ բանես՝ նա գնա՛ արա ․ շատ շահ և բազում առնես ․ և վախճան քո 'ի բարի օր լինի։ ղազարու վիճակն է։

(Լ)

Ո՛վ այր՝ կուտեցանեմ զքեզ և զխորհուրդ քո որ նմանիս ալեաց ծովու ․ նմանիս ճնճղկի որ ան_կանի 'ի ձեռս որսողաց․ նոյնպէս և դու 'ի ձեռս բանսարկուաց անկանիս ․

Գնա՛ աղաչեա՛ զաստուած եւ ուխտ կատարեա՛ նըմա ․ որ փրկէ զքեզ տէր աստուած քո յամենայն որոգայթէ եւ 'ի նեղութենէ ․ բանայ քեզ զդուռն բարւոյ եւ բռնակաց ․ այլ զուխտն զոր խոստացեր ես՝ կատարեա՛ ։ Ապա թէ ոչ դառնաս 'ի կամս աստուծոյ , դայ 'ի վերայ քո նեղութիւն ․ եւ լինի յափշտակումն տան քո եւ ընչից քոց ։ Եւ դու հալածական լինիս ․ եւ վիշտք մահու տրտմեցուցանեն զքեզ ․ եւ յօտար երկիր վտարիս ։ Եւ թէ դառնաս 'ի կամս Աստուծոյ , նա փակած դուռն մի բացուի քեզ ․ եւ զոր ինչ 'ի ձեռքդ բան բռնես՝ յաջողէ քեզ Աստուած ։ Այլ պատրաստ կաց 'ի ջրոյ եւ 'ի գազանաց ․ եւ 'ի վատ գործոց ։ յոնանու վիճակն է ։

(Խ)

Ով մարդ՝ ողորմութիւնն Աստուծոյ լինի ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց ․ բայց 'ի յօտար աշխարհ վտարեցար ։ զոր ուզես՝ տեսանես ․ զինչ կամիս առնուս ․ զոր կորուսեալ ես գտանես ․ այլ յընկերայդ բախտ ոչ ունիս ․ այլ 'ի յԱստուծոյ շատ շնորհ ունիս ․ եւ զաւակ մի շնորհաւոր լինի քեզ ։ Բայց վիշտք մահու տրտմեցուցին զքեզ ․ իսկ բան եւ խորհուրդ զոր արեր ես՝ գնա արա՛ շահիս եւ բարի գտանես ․ այլ 'ի քո ազգէն ոչ շահիս ․ Եւ 'ի քո վաստակէն բազումք կերիցեն ․ եւ պարգեւս 'ի յԱստուծոյ առնուս ։ յերկան կնկանէ մի փոթորակիս ․ յիշոցաց եւ 'ի կախարդաց պատրաստ կացիր ։ սուրբ մարտիրոսի վիճակն է ․

(Ծ)

Ո՛վ այր դու՝ նման ես գետոյ որ երթայ յերկար և ոչ կայ նմա դադարումն։ Դու հալածական եղար և 'ի հայրենական ժառանգութենէն զրկեցար․ և 'ի ծնողաց քոց ոչ խնդացեր․ չարաբախտ ես որ ամէն մարդ զրկեալ է զքեզ։ Արդ աղաչեա՛ զա՟ծ և ուխտ կատարեա՛ նմա․ որ օգնէ քեզ Աստուած և փրկէ զքեզ յորոգայթէ։ Դու մի՛ տրտմիր զի բանիդ դժուարութիւնն 'ի լոյս ելանէ․ և քեզ ձայն աւետեաց գայ և դու խնդաս և ուրախանաս․ յանկարծակի բաղակ գայ քեզ՝ ուստի ա՛յն ոչ ունիս ։ սեթայ վիճակն է։

(Կ)

Ո՛վ սիրելի՛ կակղացո՛ զսիրտ քո և պահեա՛ ըզկամս Աստուծոյ․ և տո՛ւր հաց քաղցելոց և ջուր ծարաւեաց։ Ապա թէ ոչ դառնաս 'ի կամս քո․ նա գայ 'ի վերայ քո նեղութիւն մեծ և յափշտակումն ընչից քոց և աւերումն տան քո․ և ամենայն բան զոր ինչ բռնես ոչ յաջողի․ և որում ցանկաս ոչ հասանիս․ և զոր կորուսեալ ես ոչ գտանես։ Ապա թէ դառնաս 'ի կամս ա՟յ և զպատուիրանս նորա պահես, նա ողորմութիւնն Աստուծոյ հասանէ 'ի վերայ քո․ և յաւագաց մեծարիս․ և դուռ մի փակած բացուի քեզ․ և յաւելու բաղակն քո։ Որպէս արեգակն 'ի վերայ արարածոց՝ այնպէս Աստուծոյ բարին հասանէ 'ի վերայ քոյ․ և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս․ աչք աւագաց քաղցրանայ 'ի դիմացդ և տարիս

բարով գայ քեզ ։ յախորայ վիճակին է ։

(Ո)

Ով մարդ՝ աւետիս տամ քեզ ․ զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ ․ և ահա փրկեաց զքեզ յամենայն որոգայթէ ։ Ունիս ցանկալի ամենեցուն ․ և ոչ լինի պակասութիւն ըն_չից քոց ․ և տայ քեզ Աստուած փառք և մե_ծութիւն ։ բայց պատրաստ կաց ՚ի լեզուէ մի որ չփոթորակիս ․ զի հանապազ ընդ քեզ է այն լե_զուն ։ Գնա՛ աղաչեա՛ զաստուած և ուխտ կա_տարեա՛ նմա որ ազատէ ՚ի չարէն ․ զինչ խոր_հուրդ որ ունիս՝ արա՛ և մի՛ վախեր ․ զինչ դու ուզես՝ այնպէս կատարի ։ բարւոյն վիճակին է ։

(Չ)

Ով մարդ՝ ձայն ցնծութեան և ուրախութեան մատուցանեմ քեզ ․ զի դու վախեալ ես և տա_րակուսեալ ․ և տառապեցար յազգաց և ՚ի բարե_կամաց քոց ․ և ազգն քո նենգաւոր եղեն քեզ ․ և շատ էրաց զրկեցար ։ Տուն քո հայրենի՝ դար_ձաւ ՚ի յաւեր ․ և դու շրջեցար ՚ի վերայ երկրի ․ և սուգ մահու տրտմեցոյց զքեզ ։ այլ այժմ փառք տուր Աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ու_րախութիւն մեծ ․ բազմանայ ըղձալին քո ․ ոսկին և արծաթն ․ զինչ ուզես կատարի ։ Այլ պատ_րաստ կաց ՚ի յանօրինաց և ՚ի պոռնկութենէ որ ՚ի փոթորակ չանկանիս ․ թէ հեռաւոր ունիս գայ ․ և այլ զինչ խորհուրդ ունիս կատարի ։ մախէսի վիճակին է ։

(Գ.)

Ո՛վ մարդ՝ պարգևեցաւ արձակումն կապանաց քոց․ որպէս մոգքն որ եկին յարևելից և եկեալ առ Քրիստոս գտին զնա և ուրախ եղեն, նոյնպէս և դու ուրախանաս 'ի բանս քո և 'ի խորհուրդ որ բանեալ ես։ Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս և բարի գտանես։ Որպէս մովսէս յաղթեաց փարաւոնի և եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթես թշնամեաց քոց․ և զինչ խորհեր ես գնա արա․ 'ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած․ մոգուց վիճակն է․

(Ո՛)

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ տեսիլ քեզ․ եղար դու 'ի մանկութենէ քումմէ հալածական․ և պանդխտութիւն կրեցեր զամենայն աւուրս կենաց քոց․ և սատանեցար յազգաց և 'ի յանօրէնաց․ և ազգն քո նենգաւոր եղեն քեզ։ Ո՛վ սիրելի մի՛ վախեր՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն և կատարեցաւ վիճակս քո 'ի բարին։ զինչ ուզես 'ի յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած․ Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս։ այլ 'ի կանանց դրացեաց պատրաստ կաց զի շատ բանբասանք լսես։ դանիէլի վիճակն է։

(Ա.)

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ․ արդ 'ի չարդ յիմարեալ ես՝ և ընկերոջդ չար առնես․

և ամենեցուն վնաս խորհիս։ Ընկեա՛ զնենգութիւն ՚ի մտաց քոց. և ընկերոջդ չար մի՛ խորհիր. որ չանկանիս ՚ի մեծ նեղութիւն. և պատուհաս գայ ՚ի վերայ քո։ Ո՛չ խնդացե՛ր ՚ի ծընողաց և ո՛չ ՚ի զաւակաց. և ամենայն բան զինչ որ առնես՝ ո՛չ յաջողի քեզ։ Ապա թէ դառնաս ՚ի կամս Աստուծոյ՝ և ընկերոջդ և ամէն մարդոյ նենգութիւն ոչ առնես, նա ծագէ Աստուած զողորմութիւն իւր ՚ի վերայ քոյ. և ո՛չ լինի պակասումն ընչից քոց. և մեծաւ պատուով վախճանիս։ Յաբեթայ վիճակն է.

(Յ)

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի կատարեցաւ վիճակս քո ՚ի բարին. և դու խորհուրդ ունիս ՚ի սիրտդ. ո՛չ կարես բռնել և ո՛չ թողուլ. մի՛ վախեր դնա՛ արա. զի խորհուրդ քո ՚ի բարին կատարեցաւ. Որպէս լուսինն որ զխաւար գիշերն լուսաւորէ՝ նոյնպէս լուսաւորի խորհուրդ քո որ բռնել ես. և հասանէ քեզ բռզակ ՚ի յԱստուծոյ. և ում ցանկաս հասանիս. և յաւագաց բարի գտանես. և աւետեաց ձայն լսես և խընդաս դնա՛ աղաչեա՛ զաստուած որ խորտակէ զքո թշնամին. Սուրբ գրիգորի վիճակն է.

(Ն)

Ո՛վ մարդ՝ ահա՛ ՚ի նենգութիւն տեսանեմ ըզքեզ. զի մեծամեծ փաթերակ կայ առաջի քո. և ՚ի նեղութիւն անկանիս. Բազում խորհին քեզ չարիք և դու ո՛չ իմանաս զկորուստ անձին

քո. և զի ո՛չ տեսանես զերեսն Աստուծոյ՝ վասն այնորիկ եկն 'ի վերայ քո նեղութիւն: զինչ խորհուրդ ունիս ո՛չ կատարի. Թէ 'ի ձմնայարհ երթաս՝ ո՛չ լինի քեզ բարի: Եւ թէ դատնաս 'ի կամս Աստուծոյ և զուխտն զոր խոստացեր ես կատարես, նա փակած դուռ մի բացուի քեզ. և յուսոյ ըղձակն քո:

(Ր)

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կու տեսանեմ առաջի քո. առնուս պարգևս 'ի մեծամեծաց. ուրախանաս և բարւոյ համբերես. խնդաս 'ի զաւակէ և 'ի կնոջէ քումմէ. և լինիս յիշատակ ծընողաց քոց: Եւ զինչ որ խնդրես 'ի յԱստուծոյ՝ ստանաս. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հեռաւոր ունիս՝ գայ որ տեսանես: Թէ հիւանդ ունիս՝ ողջանայ. և օր քան զօր աճէ կ լինի քեզ:

(Ս)

Ո՛վ մարդ՝ պայծառ է քեզ յամենայն ժամ զօրանալ քոյ. զի թէպէտ սրտմտցար, բայց դարձեալ ուրախանաս և շնորհն Աստուծոյ հասանէ 'ի վերայ քո: Եւ պատրաստ կաս 'ի յանօրէնաց և 'ի գազանաց. զի փոխթորակ կայ առաջի քո: բայց պարգև և շնորհ 'ի յԱստուծոյ առնուս. և յորդւոց խնդաս. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասումն ընչից քոց: Թէ փոխես 'ի տեղւոջէ 'ի տեղ՝ բարւոյ հանդիպես. ձայն աւետեաց լսես. և հեռաւոր մարդ տեսանես. քո մահն 'ի բարի օր լինի. և երազն

որ տեսեր ես բարի է. աբրահամու վիճակն է:

(Ձ)

Ո՛վ մարդ՝ փառաւորես յամենեցունց. և անուամբ բարի իշխանութեան. որ թշնամին քո յամօթ լինի. և յօտար երկիր գնաս. և անուանս պարգևս. և յամենայն դժուարութենէ ազատիս. և զոր ուզես՝ բարով տեսանես. և ում ցանկաս՝ հասանիս: Ա.ՄԼ պատրաստ կայ 'ի գազանաց և 'ի բարձր տեղաց. 'ի կախարդաց և 'ի պնտերես վնասէ՝ որ չար է փոխթառակեր: Գնա՛ աղաչեա՛ զա՛ծ և ուխտ կատարեա՛ նմա. որ ազատէ 'ի չար չարէ. և բանայ քեզ տէր Աստուած դուռն բարի և բաղակաց: սեթայ վիճակն է:

(Պ)

Պարգև բարեաց տացէ քեզ Աստուած. չարն հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն Աստուծոյ: Դու դու ես իմաստուն որ խրատ տաս ամենեցուն. բայց պահեա՛ զանձն քո 'ի չարկամաց. և զոր ինչ գործես և բան որ խօսես՝ 'ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած. բայց 'ի սիրելեաց քաղց ո՛չ ունիս: Աստուած ապաւինէ որ կործանէ զքո թշնամին. և հանէ զքեզ յամենայն յորոգայթէ. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասումն ընչից քոց. և և զինչ խորհես՝ կատարի 'ի բարին: մելքիսեդի վիճակն է:

(Շ.)

Ո՛վ մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար. զմտաւածես և ոչ կարես կալ 'ի վերայ մեկ խորհրդի. դու մի՛ արտմիր զալոց է քեզ ուրախութիւն մեծ՝ ուստի ակն ոչ ունիս. զի դու բարի ես՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ: Փոխանակ տրտմութեան՝ ուրախութիւն լինի քեզ. բարի և շընորհ 'ի յԱստուծոյ առնուս: Գնա՛ արա՛ զխորհուրդ քո. թէ վաճառ առնես՝ շահիս. թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս: այլ 'ի վերայ բախտիդ քննութիւն առնես և հարցանես. մեծ բանայ քեզ զդուռն բարւոյ. և յաւելու ըզ զակն քո: մատթէոսի վիճակն է.

(Ո.)

Ո՛վ մարդ՝ սասանեցար յաղգաց և 'ի յանօրինաց. հաստատ 'ի վերայ քո արտմութիւն. և եղև աւերումն տան քո 'ի բարեկամաց քոց. և խորհուրդ քո հանապազ 'ի կորուստ եղանէ: Ո՛վ այր՝ մի՛ հոգար վասն այդ բանիդ զի շուտ գայ 'ի վերայ քո բարին. և տէր Աստուած հանէ զքեզ 'ի խաւարէ 'ի լոյս. և քո մուրատին հասանիս: Նայլ պատրաստ կաց 'ի յընկերացդ՝ զի բախտ ոչ ունիս. և կայ մարդ մի չարակն՝ որ մտօքն չար կու խորհի քեզ. 'ի կախարդաց պատրաստ կաց: ադամայ վիճակն է:

(Յ)

Ո՛վ մարդ՝ վասն կենաց քոց ընդէ՞ր հոգցանես. զի՞նչ յիմարեալ ես և չար խորհիս. և ամենեցուն միտս ածնես. 'ի տեղւոջէ 'ի տեղ փոխիս՝ և ուրեք ո՛չ հաստատիս, զոր կորուսեալ ես ո՛չ գտանես: Ընկեա՛ զնենգութիւն 'ի մտաց քոց. ընկերոջ և ամէն մարդոյ չար մի՛ խորհիր. Թէ չըլլես՝ փաթերակիս ; գնա՛ աղաչեա՛ զաստուած որ ազատէ 'ի շատ չարէ:

(Վ)

Ո՛վ սիրելի՛ տուր զփառս Աստուծոյ. զի զայոց է քեզ ուրախութիւն ուստի ամէն ոչ ունիս: Եւ 'ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ. և զաւակ մի խնդամիտ տեսանես. և տայ քեզ Աստուած առողջութիւն: Ա՛յլ պատրաստ կաց 'ի բոլորերս մարդոյ մի և 'ի չարակն կնոջէ. որ մտօքն չար կու խորհէին քեզ. պատրաստ կաց 'ի նոցանէ որ չանկանիս 'ի փորձութիւն. և զինչ բան բանես՝ 'ի բարին առաջնորդէ քեզ տէր մեծ. 'ի հեռաւոր տեղաց ձայն աւետեաց լսես. կամ հեռաւոր մարդ տեսանես. գնա՛ արա զխորհուրդ քո:

(Տ)

Ո՛վ մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ քեզ. զի դու վախել ես և տարակուսեալ ; զրաբախտ ես: զոր կուտաս՝ կամով կու թափես. ում բարի կտանես՝ նա քեզ չար կտանէ. Ա՛յլ յա-

ղօթից և աղաչանաց դու մի՛ դադարիր· գալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս ։ Հեռաւոր ունիս գայ· թէ աղքատ ես՝ հարստանաս· թէ հիւանդ ունիս ողջանայ· թէ երազ ես տեսեր բարի է ։ ղուկասու վիճակն է ։

(Ր)

Ո՛վ մարդ՝ ցնծութիւն և ուրախութիւն տամ քեզ· զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ· և ում ցանկաս հասանիս։ բայց թշնամիքն քո շատ են· այլ դու մի՛ վախեր 'ի նոցանէ՝ զի Աստուած է քեզ օգնական· բայց և 'ի կնոջէ բախտ ոչ ունիս։

Պատրաստ կաց որ 'ի զնդան չի մտանես· խրատէ տուգանք տաս ։ այլ իբր զոր կորաւ քեզ՝ գըտանես ։ 'Ի Ճանապարհ կամիս երթալ և երկըմիտ ես· գնա և մի՛ վախեր· ընդ որ երթաս՝ բարով դաս ։ զինչ բան որ բռնես՝ յաջողէ քեզ Աստուած· և զինչ խորհուրդ որ ունիս՝ Աստուած բարին կատարէ· և որ քան զոր աշէկ լընիս· մարկոսի վիճակն է ։

(Ց)

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կու տեսանեմ առաջի քո· առնուս պարգևս 'ի մեծամեծաց· ուրախանաս և բարւոյ հանդիպիս։ Խնդաս 'ի զաւակէ և 'ի կնոջէ քումմէ· և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց ։ թէ փոխիս 'ի տեղացդ՝ ոչ հաստատիս · զի ամենեքեան նենգաւորք են քեզ ։ Եւ 'ի մարդոյ բախտ ոչ ունիս · այլ քո բա-

րին 'ի յԱստուծոյ է . և տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն անչափ . և յամենայն դժուարութենէ ազատես . և երազն որ տեսեր ես՝ 'ի բարին կատարի :

(Ւ)

Ով մարդ՝ չարին հեռացիր 'ի քէն և բարին մօտեցաւ . այլ սատանեցար 'ի յազգաց և յանօրէնաց . և ազգն քո նենգաւոր եղեն քեզ : Պատրաստ կացիր 'ի թշնամեաց քոց . զի կայ մարդ մի չարակն և կին մի կախարդ՝ որ մտօքն չար կու խորհին քեզ . և 'ի յընկերացդ փաթերակ կայ առաջի քո : դատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերէ : աբրահամու վիճակն է :

(Փ)

Անզգամ մարդոյ մի՛ լինիր սիրելի որ չի փաթերակիս . և 'ի ձեռացդ քո ելք է կորել . մի՛ տրտմիր՝ 'ի քեզ դառնայ : Զինչ խորհուրդ ունիս կատարէ Աստուած . բայց սակաւ մի համբերէ . զի պինդ մարդ մի կայ՝ որ միտօքն չար կու խորհի քեզ . թէ պատրաստ կենաս խրմէն՝ ազատիս 'ի չարէն : Կամէր գալ 'ի վերայ քո տրտմութիւն՝ բայց Աստուած խափանեաց . և բազում ուրախութիւն կայ առաջի քո : Նման ես աբրահամու . որ Աստուած զինքն սիրեաց և 'ի տրտմութենէ ազատեաց . նոյնպէս և դու ազատիս յամենայն չարէ : սահակայ վիճակն է :

(Բ)

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ որ մէկ մի կու յաղթէ քեզ. և լեզուաւ և սրտովն չար կու խորհի քեզ. կամ հոր մի կու փորէ քեզ. այլ ո՛չ կարէ վնաս տանել քեզ։ Գնա՛ ուխտ կատարէ Աստուծոյ՝ որ շատ չարէ փրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ, այլ Աստուած զարձոյց զչարն 'ի գլուխն իւր։ Նման ես դու Իսահակայ. որ հայր իւր կամէր զենուլ զնա, այլ Աստուած օգնեաց նմա և փրկեաց զնա. և բազում մեծութեամբ և փառաց հասաւ. Նոյնպէս և դու ուրախանաս կամօքն Աստուծոյ։ սուրբ յակոբայ վկայն է։



| | | |
|---|---|---|
| Խոյ | Ցուլ | Երկաւոր |
| Խեցգետին | Առիւծ | Կոյս |
| Կշեռ | Կարիճ | Աղեղնաւոր |
| Այծեղջիւր | Ջրհոս | Ձուկն |
| Հրատ | Արեգակն | Լուսաբեր |
| Փայլածու | Լուսին | Երեւակ |

Լուսնթագ

### * Խոյն:

Ո՛վ մարդ՝ լոյսն աՀագին փառաց և շառաւիղն անձուաց, ծագեսցի 'ի վերայ քո որպէս արեգական 'ի վերայ արարածոց: նոյնպէս և դու 'ի բանս քո ուրախանաս: Ի՞նչ ուխտ ես դրեր կատարեա՛. և թէ լցուսցես ըզխնդրուածս քո. ապա երազ ես տեսեր և զարՀուրեր՝ մի՛ վախենար երազն 'ի բարին եղև:

### * Ցուլն:

Ո՛վ մարդ՝ լուսաւորէ խորՀուրդ սրտիդ. յամենայն ժամ տրտում ես. մի՛ վախեր՝ զի չարն Հեռացաւ 'ի քէն և բարին մօտեցաւ. և զոր խորՀել ես շուտով տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն:

### * Երկուորն:

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորՀել ես՝ կատարել աստուծով. զի շատ բարութիւն կայ յայդ խորՀուրդդ. զի դու բարի ես՝ և Հարամն քեզ չէ

դար. առ ժամս տրտում ես և 'ի ցնորս կաս. մի՛ ցնորիր՝ զի շատ բարութիւն կայ առաջի քո. և զինչ խորհել ես՝ 'ի բարին կատարի ամէն:

### * Խեցգետին:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհել ես 'ի սիրտդ՝ փախիր 'ի դմանէ, որ չի փաթերակես. զի քո բանդ 'ի վերայ չի գար. պատրաստ կացիր 'ի չարախաւսաց. զի ընդ քեզ ուտեն և ըմպեն և քեզ չար կու խորհին:

### * Առիւծ:

Ո՛վ մարդ՝ տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն. ցանկութիւն սրտի քո կատարի. և 'ի մտա առ քո՝ ձայն աւետեաց լսես և ուրախանաս: բայց 'ի կուսոյ պատրաստ կացիր. և զոր ուզես՝ տեսանես կամօքն Աստուծոյ:

### * Կոյս:

Ո՛վ մարդ՝ զայն անբաղձալ ծածկեսցէ Աստուած 'ի վերայ քոյ. և ողորմութեանցն իւր յաջողեսցէ քեզ զոր դու կամիս: այլ երազ ես տեսեր և զարհուրեր. մի՛ վախեր՝ զի թէպէտ պատերազմ ահագին է, բայց նշան բարւոյ է. բաղդ գալոց է քեզ ուստի անգ ոչ ունիս. և այլ զինչ խորհել ես՝ կատարի. թէ հիւանդ ունիս ողջանայ. և պատահումն 'ի քէն հիւանդոյ կամաւն Աստուծոյ: այս աւուրքս որ 'ի վերայ քո գալոց է՝ լաւ է քան զառաջինսն:

## * Կշիռն։

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհեցար մի՛ վախեր այնպէս ուրախանաս որպէս պիտոյ է քեզ. բայց զխորհուրդ ամէն մարդոյ մի՛ ասեր. զի քո վիճակն 'ի կշիռն է. և ամէն բան քեզ յաջող է։ Յեշտայս պատրաստ կացիր և ամենայն ժամ աղօթք արա. զի ամէն չար 'ի քէն հեռանայ և 'ի հողոց ազատիս, թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս. և թէ վաճառ ունիս՝ բարով շահիս։

## *. Կարիճն։

Ո՛վ մարդ՝ գիտացի՛ր որ կարծի թշնամի կամի հարցանել զքեզ մարդ մի. պատրաստ կացիր 'ի նմանէ և յայդ խորհրդոց հեռացիր՝ որ պահէ զքեզ Աստուած։ Թէ չէ յետոյ ապաշաւես. և թէ համբերես սակաւիկ մի, զինչ որ կամք ունիս կատարի։

## * Աղեղնաւորն։

Ո՛վ մարդ՝ ժամանակս բղորդեցաւ քեզ. և քո սրտին խորհուրդն 'ի բարին կատարեցաւ. արա զինչ որ կամիս և խնդրես 'ի բանս քո. և տայ քեզ Աստուած զխնդրուածս քո. մի՛ շտապիր սակաւ մի համբերէ. և ուստի ակն ոչ ունիս՝ ուրախանաս. թէ տուն շինես՝ յաջողէ քեզ Աստուած, և 'ի նեղուէ ազատիս. թէ հեռաւոր ունիս՝ տեսանես. բայց 'ի լեզուէդ պատրաստ կացիր։

### * Այծեղջեւրն:

Ո՛վ մարդ՝ յիշեա՛ զԱստուած 'ի բանս քո եւ նա հանէ զքեզ 'ի տրտմութենէ զի տրտմութիւն հասանէ քեզ 'ի սիրելեաց քոց. կասես եթէ ճար լինի ինձ կամ յաջողութիւն եւ կուցանէ թէ հիւանդանաս՝ բայց շատոյ ողջանաս. թէ հեռաւոր ունիս գայ. եւ կատարի խնդիրքդ 'ի բարին:

### * Ջրհոսն:

Ո՛վ մարդ՝ բարութիւն շատ ունէիր եւ յամենէն զրկեցար. պանդխտեցար եւ չար դիպեցաւ քեզ. կռուի սիրելեացդ՝ հետ քեզ եղեն. եւ զէտ նաւ 'ի վերայ ծովուն երերման կաս. եւ կամիս քո կենացդ հանգիստ գտանել՝ եւ ճար չես գտաներ: Ով մարդ մի՛ տրտմիր՝ զի տրտմութիւն քո յուրախութիւն փոխի. եւ զոր խորհիս՝ կատարի կամաւն Աստուծոյ:

### * Ձուկն:

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսնուս. կամ ձայն աւետեաց լսես եւ ինդաս. զի դժուարն քո անցաւ եւ բարին մօտեցաւ: այլ թէ խոստումն ունիս կատարէ. եւ յէշոցաց պատրաստ կացիր. եւ որպէս կապեալքն որ արձակին՝ եւ փակեալ դուռն որ բացուի, այնպէս բանալոց է քեզ Աստուած դրուռն ողորմութեան:

* Հովիւն։

Ո՜վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախեաւ ՚ի ցրտոյն և եմուտ ՚ի յայրն. և ոչխարաց հօտս ոչ տարաւ։ եկն գայլն և առաւ զէշ։ նոյնպէս և դու ՚ի բարւոյն հեռանաս և երթաս զհետ չար խորհրդոյն. պատրաստ կաց ՚ի նմանէ և ՚ի նենգաւոր մարդոյ. և յայդ խորհրդոյդ հեռացիր. զի չար խօսք կան հետ քեզ. այլ բանդ որ ՚ի մտիդ է՝ քեզ չար է։ ահա տաց քեզ զմիտ։

* Արեգակն։

Ո՜վ մարդ՝ որպէս արեգակն որ լուսաւորէ զարարածս, այնպէս լուսաւոր խորհուրդ քո. զոր կամիս կատարելոց է քեզ Աստուած զբարին։ Նայց ՚ի թուխ բոլորերես մարդոյ մի պատրաստ կացիր. զի որոմն ննդէ զքեզ. և ընդ առն քաղցր խօսի ընդ քեզ։ բայց դու ՚ի բանի մի փերայ հօգս առնիս՝ և հետ մտիդ քննութիւն կաս. մի՛ փախիր՝ շուտով լուսաւոր խորհուրդ սրտի քո։

* Լուսաբերն։

Ո՜վ մարդ՝ ՚ի հետ չար մարդոյ ՚ի շուրջ մի՛ գարնալ թէ ոչ լսես փաթերակիս ՚ի նմանէ. և ՚ի քո լեզուէդ պատրաստ կացիր. և յամէն մարդոյ քաղցր խօսքով մի՛ հաւատար. զի կամին կորուսանել զքեզ. սակաւ մի համբերէ. թէ չէ յետոյ ապաշաւես։ շատ բարութիւն կայ առաջի քո. կորուստն գտանի. և զինչ որ առնես՝ յաջողէ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

[illegible] 80 k.

2947

2013